






ՄԱՏԵՆԱՀԱՐ

Հ. Յ. Դ. ԶԱԽԱՐԵԱՆ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ԹԻԻ 2

ԳԱՐԵԳԻՆ ԽԱԺԱԿ

ԻՆՉԷ

ԱԶԳՈՒԹԻՒՆԸ

ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹԻՒՆ



ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ



ՅԱՌԱՋԱԲԱՆ Բ. ՇՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Երբ երկու տարի առաջ «Մատենաշար Հ. Յ. Գ. Զաւարեան Ուսանողական Միութեան» անունով կը վերահրատարակէինք Քրիստափոր Միքայէլեանի «Յեղափոխականի Մտքեր»ը, կը շեշտէինք, որ հրատարակչական մասնագիտական աշխատանք չէր մեր ըրածը, այլ մեր երիտասարդութեան քաղաքական թերաճութիւնը դարմանելու կոչուած պարբերական երեւում մը: Մեր մատենաշարի այս երկրորդ թիւը, Գ. Խաժակի «Ի՞նչ է Ապգութիւնը» խորագրուած ուսումնասիրութիւնը, կը պատասխանէ նոյն մտահոգութեան: Հրատարակուած 1912ին՝ Պոլիս, այսօր ամբողջովին անգտանելի դարձած այս գործը մեր ուշադրութիւնը իր վրայ կը կեդրոնացնէ մէկէ աւելի պատճառներով: Նախ եւ առաջ, ան փաստաթուղթն է 1910ական թուականներու դաշնակցական տեսաբանի մը մտածումին, «գիտական հետազոտութիւն»ը (ինչպէս Վայն Կ'անուանէ նոյնինքն հեղինակը) այն ներհուն մտքին, որ Գ. Խաժակ եղաւ մեր հանրային կեանքին մէջ այս դարու սկիզբին: Ապա, այս գործը է՝ նաեւ այժմէական գործ մը իր շատ մը կողմերով, եւ կը պատասխանէ մեր Ներկայի մեզի դրած հարցերէն ոմանց: Ի վերջոյ պէտք չէ մոռնալ, որ ազգային հարցը սուր կերպով վերագնահատման դրուող հարց է այսօր, ինչպէս էր

ասկէ վաթսուն տարի առաջ, ամբողջ աշխարհի տարածքին, ու նաեւ մեր հա՛յ կեանքէն ներս:

Բնագրին կը կցենք ներկայ «Յառաջաբան Բ. հրատարակութեան»ը, որ կ'ամփոփէ զործին զըլխաւոր զիծերը, եւ կենսագրական հակիրճ նոթ մը Գ. Խաժակի մասին (*): Կցուած կը պահենք նաեւ Ա. հրատարակութեան «Յառաջաբան»ը, զրուած նոյնինքն Խաժակի կողմէ, ինչպէս նաեւ ձօնագրութիւնը՝ ուղղուած «հայ երիտասարդներին»:

*
**

Ազգը եւ ազգութիւնը մարդկային պատմութեան որոշ մէկ վայրկեանէն սկսեալ եղած են բընական երեւոյթներ, եւ ճիշդ ատոր համար՝ երկար ատեն մնացած են աննկատ: Եւ որովհետեւ անոնք չեն ունեցած զիտակցութիւնը իրենց իբր ազգ գոյութեան եւ ազգային միութեան, գոյութիւն չեն ունեցած նաեւ տեսարանական մշակում եւ զիտական պրպտումներ, ազգի հասկացողութեան սահմանումին համար:

(*) Գ. Խաժակի կեանքին ու զործին մասին յաւելեալ տեղեկութիւններ փնտռողները, ուրիշ աղբիւրներու կարգին, կրնան օգտագործել «Հայրենիք» ամսագրի մէջ լոյս տեսած Արտ. Արեղեանի զոյգ յօդուածները՝ «Գ. Խաժակ» եւ «Գ. Խաժակի երկերը» (Տե՛ս Նոյ. — Դեկտ. 1923 եւ Մարտ — Ապրիլ 1925):

Հին պատմութեան մէջ, ազգի հասկացողութիւնը ենթակայ է նաեւ ուրիշ սահմանափակումներու: Եւ առաջին հերթին, ազգը եւ ազգութիւնը կը մնան տիրապետող խաւերու սեփականութիւն: Ստրուկները, նաեւ ապատներու խոնարհ դասակարգը, դուրս կը մնան ազգի ընդգրկումէն (օրինակներ՝ Յունաստան, Հռոմ): Ազգը՝ աւելի, այս պարագային, կը պայմանաւորուի պետական կառոյցներով, եւ յաճախ կը կորսուի անոնց մէջ:

Եւրոպական Միջնադարը ժամանակաւորապէս կը մթագնէ, նոյնիսկ կը ջնջէ ազգային կառոյցները: Բարբարոս ժողովուրդներու խուժումը Եւրոպա, ցեղային եւ ցեղախմբային հասարակարգի վերահաստատումը՝ կը ստեղծեն աւատականութիւնը: Միակ կազմակերպուած հիմնարկութիւնը՝ կը մնայ եկեղեցին:

Նոր ժամանակները կը սկսին կեդրոնացեալ պետականութիւններու վերստեղծումով (ԺԴ -- ԺԵ դարերէն սկսեալ) եւ նոր դասակարգի մը՝ քաղքենիութեան աստիճանական բարձրացումով (ԺԶ -- ԺԷ դարեր): Այս հոլովոյթը եւրոպական քաղաքակրթութեան մէկ շատ բարդ երեւոյթն է, կապուած՝ տնտեսական, ռազմա-քաղաքական, աշխարհագրական եւ այլ տուեալներու:

ԺԸ դարու սկիզբէն, ու մանաւանդ ԺԹ դարէն սկսեալ, ազգ-պետութիւնը կը հասնի վարձացման բարձրագոյն կէտին: Այս յանգումը կը յատկանշուի նոյն ատեն քաղքենի դասակարգի

աւելի կամ նուազ իշխանութեան գլուխ գալովը, ազնուականութեան տեղ կամ կողքին: Այս դասակարգի իշխանութիւնը երբեմն կ'արտայայտուի աշխարհաքաղաքացիական գաղափարաբանութեամբ մը (ինչպէս ֆրանսական քաղքենիութեան պարագային), անհատներու ազատութեան եւ հաւասարութեան գաղափարներով լրացուող: Ուրիշ պարագաներու, այդ իշխանութիւնը կ'արտայայտուի ազգայնամոլ գաղափարաբանութեամբ, որու համաձայն տուեալ ազգ մը գերիվեր է միւսներէն (գերմանական քաղքենիութիւն): Երկու պարագաներուն հաւասարապէս, ազատական ըլլայ տուեալ քաղքենիութիւնը թէ պահպանողական, -- ան չի դադրիր ըլլալէ ծաւալապաշտ, կայսերապաշտ:

ԺԹ դարու երկրորդ կէսին սկսած ընկերային-դասակարգային շարժումները, գիտենք, մեկնակէտ ունեցած են ժողովրդական զանգուածները, եւ մանաւանդ բանուորութիւնը: Ասիկա՝ պահու մը, ուր քաղքենիութիւնը ազգային գաղափարներու դրօշակիրն էր դարձած, եւ զանոնք կը շահագործէր իր դասակարգային շահերուն համար: Հասկնալի է, որ, այս պայմաններուն մէջ, դասակարգային պայքարի որոշ հոսանքներու համար, ազգային սկզբունքը դառնար հոմանիշ՝ քաղքենի դասի տիրապետութեան:

*
**

Իբր փաստացի իրողութիւն, ազգը դժուար

սահմանելի է: Տեսնելէ ետք անոր պատմական հոլովոյթը, այս անգամ փորձենք վերլուծել Ազգը իբր հասկացողութիւն կամ յղացք, եւ գտնել համապատասխան սահմանում:

Նախ ազգը պէտք է պահպանել ժողովուրդէն, նաեւ պետութենէն: Այս վերջինը կառավարչական իմաստով ուրոյն միաւոր է եւ չ'ենթադրեր անպայման ազգի գաղափար: Իսկ ժողովուրդը՝ պետութեամբ միացած բնակչութեան մը ամբողջութիւնն է, նոյնպէս անկախ՝ ազգի հասկացողութենէն: Ազգ մը, թէեւ կը ձգտի պետականութեան, թէեւ կը ձգտի պետական ժողովուրդ դառնալու, բայց կրնայ ժամանակաւորապէս զուրկ ըլլալ այդ յատկութիւններէն: Փոխադարձաբար, պետութիւն մը կամ ժողովուրդ մը կրնան բովանդակել մէկէ աւելի ազգեր: Ազգ մը, միւս կողմէ, թերեւս կրնայ մէկէ աւելի պետութիւններու վրայ բաժնուիլ: Կը մնայ տակաւին սահմանել Հայրենիքը՝ յարաբերաբար վերի հասկացողութիւններուն:

Գալով ազգութեան, ան տարբեր է շոշափելի, իրական ազգէն: Ան ազգի մը գաղափարն է, ազգի մը յատկանիշներուն վերացարկուած ամբողջութիւնը:

Եզրերու (terme) այս սահմանումէն ետք, հարկ է տեսնել, թէ Ազգը ինչպէ՞ս ըմբռնուած ու սահմանուած է պատմութեան մէջ. թէ Ազգի ըմբռնումին, հասկացողութեան համար ի՞նչ գլխա-

ւոր մտածումի հոսանքներ, ուղղութիւններ գոյութիւն ունեցած են:

Առաջին եւ ամէնէն տարրական մէկ ըմբռնումը ազգի՝ վայն կապելն է տոհմական--ցեղային սկզբունքին, տալ անոր միակ ծագում, վայն նկատել ուրեմն կենսաբանական--բնական սկզբունք: Այս նախնական մտածումը յատուկ է յաճախ ականդական պատմութեան եւ զուրկ է գիտական հիմերէ: Ամէն փորձ՝ վայն գիտական ձեւով ներկայացնելու՝ կը տանի ազգայնամոլ--ցեղապաշտական զաղափարաբանութիւններու: Պահպանողական, ռազմապաշտ եւ աշխարհակալ տիրող դասակարգերն են որ կը դիմեն այս զաղափարաբանական դիմակին՝ զօրաւոր ազգերու մէջ: Կորուստի վտանգին տակ գտնուող փոքր ազգերը՝ նոյնպէս, ինքնապաշտպանութեան մտահոգութեամբ: Այս վերջին բացատրութիւնը կրնայ կիրարկուիլ որոշ չափով հայկական ազգայնամոլութեան նաեւ:

Անշուշտ սկզբնական արեւակցային--կենսաբանական կապ մը կրնա՛յ գոյութիւն ունեցած ըլլալ ազգը բաղկացնող որոշ տարրերուն միջեւ: Բայց արեւակցութիւնը տոհմայի՛ն հասարակութեան շրջանը միայն կը յատկանշէ. շրջան՝ որ նախորդած է ազգերու պատմութեան: Անշուշտ կենսաբանական պատճառ մը նաեւ կա՛յ այն իրողութեան որ, օրինակ, իտալական թերակղզիի բնակիչները կազմեցին իտալական ազգը, մինչ երկար դարեր նոյն պետութեան մաս կազմող ուրիշ

տարրեր չձուլուեցան իտալական ազգին մէջ: Ուրոշ տոհմեր, տոհմախումբեր աւելի հակում ունին ձուլուելու իրար մէջ, եւ ատիկա կը բացատրուի կենսաբանականով: Նոյն ձեւով կը բացատրուին ազգէ ազգ եղած տարբերութիւնները: Բայց բոլորովին այլատարր խումբեր ալ, յաճախ, կը մտնեն ազգի մը կազմութեան մէջ, բոլորովին հալելով, կորսնցնելով ոչ միայն գիտակցութիւնը առանձին խումբի պատկանելու, այլ նաեւ ֆիզիքական՝ յատկանիշները այդ խումբին: Միւս կողմէ, այս խումբերը ձուլելով իր մէջ՝ ազգը չի մնար նոյնը: Կը կրէ հիմնական փոփոխութիւններ նաեւ ինքը: Կը դառնայ նոր միաւոր, նոր յատկանիշներով: Իսկ բանի մը հարիւր տարուան կեանք ունեցող ազգերու մէջ, եթէ արտաքին տարբերութիւններ կան ազգի մը զանազան տիպարներուն միջեւ՝ բոլորովին անհետացած են տարբերութեան գիտակցութիւնը, նաեւ մշակութային յատկանիշները: Պարզ է, ազգը բնական-կենսաբանական երեւոյթ չէ. չի կրնար այդպիսին նկատուիլ: Նոյնիսկ եթէ կենսաբանական նոյնութեան սկզբնատարր մը կը բովանդակէ: Եւ նոյն պատճառով չի կրնար առարկայ դառնալ բացարձակ գնահատումի, ֆեթիշական պաշտամունքի:

Եթէ բնական երեւոյթ չէ, կը մնայ որ ազգը նկատենք պատմական երեւոյթ: Բայց հոս ալ մէկէ աւելի տեսակէտներ կան: Վերի ազգայնամոլ-ցեղապաշտ հասկացողութեան հակադրուող տեսակէ-

տը կայ նախ, որ պատմական մատերիալիզմի տեսակետն է. ըստ այս վերջինին, ազգային երեւոյթը երկրորդական երեւոյթ է, տնտեսական ենթակառոյցի մէկ ժամանակաւոր արտայայտութիւնը, եւ պարտի տնտեսական կառոյցներու եւ արտադրամիջոցներու հոլովոյթի մէկ որոշ հանգրուանին՝ անհետանալ՝ իր տեղը տալով դասակարգային կառոյցներու, ապա ապազգայնական եւ անհայրենիք մարդկութեան մը: Այս տեսակետները, թերեւս ոչ այսքան յստակ ձեւով, պաշտպանուած են սկըպնական մարքսիզմի կողմէ: Այս մասին կ'անդրադառնանք քիչ ետք:

Ազգը ոչ-կենսաբանական, այլ պատմական երեւոյթ նկատող ուրիշ տեսակետ մը՝ պատմական ռէալիզմի տեսակետն է: Այս մտածումին համար ազգը պատմութեան ընթացքին կամաց-կամաց յառաջացած միութիւն է, որուն ստեղծումին մէջ դեր են ունեցած տնտեսական, պատմա-քաղաքական ու մշակութային ազդակները հաւասարապէս: Ասոնցմէ վերջինին մէջ՝ նաեւ ազգային գիտակցութիւնը, որ իր ամրապնդիչ դերը ունի ազգի վանական տարրերուն միջեւ: Այս տեսակետին ամենամօտն է Գ. Խաժակի սահմանումը. «Մարդկանց այն խումբը, որ դարեր շարունակ ապրելով միեւնոյն բնական ու պատմական միջավայրում, իր կուլտուրայի բոլոր հարցերը լուծել է իր համար, ինքնուրոյնաբար. դրանով ստեղծուել է (.....) ազգային ընդհանուր ոգի կամ ներքին սուրբեկտիւ

աշխարհ, ազգային ստեղծագործության յատուկ ձևեր եւ նոյնիսկ ազգային մի յատուկ ֆիզիքական եւ հոգեբանական տիպ»: Զանազան այս ազդակներէն մէկուն կամ միւսին տալ գերակշռութիւն՝ մեզ կը տանի միակողմանի բացատրութիւններու: Պատմական իրապաշտութեան այս տեսակէտը, հակադրուելով բնական ծագումի ցեղապաշտ ազգայնամոլ հասկացողութեան, միւս կողմէ կը հակադրուի նաեւ տնտեսական ծագումի նիւթապաշտ ապապգային հասկացողութեանը: Ան կը մերժէ նաեւ սա տեսակի սահմանում մը. «Ազգը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ռեւէ պետութեան հողի վրայ սպորող բնակիչների ընդհանրութիւնը, որոնք մըշտապէս կենում են այնտեղ» (գերմանացի գրող մը, ԺԹ դարու Բ. կէսի): Կամ՝ «Ազգը հոգեկան սկզբունք է (.....), բարոյական խիղճ (.....), ընդհանուր կամք» (Ռընան): Ասոնցմէ առաջինը ծաւալապաշտ պետութեան մը ախորժակները կը ծածկէ, երկրորդը՝ պահպանողական եւ այլամերժ իտէալիզմ մը: Ազգը բացարձակ, իտէալ արժէք չէ, այլ պատմութեան ստեղծած մէկ արժէքը, որ սակայն ստացած է բնական երեւոյթի մը կայունութիւնը, ամրութիւնը, եւ ո՛չ մէկ հակում ցոյց կու տայ անհետանալու տնտեսական կառոյցներու կեդրոնացումին եւ միատեսակացումին առջեւ:

Պատմութեան երկայնքին ստեղծուած, «բնապատմական» քատրի վերածուած այս ազգային երեւոյթին բաղկացուցիչ տարրերէն՝ աւելի կամ նը-

ապ ուշադրութեան առարկայ դարձած են լեզուն (աւելի՝ լեզուի ընդհանուր ոճը, ոգին), սովորոյթները, ականդութիւնները, կրօնը, հայրենիքը: Եւրոպացի բազմաթիւ տեսաբաններ, եւ Գ. խաժակ՝ իր կարգին, կը շեշտեն, տնտեսական-քաղաքական ապդակներու կողքին, լեզուի եւ հայրենիքի նոյնութեան դերը՝ ազգի միութեան իրողութեան մէջ:

**

Մարքսիզմը, մանաւանդ իր սկզբնական շրջանին եւ Մարքսի իսկ ձեռքով բանաձեւուած, ունի շարք մը ապապգային դրոյթներ (թեզեր), որոնք կարելի է խտացնել «Մանիֆեստ»ի սա՛ տողերով.

«Կոմունիստներին մեղադրում են, որ նրանք ուզում են ոչնչացնել հայրենիքը, ազգութիւնը: Բայց բանուորները հայրենիք չունեն: Նրանցից չէ կարելի խլել այն ինչ որ չունեն: Պրոլետարիատը, որ նախ եւ առաջ պիտի տիրանայ քաղաքական իշխանութեան, բարձրանայ ազգային դասակարգի բարձրութեան, ինքն իրեն կազմակերպէ իբր ազգ, նա դեռ եւս ազգային է, թէեւ ամենեւին ոչ բուրժուական մտքով...»:

Այս մէջբերումէն կը բխին հետեւեալ հարցերը.

ա) Մարքս կը շփոթէ իրարու, գիտակցաբար կամ անգիտակցաբար, «ազգ»ի եւ «հայրենիք»ի հասկացողութիւնները:

բ) Հայրենիք ունենալը կարելի չէ նոյնացնել սեփականութեան գաղափարին: Բանտորութիւնը սեփականութիւն չունի, ճիշդ է, բայց ուրիշ դասակարգերէ աւելի պատճառ ունի սիրելու, ու կը սիրէ՝, իր հայրենիքը, իր աշխատանքին եւ թափած քրտինքին հողը:

գ) Եթէ պրոլետարիատը պիտի տիրանայ իշխանութեան եւ պիտի բարձրանայ ազգային դասակարգի բարձրութեան (ինչ որ բացարձակապէս ճիշդ է), եւ եթէ «նա դեռ եւս ազգային է», անշուշտ ոչ «բուրժուական մտքով», իշխանութեան տիրանալէն ետք ե՞րբ եւ ինչո՞ւ պիտի ջնջէ ազգային յատկանիշը մարդկութեան մէջ:

դ) «Մանիֆեստ»ի մէջ ուրիշ տեղեր, Մարքս կ'աւետէ որ «աւելի եւ աւելի կորչում են ազգային առանձնացած վիճակը եւ ժողովուրդների միջեւ եղած անտագոնիզմը», շնորհիւ տնտեսական կառոյցներու, արտադրութեան ձեւերու եւ շուկայի կեդրոնացումին: «Առանձնացած վիճակը» եւ «անտագոնիզմը» պիտի անհետանան, պէ՛տք է անհետանան. ճի՛շդ է: Բայց ի՞նչն է որ Մարքսը կը մղէ վանոնք փոխարինելու ապազգային, միօրինակ մարդկութեամբ մը, և ո՛չ, օրինակ, այլապէս բայց ներդաշնակ միջազգային ընկերութեամբ մը:

ե) Մարքս անսպասելի, նոյնիսկ ընդվզեցուցիչ կեցուածք ունի ուրիշ հարցի մը կապակցութեամբ: Զանազան յօդուածներով անդրադառնա-

լով «փոքր ազգերու» (չեխ, տանիմարքացի, իրլանտացի) վանոնք կը դատապարտէ իբր «ապագայէ պուրկ» ազգեր, կ'արհամարհէ անոնց ազգային-ազատագրական շարժումները, եւ Գերմանիոյ պէս կայսերապաշտ երկրի մը նուաճումները կը նկատէ «քաղաքակրթութեան գործ»:

զ) Մարքս կը հասնի այս անհեթեթ ու սխալ դիրքերուն, որովհետեւ մէկ մտասեւեռում ունի. աշխարհի տնտեսական կառոյցները կ'երթան դէպի կեդրոնացում. քաղքենիութիւնը կը կեդրոնացընէ դրամագլուխն ու ճնշումը, պրոլետարիատը՝ յեղափոխական ուժը: Ազգային սահմանները եւ մանաւանդ փոքր ազգերը արգելք են Մարքսի «տեսութեան» իրականացումին: Իսկ Մարքս չ'ուզեր ընդունիլ որ, տնտեսական կեդրոնացումին պուզահեռ, կրնայ գոյութիւն ունենալ ազգային-քաղաքական-վարչական ապակեդրոնացում մը, ցրտում մը: Իրեն համար ամէն բան տնտեսականին կը հետեւի:

է) Հիմնական սխալը, ուրեմն, կը կայանայ պատմական մատերիալիզմի ա'յն դրոյթին մէջ, ըստ որուն պատմութեան բոլոր իրողութիւնները պարզ երեւոյթներ են, վանապան դրսեւորումները տնտեսական ազդակին: Ճիշդ է, տնտեսականը ենթակառոյց է, կը պայմանաւորէ յաճախ պատմութեան միւս ազդակները, բայց ազգային ազդակը նոյնքան հիմնական է, ըլլալով իրական, կենդանի այն հողը, մարդկային (կենսաբանական--աշ-

խարհագրական--մշակութային) այն նախապայմանը, որուն մէջ միայն իրականութիւն կը դառնայ տնտեսական դասակարգային ազդակը:

Նոյնիսկ կարելի է ըսել որ պրոլետարիատ ընդհանրապէս՝ գոյութիւն չունի: Կան միայն ազգային--դասակարգային շարժումներ, որոնք հետագային, ճիշդ է, կը ներդաշնակուին, կը կապուին իրարու, առանց կորսնցնելու իրենց ուրոյն նկարագիրը:

ը) Պրոլետարիատի բարձրացումով եւ իշխանութեան տիրանալով՝ ազգը եւ ազգութիւնը չեն անհետանար: Ընդհակառակը. փոխանակ պատկանելու դասակարգի մը, փոքրամասնութեան մը՝ կը պատկանին զիրենք կազմող բոլոր անհատներուն: Ազգային մշակոյթը, ազգային գիտակցութիւնը կը հասնին բոլորին, ազգը կը ժողովրդականայ, կը հարստանայ: Կը ծնի նոր ազգ մը, խաժակի բառով «աշխատաւորական ազգ» եւ յառաջ կու գայ «աշխատաւորական ազգայնութիւն»:

Ազգերու հոլովոյթը, ուրեմն, անհրաժեշտօրէն չի հետեւիր տնտեսական հոլովոյթին, որ դէպի կեդրոնացում եւ սահմաններու ջնշում կը տանի: Առանց «յաւերժական» սկզբունք ըլլալու, ան մարդկութեան գոյութեան, բնականոն ու ներդաշնակ զարգացման, նաեւ ընկերվարութեան ստեղծման նախապայմանն է այսօր:

Յ. Ք.



«ԳՐՕՇԱԿ»Ի ՇՈՒՐՋ ՀԱԻԱՔՈՒԱԾ
ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԸՆԿԵՐՆԵՐ ԵՒ ՀԱՄԱԿԻՐՆԵՐ
(ԺԸՆԵՒ, 1893)

1.- Գ. Բախարբեան, 2.- Բժշկուհի օր. Լ. Մատինեան,
3.- Ա. Հանջեցեան, 4.- Ռոստոմ, 5.- Ս. Շխեանց, 6.-
օր. Մաչուկ Աբրումեան (ապա Փաստրմանեան՝ Ա.
Գարոյի կինը), 7.- Օր. Լիզա Շահնազարեան (Ռոս-
տոմի կինը), 8.- Օր. Մարիամ Խանդամիրեան (ապա՝
տիկին Վարանդեան), 9.- Օր. Ա. Աթաբեկեան, 10.-
Ա. Մելիքեան, 11.- Բժշկուհի օր. Միրզոյեան, 12,
13, 14.- Հնչակեան ուսանողներ, 15.- Տոտոմեանց,
16.- Ա. Աթաբեկեան, 17.- Գ. Խաժակ, 18.- Մ. Վա-
րանդեան :

Գ. ԽԱԺԱԿԻ ՄԱՍԻՆ

Հմուտ ընկերաբան, անուանի հոգետոր եւ մանկավարժ՝ Գարեգին Խաժակ ծնած է Ալեքսանդրապոլ 1868ին: Կանուխէն կը կորսնցնէ իր հայրը, իսկ մայրը չարքաշ աշխատանքով, իբրեւ լուսցարաբուհի, կը հոգայ ընտանիքի ծախքերը, ապահովելով պաւակին կրթութիւնը:

Խաժակ նախնական ուսումը ծննդավայրին մէջ ստանալէ ետք, կը յաճախէ Էջմիածնի Գէորգեան Ճեմարանը՝ մինչեւ ճորդ դասարանը: Նիւթական կարելիութիւն չ'ունենար աւարտելու Ճեմարանական բաժինը. ան մտահոգուած էր օգնելու իր մօրը եւ ջերմ ցանկութիւն ունէր նետուելու հանրային ասպարէզ:

Ուսուցչական պաշտօն կը ստանձնէ նախ Ագոլիս, ուր կը պաշտօնավարէին Քրիստափոր Միքայէլեան եւ է. Ակնունի: Այս շրջանակին մէջ է, որ Խաժակ կը ստանայ իր յեղափոխական մկրտութիւնը: Կովկասի պանապան քաղաքներ եօթը տարի ուսուցչութիւն ընելէ ետք, կը զգայ բարձրագոյն ուսում ստանալու անհրաժեշտութիւնը եւ 1893ին կը մեկնի Փրնեւ, ուր կ'աւարտէ տեղոյն համալսարանին հասարակագիտական բաժինը:

Ուսանողական շրջանին կ'աշխատակցի «Դրօշակ»ին եւ «Մուրճ»ին, տնտեսագիտական ուսումնասիրութիւններով: Իբրեւ գործիչ, Դաշնակցու-

թեան կողմէ առաջին անգամ կը ղրկուի Պալքանները: Կ'այցելէ Պրայլա, Կալաց, կը կատարէ յեղափոխական քարուղծութիւն: Նոյն նպատակով կ'անցնի Պուլկարիա 1895ին: Նոր տեղի ունեցած է Սասնոյ կոտորածը. եամպոլի եւ Սլիվէնի հայերուն կը նկարագրէ երկրի մէջ մեր ժողովուրդին բաժին ինկած անտանելի վիճակը: Կը կազմուի կոմիտէ մը, որ պաշտօն կ'ունենայ հանգանակութիւն կատարելու ի նպաստ աղէտեալներուն եւ պատրաստելու անձնազոհ երիտասարդներու խումբ մը: Խաժակ նոյն աշխատանքը կը կատարէ Վառնա, ուր Հնչակեան գործիչ Միհրան Տամատեան եւս կազմած էր իրենց մասնաճիւղը:

Խաժակ կը մնայ նաեւ Եգիպտոսի, Իգմիրի շրջանները ու յետոյ կը մեկնի Պոլիս: Հոն ոստիկանութեան կողմէ կը ձերբակալուի: Իբրեւ ռուսահպատակ, արգելափակուած կը մնայ ռուսական հիւպատոսարանը եւ ուր ամիս ետք, 1901ին կը ղրկուի Կովկաս:

Հոն դարձեալ կը նուիրուի ուսուցչական ասպարէզին եւ 1902ին կ'ամուսնանայ գանձակեցի Շուշանիկ Մարգարեանի հետ (քոյրը ընկեր Սաշա Մարգարեանի): Շուշի երկու տարի պաշտօնավարելէ ետք, 1903ին կը փոխադրուի Թիֆլիս, իբրեւ «Մշակ»ի խմբագիր, իսկ յաջորդ տարի ուսուցիչ՝ Ներսիսեան վարժարանին մէջ դասաւանդելով պատմութիւն, ֆրանսերէն եւ քաղաքական տնտեսութիւն: 1905ի վերջերը, երբ Դաշնակցութիւնը

հնարաւորութիւն կ'ունենայ «Յառաջ» օրաթերթը հիմնելու, խաժակ անոր խմբագիրներէն մէկն է, Ա. Ահարոնեանի, Մ. Վարանդեանի, Ե. Թօփճեանի եւ Լ. Նապարեանցի հետ:

1905ին, Սահմանադրութեան կարգերու յայտարարութեամբ, Կովկասը եռուկեռի մէջ է: Ամէն կողմ միթինկներ, հաւաքոյթներ, դասախօսութիւններ եւ խաժակ իր հռետորական ձիրքով ու գիտական պատրաստութեամբ տիրական դէմք մըն է: Ան կը պայքարի սոց. դեմոկրատներուն դէմ, ձաղկելով անոնց պատմական մաթերիալիմի տեսութիւնը, կը պաշտպանէ ազգի ու հայրենիքի գաղափարը, կը քարոզէ ֆետերացիայի սկզբունքը: Խաժակ Թիֆլիսի, Պաթումի, Գանձակի, Երեւանի, Ալեքսանդրապոլի ժողովրդական միթինկներուն մէջ մեծ խանդավառութիւն կը ստեղծէ Դաշնակցութեան շուրջ:

Այս աշխատանքներու ընթացքին, ան միշտ ուսուցիչ է Ներսիսեան վարժարանը. իբրեւ մանկավարժ սիրուած է աշակերտութենէն: Գիտէ հանրային գործերով վբաղիլ, առանց իր կրթական պաշտօնին վնաս պատճառելու:

1908ի վերջերը Կովկասի և Ռուսաստանի մէջ կը վերսկսին հալածանքները Դաշնակցութեան դէմ, բանտ կը նետուին հարիւրաւոր ընկերներ, որոնց մէջ նաեւ խաժակը: Վեց ամիս ետք թէեւ կ'արձակուի երաշխաւորութեամբ, բայց կը շարունակէ պարապիլ կուսակցական գործերով և կրկին ձերբա-

կալուելով կը դրկուի Նովոչերկասկի բանտը: Հարցաքննութիւններու աւարտումէն ետք, Խաժակ հիւանդութեան հետեւանքով եւ կրկին երաշխաւորութեամբ բանտէն կ'ելլէ եւ 1912ի ամառը իր բախտակիցներէն Ա. Ահարոնեանի եւ Ա. Իսահակեանի հետ զաղտնօրէն կ'անցնին Կարինի եւ Տրապիզոնի վրայով Պոլիս:

Փեթերսպուրկի մէջ, 1912ին, Խաժակի բացակայութեան տեղի կ'ունենայ Դաշնակցութեան դատաւարութիւնը եւ ցարի ընդի. դատախապը հետեւեալ խօսքերով կ'աւարտէ իր ամբաստանութիւնը.

«Եթէ ես լինէի արձանագործ, Դաշնակցութիւնը կը պատկերացնէի մի արձանով, որի պատուանդանի վրայ կը փորագրէի այդ արեան բաղնիքի մէջ գալարուող բոլոր զոհերին, աջ կողմը կը կանգնեցնէի Համապասպ Օհանջանեանին, ձախ կողմը՝ Խաժակնեանին, իսկ վերելք, զագաթին՝ Ահարոնեանին արծուի ձեւով, որ ծծում է անվերջ հոսող արիւնը»:

Օհանջանեան կը դատապարտուի Սիպերիա, տաժանակիր աշխատանքի: Խաժակ, Պոլսոյ նոր միջավայրին մէջ կարելիութիւն կ'ունենայ շարունակելու իր հանրային գործունէութիւնը: Այցելու ուսուցիչ է, իսկ 1913ին կը ստանձնէ Սամաթիոյ ազգային վարժարանի տնօրէնութիւնը: Աշխատակից է «Ազատամարտ»ին եւ սիրուած դասախօսը ուսանողական շրջանակներուն մէջ:

*
**

Խաժակ առաջին անգամ երեւցած է 1887ին՝ «Մշակ»ի մէջ, «Գաւառացի երիտասարդութիւնը» յօդուածով. 1896ին հրատարակած է «Մի բարոյական այլանդակութիւն յեղափոխական մաքուր գործում» եւ «Ժողովրդի բանաստեղծը Գամառ-Քաթիպա», 1904ին՝ «Հարկերը Տաճկաստանում», «Հայրենիք եւ ազգ. շարժումներ», «Հայկական շարժման պատճառները», 1905ին՝ «Ռուսական Ջեմստվոն եւ Կովկասի պահանջները», 1907ին՝ «Դէպի ֆետերացիա», 1912ին՝ «Ի՞նչ է ազգութիւնը», «Տառապանքի գիշերը», 1913ին՝ «Ի՞նչ է դասակարգը», «Հին Արեւելք», «Հայոց Պատմութիւն»։ Թարգմանած է Վինկրատովի 3 հատոր «Ընդհ. Ազգաց Պատմութիւն»ը եւ այլ գրքոյկներ։

Խաժակի ընկերաբանական ուսումնասիրութիւնները գիտական արժէք կը ներկայացնեն ու այսօր ալ հետաքրքրութեամբ կը կարդացուին։ Դաշնակցական մամուլին մէջ գրած է նաեւ Բաբա Գասպար եւ Արծիւեան կեղծանուններով։

Երբ կը ծագի եւրոպական պատերազմը, Խաժակ օդափոխութեան գացած էր Զուիցերիա։ Հակառակ ընկերներու խորհուրդին, ան կը փութայ Պոլիս, իր պաշտօնին։ Ռուսերուրք զինաբախումը չսկսած, դեռ ժամանակ ունէր, իբրեւ օտարախափատակ, հեռանալու ոճրագործներու բոյնէն։ Խաժակի կինը թախանձագին իրմէ կը խնդրէ գոնէ Պոլ-

կարիա անցնիլ. ան կը պատասխանէ, թէ Դաշ-
նակցութիւնը որոշած է, որ ընկերները մնան ի-
րենց պարտականութեան գլուխը եւ բաժնէն ժողո-
վուրդին ճակատագիրը:

Ապրիլեան Եղեռնի գոհերէն եղաւ Խաժակը:
Անոր գրած վերջին նամակը տարագրութեան ճամ-
բէն իր կնոջ ուղղուած, նաեւ կտակ մըն է նոր սե-
րունդին համար: Ահա մասունք մը այդ յուզիչ
գրութենէն.

«Մնաս բարով, անուշիկ ընկերս, մնա՛ս բա-
րով, Նունուշ, Ալօ հրեշտակներս, մնաս բարով եւ
դու, Երրորդ եւ անձանօթ վաւակս, որի լոյս աշ-
խարհի գալուն չպիտի արժանանամ: Երանի՛ թէ
մենք լինենք հայ ժողովրդի սեղանին նուիրուած
վերջին գոհերը. երանի՛ թէ մեր արիւնով, վերջա-
պէս հանգիստ առնէր այդ թշուառ ազգը: Մնա՛ք
բարով, ամբողջ հոգիս թափում եմ համբոյրիս մէջ,
որ դրոշմում եմ այս թղթի կտորին: ... Թո՛ղ վա-
ւակներս Երթան իմ ճամբայով, դառն, բայց ապնիւ
ճամբայ:

1915 Յուլիս 4»:

Տաղանդաւոր ընկերաբան, սիրուած հռետոր,
գիտակից մանկավարժ, անձնուէր յեղափոխական՝
Խաժակ դիմագրաւեց մահը Եղիշէի բացատրու-
թեամբ. «Մահ իմացեալ անմահութիւն է»:

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ռուսաստանի եւ Թիւրքիայի վերջին շարժումները եկան մի անգամ էլ հաստատելու, քէ ո՛րքան մեծ նշանակութիւն ունի մարդկային պատմութեան մէջ ազգային տարրը :

Այդ երկու երկրներում էլ գրեթէ բոլոր յեղափոխական եւ դասակարգային շարժումներն ընդունեցին *ազգային* կերպարանք :

Ռուսաստանի բազմաթիւ ազգութիւնների գրկում կազմուած բնկերական կուսակցութիւնների մեծագոյն մասը կամ ուղղակի ազգային գոյնով ծնունդին, կամ իրենց ծրագիրներում եղած ապագային կամ կոսմոպոլիտական հին մընացորդներն աստիճանաբար դուրս նետեցին եւ սկսեցին աւելի եւ աւելի անկեղծօրէն ազգային-բնկերկարական գոյն ստանալ :

Այդ բանում, պէտք է խոստովանիլ, բոլորի համար ուսուցիչ եւ ուսուցող հանդիսացաւ Աւրստրիական Սոցիալ-Դեմոկրատիական կուսակցութիւնն իր համբերատար եւ անկաշկանդ ուղեղի տէր դեկավարներով :

Այսօր ազգային հարցը դառել է լուրջ *վերագնահատման* խնդիր բոլոր բնկերկարական գրողների եւ կուսակցութիւնների համար :

Տապալուում է նախկին տեսակէտը, որը

մարմնանում էր մի նախադասութեան մէջ .
«Բանուորը հայրենի չունի» եւ կամ «Սոցիալիզ-
մը եւ ազգութիւնն իրար ջնջող են» :

Այդ ապագային տեսակէտի տեղն այսօր
բռնել է ընկերավարական առողջ *ազգային-միջազ-
գային* գոյգ տեսակէտը :

Հայ ընկերավարականներին հնազանդ ազանե-
րը, շահամոլ կոերը եւ իրենց դիրքից ու եկամու-
տից զրկուելու սարսափով բռնուած գրագէտնե-
րը միշտ մեղադրում են ապագայութեան մէջ :

Հի՛ն պատմութիւն :

Մեր ժողովուրդը տգէտ է, բռնութեան տակ
բքացած, այդ պատճառով նոր ուղղութեան հա-
կառակորդները յաջողութիւն են ձեռք բերում,
հաւատացնում են միամիտներին, որ ընկերվա-
րականները դէմ են ազգութեան, դէմ են կրօնի :

Այո՛, մենք դէմ ենք կրօնի անունով շահա-
գործութիւններ անողներին, բայց յարգանքով
ենք վերաբերում դէպի ամէն տեսակի ներքին,
անկեղծ հաւատք. մենք քողում ենք, որ գիտու-
թիւն սովորին անհատները եւ դրա համեմատ էլ
վերագնահատեն իրենց հաւատն ու համոզումնե-
րը :

Իսկ ազգութեան գաղափարին մենք ոչ միայն
դէմ չենք, այլ ջերմ պաշտպան, նրա համար գոհ-
ուելու պատրաստ :

Միայն մեր հասկացած ազգն ու ազգութիւնը

տարբեր է կղերի, ազնուականի եւ բուրժուայի
ըմբռնած ազգութիւնից :

Ներկայ աշխատութիւնով զալիս ենք ցոյց
տալու, թէ ի՞նչպէս ենք հասկանում մենք ազգա-
յին հարցը, ազգութեան ծագումը, նրա զարգա-
ցումը եւ նրա լուծման ուղին :

Մեր «Դէպի Փեղերացիա» գրքի 264-278 ե-
րեսները նուիրուած են այդ նոյն հարցի գործնա-
կան լուծմանը : Իսկ ներկայ հետազոտութեան
նպատակն է տալ ազգային հարցի տեսական հիմ-
քերն այնպէս, ինչպէս այդ ըմբռնում է նորագոյն
գիտութիւնը :

Մենք մեր նպատակին հասած կը լինենք, ե-
թէ հայ երիտասարդութիւնը կարդայ այս գոր-
ծը, հետաքրքրուի ազգային մեծ խնդրով եւ դիմէ
նրա աւելի մանրամասն ուսումնասիրութեան, օգ-
տուելով թէ մեր մատնանիշ եղած եւ թէ այլ աղ-
բիւրներից :

Գ. ԽԱԺԱԿ

1911 թ. Հոկտեմբեր

20 Ն

ԼԱԻԻՆ ԱՐՁԱԳԱՆԳՈՂ, ՎԱՏԻՆ ՀԱՐՈՒԱԾՈՂ

ԵՒ ԱՆՁՆԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍՏ

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ

ՆՈՒԻՐՈՒՄ Է ՀԵՂԻՆԱԿՆ ԻՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԸ:

Գ Լ ՈՒՒ Ա.

Ներածութիւն: Ազգն ու Պետութիւնը հին Արեւելքում: Ազգութեան ծագումը Յունաստանում եւ Հռոմում, Միջին դարերում եւ նոր ժամանակներում: ԺԹ. դարը:

Կան Հասարակական այնպիսի երեւոյթներ, որոնք երկա՛ր տարիներ ու դարեր գոյութիւն են ունեցել, բայց որոնց կողքով մտածող մարդկութիւնն անց է կացել տարիներ ու դարեր չարունակ, առանց կանդ առնելու նրանց վրայ, առանց ստորագծելու նրանց, որովհետեւ այդ երեւոյթները միշտ համարուել են պարզ, ակնեքեւ, ինքնախնայեալ Հասկանալի: Նրանց էութեան, նրանց որակի, ծագման ու գոյութեան մասին կասկածներ երբեք չեն եղել, այդ պատճառով ալ գիտութիւնը կանդ չէ առել նրանց վրայ:

Այդպիսի համամարդկային երեւոյթներէց են ազգ եւ ազգութիւն հասկացողութիւնները:

Յունական ծաղկած գրականութիւնն իր Պըլատոններով ու Արիստոտէլներով՝ անց է կացել եւ այդ հարցի վրայ ուշք չէ դարձրել: Նոյն ձեւով վարուել էին արդէն եղիպտական եւ ասորես-

տանեան նշանաձեւ գրականութիւնները : Նոյնն
արեց եւ հռոմէական խոշոր գրականութիւնն իր
փառապանծ իրաւագիտական բաժնով :

Ազգն ու ազգութիւնը , սակայն , կային , դո-
յութիւն ունէին հին շրջանում : Աքեմէնեան
Պարսկաստանը , Դարեհ Վշտասպեանի պարսիկ
ազգը կար : Կային ե՛ւ Ասորեստանցիները , ե՛ւ
Բաբելոնացիները , ե՛ւ Ասորիները , ե՛ւ Հայերը , ե՛ւ
Վիրք եւ Աղուանք... Իսկ Յունաց ա՞զգը : Նա
կար , նա իր ազգային դոյութիւնն զգում էր , թէ-
եւ ներքնապէս բաժանուած էր «Պոլիս»ներէ կամ
մանրիկ «քաղաք-պետութիւններէ» :

Նա կար եւ խիստ շեշտուածօրէն , երբ՝ իբր
«Հելլէն» զուրս էր գալիս Դարեհներէ ու Քսեր-
քսէսներէ դէմ :

Հռոմէական , Իտալական կամ Լատինական
ազգութեան մասին խօսիլն անգամ աւելորդ է :
Հռոմը մի քաղաք-պետութիւն , մի Polis էր , որ
տիրեց իր շրջապատ երեք ցեղերին — Էտրուրա-
ցիներին , Սարինացիներին եւ Լատիններին : Այս
վերջինների լեզուն յարատեւեց , դարձաւ Հռոմի
պետութեան լեզուն , իսկ յետոյ ամբողջ Իտալիան
ձուլուեց , դարձաւ մի ազգ :

Ազգերի ու ազգութիւնների ծագումն Արեւել-
քում թաղուած է դարերի մթութեան մէջ , ինչ-
պէս եւ պետութեան ծագումը : Մարդկային խու-
ղարկու միտքը դեռ եւս չէ կարողացել այնքան
նիւթեր հաւաքել Արեւելքի վերաբերմամբ , որ

կարողանայ թափանցել այդ հին մթութեան գիր-
կը, մտնել նախա-պետական շրջանները, տոհմա-
կան կազմի մէջը եւ ապա հետեւիլ տոհմերի զար-
գացմանը, ցեղերին ու նրանցից կազմուող ազ-
գութիւններին :

Տարբեր է պատկերը Յունաստանում եւ Հը-
ռոմում : Այդտեղ մենք կարող ենք որոշ պարզու-
թեամբ հետեւիլ պատմութեան ընթացքին : Գրո-
տի, Մօմզէնի, Նիբուրի, Ֆիւստէլ դը Կուլանժի,
Բախօվէնի եւ շատ ուրիշների անգնահատելի հե-
տազօտութիւնները, յոյն ու լատին պատմիչների
ու փիլիսոփաների թողած ահագին զրական դան-
ձերը մեր աչքի առաջ պարզում են յոյն ու լատին
ազգերի նախա-ազգային կեանքը, նրանց գէնսը
կամ տոհմը, նրանց ֆրատրիան կամ գէնսերի
խումբը, նրանց տրիբին կամ ցեղը, նրանց ցե-
ղերի զաշնակցութիւնը : Մենք տեսնում ենք քայլ
առ քայլ, թէ ինչպէս միեւնոյն րասայի (ցեղի)
մարդկային խմբերը, երկա՛ր դարեր ապրելով
տոհմական բարբարոս կազմով, աստիճանաբար
մօտենում են իրար, խառնւում, կազմում են յու-
նական ու լատինական «Polis»ը կամ քաղաք-պե-
տութիւնը, որի անունը Փրահսիացի գիտնական
Ֆիւստէլ-դը-Կուլանժը կնքել է «La cité antique»
(Հնադարեան քաղաք) (*) : Այնուհետեւ, մեր աչ-

(*) Տե՛ս — Fustel-de-Coulange — «La cité
antique» :

քի առջեւ, գրաւոր պատմութեան ընթացքում, մենք տեսնում ենք, թէ ինչպէս յունական մանրիկ պետութիւնների ժողովրդները — Կորնթացիք, Թերաքացիք, Սպարտացիք, Աթենացիք եւ այլն, նախ մնալով իբր առանձին-առանձին քաղաք-պետութիւններ, կազմում են կամաց-կամաց պետութիւնների ու կրօնական համայնքների դաշնակցութիւններ, Ոլիմպեան խաղեր եւ այլն, որոնց միջով աստիճանաբար դարբնւում է «Հելլէն» ազգը:

Նոյն դարդացման գործողութիւնը մեր աչքի առջեւ կատարւում է նաեւ Իտալիայում: Հռոմը, որ հիմնւում է Տիրեր գետի ափին, եօթը բլուրներից մէկի վրայ, նախ ծառայում է իբր հանդիպման ու փոխանակութեան վայր բոլորովին բարորոս Լատինացիների, Սաբինացիների եւ Էտրուսկների միջեւ: Այդ երեք ժողովրդների խառնուրդից կազմակերպւում է հռոմէական հասարակութիւնն իր գէնտերով (տոհմ), կուրիաներով (ծուխ), ցէնտուրիաներով (հարկերեակ) ու տրիբներով (ցեղ): Այդ սկզբնական տոհմական կազմից դարերի համայնակեցութեան ընթացքում դարբնւում է հռոմէական ազգը կամ «ազգն լատինացւոց»: Հռոմը նախ գրաւում, ձուլում է իր մէջ (ինքն էլ ձուլւում է նրանց մէջ) Լացիումը, յետոյ Էտրուրիումը, յետոյ էլ Սարդիումը: Երբ նա այդ միջին-իտալական երեք նահանգներն իրար է խառնում, միաձուլում եւ կազմում է մի

Հռոմէական ազգ, այնուհետեւ դուրս է գալիս
դէպի հարաւ. դրաւում է ամբողջ հարաւային Ի-
տալիան, անցնում է Սարդինիա, Կորսիկա, Սի-
կիլիա: Իսկ յետոյ Հաննիբալից ազատուելով, նա
դիմում է դէպի հիւսիս: Շուտով ամբողջ Իտալի-
ան կաղմում է մի ազգութիւն: Եւ այնուհետեւ
Հռոմը տարածւում է ամբողջ Միջերկրականի ա-
ւազանում, ամէն տեղներս տանելով իր կրօնը,
կրանոց ու միաձուլող ազգութիւնը, իր յղկող
կուլտուրան: Նրա ազգութիւնն ագրիւսիվ կամ
յարձակողական է: Նրան դիմադրում են յոյներն
ու արեւելքի ազգութիւնները, որ արդէն ազգա-
յին ինքնազրտակցութեան եկել էին, իսկ Իբեր
եւ Կելտ ժողովրդները ձուլւում են ամբողջովին
կամ մասամբ:

Երբ գերմանական ցեղերը ներս խուժեցին եւ
կործանեցին Հռոմէական կայսրութիւնը, երբ նրա
հսկայական դիակն իրենց մէջ պատառ-պատառ
արին, — ազգութեան գաղափարը մի քանի դար
չարունակ կորաւ, անյայտացաւ Եւրոպայի երե-
սից, պահուելով լոկ Բիւզանդիոնի կայսրութեան
մէջ: Դրա պատճառն այն էր, որ գերման ցեղերը
դեռեւս ապրում էին տոհմական կաղմով. նրան-
ցում դոյութիւն ունէին դեռեւս տոհմը կամ գէն-
սը, ցեղը (աշիրէթը) կամ տրիբիւն: Նրանցում
վարչական ամենաբարձ ձեւը դեռ եւս ցեղերի
դաշնակցութիւնն էր, որ ստեղծուած էր մարտա-
կան նպատակներով, Հռոմի դէմ կռուելու հա-

մար. պետութիւնը դեռ եւս ծնուած չէր նրանց մէջ իր դասակարգերով, իր ներքին զինուած ուժով՝ ներքին թշնամիների դէմ: Յեղը, րասան կար. բայց այդ րասայի ներսում դեռեւս չէր առաջ եկել որ եւ է շերտաւորում, որ եւ է ազդուութիւն:

Ահա այդ բարբարոսական շրջանում ապրող ցեղերը խուժեցին Հռոմի կայսրութեան տերրիտորիայի կամ երկրի մէջ, պատառ-պատառ արին նրան եւ հպատակեցրին իրենց: Օստ-Գոթեր, Վէստ-Գոթեր, Վանդալներ, Լոնգոբարդներ, Ֆրանկներ եւ այլ բազմաթիւ ցեղեր (եւ ոչ ազգեր) տիրեցին Հռոմէական այս ու այն ծաղկած պրովինցը (դաւառը). հաստատուեցին նրանցում՝ մի քանի չուումներից ու դեպերումներից յետոյ: Բարբարոս ցեղերը, ենթարկուելով հռոմէական բարձր կուլտուրային, նրա մշակուած Լատինական լեզուին, հաղորդեցին տիրուած երկրի կիրթ ազգաբնակչութեանն իրենց բարբարոսութեան մի խոշոր մասը եւ ստեղծեցին միջնադարեան կուլտուրան, որ բաւական ստոր էր յունական եւ հռոմէական դասական կուլտուրայից, բայց բաւական էլ բարձր էր գերման բարբարոսութիւնից: Հռոմէական լեզուն յաղթեց բոլոր այն ցեղերին, որոնք բնակութիւն հաստատեցին Միջերկրականի ափերից սկսած մինչեւ Հռենոս գետը եւ Տիրոլեան լեռները, իսկ յունական լեզուն ու ազդուութիւնը յարատեւեց Բալկանեան թերակղզում: Հը-

ռենտից հիւսիս կրկին մնացին գերմանական ու սլաւոնական բարբարոս ցեղերն իրենց նախկին վիճակում, ենթակայ կուլտուրական դանդաղ զարգացման:

Արեւմտեան Եւրոպայում թաղաւորում էր լիակատար պարտիկուլարիզմը կամ բաժան-բաժան, աւատական կենցաղը: Չկար դեռ եւս ոչ մի ժողովուրդ, որ գիտակցէր ինքն իրեն իբր մի ազգ, մի ազգութիւն: Հռոմէական ազգութեան գաղափարը, որ յարձակողական, կլանող էր, եւ իբր այդպիսին, նուաճող ու տիրապետող, մարսող ու ձուլող էր բոլոր տիրուած ազգութիւններն, այդ ազգութիւնը չքացաւ, խառնուելով գերմանական բարբարոսական կազմի հետ:

Կարլոս Մեծի հիմնած խոշոր, կենտրոնացած պետութիւնը չունէր ոչ մի ցեղական, ազգային կամ րասային հիմք. նա մի ժամանակաւոր տիրապետութիւն էր, որը եւ նրա ժառանգների օրով բաժան-բաժան եղաւ, չկարողանալով ծընունդ տալ ազգային ամբողջութեան գաղափարին:

Սակայն հռոմէական կուլտուրան իր ազդեցութիւնն արեւ էր. արդէն առաջացել էին ռոմանական ցեղեր, որոնք խառնուրդ էին գերմաններին եւ լատինացած տեղական ցեղերին: Ստեղծուել էին խառնուրդ ռոմանական լեզուներ, որոնք կամաց-կամաց բաժանոււմ, դուրս էին գալիս ազաւազուած միջնադարեան լատիներէնից: Հռենոսից

հիւսիս անխախտ էին մնում գերմանական և սլաւոնական բարբառները, դեռ եւս չվերածուելով մի ազգային լեզուի:

Քաղաքական ասպարէզում տիրապետողն էր աւատականութիւնը, ծայրայեղ ապակենտրոնացումը կամ, աւելի ճիշդը, պարտիկուլարիզմը (բաժան-բաժան վիճակ): Ամէն մի փոքրիկ նահանգ, ամէն մի գաւառ, նոյն լակ ամէն մի գրդեակ՝ իր շրջապատ մի քանի գիւղերով — ներկայացնում էր մի ուրոյն քաղաքական միութիւն, ունէր իր սեփական պատմութիւնը, իր յատուկ զարգացումը, իր ցաւերն ու դարձերը, իր ուրախութիւնն ու վիշտը: Տիրող բնատնտեսութիւնը չէր ստիպում ամենեւին այդ առանձնացած մարդկային խմբակներին շփուելու, իրար խառնուելու, քիչ ու շատ խոշոր միութիւններ կազմելու:

Այդ ինքնուրոյն մանր հասարակութիւնների մէջ կար մի բնդհանուր կապող տարր՝ կաթոլիկ եկեղեցին: Բայց նա էլ ամբողջապէս դէմ էր ազգութեան դադափարին, որովհետեւ տարածուած էր բոլոր ցեղերի ու ժողովրդների մէջ. բոլորը նրա հօտն էին, ամէն ցեղից նա իր գիրկն էր ընդունում թէ ոչխարներ թէ տաղանդաւոր հովիւներ, բոլորն նա ստիպում էր աղօթել մի լեզուով — լատիներէնով, որը կազմում էր եկեղեցու միջազգային զէնքը: Եկեղեցու քոգման (հաւատալիքը) ասում էր, որ ազգերը եւ լեզուները չարի ծնունդ են. նրանք առաջ են եկել Բարեւոյնի աշ-

տարակաշինութեան ժամանակ, երբ Եհովան իբր պատիժ ըմբոստացած մարդկութեան, խառնակեց նրանց լեզուները մինչ այն աստիճան, որ իրար հասկանալ անկարող եղան եւ իրենց յանդուգն ու մեղսալից շէնքն այլեւս չկարողացան կառուցանել: Պարզ է, որ այդ հաւատալիքի տակ թաքնուած էր կաթոլիկ եկեղեցու շահը, ընդհանուր տիրապետութեան ձգտումը:

Ուշադրութեան արժանի է այն, որ արեւելեան կամ հայ եկեղեցին բաժանուեց արեւմտեանից շատ վաղ: Նա նրանց հետ էր միայն 3 տիեզերական ժողովներում, իսկ Քաղքեղոնի ժողովով (451 թուին) նա առանձնացաւ, դարձաւ զուտ ազգային եկեղեցի, որովհետեւ արեւելքում ազգութիւն արդէն կար, զոյութիւն ունէր: Արեւմուտքի եկեղեցիները միացած մնացին մինչեւ թ. դարը: Նրանք վերջնականապէս բաժանուեցին Յօտիոս պատրիարքի օրով (812 թուին), երբ Արեւելեան կամ Բիւզանդիոնի կայսրութիւնն արդէն հելլէնացել, յունացել էր, երբ նրա լեզուն վերջնականապէս յունարէնն էր դառել, — մի խօսքով՝ երբ յոյն ազգութիւնը վերականգնել էր Բաղկանեան թերակղզում: Իսկ Հռոմի եկեղեցին մինչեւ վերջն էլ մնաց կոսմոպոլիտ եւ երբեք չը վերածուեց ազգայինի:

Կը նշանակէ, Եւրոպայում ամբողջ միջին դարերում տիրում էր ծայրայեղ բաժանականութիւնը. ազգութեան դադափարը չկար: Միակ ըն-

դարձակ ու հետեւողականօրէն կենտրոնացած հիմնարկութիւնը կաթոլիկ եկեղեցին էր, այն էլ կոստանայուիտ կամ ասլադգային էր բառիս ամենալայն եւ ամենատարածուած մտքով: Նրա համար բոլոր ժողովրդները մի հօտ էին, որի զլխին եկեղեցականները հովիւ էին, որ խուզում էին ամէն կողմից: Թէ հօտի եւ թէ հովիւների մէջ ազդութիւն, լեզու, սովորութիւններ չէին հարցնում, այլ լոկ մի բան — հաւատ, կաթոլիկական դաւանանք: Իր դործածած միակ լեզուի, իր ունեցած միօրինակ ու զօրեղ դիսցիպլինայի կամ կարգապահութեան շնորհով՝ նա հանդիսանում էր մի ուժեղ հիմնարկութիւն, որ կրճում, յըդկում, հարթում էր իր անդամների ազգային ու ցեղային առանձնատկութիւնները. իր տարամերժ հաւատալիքի (դոգմ) շնորհով նա ստեղծում էր հոգեւոր անհատների մի ահագին խումբ, որի բոլոր անդամների մտածելակերպն ու նոյն իսկ զգալակերպը դերազանցօրէն միանման էին:

Կաթոլիկ եկեղեցին, մի կողմից հանդիսանալով իբր կրօնական հիմնարկութիւն, միւս կողմից դոգմի (հաւատալիքի) անբաժան մաս դարձրեց աշխարհային տիրապետութիւնը, որով դարձաւ նաեւ քաղաքական մի շատ հզօր ազդակ միջին դարերում: Նրա աշխարհական իշխանութեան ձգտումն աւելի եւս հակադիր էր ազգային զբաղմունքի եւ առհասարակ, ազդութեան դարգացմանը, որովհետեւ նա իր տիրապետութիւնը ձգ-

տում էր տարածել իր բաղմալեզու եւ բաղմացեղ
հօտի ամբողջութեան վրայ :

Մարդկանց թուի աճեցողութեան բնական
փաստը, դրա հետ միասին դարերի համայնակե-
ցութեան շնորհով առաջացած կուտակուած
մարդկային փորձառութիւնը, որ աղբիւրն է դի-
տութեան եւ զաղափարի, վերջապէս՝ այդ աճած
եւ աճող մարդկութեան բաղմացած կարիքներին
բաւարարութեան տալու զարգացող միջոցները,
տնտեսական-արտադրական նորանոր ձեւերը ծը-
նունդ տուին մի կողմից միջնադարեան քաղաք-
ներին, իսկ միւս կողմից կենտրոնացող պետու-
թիւններին :

Հռոմի կալտուրական ժողովրդները եւ գեր-
ման բարբարոս ցեղերը, երկար դարերի միա-
նակեցութեան շնորհով, աստիճանաբար սկսեցին
որոշ խօշոր վայրերում միանման դառնալ :

Խաչակրաց արշաւանքների տուած փորձերն
ու դիտութիւնը, տաճիկների գրաւումներն ու
յոյների արտագաղթը, նրանց իտալիա լցուելը,
իտալական մանր հանրապետութիւնների ընդար-
ձակ առեւտուրը եւ զարգացումը տեղի տուին վե-
րածնութեան դարին, որի ազդեցութեան տակ
զանազան գիւտեր իրար յաջորդեցին : Բարտոլդ
Շվարց գերման արեգան գտաւ վառօդը, Գու-
տէներերը՝ տպագրութիւնը, Վասիլո-դէ-Գաման
չրջեց Բարեյուսոյ Հրուանդանը եւ ծովով դնաց
Հնդկաստան, Կոլումբոսը գտաւ Ամերիկան եւ
այլն, եւ այլն :

Այդ գիւտերի — մանաւանդ վառօդի եւ ար-
ֆրքուզի (սկզբնական թնդանօթ-հրացանի) շը-
նորհով՝ սոված մանր աղնուականութիւնն ըն-
կաւ, զսպուեց եւ հպատակուեց թագաւորին կամ
կենտրոնական իշխանութեանը։ Այդ ամէնի վրայ
աւելացաւ տնտեսական ֆակտորը (ազդակը)։
Մարդկանց թուի բնական աճեցողութիւնը պա-
հանջում էր նոր ձեւի տնտեսութիւն, — մի այն-
պիսի տնտեսական ձեւ, որն աւելի արդիւնատու
լինէր, քան բուն միջնադարեան արհեստաւորա-
կան մանր տնտեսութիւնը։ Միւս կողմից՝ մարդ-
կանց աճող կարիքներին բաւարարութիւն տալու
չատ միջոցներ էին սովորել եւրոպացիներն արե-
ւելքում, խաչակրաց արշաւանքների ժամանակ։
Օտար վայրերից փոխ առած այդ նորութիւնների
վրայ աւելացել էին վերածնունդ գիտութիւննե-
րի ու զաղափարների ազդեցութիւնները, կա-
տարուած նորանոր գիւտերը։ Այդ բոլորը համա-
դրուելով, ԺԴ.-ԺԵ. դարերում մի կողմից հը-
զօրացրել ու զարգացրել էին համաքարական կադ-
մերը, իսկ միւս կողմից աստիճանաբար ծնունդ
էին տուել նոր տնտեսակարգին — մանուֆակ-
տուրական (ձեռագործական) արտադրութեանը։
Արտադրութեան մէջ ներմուծուած կենդանու-
թիւնն ու կատարելութիւններն իրենց կարգին,
նոր կեանք էին ներշնչել շրջանառութեանը կամ
առեւտրին։ Ապրանքների փոխանակութիւնը բա-
ւական արդէն զօրացել էր, թէեւ դեռ ճանա-

սարհների անսպաճութիւնն ու ներքին չուկա-
յում տիրող խռնդոտները բազմաթիւ էին :

Օր ըստ օրէ զարգացող փոխանակութիւնն
ստիպում էր մարդկանց աւելի եւ աւելի յաճա-
խակի չփումներ ունենալ : Միեւնոյն լեզուով,
կամ համարեա միատեսակ բարբառներով խօսող
միջնադարեան բաժան-բաժան համայնքներն ըս-
կսում էին իրար մօտենալ, իրար հասկնալ : Որ-
քան աւելի զարգանում էր փոխանակութիւնը եւ,
զրա հետ միասին, որքան աւելի կենտրոնական
իշխանութիւնը զսպում էր մանր-մունր ֆեոդալ-
ներին եւ իր իշխանութեանն էր ենթարկում նը-
րանց իրաւասութեան տակ սոսանձնացած կեան-
քով ապրող համայնքներն, այնքան աւելի մի ժո-
ղովուրդ, մի ազգ լինելու դադարփարը զարգա-
նում էր այդ նման բարբառներով խօսող ժողո-
ւրդների մէջ :

Արդէն ժ.Դ. դարի վերջերում եւ ժ.Ե.ի ըս-
կզրներում մենք տեսնում ենք, թէ ինչպէս ազ-
գային պետութիւնները կամաց-կամաց ծնունդ
են առնում ու զարգանում Ֆրանսիայում, Իս-
պանեայում, Անգլիայում, մասամբ Աւստրիա-
յում : Ժ.Դ. դարն ազգային պետութիւնների լիա-
կատար ուժի զարգացման շրջանն է : Այդ պետու-
թիւններն արդէն ոչ միայն կազմակերպուել են.
ոչ միայն արդէն կան Ֆրանսիական ազգ, Իսպա-
նական, Անգլիական, Նեդերլանդական ազգ, —
այլ եւ այդ ազգային պետութիւնները, որոնց բը-

նակիչները, դարերու համայնակեցութեան շնորհով յղկուել, մի ազդ են դառել, այլ եւս չեն բաւականանում իրենց սահմաններով: Նրանք դառնում են ազդամուկ կամ շովինիստ, տարամերժ, դառնում են զրաւող, յափշտակող, կլանող, մի խօսքով՝ իմպերիալիստ: Գրամսն միջոցը միայն պատերազմը չէ, այլ եւ խնամիրութիւնը, օժիտը, զրամով զնելը, ժառանգութիւնը, երկրները իրար հետ փոխանակելը, կրօնը եւ այլն, եւ այլն:

Այնուհետեւ ազդ եւ պետութիւն հասկացողութիւնները խառնուում են իրար: Այդ գաղափարների խառնաշփոթութիւնը դեռ մինչեւ օրս էլ տեսում է Եւրոպական դրականութեան ու դիտութեան մէջ:

Պետութեան ծագման ու զարգացման հարցը թէ միջնադարեան, թէ՛ նոր դարերի դրականութեան մէջ մեծ տեղ է բռնում, իսկ մինչեւ ժժ. դարի սկիզբները դուք համարեա՞ ոչինչ չէք կարող դնել ազգային խնդրի վերաբերմամբ: Նրանով չգրադուեցին ոչ Իւմը, ոչ Լոկկը, ոչ Հոբսը. նրա վրայ ուշք չդարձրին ժժ. դարի Ֆրանսիական լուսաւորիչները — Մոնտեսքիէօ, Վոլտէր, Բուսսօ, Դիդըրօ, Հելվէցիուս, Հոլբախ, Կոնդորսէ եւ այլն: Ազդութիւնը կար, գոյութիւն ունէր եւ շատ սուր կերպով երբեմն-երբեմն ըզզալ էր տալիս իր գոյութիւնն, ինչպէս օրինակ ժՁ. դարի երկրորդ կիսում Նեդէրլանդում, Գէօգերի ասպտամբութեան ժամանակ. հոլանտական

ազգը ոտի էր ելել իսպանական Փիլիպպոս Բ. թագաւորի բռնութիւնների դէմ. կամ ԺԲ. զարի վերջում, երբ Աւստրիական լուսաւորումը միահեծան Յովսէփ Բ. արհամարհելով պատմական-ազգային բոլոր սահմաններն, ուզեց նոր տեսակի վարչական բաժանումներ ներմուծել իր խոշոր կայսրութեան մէջ եւ բնդհանուր պաշտօնական մի լեզու — գերմաներէն ներմուծել ամէն տեղ, իր պաշտօնեաների միջոցով: Զգիմացաւ Հոլլանտիան այդ ազգային բռնաբարմանը եւ ապստամբուեց բաց աշկարայ: Ապստամբուում էր եւ Մալթական ազգը, բայց աւստրիական բանակները թոյլ չտուին:

Ազգերի ցնցման, նրանց լմբոստացման փաստեր բաւական շատ էին պատահում, բայց ոչ ոք ուշք չէր դարձնում այդ հարցի վրայ, ոչ ոք նրանով չէր զբաղւում, որովհետեւ ամէնքի համար նա խիստ պարզ, ինքն ըստինքեան հասկանալի էր թւում:

Պայթեց Փրանսիական Մեծ Յեղափոխութիւնը: Փրանսիական ազգի ներսում իրար զարնուեցին դասակարգերը: Զարդացած ու հարստացած երրորդ դասակարգն, իր հետ ունենալով աղքատացած զիւղացիութիւնն ու բաւական ստուար բանուորութիւնը, դուրս եկաւ հարուստ, բայց փոքրաթիւ հոգեւորականութեան, կալուածատէրերի եւ սնանկացած ազնուականութեան դէմ: Փրանսիական ազգը կար, նրա դոյութիւնը ոչ ոք

չէր մերժում: Այդ դեռ բաւական չէ. Լիւզովի-
կոս Ժ.Դ.ի օրով նոյն իսկ պետութեան «բնական
սահմանները» համարում էին Փրանսիական լեզ-
ուի տարածման վայրերը: Բոսսիւէի, Մալբերան-
շի եւ այլ հոգեւորականների օրով նոյն իսկ եկե-
ղեցին ջոկեցին կաթոլիկական ազգային եկե-
ղեցուց եւ կոչեցին զազգիական ազգային եկեղե-
ցի:

Յաղթական երրորդ դասակարգը, իր հեռ-
ունենալով ազգատաջած գիւղացիութիւնն ու
բանուորութիւնն՝ իրաւունքով համարում էր ի-
րեն «la nation française» — Փրանսիական ազգ,
որի դէմ դուրս էին եկել Երկրից փախած ազնւ-
ականները — Էմիգրանտները (les émigrés):
Ազգութեան մասին ոչ ոք չէր խօսում. բոլորը
ճանում էին «մարդու եւ քաղաքացու իրաւունք-
ներից»: Թէեւ «Ազգային պահակը» (Garde natio-
nale) եւ այլ «ազգային» մակդիրը կրող հաստա-
տութիւնները կային, բայց ազգային հարցի փո-
խարէն ամէնքի լեզուի վրայ խաղում էին համա-
մարդկային իրաւունքներն ու սկզբունքները: Եւ
ինչո՞ւ պէտք էր այլ կերպ լինէր, երբ Փրանսիա-
կան մշակուած, քաղցր լեզուն եւ ծաղկած գրա-
կանութիւնը տարածուած էին ամէն տեղ. նրանց
մրցակից չկար դեռ ոչ մի երկրում: Արքունիքնե-
րը բոլոր երկրներում դորձ էին ածում Փրանսիա-
կան լեզուն, իբր նշան քաղաքակրթութեան: Ֆր-
րանսիան վաղու՛ց դառել էր գրաւող, յղկող,

կլանող, կարճ՝ Իմպերիալիստ։ Այդ Իմպերիալիզմն աւելի եւս սաստկացաւ՝ շնորհիւ յաղթական բուրժուազիայի եւ յեղափոխութեան ու Նապոլէոնեան ժեներալներին ու մարէշալներին (մեծ դորափարներ)։ Ուր որ մտնում էին Փրանսիական յաղթական բանակները, հետեւելը տանում էին Ֆրանսացիութիւն, եթէ կարելի է այդպէս ասել։ Իրենց երկրին մօտիկ վայրերը — Զուիցերիան, Հոենսեսան բոլոր երկրները, Սափոյեան եւ Իտալիան, նոյն իսկ Իսպանիան եւ Պորտուգալիան վերածուեցին առանձին պետութիւնների, որոնց պետերը եւ վարիչ խաւերը Փրանսիացիներ էին։ Սրանք բնականօրէն, ամէն կերպ աշխատում էին Ֆրանսիացեւ այդ երկրները, ոտի տակ տալ հրապտակ ազգերի ազգային առանձնայատկութիւնները, յղկել ամէն ինչ, վերածել Փրանսիական «ազգային կոսմոպոլիտիզմին», եթէ կարելի է այդպէս ասել։ Այո՛, դա իսկապէս ամենակոպիտ, ամենադուրեւի ձեւերով Փրանսիացում էր, բայց քողարկուած «մարդու եւ քաղաքացու», բացարձակ, ապազգային կամ կոսմոպոլիտական դիմակով։ Ֆրանսիացիք, մանաւանդ Նապոլէոնի օրով, համոզուած էին, որ Փրանսիացին բարձր է բոլորից եւ բոլոր ազգերը պարտաւոր են քաղաքակրթութիւն, այսինքն Փրանսիանալ։

Նապոլէոնեան ճնշումն ամենից աւելի զգալի էր Պրուսիայի, այդ միաձոյլ ազգային պետութեան վրայ։ Եւ ահա այդտեղ մենք ամենից առաջ

նկատում ենք մի նոր ներքին ազգային քաղաքականություն, որի միակ ձգտումն էր մրցել Փրանսիական ազդեցության դեմ, զործի հրաւիրելով ազգի բոլոր խաւերը: Շտայն եւ Հայդէնբէրգ ներքին զործերի նախարարները լայնացնում են Պրուսիայում տեղական ինքնավարութիւնը եւ գրգռում «ազգին» ինքնագործունէութեան, այնինչ դրա դիմաց Նապոլէոնեան մեքենական ցեկւորալիզմը (կեզրոնացումը) կամազուրկ էր անում Փրանսիական ազգին: Զինուորական միւստր Շարնհորստը վերակազմեց Պրուսիական բանակը, երբ Տիլզիտի դաշնագրութեամբ Նապոլէոնն ստիպեց Պրուսիային 42000ից աւելի զօրք չպահել իբր մշտական բանակ: Տաղանդաւոր նախարարն անմիջապէս ներմուծեց ընդհանուր զինուորագրութիւն, տալով բանակին Պրուսական դոյն, եւ կրճատեց իսկական ծառայութեան ժամանակը, հաստատելով պահեստի գնդեր: Բոլոր երիտասարդները պալիս էին իսկական բանակը, երկու տարի վարժւում՝ ինչպէս դպրոցում, եւ ցրւում իրենց տեղերը: Իսկական բանակը կրկին 42000 էր, բայց կարճ ժամանակում բոլոր Պրուսական երիտասարդութիւնը լանդվէիր կամ պահեստի զինուոր էր:

Հետաքրքիր է թէ ինչ էր գրում Բոնապարտի եղբայրը — Վէստֆալիայի թագաւոր Ժերօնիմն իր եղբորը — Նապոլէոն կայսրին. «Եթէ պատերազմ սկսուի, Հոեմոսից մինչեւ Օդեր եղած բո-

լոր նահանգները կ'ապստամբուեն: Այս սպառնա-
կան շարժման պատճառը միայն ատելութիւնը
չէ, որ տաժում են այդտեղի ժողովրդները դէպի
Ֆրանսիան եւ ֆրանսիական լուծը. աւելի խո-
շոր նշանակութիւն ունեն ժամանակակից քըշ-
ուառութիւնները»... *Եւ այնուհետեւ ճարակօրէն*
նկարագրում է նա իր եղբօրը Հռենոսեան երկըը-
ներում տիրող նիւթական թշուառութիւնները եւ
վերջում աւերացնում է. «Պէտք է վախենալ ազ-
գերի յուսահատութիւնից, որոնք կորցնելու ո-
չինչ չունեն, որովհետեւ ամէն ինչ արդէն խլել
են նրանցից»:

Բռնարարուած ազգային դիտակցութիւնը
գլուխ բարձրացրեց ամենից աւելի չսպասուած
վայրում — Պիլիքեան թերակղզում: Համաշ-
խարհային տիրապետութեան փառաւոր շրջանից
յետոյ, Իսպանիան ընկել, քայքայուել էր: Արեւ-
մտեան Եւրոպայի ոչ մի երկիր այնքան յետ չէր
մնացել արտադրութեան ու առեւտրի տեսակէ-
տից, որքան Իսպանիան, գոռոզ գրանտներէ (ազ-
նուական) եւ ինկիզիցեայի (հաւատաքննու-
թեան) հայրենիքը, ոչ մի երկիր նրա չափ խա-
ւար ու անդրադէտ, կրօնական լծի տակ խեղդը-
ւած չէր: Չկար նոյն խաղ քիչ ու շատ բուրժուա-
զի, որի շարժումներով, որի շուկայ գրաւելու
ձգտումով սիրում են տառակեր մարքսիստները
բացատրել ամէն մի քաղաքական երեւոյթ:

Նապոլէոնեան լուծը չափազանց անտանելի

էր ոչ միայն իսպանական ճնշին բուրժուազիայի կամ բաւական զօրեղ ազնուականութեան համար, այլ եւ իսպանական ամբողջ ազգի, նրա գիւղացիութեան ու սակաւաթիւ բանուորութեան համար:

Ապստամբութեան առաջին ազգային դրօշը պարզօրէն Նապոլէոնի դէմ եղաւ Իսպանիան, որի ժողովուրդն իր գէրիլայով՝ իր մանր, պարտիզանական (հայդուկային) կռուով ուժասպառ առեց Մատէնայի նման մի մարեշալի: Իսպանացիներին օգնեցին եւ անգլիացիները Ուէլլինգտոնի, Նապոլէոնի այդ արժանաւոր հակառակորդի ղեկավարութիւնով: Եւ Ֆրանսիան երբեք չկարողացաւ տիրել Իսպանիային:

Իսկապէս Նապոլէոնի անկման թուականը ոչ թէ 1812 թիւն էր, ոռոտական պատերազմը, որի ժամանակ ոտի էր ելել ամբողջ ոռոտ ազգը, այլ 1809–1810 թուերը, երբ իսպանացիները դուրս մղեցին Ֆրանսիական զօրքերը: Նապոլէոնի աստղը թեքուեց այն ժամանակ, երբ ազգերը եկան գերակցութեան եւ շարժուեցին օտարի լծի դէմ:

Բուրբոնների վերադարձը կամ րեստորասիոնը, Վիեննայի վեհաժողովը եւ Սրբազան Դաշնակցութիւնը հանդիսացան դաճիճներ վերածընուել սկսող ազգութիւնների համար: Վիեննայի կոնգրէն եւ Սրբազան Դաշնակցութիւնը նորից հաստատեցին պետութեան սկզբունքը եւ ոտնահարեցին ազգութեան եւ մանաւանդ ազգային

պետութեան զազափարը :

Սրբազան Դաշնակցութեան հիմնադիրն Ալեքսանդր Ա. կայսրն էր, բայց նրա ողին կազմեց Աւետրիան՝ իր կանցլէրով — գլխաւոր նախարար տիրահոջակ Մետտերնիխով : Եւ Աւետրիան ամենից աւելի օգտուեց այդ Դաշնակցութիւնից, որովհետեւ ամենից նուազ էր նրանում ազգային պետութեան սկզբունքը : Այն ժամանակ, երբ Ռուսաստանը յենում էր իր մեծագոյն մասի միապաղաղ ոտը ազգաբնակչութեան վրայ, երբ Պրուսիան իբր հիմք ունէր իր Պրուսացի ժողովուրդը, — Աւետրիան, ամփոփելով իր մէջ 39 տեսակ ազգութիւն, չէր կարողանում գտնել իր պետութեան համար ոչ մի ազգային յենակէտ, որովհետեւ գերմանները չատ քիչ էին համեմատելով սլաւոնների ու մաջարների հետ : Նրա միակ հիմքը պատմական իրաւունքն էր, մի խախտող իրաւունք, որ կախուած էր լոկ ուժից :

Եւ ահա Մետտերնիխը, չար ոգու նման, խեղդում է ազգային ամէն տեսակ զիտակցական շարժում ամբողջ Եւրոպայում, փչրում, ոչնչացնում է ամէն տեսակ ժողովրդական ըմբոստացում — լինի նա Գերմանիայում, Բելժիկայում, թէ Բալկաններում... Խաւարն ու քէակսիւնի չար գեւն են թաղաւորում 1815 թուից մինչեւ 1830ական թուերը Եւրոպայում :

Բայց արթնանում, զիտակցութեան են գալիս մանր ազգութիւնները : Նախ պայթում է յու-

նական ապստամբութիւնը, որ 1820ից մինչեւ 1830 թիւը տեւելով, վերջացաւ յոյների անկախութիւնով: Ռուսաց Նիկոլա Ա. կայսրը պաշտպան կանդնեց յոյներին, որով եւ բաց արեց առաջին խոչը պատռուածքը Սրբազան Դաշնակցութեան մէջ:

1830 թուին Բելժիքան բարձրացրեց ապստամբութեան դրօշակը Հոլլանտական լծի դէմ: Վիեննայի Կոնգրէն ճնշել էր Բելժ ազգութիւնը, ենթարկելով նրան Հոլլանտիայի լծին: Յուլիսեան յեղափոխութիւնը 1830ին Ֆրանսիայում ելեկտրական հոսանքի նման անցաւ ամբողջ Եւրոպայով, ցնցելով ու ըմբոստացնելով մի տեղ մանր ազգերին ընդդէմ տիրապետողների լծի, մի այլ տեղ՝ — ժողովրդական դէմոկրատիական (ռամկավար) խաւերն ընդդէմ տիրող դասակարգերի:

1830ի Օգոստոսի 25ին ոտքի կանդնեց Բէլժիքան, եւ հոկտեմբեր 3ին արդէն կազմուեւ էր ժամանակաւոր կառավարութիւն: Մի շարք մանրիկ ընդհարումներից յետոյ, նոյն թուի Նոյեմբերին Լոնդոնի Կոնֆերանսը ձանաչեց Բէլժիքայի անկախութիւնը:

Յուլիսեան յեղափոխութեան երկրորդ ու զօրեղ արձագանգն եղաւ Լեհական ապստամբութիւնը: Լեհ ազգը դուրս եկաւ Նիկոլա Ա. կայսրի րէժիմի դէմ 1830 թուին, բայց ջարդ ու փրշուր եղաւ Փելլեմարչաւ (ընդհանուր զօրադուլի) Պասկեվիչի ահազին բանակից, եւ Լեհական ինք-

նախար նահանգն ու լեհական կառավարութիւնը
չքաջան աշնուհետեւ :

Նոյն թուին եւ հետեւեալ տարին ժողովրդա-
կան ապստամբութիւններն սկսուեցին Գերման-
իայում եւ Զուիցերիայում : Ըմբոստացած ժո-
ղովուրդը Գերմանիայում ոտի ելաւ բացարձակ
միահեծանութեան դէմ, իսկ Զուիցերիայում
մանր հանրապետութիւններն ազնուականութիւն-
ներէ դէմ : Բայց այդ տեղերում ազգային անկա-
խութիւնը կար, դասակարգերն էին մրցում ի-
րար դէմ :

Ազգային զիտակցութեան, վերածնութեան
ու անկախութեան երրորդ փորձը մենք տեսնում
ենք Իտալիայում 1831-32-33 թուերին Մօլենա-
յում եւ այլ քաղաքներում Մէնոտտի եւ Զիու-
դեպպօ Մաձձինիի առաջնորդութեամբ :

Իտալական մանրիկ պետութիւններում եւ
Աւստրիային ենթակայ նահանգներում սկսում
է ազգային շարժում . Իտալիան ձգտում է ազգա-
յին ամբողջութեան եւ անկախութեան : Բայց
Սրբազան Դաշնակցութեան չար ոգին՝ Մետտեր-
նիխը վրայ է հասնում . Աւստրիական զօրքերը
ճնշում են ապստամբութիւնը . Իտալիայի մի մա-
սը (հիւսիսը) մնում է օտար լծի տակ, իսկ միւս
մասերը Պապի եւ մանր մուկ իշխանների բռն-
նապետութեան տակ հիւծում են : Չէ ընկճւում
միայն Զիուդեպպօ Մաձձինին, այդ անխոնջ
հանրապետականը, որը 1833 թուին Մարսէլյում

Հիմնում է «Երիտասարդ Իտալիա» ընկերությունը
և քարոզում Իտալիայի միութեան գաղափարը :

Վրայ է հասնում կենսարար և երկունքով լի
1848 թուականը : Ֆրանսիայում տապալում է
բուրժուական միապետությունը և հաստատում
երկրորդ հանրապետությունը, որը ծնունդ տը-
ւեց Նապոլէոն Գ.ին : Փետրուարեան յեղափո-
խութեան լուրը Վիեննա հասնելուն պէս, պայ-
թեց յեղափոխությունն այնտեղ էլ : Ճնշուած,
հալածուած հոգիները միահամուռ նշանաբանն
էր — «Կորչի Մետտերնիխը» : Եւ նա կորաւ, թէ-
և Աւստրիան կրկին դուրս եկաւ այդ թուականի
փրկարար շարժումներից ոչ բոլորովին վերանո-
րողուած, կրկին հիւանդ ու անկանոն, աննոր-
մալ կազմով կրկին ինքնակալ :

Մարտի 13ին պայթեց յեղափոխությունը Վի-
եննայում : Մետտերնիխը փախաւ քաղաքից,
իսկ կայսրը տուեց սահմանադրութիւն, թէեւ
սկզբում կիսատ-սլոտաւ, բայց յետոյ, ամառը —
աւելի ընդարձակ իրաւունքներով :

Վիեննայի յեղափոխութեան լուրը հասաւ Ի-
տալիա : Այնտեղ արդէն բոլոր մանրիկ բռնակալ-
ները, նոյնիսկ Պիոս Թ. պապը, տուել էին սահ-
մանադրութիւն իրենց ըմբոստացած հպատակնե-
րին : Ինքնակալական լծի տակ հեծում էին միայն
Աւստրիական նահանգները՝ Լոմբարդո-Վենեց-
իան : Սակայն այդտեղ էլ, Վիեննայի բարրիկադ-
ների լուրն առնելուն պէս, իսկոյն ապստամբու-

Թիւններ ծագեցին Միլանում եւ Վենեցիայում : Իտալական բոլոր մանր պետութիւնների ազգաբնակչութիւնները ճնշում էին իրենց պետերին , պահանջելով զօրք հաւաքել ու շարժուել «բարբարոս օտարականներին» վրայ , ազատել Իտալիան օտարի լծից , ձեռք բերել «ազգային ամբողջութիւն եւ անկախութիւն» : Սարդինիայի թագաւոր Կարլ Ալրէքսանդր խրախուսուած այդ բոլորից , Տեչինօ դետն անցաւ եւ մտաւ Լոմբարդիա , Աւստրիական հողերը : Իտալիայի մի ծայրից մինչեւ միւսը բոլոր զօրքերն ու կամաւորները շարժուեցին դէպի հիւսիս , Աւստրիացիներին դէմ :

Զարթնեց եւ վաղո՛ւց թմրած Բօհեմիան : 1848ի յունիսի 2ին Չեխերն ազգային կոնգրէս հրաւիրեցին եւ որոշեցին փչրել Հաբսբուրգների լուծը : Նոյն ամսի 12ին Պրագայում պարզուեց ապստամբութեան դրօշը յանուն չեխ ազգի անկախութեան : Շինուեցին բարրիկադներ , կաղմբեց քաղաքացիներից գւարդիա կամ ազգային պահակ , սակայն Աւստրիական զօրքը , որի պետն էր իշխան Վինդիշգրեցը , շատ զօրեղ էր այդ վայրում : Զօրքը ոմբակոծութեան ենթարկեց Պրագան , յաղթեց ապստամբներին եւ կոնգրէս ցրեց :

Նոյն թուի սեպտեմբերին պայթեց Մաջարներին կամ Վենգրիացիներին ազգային ապստամբութիւնը Կոշուտ Լայոսի առաջնորդութեամբ : Ապստամբները փոփոխակի յաջողութիւնով 7-8 ամիս պատերազմեցին Աւստրիական բանակների

դէմ եւ 1849ի ամառն արդէն վերջնականապէս
յաղթել եւ դուրս էին քշել նրանց մաջարական
սահմաններէց, պատրաստուում էին մտնել հրա-
ժարուած Ֆէրդինանդ Բ.ի ժառանգ Ֆրանց-Յոզեֆ
կայսրի երկիրը, երբ վերջինս օգնութիւն
խնդրեց Ռուսիայից: Նիկոլայ Պաւլովիչն ուղար-
կեց 200000 զօրք Պասկևիչի եւ Լիզերսի ղեկա-
վարութեամբ: Աւստրիական եւ Ռուսական հսկա-
յական բանակներէց ջարդուած, ապստամբու-
թիւնն ընկաւ, եւ Աւստրիան հրէջաւոր դաժանու-
թիւնով վարուեց յաղթուածների հետ:

Պարտուեց եւ Իտալիան: Միլանն ու Վենե-
տիկը կրկին մնացին Աւստրիական լծի տակ:

Գերմանիայում, բացի բուրժուական երրորդ
դասակարգի դատակարգային շարժումները, տե-
ղի էր ունենում, սկսած Նապոլէոն Ա.ի օրերից,
նաեւ ազգային վերածնութեան ու միացման շար-
ժում, որը կրտով չափ կատարուեց 1848ին, իսկ
լիապէս իրականացաւ 1871ին:

1860ական թուականներին մենք տեսնում ենք
վերջապէս Իտալական ազգն ազատուած, մի կող-
մից շնորհիւ Գարիբալդիի յեղափոխական դոր-
ծունէութեան, միւս կողմից՝ շնորհիւ կոմս Կա-
ւուրի, Կարլ Ալբերտ եւ Վիկտոր Էմմանուէլ Թա-
ղաւորների (Սարդինական) բանակների ու զիպ-
լոմատիայի: 1866ին Իտալացիներին յաջողում է
միացնել եւ Վենեցիան, որ դեռ մնացել էր Աւս-
տրիայի ձեռքերում:

Յոյները ազգային անկախութիւն ձեռք բերելու մասին մենք արդէն խօսել ենք. մնում է մի քանի խօսք էլ ասել հին ընթերցան թուրքիայի լծի տակ հեծող միւս ազգերի մասին :

Դեռ Յունաստանից էլ առաջ, 1815 թուին Ղարա-Գէորգին, յետոյ էլ Օրբէնովիչը բարձրացրին ապստամբութեան ազգային զրօշը թուրքիայի դէմ : Մուղալիան եւ Վալախիան էլ նախ դատ-դատ, ապա միացած ուժերով, ձեռք բերին ազգային ինքնավարութիւն 40ական թուերին, մինչեւ որ թէ՛ Սերբիան, թէ՛ Ռումանիան 1877ի պատերազմի ժամանակ դարձան միանգամայն անկախ պետութիւններ :

Բուլղարիան, սկսած 1850ական թուերից, ձգտում էր ազգային անկախութեան, որին եւ հասաւ արիւնալի ապստամբութեան շնորհով, 1877ին, Ռուսաստանի օղնութեամբ : 1897ին ինքնավարութիւն ձեռք բերեց Կրեաէն : Մակեդոնիայի, Դիւրդիների, Արարների, Հայերի եւ այլ ազգութիւնների ձգտումներն ամենքին յայտնի են : Դրանք ձգտում էին ազատուել բռնապետական լծից, ստեղծելով սահմանադրական թիւրքիա, որի ներսում վարչական բարդ մեկնան այնպէս լինի կազմուած, որ մանրիկ ազգութիւնները վայելեն ազգա-կուլտուրական լիակատար ինքնավարութիւն : 1839 թուին Եգիպտոսը եւ Ֆէլլահ ազգութիւնը ազատուեց :

Եթէ յիշենք նաեւ Լեհաստանի ազգային ա-

պատմութեան փորձը 1860ական թուերին,
գրանով համարեա՝ վերջացրած կը լինենք մինչեւ
մեր՝ օրերը տեղի ունեցած ազգային վերածնու-
թեան շարժումների պատմութիւնը:

*
**

Մենք խոչտը դժերով առաջ բերինք ազգու-
թեան գաղափարի ծնունդն ու զարգացումը մարդ-
կային պատմութեան ընթացքում: Մենք ներկայ
եղանք նրա ծնելուն Յունաստանում եւ Հռոմում,
մենք տեսանք թէ ինչպէս, բարբարոսների արշա-
ւանքներով ու Հռոմի անկումով, ազգութեան գա-
ղափարը մի առ ժամանակ տեղի տուեց, մօտ
7-8 դար թաղուեց Հռոմի փլատակների տակ,
գերման պարտիկուլարիզմի (բաժանականու-
թեան) գրկում, եւ թէ ինչպէս, սկսած ԺԲ. դա-
րեց, աստիճանաբար նա վերածնուեց ու արտա-
գրեց ազգային պետութիւններ: Վերջապէս, հե-
տեւելով ազգութեան գաղափարի բնաշրջմանը,
մենք տեսանք, թէ ինչպէս իրար ետեւից ծնուե-
ցին ու զարգացան մանրիկ ազգութիւնները, ինչ-
պէս նրանք վերակենդանացան ԺԷ., ԺԸ. եւ մա-
նաւանդ ԺԹ. դարերի ընթացքում, երբ, մարդ-
կային գիտութեան շնորհով, ստեղծուեցին հա-
ղորդակցութեան ու արտադրութեան յարմարա-
դոյն միջոցներ, երբ կուլտուրան ու քաղաքակր-
թութիւնը դարձան ժողովրդների լայն խաւերի

սեփականութիւն, երբ ժողովրդական զանգուածները, մարդկային այդ անդիտակից հօտերը՝ եկան զիտակցութեան:

Մարդկային պատմութեան ընթացքում ազգութիւնները ընդհարումները չափազանց շատ են եւ աչք ծակող: Անկարելի է նրանց չափանելու տալ: Այդ ընդհարումներից չափերն անպայման ունեն այս կամ այն դասակարգային աստառը, սակայն նրանց մէջ բազմաթիւ են եւ այնպիսիները, որոնց արմատը թաղուած է ոչ թէ այս կամ այն դասակարգի շահերի գրկում, այլ տըրուած ազգի բոլոր դասակարգերի հողինքում՝ — առանց որ եւ է խորութեան կամ բացառութեան: Վերջրէք բոլոր ճնշուած ազգութիւնների զիմազրական կամ ազատագրական կռիւները. նրանց բոլորի մղիչ ոյժը բղխում է ազգի բոլոր դասակարգերի սրտից:

Ազգային այդ զգացումը զօրեղ է, յաճախ հզօր եւ ամենակուլ: Այդ Մոլոխը շա՛տ զոհեր է կլանել եւ դեռ կլանում է այսօր, մեր աչքի առջեւ:

Մարդկային տաք արիւնը հոսել է գետերով ու՝ դեռ հոսում է: Անհատներ ու խմբեր, նոյն իսկ զղալով առջեւներում եղած անգունդը, անխուսափելի բանտը, աքսորը, կախաղանն ու գերեզմանը, զիտակցաբար առաջ են սլանում՝ — աներկիւղ եւ անձնուրաց, մղուած մի ներքին անզիմադրելի ուժից, մի աստուածային կրակից:

Ի՞նչ է այդ ներքին մղիչ ոյժը: Ո՞րն է այդ անդրամադրելի ու անսպարտելի խթանը, այդ աստուածային կայծը, որ մղում է մարդկանց դէպի մահ, դէպի անձնուրացութիւն:

Դրա անունն ազգային զգացմունք է: Ազգն ու ազգութիւնն են այդ մղիչ զօրութիւնները, մարդկային պատմութիւնը շարժող լծակներից մէկը, թերեւս ոչ չառ էլ փոքրը:

Քննենք թէ ի՞նչ է ազգը:

Գ Լ ՈՒՒ Բ.

Ջանապան գիտնականների կարծիքները: Քննադատութիւն: Մեր բանաձեւը: Ազգերի ծագումը: Հորդայից մինչեւ ազգ. որսատեղից մինչեւ Հայրենիք: Ուժերի խնայողութեան օրէնքը: Ազգութեան յատկանիշները: Նմանութեան եւ տարբերութեան յատկանիշներ: Ամփոփում:

Կտն բնական եւ հասարակական բազմաթիւ բրեւոյթներ, որոնց մասին մի կարճ, ամփոփ ու յստակ որոշում տալ չէ կարողանում ներկայ գիտութիւնը, մարդկային ներկայ վերլուծական ունակութիւնը: Այդպէս է բանականութիւնը, այդպէս է գոյութեան դադարաբար, այդպէս են բազմաթիւ փիլիսոփայական ու կենսաբանական բրեւոյթներ:

Այդ կարգի գաղափարներին է պատկանում ազգ կամ ազգութիւն հասկացողութիւնները: Ազգը կայ, նա մի րէալական (իրական) մեծութիւն է, յաճախ չափազանց աչք ծակող, իր գոյութիւնն զգալ տուող. այն ինչ կարճ ու յստակօրէն բանաձեւել, թէ ինչ է ազգ, — բանաձեւել

այնպէս, որ միանգամայն չընդունէ այլեւս երկ-
դիմութիւն, միութիւն, եւ տեղիք չտրուի որեւէ
թիւրիմացութեան, առ այժմ հնարաւոր չէ:

ԺԹ. դարից առաջ դուք ի դուր կ'որոնէք որ-
եւէ որոշում այդ մասին փրկիստփայական, պատ-
մական ու հասարակագիտական բաւական հա-
րուստ գրականութեան մէջ արեւմտեան Եւրոպա-
յում: Բոլորը խօսում են պետութեան, նրա սահ-
մանների, նրա վրայ ապրող ժողովրդի մասին,
բայց ոչ ոք չէ շօշափում ազգութեան հարցը:
Այդ մասին առաջին որոշումները մեզ հանդիպում
են ԺԹ. դարի ընթացքում, ոչ շուտ:

Այսպէս առաջին գերմանական գրող Ջաքա-
րիէն է, որ 1839 թուին ձգտում է բանաձեւել ազգ
հասկացողութիւնը: «Ազգը, ասում է Ջաքարիէն,
— մարդկանց այն ամբողջութիւնն է, որ ունի մի
ընդհանուր ծագում, — մարդկանց, որոնց յա-
տուկ է զգալու եւ մտածելու միեւնոյն եղանա-
կը»: Այս որոշումը, ինչպէս յետոյ կը տեսնենք,
բաւական մօտենում է ներկայումս ընդհանրա-
պէս ընդունուած բանաձեւերին:

Գերմանական մի այլ գրող, — Escher(*),
իրար խառնելով ազգ եւ ժողովուրդ հասկացո-
ղութիւնները, տալիս է հետեւեալ բանաձեւը.

(*) «Handbuch der praktischen Politik», 1863
թուին: Թէ այս, քէ մախրնքաց որոշումը մենք վերցրել
ենք Ի. Անիմից:

«Ազգը ոչ այլ ինչ է, եթէ ոչ որեւէ պետութեան հողի կամ տերրիտորիայի վրայ ապրող բնակիչների ընդհանրութիւնը, որոնք մշտապէս կենում են այնտեղ»:

Escherի այդ որոշումը միանգամայն մթնեցնում է ազգութեան գաղափարը, որի ժամանակակից որոշմանն այնքան մօտեցել էր Զաքարիէն: Ներկայումս դոյութիւն ունեցող բոլոր քիչ ու շատ աչքի ընկնող պետութիւնների երկրներում ապրում են անպայման մէկից աւելի ազգեր: Սակայն առ այժմ մի կողմ թողնենք այդ խնդիրը, որով պիտի զբաղուենք մի քիչ յետոյ, եւ առաջ անցնենք:

Հռչակաւոր իրաւագէտ Բլունչլին արդէն պարզօրէն տարբերում է իրարից ժողովուրդն ու ազգը: Ժողովուրդը «քաղաքական միութեան արտայայտութիւնն է», իսկ ազգը «պատմա-կուլտուրական մի հասկացողութիւն է», — «Ազգը կարող է ժողովուրդ դառնալ միայն պետութեան մէջ եւ պետութեան միջոցով»:

Գիտութիւնն, այնուհետեւ, քանի զնում՝ աւելի եւ աւելի սահմանաւորում, իրարից տարբերում է ազգ եւ ժողովուրդ, ազգ եւ պետութիւն հասկացողութիւնները: Այսպէս Աւստրիական յայտնի ընկերաբան Լ. Գումպլովիչը զեռ 1879 թուին գրում է. «Ազգութիւններ պէտք է համարել ժողովրդական մեծ խմբերը, որոնք գիտակցում են իրենց կուլտուրայի ընդհանրութիւնը»:

նը եւ որոնք ոգեւորուած կամ ներշնչուած են ազգային ընդհանուր գգացմունքով»^(*), մի զգացմունքով, որը կապուած է անհատին ազգի հետ, մասին՝ ամբողջութեան հետ:

Տարիներ յետոյ, նոյն գիտնականն աւելի եւս որոշ գիծ է անցկացնում պետութեան եւ ազգութեան միջեւ եւ, կարծես իբր բողոք այդ երկու հասկացողութիւններն իրար շփոթողների դէմ, հետեւեալ միտքն է յայտնում. «Եթէ ՓԶ. դառնում քաղաքում էր մարդկային արժանապատուութիւնը ծաղրող բռնապետական սկզբունքը — *cujus regio, illius religio* (ինչպիսի կառավարիչ, այնպիսի էլ կրօն), — եթէ որ այդ սկզբունքի գորութեան հիման վրայ ազգաբնակչութիւնը, կախաղանի, գլխատման ու խարոյկի ըստանալիքներից մղուած, ստիպուած էր մերքփշրել սրբերի պատկերները, մերք նրանց երկըրպագել, — նայելով քէ ինչ դաւանութեան էր պատկանում երկրի ամենողորմած տէրը, — այժմ էլ սկսուել է մարդկանց նոյնքան անարժան մի այլ սկզբունք, — այն՝ որ ազգութիւնը որոշում է պետութեան պատկանելով: Եւ այդ սկզբունքը քաղաքում է մինչեւ օրս»^(**):

(*) «Recht der Nationalitäten und Sprachen in Oesterreich»:

(**) Լ. Գումպլովիչ «Նացիոնալիզմը եւ ինդէրնացիոնալիզմը ժԹ. դարում» (ռուսերէն) Երես 6:

Ֆրանսիացի հռչակաւոր գրող Էրնէստ Ռենանը, 1882 թուին լոյս տեսած իր յայտնի գրութեան մէջ — «Ի՞նչ է ազգութիւն» —, այսպէս է բնութագրում ազգութեան զաղափարը. «Ազգը մի հոգի, մի հոգեկան սկզբունք է» (Երես 26)։ Մի քանի երես յետոյ, նա աւելի եւս պարզաբանում է իր միտքը եւ ասում. «Մարդն ստրուկ չէ ոչ իր բասայի կամ ցեղի, ոչ իր լեզուի, ոչ իր կրօնի, ոչ իր երկրի գետերի հոսանքի, ոչ էլ իր երկրի լեռնաշղթաների ուղղութեան։ Մարդկանց մի մեծ հաւաքածու (agrégation) կամ մեծ խումբ, առողջ ոգով եւ տաք սրտով, ստեղծում է մի քաղաքական խիղճ, որը եւ կոչւում է ազգութիւն»(*): «Ազգութիւնն այն մեծ համերայ-խութիւնն է, որը հանդիսանում է իբր արդիւնք դէպի արդէն բերուած եւ ապագայում էլ բերուելիք գոհերը տաժած սրբազան զգացմունքներ։ Ունենալ մի ընդհանուր կամք ներկայում, միասին կատարած ունենալ մեծամեծ փառապանքներ, ցանկալ կրկին կատարել նոյնպիսի գործեր, — ահա մի ազգի գոյութեան էական պայմանները»։

Ի միջի այլոց ասենք, որ ազգ եւ ազգութիւն հասկացողութիւնները յաճախ իրար են խառնում, թէեւ կայ մի էական տարբերութիւն այդ

(*) E. Renan - Qu'est-ce qu'une nation, page 29.

երկուսի մէջ: Ազգը մարդկանց խումբն է, որի
 յատկութիւնները զեռ յետոյ ենք որոշելու, իսկ
 ազգութիւնն այդ խմբի յատկութիւնների ընդհա-
 նուր գումարն է: Ազգը առարկայական, նիւթա-
 կան երեւոյթ է, — մի մեծ խումբ մարդկանց օր-
 դանական կամ միաձուլ ամբողջութիւնն է, իսկ
 ազգութիւնը մի արտրակսիոն է, մի աննիւթ
 էութիւն, ազգի յատկութիւնը, նրան, մարդկա-
 յին այդ խմբին միւս խմբերից կամ միւս ազգե-
 րից բաժանող սրահների ընդհանուր գումարն է:
 Խօսակցական լեզուի մէջ այդ երկու հասկացո-
 ղութիւնները յաճախ իրար ենք խառնում, թէեւ
 տարբերութիւնն ակներեւ է: Մեր հետազոտու-
 թեան մէջ մենք եւս, հետեւելով ընդունուած սո-
 վորութեան, ուշք չենք դարձնելու այդ երկու
 բառերի տարբերութեան վրայ, այլ յաճախ դործ
 ենք ածելու մէկը միւսի փոխարէն:

Ռընանի որոշումը շատ էլ պարզ չէ: Սակայն
 ազգ եւ ազգութիւն հասկացողութիւնների համար
 ներկայ մարդկային գիտութիւնը չունի դրանից
 աւելի կարճ, կտրուկ ու պարզ բանաձեւեր: Այս-
 պէս Գերմանական գիտնական Neumannը, 1888
 թուին հրատարակած իր մի աշխատութեան մէջ
 — «Volk und Nation», այսպէս է բնորոշում.
 «Ազգը շատ կամ քիչ խոշոր մի ազգաբնակչութիւն
 է, որը՝ շնորհիւ ինքնատիպ բարձր կուլտուրա-
 կան զարգացման, ձեռք է բերել ինքնատիպ ընդ-
 հանուր բնութրութիւն, որն անցնում է սերնդից

սերունդ»^(*) : Նա մերժում է, որ մի ազգի կամ մի ազգութեան էական յատկութիւնները կրօնը, լեզուն, ընդհանուր շահերն են : Նրա կարծիքով՝ ազգի անդամներին միացնող տարրը այն «սուրէկտիվ կամ ներքին անհատական զգացմունքն է», որ նրանց բնազդօրէն կապում է իրար հետ, որ նրանց մի օրդանական ամբողջութեան հասկացողութիւնն է ներշնչում :

Նոյմանի որոշումն էլ աւելի մութն ու ամպամած է : Ճշմարիտ է, կրկնում ենք մենք, ներկայ դիտութիւնը դեռ այնպիսի պարզ, անժխտելի բանաձեւ չունի ազգ եւ ազգութիւն հասկացողութիւններէ մասին, բայց եւ այնպէս այս դրոշմներէ տուածից աւելի պարզ կարելի է լինել :

Ազգային հարցի մասին խօսելիս, յաճախ մարդիկ խառնում են այդ հարցը «մարդկային ցեղերի» կամ «րասաների» հետ : Այդ շփոթութիւնը յաճախ տեղի է ունենում մանաւանդ ազգամոլներէ կամ չօվինիստներէ կողմից, որովհետեւ նրանք ցանկանում են անպատճառ «ազգը» ծնեցնել մի արմատից, միեւնոյն նախնիքներից : Նրանք ուզում են անշուշտ ազգութիւնը համարել մի բնոյթին, մի գուտ քնակաւ երեւոյթ եւ ոչ պատմական կամ բնա-պատմական :

(*) Fr. J. Neumann — «Volk und Nations» 5. 132. Պէտք է ասել, որ Նոյմանը իր այդ գրքում մատնանիշ է արել եւ օգտուել է ազգային հարցի մասին եղած ճախընթաց ամբողջ գրականութիւնից :

Մի քիչ յետոյ մենք կը տեսնենք, որ այդ ջանքն ի զուր է, որովհետեւ պատմական երեւոյթներն էլ, դարերի ընթացքում դառնում են նաեւ քիւլոպիական կամ կենսաբանական երեւոյթներ:

Ազգ կոչւում է մարդկանց այն խումբը, որ դարեր շարունակ, սերնդից-սերունդ, ապրելով միեւնոյն բնական ու պատմական միջավայրում, իր կուլտուրային վերաբերող բոլոր հարցերը լուծել է իր համար, ինքնուրոյնաբար. դրանով ստեղծուել է, ժամանակի ընթացքում, երկար համայնակեցութեան շնորհով, ազգային ընդհանուր ոգի կամ ներքին, սուբեկտիվ աշխարհ, ազգային ստեղծագործութեան յատուկ ձեւեր եւ նոյն իսկ ազգային մի յատուկ ֆիզիքական եւ հոգեբանական տիպ:

Սկզբներում, մարդկային պատմութեան շէմքի վրայ, երբ դեռ բարբարոս ժողովրդներն ապրում էին տոհմական կազմով, ազգ գոյութիւն չունէր, ինչպէս այսօր նա գոյութիւն չունի քիւրդերի կամ եզիւնների մէջ: Կային տոհմեր կամ գեներ (կլան), կային ցեղեր կամ տրիբներ (աշիրաքներ), ղեկավարուող իրենց տոհմապետներով ու ցեղապետներով: Այդ տոհմերն ապրում էին ցեղերի մէջ, իսկ ցեղերը շատ տեղեր հասել էին նոյն իսկ մի աւելի բարդ հասարակակազմի— ցեղերի դաշնակցութեան: Բազմաթիւ տոհմեր խօսում էին միեւնոյն լեզուի զանազան բարբառ-

ներով. Նոյն իսկ մի քանի ցեղեր նոյն լեզուով
էին խօսում, բայց ազգ զեռ չկար. դեռ այդ բո-
լոր տոհմերն ու ցեղերը ասլըում էին ուրոյն
կեանքով, ստեղծագործում էին ամենօրեայ
կեանքում ուրոյն ձեւերով: Դեռ եւս չկար մի
ընդհանուր միջոց, որ այդ մանր ու արխնակից
խմբակներին միատեղէր, մի ընդհանուր կազա-
պարի միջով անց կացնէր, միաձուլէր, բոլոր
բաժան-բաժան, իրարից բաւական տարբերուող
միութիւններին տաշտէր, յղկէր, նրանց անհուն
բազմազանութիւնները վերածէր որոշ չափի միա-
դանութեան, — կարճ՝ — նրանցից ստեղծէր մի
ընդհանուր միութիւն, մի ազգ:

Այբուրենի գիւտով մարդկութիւնը դուրս է
գալիս բարբարոսական շրջանից եւ, ստեղծելով
գիր, գրականութիւն եւ գրաւոր պատմութիւն,
նա մտնում է քաղաքակրթութեան շրջանը: Դա-
րեւոր համայնակեցութեան, արխնակից խմբերի
մեծանալու եւ նրանց իրար հետ անվերջ յարաբե-
րութիւնների մէջ մտնելու շնորհով, մարդկային
համայնակեցութեան սահմաններն աւելի եւ աւե-
լի լայնանում են, մարդկային կուտակուած փոր-
ձառութեան կամ գիտութեան չափը եւս աճում
է: Հնարւում են նորանոր արտադրական միջոց-
ներ, աւելի եւ աւելի արդիւնատու արտադրական
ձեւեր: Ստեղծւում են դասակարգեր:

Արեւակցական խմբակների նախկին կառա-
վարական ձեւը նոյնպէս ընդլայնում, մեծանում

է: Ծնունդ է առնում պետութիւնը, որը օր օրի վրայ մեծացնում է իր նեղլիկ սահմանները, իր հովանու տակ է առնում նոր ու նոր արիւնակից խմբեր կամ տոհմեր, քայքայում նրանց, խառնում իր նախկին, արդէն չերտաւորման ենթարկուած խմբերին: Այսպէս՝ աստիճանաբար կլանելով շրջապատի ժողովրդներին, մի փոքրիկ խմբակը — մի պոլիսը կամ յունական ու հռոմէական մի քաղաք-պետութիւնը կամաց կամաց դառնում է մի բաւական ընդարձակ պետութիւն: Այդ պետական միութեան ներսում աստիճանաբար ստեղծւում են միատեսակ օրէնքներ, ստեղծագործական միատեսակ ձեւեր, մի ընդհանուր լեզու, տնտեսական քիչ ու շատ նման յարաբերութիւններ, յաճախ միեւնոյն տեսակի մի ընդհանուր կրօն եւայլն:

Այսպէս՝ մի Հռոմ նախ տիրում է Լացիումին, Էտրուրիումին եւ Սաբինումին. իրար է խառնում նրանցում ապրող բոլոր արիւնակից խմբակներին, աստիճանաբար կրճելով-կրճելով, վերացնում է էտրուսկներին եւ սաբինացիներին լեզուն, տարածում բոլորի մէջ լատինական լեզուն, որի մէջ անպայման պիտի լինեն եւ խառնուրդներ էտրուսկներին եւ սաբինացիներին լեզուից, որովհետեւ բնութեան մէջ ոչինչ անհետփ չի մեռնում: Այդ երեք զաւառների բոլորովին տարբեր ժողովրդների բազմաթիւ արեւակցական տոհմերից Հռոմի պետական կեանքը կամ մարդկային

ընդհանուր համայնակեցութիւնը, զարերի ընթացքում, կարողացաւ ստեղծել Հռոմէական ազդը, կամ աւելի ստոյգ է ասել՝ — Իտալական ազդը:

Սա՝ անպայման զուտ պատմական մի պրոցէսս, մի դործողութիւն է:

Բայց արդեօք այդ պատմական պրոցէսսի տակ չկա՞ն թաղնուած նախորոշ ու յարակից պայմաններ, չկա՞ն նաեւ նոր ծնունդ առնող հետեւանքներ:

Ամենից շուտ ո՞ր տոհմերն են միախառնուում, միաձուլուում եւ մի ազդ կազմում. արդեօք այն տոհմերը, որոնք խկապէս արենակիցներ են, թէ՞ այն տոհմերը, որոնք արենակիցներ չեն: Այդ հարցը երկու պատասխան ունենալ չէ կարող: Ամենից շուտ միաձուլուում են արենակից տոհմերն ու ցեղերը: Դրանք միեւնոյն բնական միջավայրի ծնունդներ են, որ ստեղծել են իրենց համար միեւնոյն հասարակական միջավայրը. մշակել են իրենց համար մի ընդհանուր լեզու իր բարբառներով, միատեսակ սովորութիւններ, միատեսակ տնտեսակարգ (*), միատեսակ կրօն եւ այլն: Այդ բոլոր արիւնակից խմբակներում

(*) Արիւնակից տոհմերի տնտեսական ձեւերի այդ ընդհանուր նմանութիւնն է, որ դրդում է Ֆ. Էնգելսին ասել — «բառան կամ ցեղն էլ մի տնտեսական ազգակ է» (տես այդ առթիւ «Der sozialiste Akademiker» — 1895 թ. երես 373):

անպայման գոյութիւն ունի բնագիտական տար-
 րը, կամ կենսաբանական պատճառը: Այդ խմբակ-
 ները կազմող անհատների լեզուն, ոգին, սովո-
 րութիւնները, հաւատալիքները՝ — կարճ՝ —
 նրանց պսիխիկան կամ ոգին մօտաւորապէս ի-
 րար նման են, — ինչո՞ւ. որովհետեւ իրար նման
 են նրանց ֆիզիկան, նրանց մարմնակազմի կեն-
 սաբանական տարրերը, — նրանց արիւնը, նրանց
 ջղերը, նրանց ուղեղաբջջները եւ այլն: Ի՛նչ
 տարբերութիւններ են դրանք, մենք չգիտենք, ո-
 րովհետեւ ժամանակակից ֆիզիոլոգիան դեռ այն-
 քան չէ զարգացել, որ այդքան խորը թափանցէ,
 այդքա՞ն առաջ տանի իր գիտական վերլուծու-
 թիւնը, տարրալուծէ եւ համեմատէ, օրինակ,
 հայի ու վրացիի, թուրքի ու Ռուսի արիւնները,
 գտնի նրանց մէջ նման ու տարբերական բոլոր
 տարրերը: Իսկ տարբերութիւններ անշուշտ կան
 տարբեր հասարակական միջավայր ստեղծող եր-
 կու տարբեր տոհմերի, երկու տարբեր ցեղերի
 կամ երկու տարբեր ազգերի ֆիզիքաների միջեւ:
 Ձընդունել այդպիսի ապրիորի (կանխահաստատ
 կամ նախաենթադրելի) տարբերութիւններ՝ ան-
 հնարին է, որովհետեւ, հակառակ դէպքում, մեզ
 համար փիլիսոփայօրէն անհնարին կը լինի բա-
 ցատրել երկու տարբեր ժողովրդների ունեցած
 գանազանութիւնները:

Օրինակ ինչո՞ւ այս ինչ ազգն ստեղծել է
 կոշտ ու կոպիտ մի լեզու, մի արիւնարբու կրօն.

խակ մի ուրիշն ստեղծել է մի քնքոյշ, մի քաղց-
րահնչիւն լեզու, մի մեղմ ու քնքոյշ կրօն, եւ այլն :
Սրանց արմատն անսպասան որոնելու է այդ ազ-
գի, այդ ցեղի կամ այդ տոհմի անդամների ֆի-
զիքական կազմի մէջ, որն իր կարգին, ծնունդ է
չըջապատ բնութեան (*) :

(*) Տարբեր մտապարհներով մենք միեւնոյն հետե-
ւամբներին կը հասնենք, եթէ ենթադրենք, որ մարդկու-
թիւնը սերուել է մի արմատից : Իսկապէս ազգութիւնների
ծագման եւ ազգութիւնների բազմազանութեան տեսակէտից
ուչ մի նշանակութիւն չունի այն գիտական եւ դեռ վերջ-
նականապէս չուծուած հարցը, թէ արդեօք մարդկութիւնը
ծնել է կենդանական մի տեսակից (մօնօղկնիկ), թէ մի քա-
նի տեսակներից (պօլիգէնիկ) : Մի քիչ վերետու մեր բե-
րած դատողութիւնները վերաբերում էին պօլիգէնիկին-
մենք ենթադրեցինք, որ պատրաստի գէնսեր կամ տոհմեր
ու ցեղեր եղել են առաջուց, իբր արդիւնք տարբեր կենդա-
նական ծագման : Իսկ այժմ, ենթադրելով որ մարդկութիւ-
նը սերուել է մի արմատից, մենք գալիս յանգում ենք բա-
ցարձակ նոյն հետեւամբներին :

Մի արմատից սերուած մարդկութիւնը ցրում է,
ի հարկէ չափազանց դանդաղօրէն, երկրագնդի այս ու այն
մասերում, մանրիկ տոհմերով ու ցեղերով, սկզբներում
նոյնիսկ մանրիկ խմբակներով, անասնական արեւախառնու-
թեամբ սպրռոյ, — խմբակներով, որոնց բնկերաբանական
գիտութիւնը կոչում է «անիշխանական հօրդաներ» (hordes
anarchiques) : Այդ խմբակացութիւնները, բնակուելով

Սա էլ անսկզբի քննական կամ բիոլոգիական պլանցէս (գործողութիւն) է, որ աւելի աստիճանաբար տեղի ունենում, քան ազդի կազմուելն իբր մի օրգանական միութիւն: Դա նախորդէ՛լ պայման է:

Բայց, ենթադրենք, որ Հոռմի 3 տրիքներն (ցեղ) իրենց 300 տոհմերով, իբր արխանակիցներ,

տարբեր բնական միջավայրերում եւ չունենալով բնութեան դիմադրելու կարող ոչ մի ոյժ, շատ շուտով, նոյնիսկ հազիւ մի սերունդի կեանքի ընթացքում, փոփոխուում, զանազանաւորում են իրարից: Այդպիսով կրկին ստացում է այն բազմազանութիւնը, որից պէտք է վերելում վերլուծուած մանապարհով, միանաւ ֆիզիքապէս ու հոգեպէս իրար աւելի մօտ եղող խումբերը, միեւնոյն բնական եւ ժառանգական միջավայրի արդիւնք եղող տոհմերն ու ցեղերը եւ կազմեն — նախ՝ տոհմեր, ցեղեր եւ ապա ազգեր:

Այդ բոլոր միացման ու լուծման երեւոյթներում դեր խաղացողը Չ. Գարուինի մատնանշած բնական ընտրութեան կամ յարմարեցման օրէնքներն են:

Սակայն նոյնիսկ մարդկութեան այդ մանուկ, ամենադիւրաքեֆ հասակում էլ կատարուող բոլոր փոփոխութիւնները միամտութիւն կը լինէր վերագրել լոկ մի արմատի — տնտեսական փակտօրին: Ոչ, յառաջացող փոփոխութիւնները ծնունդ են արտաքին բազմազան միջավայրի եւ արդէն կազմակերպուած մարդկային ներքին աշխարհի: Այդ մարդկային ներքին աշխարհը երկնքից չէ ընկել կազմ ու պատրաստ. նա էլ ծնունդ է իր նախորդների հազարադարեան ա-

միաձուլուեցին: Կը նշանակէ՝ մենք ունենք արդէն միազգի միջուկը, նրա մի սկզբնական ձեւը, որովհետեւ այդտեղ կայ մարդկային մի զգալի խումբ, որը սերնդից-սերունդ երկար տարիներ ընթացքում իր կուլտուրային վերաբերող բոլոր հարցերը լուծել է ինքնուրոյնաբար: Հոռմէական այդ խմբակի բոլոր անհատներն ունեն ոչ միայն մի ոգեկան նման աշխարհ, այլ եւ անպայման միեւնոյն արիւնը, որովհետեւ սերուած են մի արմատից:

Ի՞նչ է կատարւում այնուհետեւ:

Նոր կազմուած այդ ազգային օրդանական ամբողջութիւնն աւելի զօրեղ է, քան նրա դրացիութեան մէջ եղող եւ դեռ եւս տոհմական կազմով ապրող բոլոր ցեղերը: Եւ նա սկսում է աստիճանաբար կլանել այդ դրացի տոհմերին ու ցեղերին՝ մէկի՛կ-մէկի՛կ: Կլանում, մարսում, միաձուլում է նրանց. դարձնում իր ազգի մի անբաժան մասը: Կուլտուրապէս ստոր այդ տոհմերն ու ցեղերը, ինչպէս կէլտերը, գալլերը, ի-

տմոսական փախտօրին: Ոչ, յառաջացող փոփոխութիւններն աւելի քան մարդ արարածը բերել է իր հետ աշխարհ, հենց որ երեւացել է իբր մարդ-բանական՝ ընկերաբանութեան ապարեզում: Արտաքին միեւնոյն միջավայրը միատեսակ չէ ազդում տարբեր տոհմերի ու տարբեր ցեղերի վրայ, որոնք ժառանգել են տարբեր որակներ եւ որոնց ոգին ունի իւրայատուկ ներքին ստեղծագործական կարողութիւն:

բէրները, Աղբիական ծովափերի բոլոր ցեղերը
ևւ այլն, — չկազմելով որ ևւ է ազգային օրգա-
նական ամբողջութիւն, չուտով, առանց երկար
դիմադրութեան, կուլ են գնում. նրանք ընդու-
նում են Հոռմի բեզուն, կրօնը, սովորութիւն-
ները, օրէնքները, ամբողջ կուլտուրան:

Այդտեղ կատարւում է «քիմիական» դործո-
ղութիւն: Հոռմէական ազդն, ընդունելով իր մէջ
այդ գրացի ցեղերին, իւրացնելով նրանց, դար-
ձնում է իր մի անբաժան մասը՝ — «արիւն յարե-
նէ իւրմէ, մարմին ի մարմնէ իւրմէ»: Նրանք բո-
լորը — թէ նոր ձուլուածները, թէ նախկին ազ-
գային օրգանական միութիւնը — կազմում են
այնուհետեւ մի անբաժան ամբողջութիւն, մի նոր
օրգանական միութիւն, ինչպէս թթուածինից ևւ
ջրածնից ստացւում է մի նոր բարդ մարմին՝ —
ջուրը:

Այդ նոր ստացուած ազգային օրգանական
ամբողջութիւնը կրկին կրում է «Հոռմէական
ազգ» անունը, բայց այլ ևւս նա մաթեմատիքօրէն
նախկին Հոռմէական ազգը չէ. նա ընդունեց իր
մէջ մի նոր տարր, որն անալոյման ներմուծեց ո-
րոշ փոփոխութիւններ այդ ազգային ամբողջու-
թեան մէջ:

Ներմուծուած փոփոխութիւնները կարող են
լինել շա՛տ չնչին, եթէ ներս մտնող տարրն ինքը
չնչին է թէ թիւով, թէ որակով: Նրանք կարող
են լինել չնչին մի այլ դէպքում էլ. երբ ներմուծ-

ուող տարրը, որքան էլ թիւով չատ, որակով նըման է նախկին ազգային միութեանը:

Այնուհետեւ տարածւում է Հռոմի պետութիւնը, զբաւում ամբողջ միջերկրականի աւազանը երեք մայր ցամաքների ափերով, իրեն հըպատակեցնում հարիւրներով ազգեր ու ցեղեր: Այդ բոլորը կազմում են Հռոմի ժողովուրդը եւ ոչ հռոմէական ազգը: Իտալիան, նրա զրացի բաղմաթիւ կղզիներն ու պրովինցները (զաւառ) լցուած են ազգային մի օրդանական ամբողջութիւնով — հռոմէական ազգութիւնով, իսկ Աքէեան կամ Յունաստանն ունի իր շեշտուած ազգութիւնը՝ — յունական ազգը. Ասիան ունի իր բաղմաթիւ ազգերը. Աֆրիկայի մի մասը նոյնպէս: Հռոմը լցրել է այդ բոլոր ժողովրդներին իր տոպրակի մէջ ու խառնում է, ուժդին թափահարում: Երեւակայեցէք, որ ամէն մի ազգ հանդիսանում է մի խոշորկէկ կոշտ, մէկը թոյլ, միւսը՝ պինդ, երբորդը կարծր. խառնեցէք այդ հսկայական տոպրակը: Կոշտերն իրար են զարնւում. թոյլերը փշրւում են, ձուլւում, կորչում. նրանք այլեւս կոշտեր չեն, այլ փոշի, մանրուք, որը կը ձուլուի շուտով միջավայրում գտնուող ամենախոշոր ու ծանր զանգուածի — հռոմէական ազգի հետ: Բաւական է մի քիչ խոնաւութիւն, մի քիչ ամալգամա կամ միացնող նիւթ, եւ այդ փշրուած կոշտերն այլ եւս ոչ մի ուրոյն հետք չեն թողնի:

Շարունակեցէք խառնել տոպրակը: Պինդ ու

կարծր կոշտերից դուրս մի քանի սուր-սուր ծայրեր, մի քանի խորթուհիորդութիւններ պոկուեն, բայց նրանց ամբողջութիւնը մնում է: Ընդհակառակը՝ որքան դուք արագ ու ուժեղ էք խառնում, նրանք, վայր թափելով իրենց թոյլ մասերը, իրենց խորթուհիորդութիւնները, դառնում են աւելի ուժեղ, ընդունում են դնդի ձեւ, կլորանում եւ դիմադրական աւելի մեծ ունակութիւն են ձեռք բերում: Եթէ խառնելու ժամանակը հափազանց կերկարի եւ խառնելու գործողութեան ոյժը խիստ կը գորանայ, անկասկած, կը սկսեն պինդ կոշտերը եւս փշրուել եւ վերջ ի վերջոյ հերթը կը հասնի նաեւ կարծրներին: Սակայն ազդերի հարածանքները երբէք յարատեւ չեն եղել մարդկային պատմութեան մէջ:

Կոշտերը խառնելու գործողութիւնը մի հասարակ ֆիզիքական պրոցցէս է: Կոշտերը պիտի փշրուեն, կպչեն այս կամ այն մեծ կոշտին, որ նոր միայն առաջ դայ ձուլման քիմիական գործողութիւնը:

Ազդը նման է քիմիական գործողութիւնից առաջ եկած մարմնին, իսկ պետութեան ժողովուրդը մի ֆիզիքական խառնուրդ է:

Մեր բերած օրինակից պարզ է, որ ամենից մեծ դիւրութեամբ կլանւում են նման տարրերը: Տարբեր տարրերից էլ նրանք են ամենահեշտ կըլանուողները, որոնք ներքին դիմադրական ոյժ չունեն: Իսկ այդ ներքին դիմադրական ոյժը ազ-

դային օրդանական ամբողջութեան զիտակցութիւնն է: Տոհմերն ու ցեղերը կլանելը զլուրին է, քանի զեռ նրանք ազգ չեն կազմել: Իսկ երբ ազգը կազմուեց եւ մանաւանդ երբ ազգային գիտակցութիւնն ամրացաւ, այնուհետեւ մի ժողովրդի կլանելն այլ եւս սկսում է զժողովրդին: Այդ զժողովրդութիւնը երբեք չէ կարելի մաքսմատիֆօրէն հաշուի առնել: Կլանելն անհնարին ասելն էլ չէ կարելի, որովհետեւ չառ ազգեր կը լանուել են, եւ տրամաբանօրէն ոչ մի հիմք էլ չունենք անհնարին ասելու: Բայց գործնական կեանքը, մարդկային պատմութիւնը մեզ կանգնեցնում են այնպիսի փայլուն փաստերի առջեւ, որ կամայ-ակամայ պիտի խոստովանուենք ոչ թէ «անհնարինութիւնը», այլ «ծայրայեղ զժողովրդութիւնը»: Երկու հազար տարի է հրէան ճնշում, հալածւում է. 2000 տարի է նրան ուղում են կըլանել (*): Մօտ 1500 տարի է Մեծ Հայաստանը չկայ իր քաղաքական միութիւն. այնքան դարեր հայն էլ հալածւում է, նրան էլ աշխատում են կլանել... Բայց այդ ազգերը կան եւ կարծես

(*) Կ. Կաուցկիին իր վերջին աշխատութեան մէջ, (որ լոյս տեսաւ իբր յաւելում «Neue Zeit» շաբաթաթերթի — պատասխան եւ քննադատութիւն աստրիական սոց. դեմոկրատ Օտտօ Բաուէրի յայտնի գրքի) հրեաներին անուանում է «կրօնական համայնք». մա նրանց չէ համարում ազգ, որովհետեւ ազգութեան էական փակտորը համարում է լեզու: Այդ հարցին դեռ մենք կը դառնանք:

ամենեւին թուլանալու նշաններ չեն ցոյց տալիս, ընդհակառակը, նոր ու նոր արթնացման, նոր վերածնութեան արշալոյսն է, որ մենք տեսնում ենք փայլելիս նրանց ազգային հորիզոնների վըրայ...

Մենք բերինք օրինակ հրէական ու հայկական ազգերը, որովհետեւ մեր կարծիքով, դրանք տանջանքի ու ազգային հալածանքի մարմնացումն են հանդիսանում: Նայեցէք չեխերին, ըսլովակներին, բոլղարներին, ասորիներին, արարներին... Դրանց ալլելու չէ կարելի «Էրօնական համայնք» անուանել, դրանք ազգեր են, դարերով ճնշուած, կլանուելու վտանգին մէջ, բայց բոլորն էլ այսօր վերածնութեան նշաններ են ցոյց տալիս:

Այսպէս ուրեմն՝ ազգութիւնը բնա-սլատմական կամ բիոպսիխոլոգիական մի երեւոյթ է: Բղխել է նա մի թէ մի քանի արմատներից, — դա նշանակութիւն չունի, որովհետեւ սլատմական երեւոյթները դարերի ընթացքում առաջ են բերում ֆիզիքայի նմանութիւն, վեր են ածւում կենսարանական երեւոյթների:

Եթէ մի բոպէ համոզուած մոնոգենիստ (*)

(**) «Մոնոգենիստ» ասում են այն անձերին, որոնց կարծիքով մարդկութիւնը ծնունդ է տուել մի արմատից: Դրա հակառակը՝ կան «պոլիգենիստներ», որոնք կարծում են, որ մարդ-արարածը երկրի վրայ առաջ է եկել մի քանի վայրերում, սերուել է մի քանի արմատներից:

լինենք, աշուճամենայնիւ պիտի բնդունենք ազգային խնդիրը, որովհետեւ մի արմատից սերուած մարդկութիւնը, նման ֆիզիքայով կամ բնակազմով, աճեցողութեան ճակատագրական երեւոյթից զրդուած, դուրս է եկել իր բնազաւառից, լցրել է այս կամ այն դրացի երկիրը, յետոյ մի ուրիշը, յետոյ աւելի հեռուներն է չուել, հաստատուել է այնպիսի նոր ու նոր բնական միջավայրերում, որոնք հիմնապէս տարբեր են եղել իր բնազաւառի միջավայրից: Անտարակոյս՝ զաղթող այդ խմբերն իրենց հետ արդէն բերել են որոշ ժառանգական մարմնակազմ եւ որոշ ոգեկազմ, որոնք մտնում են բնդհարման շրջապատ միջավայրի հետ, որոշ փոփոխութիւններ առաջացնում այդ միջավայրում իրենց կուլտուրայի շնորհով. — օրինակ՝ տներ են շինում եւ ստեղծում իրենց ցանկացած կլիմայական աստիճանը, յարմար իրենց մարմնակազմի. տնկում են պարտէզներ, շինում ճեմեկիներ, ստեղծագործում իրենց ոգեկազմին հաճելի մի փոքրիկ շրջապատ եւ այլն, եւ այլն: Դա մարդկային կուլտուրան է, որ գործում է, մարդուն որոշ չափով ազատում բնութեան բռնութիւնից եւ մասամբ կախման մէջ դնում նրան իր սեփական էութիւնից:

Բայց դա միայն մասամբ: Եւ որքան մարդկային զարգացման սանդուխով ներքեւ իջնենք, այնքան աւելի անկուլտուրական լինելով մարդը, աւելի եւ աւելի անմիջական ենթակայութեան

տակ է դառնում բնութեան ուժերից: Այդ գաղթած խմբերի կուլտուրան, նրանց ժառանգական ունակութիւնները եւ ստեղծագործող յատկութիւնները, չգիտնալով բնական միջավայրի հըզօր ազդեցութեանը, կամաց կամաց կրճւում, չքանում են. ստեղծւում է մի այլ ժողովուրդ, տարբեր բնակավայրով, տարբեր ստեղծագործական ունակութիւնով ու ոգեկազմով, քան այն խումբը, որ մնացել է բնագաւառում. մի եւ նոյն րասան (ցեղը) վեր է ածւում բազմաթիւ ազգերի, որոնց բնակավայրը բազմազան է, իրարից տարբեր: Եւ որքան բնական միջավայրերն իրարից տարբեր լինեն, այնքան աւելի կը տարբերուեն նրանցում բուն դրած խմբերի, ազգերի ու ժողովուրդների բնակավայրն ու ոգեկազմը:

Կազմուեց ազգը: Ի՞նչ տարրն է տիրում նրաներսում. բազմազանութիւն, թէ միօրինակութիւն:

Մարդկային կեանքի զարգացման սկզբնական բոլոր շրջաններում, թէ վայրենութեան եւ թէ բարբարոսութեան մէջ, երբ դեռ գոյութիւն ունէր տոհմական կազմը եւ սկզբնական կոմմունիզմը, — ամէն տեղ՝ հասարակութեան ներսում թագաւորում էին հաւասարասէր կարգեր: Մարդիկ միասին աշխատում, միասին վայելում էին: Միակ առաւելութիւնն անձնական յատկութիւններն էին: Ամենից աւելի պատիւ էին վայելում ծեր, փորձուած, ժամանակի գիտութիւններն ու

աւանդութիւններն իրենց զլխում ունեցող ան-
հատները, կտրիճները, յաղթական ռազմիկները,
ճարպիկ որսորդները եւ այլն: Մարդկանց նիւ-
թական կեանքի մէջ տարբերութիւնը ձիւտ այն-
քան էր, որքան նրանց անհատական յատկութիւն-
ներն էին տարբեր: Իսկ այդ տարբերութիւնները
չառ չէին, այնպէս որ կտրելի էր վստահօրէն
պնդել, թէ հասարակութեան ներսում թաղաւո-
րում էր նիւթական հաւասարութիւն:

Նոյն հասարակութեան քաղաքական ու վար-
չական բոլոր հարցերը նոյնպէս պատկանում էին
բոլորին, բոլոր չափահասներին՝ այր թէ կին:
Սակայն ինչ կասկած, որ ամէն խնդրում անց էր
կենում փորձուած անհատների ու ծերերի կար-
ծիքը. փաստօրէն նրանք էին հանդիսանում ամէն
ինչի ղեկավարը:

Այդ հաւասարասէր մարդկային խմբակցու-
թիւնները դեռ ազգի հասկացողութիւնը չեն ու-
նեցել. նրանք կազմել են լոկ տոհմեր, ցեղեր ու,
ամենաչափը, տոհմերի զաջնակցութիւն: Ազգու-
թեան ծնունդը համապատասխանում է մարդկա-
յին քաղաքակրթութեան աստիճանին: Սակայն
այդ աստիճանում արդէն տնտեսական ու հասա-
րակական անհաւասարութիւնը բուն էր դրել
մարդկային մանր ու խոշոր խմբակցութիւնների
ներսում. արդէն առաջ էին եկել հարուստներ ու
աղքատներ. կեղեքողներ ու կեղեքուողներ:

Ուրեմն՝ չկայ եւ չէ եղել որ եւ է ազգ, որի

ներսում բոլոր անհատները սոցիալապէս (ընկերապէս) ու տնտեսապէս հաւասար լինէին: Ընդհակառակը, — ամէն տեղ եւ ամէն ժամանակ՝ ազգի ներսում եղել են անհաւասար անհատներ, հասարակական անհաւասար խաւեր, շերտաւորումներ, դասակարգեր:

Ինչ կասկած, որ առաջին խոշոր շերտաւորումը հասարակութեան ներսում առաջ է եկել սեռերի տարբերութիւնից: Կինն իր մարմնակազմով, իր որդեծնութիւնով եւ այլ հանդամանքներով ստիպուած էր անպայման ունենալ այլ ըզրադմունք, քան տղամարդը: Նա, օրինակ, չէր կարող ռազմիկ լինել: Որ աւանդութիւնն ուզում էք վերցրէք կռուող կանանց կամ ամազոնների մասին, բոլորի մէջ էլ կինը ներկայանում է ամուրի, գրեթէ օրիորդ, ազատ զաւակի բեռից: Աշխատանքների տարբերութիւնը զարգացրել է տարբեր բնաւորութիւն ու տարբեր հասարակական դիրք: Կինը դասել է ենթակայ, կեղեքուող:

Առաջ են գալիս ստրկատիրութիւնը, ճորտութիւնը, «ագատ» կամ վարձու բանուորութիւնը: Հասարակութեան ներսում, շնորհիւ աշխատանքի բաժանման՝ երեւում են հասարակական դասերը, իսկ շնորհիւ կեղեքման սկզբունքի՝ — դասակարգերը: Այդ դասերի ու դասակարգերի զբաղմունքների տարբերութիւններն առաջ են բերում նրանց կազմող անհատների թէ մարմնակազմի եւ թէ ոգեկազմի տարբերութիւն: Դա ազ-

զի ներքին շերտաւորումն է, որը՝ որքան էլ միջազգային դոյն ունենայ, այնուամենայնիւ կազմում է ազգի ներսում կատարուած մի երեւոյթ եւ երբեք չէ կարող զերծ լինել ազգի ընդհանուր յատկութիւններէջ, նրա ինքնայատուկ որակներէից :

Ազգը կազմող բոլոր դասակարգերէից հանեցէք այդ բոլոր տարբերական, զուտ դասակարգային եւ դասային որակները, տաշեցէք, հարթեցէք նրանց. այնուամենայնիւ տակը կը մնայ չատ բան : Կը մնան յատկութիւններ ու որակներ, որոնք անպայման իրար նման են եւ յատուկ բոլոր դասակարգներին, դասերին ու նոյն իսկ բոլոր անհատներին : Դրանք ազգային որակներ են : Առանց այդ որակները բոլորը կամ նրանց մեծ մասն ունենալու, չէ կարելի կոչուել այդ ազգի անդամ :

Այդ ազգային նմանութեան ազդակներէից ամենաէականը եւ տիրողը անպայման լեզուն է : Եւ «լեզուն» ասելով չպէտք է հասկանալ լոկ լեզունի մեքենական մասը, խօսելու ունակութիւնը, այլ դրա հետ նաեւ լեզուի ոգին — ոճերը, դարձուածները, նրա տրամաբանութիւնը, որ միշտ ինքնատիպ է լինում, եւ դրականութիւնը, որը ժողովրդների անկուտութեան վիճակում պահպանում է միայն ու միայն լեզուի, աւանդութիւնների շնորհով, իսկ երբ մամուլն ու տպագրութիւնը զարգանում են, նա դառնում է ինքնուրոյն գործօն ազգային կեանքում :

Ազգային նմանութեան ազդակներն են սո-
վորութիւնները, աւանդութիւնները, բնաւորու-
թեան ընդհանուր դժերը, յաճախ ընդհանուր կը-
րօնը (*), ընդհանուր հայրենիքը եւ սէրը դէպի
հայրենիքը թէ սեփականատէր դասակարգերի եւ
թէ սեփականազուրկ աշխատաւորներն մէջ:

Կարլ Կուլցկին իր բոլոր գրութիւններում
(դժբախտաբար բոլորն էլ մանր, ոչ հիմնաւորա-
պէս պարզարանուած մինչեւ վերջը) ազդութեան
համարեա՜ միակ որոշիչ տարրը գտնում է լեզուն:
Այդ տեսակէտը նոր չէ. դեռ շա՛տ տարիներ ա-
ռաջ նոյն կարծիքն են յայտնել ուրիշ շատ մտա-
ծողներ եւ գրողներ: Մեր կարծիքով դա չափա-
զանց միակողմանի տեսակէտ է: Չէ կարելի մի
ազգի բոլոր գուտ ազգային յատկութիւնները,
նրա ազգային էութիւնը արտայայտող բոլոր ո-
րակները վերացնել կամ բոլորովին նսեմացնել
եւ միակ լեզուն դարձնել ազգութիւնը կազմող

(*) Որքան մի ժողովուրդ կուտուրապէս ստոր է, այն-
քան աւելի կրօնը դեր է խաղում նրա կեանքում: Կամ բազ-
մաքիւ «տանկացած» հայեր. դրանք մահմետական հայեր
են, բայց այսօր աւելի «տանիկ» են, քան բուն տանիկնե-
րը: Նոյնը կարելի է ասել աջարների կամ «մահմետական
վրացիների» մասին: Կաթոլիկ խրուատները եւ յունադա-
ւան սերբերը միեւնոյն լեզուն խօսող մի ազգի գաւակներ
են, բայց կրօնների տարբերութիւնը միջնորմի պէս կանգ-
նել եւ բաժանել է նրանց գէթ արտափուստ:

տարրը: Մենք մի քանի տող վերելում արդէն իսկ շատ ընդարձակեցինք «լեզու» ասուած բանի ըմբռնողութիւնը: Բայց այդքան ընդլայնելուց յետոյ էլ, անպայման, մնում են մի քանի այլ ազդակներ, որոնք եթէ ոչ այնքան էական, որքան լեզուն, այնուամենայնիւ կազմում են բաւական ցայտուն նշաններ ազդութիւնը որոշելու խընդրում:

Քննենք այդ բոլոր «ազդային արտայայտութիւնները»:

Ինչ կասկած, որ դրանից ամենախոշորը եւ ազդեցիկը լեզուն է:

Լեզուն մարդկային ստեղծագործիչ ոգու արտայայտութիւնն է: Նա պատմական մի երեւոյթ չէ, այլ բիոլոգիական (կենսաբանական): Ընկերաբանական (սոցիոլոգի) գիտութեան ծանօթ չէ անխօս մարդ: Այդ երկու բառերն իրենց մէջ իսկ ունեն ներքին հակասութիւն, որովհետեւ «մարդ» կոչւում է այն կենդանին, որը խօսում է, իր մտքերն արտայայտում է բառերով:

Ե՞րբ է ծնունդ առել մարդկային լեզուն, արդեօք ո՞ր կենդանական աստիճանի վրայ, — գիտութեան մէջ դեռ վճռուած հարց չէ, բայց հաւանական է, որ եղել է մի նախամարդ կենդանի, որ բարձր է եղել բոլոր չորեքթաթերից (բիւմն) եւ ստոր մարդուց (homo-sapiens) եւ այդ նախամարդն ստեղծել է մարդկային լեզուի ըսկզբնական աստիճանները կամ փազերը: Այդ նո-

րաստեղծ յատկութիւնը նախամարդուն տուել է հսկայական տուաւելութիւն մ'ւս կենդանիներէց, բայց միաժամանակ ստեղծուել է մարդը, որովհետեւ լեզու ունեցող, խօսող նախամարդը կամ անթրոպոպիտէկոսն արդէն մարդ է կոչուում:

Այդպիսի կնճռոտ հարցեր չափազանց շատ կան ընկերարանութեան մէջ: Այդպէս են բոլոր ծագման հարցերը: Օրինակ՝ ի՞նչպէս է մարդը մտել գոյութեան ասպարէզ՝ — անհատաբար, թէ խմբով: Ենթադրուում է որ խմբով: Արդեօք ե՞րբ է գտնուել կրակը, մարդկային դործածութեան անհրաժեշտագոյն այդ միջոցը, — նախամարդն է գտել նրան, թէ մարդ-բանականը: Նոյն հարցը կարելի է տալ նաեւ կրօնի ծագման, սեփականութեան գաղափարի առաջացման եւ այլ բազմաթիւ խնդիրների վերաբերմամբ:

Ինչ որ էլ լինի՝ մի բան կասկածից դուրս է. ներկայումս չկայ ոչ մի վայրենի ցեղ, որ լեզու չունենայ:

Մարդկային այն մանրէկ խմբակները, որոնք առաջին անգամ երեւան են եկել իբր մարդկային հասարակութիւններ, ունեցել են իրենց յատուկ լեզուները, որոնք անպայման պիտի ունենային որոշ նմանութիւններ եւ տարբերութիւններ: Մեծ էին լինելու մանաւանդ տարբերութիւնները, որովհետեւ լեզուն էլ արդիւնք է արտաքին համայնքների եւ մարդ էակի ներքին կամ ոգեկան աշխարհի. եթէ միջավայրի նմանութիւնները

պիտի զրդէին ստեղծել մի եւ նոյն երեւոյթների համար միատեսակ բառեր, մարդ-էակի ոգեկան աշխարհի անհատական տարբերութիւններն անշուշտ պիտի ստիպէին ստեղծել իրարից տարբեր բառեր ու ոճեր եւ մանաւանդ դրանց տարբեր տարբերութիւններ ու շեշտեր: Եւ դա է, այդ տարբերական, անհատական ստեղծագործական տարբն է լեզուի ստեղծման մէջ, որ իրաւունք է տալիս էրնէստ Բընանին ասելու. «Երկու եղբայր, որոնք կը ստեղծէին լեզու իրարից մի քառորդ մղոն տարածութեան վրայ, կը ստեղծէին երկու տարբեր լեզու» (*):

Այդ երեւոյթը միայն ծագման ամենասկզբնական շրջանին չէ յատուկ. նա կայ եւ համեմատաբար աւելի բարձր, աւելի զարգացած ֆազիսներում (փուլ), ինչպէս, օրինակ, ներկայ վայրենիների ստորին ցեղերի մէջ: Այսպէս՝ դրում է Բաստիանը. «Վայրենիների մէջ ամէն բոլոր կազմում են նոր բարբառներ (դիալեկտներ), որոնք արագօրէն դառնում են բոլորովին տարբեր լեզուներ: Միսսիոնարները նկատել են, որ լեզուն փոփոխւում է համարեա՝ սերնդից սերունդ այն տեղերում, որոնց մէջ զաւակները գոնէ մի քանի ամիս մնում են մենակ եւ, երբ ծնողները վերադառնում են, զաւակները խօսում են նրանց համար բոլորովին անհասկնալի լեզուով: Իսկ Ա-

(*) E. Renan — «De l'origine du langage».

ւտրալիայում, ուր ընտանիքի որ եւ է անդամի մահից յետոյ, այն բոլոր բառերը, որոնք գտնէ հեռաւոր նմանութիւն ունին հանգուցեալի անուան հետ, ենթարկուում են հալածանքի եւ փոխարինում են ուրիշ բառերով (նոր շինած), լեզուի այդպիսի արագ փոփոխութիւններ աւելի եւս յանախ պէտք է կատարուի (*Երես* 284): «Լեզուի նմանութիւնը մշակուում է ամենապարզ կերպով — մարդկանց մի ամենանեղ խմբակի մէջ: Բայց արդէն դրացի գիւղի բնակիչները, քիչ ժամանակից յետոյ, կարող է պատահել, որ կը սկսեն խօսել մի բոլորովին տարբեր լեզուով, եւ երէ նրանց մէջ քշնամութիւն գոյութիւն ունի, այն ժամանակ նրանք դիտմամբ կ'աշխատեն խոսափել ամէն տեսակ նմանութիւններից իրենց լեզուներում» (**):

Մարդկային հասարակութիւնների զարգացման սկզբնական աստիճաններում այնքան դիւրաթեք, յարաշարժ եւ փոփոխական մի տարր, ինչպէս լեզուն է, աստիճանաբար ամրանում, կայունութիւն է ձեռք բերում, երբ մեծանում են հասարակութիւնները կամ մարդկային ցեղի բեկորները, ինչպէս ասում է Ժ. Ժօրէսը: Մանրիկ հորդանների ներքին հազորդակցութեան միջոցից նա զառնում է մարդկային աւելի եւ աւելի

(**) A. Bastian — «Der Mensch in der Geschichte» Bd I, St. 384.

խոչոր խմբակցութիւններէ յարաբերութեան հզօր
դէնք եւ իր մէջ է ամփոփում նման միջավայրում
աճող եւ նման ժառանգական ոգեկազմ ունեցող
մարդկանց ստեղծագործական ուժերը: Անհատ-
ներն այդ մարդկային բեկորի մէջ ապրում եւ
ստեղծագործում են, իրենց ներքին եւ արտաքին
աշխարհը բացատրում այդ լեզուով, մի եւ նոյն
բառերով, մի եւ նոյն ոճերով: Դարերի ընթաց-
քում այդ լեզուի մէջ քարանում են մարդկային
այդ բեկորի բոլոր մտաւոր ու ոգեկան առանձ-
նայատկութիւնները, որոնք նման չեն նոյն իսկ
ամենամօտ գրացու մտաւոր եւ ոգեկան հոմանիշ
արտայայտութիւններին: Լեզուի ճկունութիւնը
ցոյց է տալիս այդ մարդկային բեկորի կամ այդ
ազգի մտաւոր, գուցէ և ֆիզիքական ճկունութիւ-
նը: Նրա սրամիտ ոճերն ու առածները, ջինջ ֆը-
րագներն ու արտայայտութիւնները պարզ ապա-
ցոյցներ են այդ լեզուն ստեղծող եւ զործածող
ազգի մտաւոր, գուցէ եւ ֆիզիքական ճկունու-
թեան, զործնական բնաւորութեան եւ այլն եւ
այլն:

Որքան մի ժողովուրդ կուտուրապէս ստոր
է, այնքան նրա լեզուն դիւրաշարժ եւ դիւրափո-
փոխ է, որովհետեւ դեռ նա չէ ամրապնդուել ժա-
ռանգականօրէն, դեռ չէ հարստացել եւ որոշ չա-
փով քարացել: Որքան հասարակութիւնը բազ-
մանում եւ կուտուրապէս առաջ է գնում, այն-
քան աւելի ժառանգաբար կուտակւում, հաղոր-

դուռն էն իրար յաջորդող սերնդներին դարեւոր
յատկութիւններ, բառեր, դարձուածներ, առած-
ներ, ասացուածքներ, բանաւոր գրականութիւն
եւ այլն: Որքան դարեր աւելի են գլորւում մարդ-
կային այդ բեկորի վրայով, այնքան աւելի ամ-
րասնդուում, այնքան աւելի միս ու արիւն է նա-
սում այդ ժողովրդի համար իր լեզուն:

Այդ վերելի տկնարկից պարզ է, որ որքան
մի ժողովուրդ, մարդկային ցեղի մի բեկոր ստոր
է կուլտուրայէս, այնքան աւելի զիւրաշարժ,
զիւրափոփոխ է նրա լեզուն, — ուրեմն եւ այն-
քան աւելի հեշտ է նրան մոռացնել տալ իր լե-
զուն, իր ոճերը, իր արտայայտութիւնները.
այնքան աւելի զիւրին է օտարացնել նրան, ձու-
լել մի այլ, աւելի զօրեղ բեկորի հետ, կլանել
նրան: Ընդհակառակը — որքան աւելի մի ժողո-
վուրդ բարձր է կուլտուրայէս, որքան աւելի նա
ունի ժողովարար ստեղծագործած բառերի, ո-
ճերի, դարձուածքների, բանաւոր եւ գրաւոր
արտադրութիւնների հաւաքածու, այնքան աւե-
լի նրա լեզուն ու գրականութիւնը դարձել են այդ
ազգի համար միս ու արիւն, — նոյնքան աւելի
զգուար է նրան ձուլել մի այլ ազգի մէջ, կլա-
նել նրան:

Դժուար է ասում ենք եւ ոչ անհնար: Դժուար-
բութիւնն այնքան է աճում, որ մի բուռը հայ
ժողովուրդ, սկսած Դ., Ե. դարերից, ահա մօտ
1400 տարի է ստրուկ է մերթ պարսիկների, մերթ

յոյների, մերթ արարների, սելջուկների, թաթարների, օսմանեան թիւրքերի ու քիւրտերի ձեռին, — եւ այդ բոլոր տիրողները հրով ու սրով, խաթրով ու փաղաքշանքով ջանացել են կլանել, ձուլել իրենց մէջ հայ տարրը, բայց չեն յաջողել ու թերեւս ամենեւին չյաջողեն այսուհետեւ, որովհետեւ մօտ է մարդկային բոլոր ազգերի ու հասարակութիւնների լուսաւոր ապագան, համամարդկային ազատ դաշնակցութիւնը, մարդարարածի փրկութեան միակ ելքը — համայնական աշխատանքն ու համայնական բաշխումը:

Ուրեմն՝ լեզուն ամենացայտուն տարրերից յատկութիւններից մէկն է, որ բաժանում է մարդկային ցեղի բեկորներին իրարից:

Այժմ մի ակնարկ նետենք այդ բեկորի կամ այդ ազգի ներսը:

Մաքեմատիֆօրէն մտածելով, անշուշտ կարելի է պնդել, որ միեւնոյն բառը երկու եզրայրներէ համար անգամ որոշ աննկատելի տարբերութիւններ պիտի ունենայ, նայելով նրանց ուղեկազմի տարբերութիւններին: Օրինակ՝ «սեղան» բառը թէեւ երկուսի մտքի մէջ էլ կապուած է այս ինչ իրի մտապատկերի հետ, բայց մի եղբօր մտապատկերում սեղանը կարող է նուրբ լինել, ճաշակով շինուած, այս ինչ գոյնի, յղկած եւայլն, իսկ միւսի մտապատկերում աւելի կոշտ, մի այլ ձեւով ու գոյնով եւ այլն:

Եթէ տարբերութիւններն անհատից-անհատ,

նոյն իսկ միեւնոյն ընտանեկան ու դասակարգային միջավայրում սնուած ու ապրող անձերի համար դոյութիւն ունեն, ինչ կասկած, որ մի գիւղացու, մի օսկերչի, մի ուսուցչի, մի բանուորի եւ մի հարուստ գրամատիրոջ միջեւ աւելի եւս զգալի կը լինեն այդ տարբերութիւնները: Նոյն «սեղան» բառը գիւղացու գլխում, օսկերչի, ուսուցչի, բանուորի, գրամատիրոջ ուղեղներում բաւական զգալի տարբերութիւններով մտապատկերներ պիտի ծնեցնեն:

Աւելի եւս ընդարձակենք: Մի բուրժուայի եւ մի բանուորի, մի նրբաճաշակ ինտելիգենտի եւ մի աշխատաւոր գիւղացու մտապատկերներում եւս նոյն տարբերութիւններն անշուշտ լինելու են, օրինակ, «արգարութիւն», «ճամարտութիւն», «գեղեցկութիւն» եւ այլ բառերի ու նրանց յարուցած մտապատկերների վերաբերմամբ:

Այսպէս ուրեմն՝ տարբերութիւններ, թէեւ խիստ նուրբ, կան անհատից անհատ, դասից-դաս եւ վերջապէս, դասակարգից դասակարգ: Սակայն այդքան տարբերութիւններ կան, օրինակի համար, բոյսերի եւ կենդանիների տեսակների մէջ: Այսպէս, ամէն մի շուն՝ անհատօրէն տարբերուած է միւս շնից, նոյն իսկ մի արզանգից ծնուած: Ծների որոշ ցեղի կամ տեսակի ըստօրաբաժանումը տարբերուած է, աւելի խոշոր գծերով, միւս ստորաբաժանումից, ինչպէս մոպ-

սը բուլղոգից կամ դամփոից, բարակից եւ այլն : Բայց այդ բոլորը չեն խանգարում բնագէտներին գտնել ընդհանուր խոշոր նմանութիւններ այդ անվերջ բազմազան անհատների մէջ եւ կնքել նրանց մի տեսակի անունով որ է՝ շուն :

Ճիշտ այդպէս էլ ազգերի ներսում եղած անհատական ու դասակարգային տարբեր ըմբռնումները չեն խանգարում ընկերաբանին ընդնշմարել ու բնդդծել բոլոր այն խոշոր նմանութիւնները, որ կան մարդկային ցեղի մը բեկորի բոլոր անհատների մէջ, ազգի բոլոր անդամների մէջ :

Der Tisch ասելով, գերմանացին հասկանում է գերմանական կուլտուրայի ստեղծած սեղանը, ինչպէս եւ Փրանսիացին հասկանում է la table բառով Փրանսիական կուլտուրայի արդիւնք եղող սեղանը, ուսն էլ իրենը, հայն էլ իր սեփականը եւ այլն : Ոչ մի կասկած չէ կարող լինել, որ մի եւ նոյն ազգի բուրժուայի ու բանուորի «սեղանի» մտապատկերների միջեւ որքան էլ տարբերութիւններ լինեն, այնուամենայնիւ նրանք — այդ տարբերութիւնները, կը լինեն համեմատաբար շատ փոքր, քան մի Փրանսիացի բուրժուայի «սեղանի» մտապատկերի, եւ օրինակ, մի հայ բուրժուայինը :

Ճիշտ այդ պատճառով էլ մենք պնդում ենք, որ դասակարգային բոլոր հնչիւնային, ժարգօնական եւ այլ տարբերութիւնները չեն կարող խանգարել մի լեզուի կոչուել ազգային լեզու,

յատուկ ազգը կազմող բոլոր անդամներին :

Սրանից բղխում է մի գործնական հետեւանք, որ առհասարակ հաճելի չէ բառամուլ ապագադայնականներին կամ կոսմոպոլիտներին : Այդ գործնական հետեւանքը հետեւեալն է. ազգութեան ամէն մի անդամ պարտաւոր է պաշտպանել եւ նախանձախնդիր լինել իր ազգային լեզուի զարգացման համար, կռուել նրան հալածողների դէմ, որովհետեւ ազգային լեզուն է այն միակ բնական ու ամէնից քիչ եռանդ պահանջող ստեղծագործական միջոցը, որով մենք կարող ենք պահպանել ու պաշտպանել մեր անհատական կեանքի ամբողջութիւնը — նւթական եւ մտաւոր շահերի համազուտարը, որոնց ամբողջութիւնը կազմում է մեր եսը : Դա էլ մոնիզմ է, բայց ոչ մատերիալիստական կամ իդէալիստական, այլ սինթետիքական (հաւաքական) :

Ուրեմն՝ լեզուն ազգի բոլոր գասակարգերի ու բոլոր անհատների նմանութեան տարրն է, նրանց կապող, մարդկային մի օրգանական ամբողջութիւն կազմող յատկութիւնն է :

Անցնենք այժմ միւս սրահներին, որոնք թէեւ լեզուի չափ բնորոշ ու պարզ չեն, բայց ոչ պակաս անհրաժեշտ են :

Մի⁶ թէ մի իտալացի, որ, օրինակ, ծնուել է Ռուսաստանում եւ իտալերէն չգիտէ, իսկոյն զադարում է իտալական ազգի զաւակ լինելուց : Ամենեւին : Վրաստանի բազմաթիւ վրացախօս

Հայերը, Բուլղարիայի ու Ռումանիայի թիւրքա-
խօս հայերը, Եղիպտոսի արաբախօս հայերը էլ
դեռ հայ են: Ինչ կասկած, որ եթէ մի քանի
տասնեակ սերունդ էլ մնան այդ վիճակում, նը-
րանք էլ պիտի կորչեն իբր հայ, իբր իտալացի,
պիտի ձուլուին տեղական ազգերի մէջ: Բայց առ
այժմ դրանք հայեր են, առ այժմ մեր ենթադ-
րած իտալացին դեռ եւս իտալացի է, որովհետեւ
միայն լեզուն չէ, որ որոշում է ազգութեան գա-
ղափարը. կան նաեւ այլ տարրեր:

Այդ տարրերի մէջ առաջին տեղը բռնում է
մի ազգի գրականութիւնը:

Որքան մի ազգի լեզու զարգացած ու կատա-
րելագործուած է, այնքան աւելի նա մեծ ու
սղանձալի գրականութիւն կ'ունենայ^(*):

Ազգային գրականութիւնը ամփոփում է իր
մէջ մի ազգի անդամների ստեղծագործական բո-
լոր կարողութիւնները, նրանց ուրոյն մտածելա-
կերպը, նրանց տրամաբանութիւնը, նրանց երե-
ւակայութեան ոյժը, նրանց կրքերն ու յոյզերը:

Գրական գործերն էլ, ինչպէս լեզուն, բազ-
մազան են մի ազգի ներսում: Նոյն ազգին պատ-

(*) Գրականութիւն ասելով մենք չենք ըմբռնում միայն
գեղարուեստական գրականութիւնը, այլ մեր կարծիքով
գրականութեան ոչ նուազ կարեւոր մասն է նաեւ գիտա-
կան, հասարակագիտական, պատմական, քննական եւ այլ
նիւղերը: Դժբախտաբար մեզանում ով գեղարուեստական
որեւէ բան չէ գրել, նա երբեք գրող չէ համարում:

կանոց բոլոր հեղինակների գործերն իրարից տարբեր են: Տարբեր են նաև ազգի մէջ գոյութիւն ունեցող դասակարգերի անդամների արտազրութիւնները: Օրինակ՝ գերմանական սոցիալիստական գրողների գործերն աւելի են իրար նման, քան գերմանական բուրժուա գրողների երկերին: Սակայն այս դէպքում էլ մի բան անկասկածելի է. մի եւ նոյն ազգի բոլոր դասակարգերից առաջացած, բոլոր տեսակի համագումներով գրողների գործերն իրար հետ չատ աւելի գուտ գրական (ոճի, պատկերների, մտածելակերպի եւայլն) նմանութիւններ ունեն, քան տարբեր ազգերի համանիչ դասակարգերի գրողների երկերը: Վերջիններես մտքերն ու իդէալները, անշուշտ, իրար նման, նոյն իսկ իրար պատճէն կարող են լինել, բայց նրանց լեզուն, նրանց արտայայտութեան ձեւերը, նրանց ոճերը, նոյն իսկ նրանց յոյգերի, կրքերի ու իդէալների միւսնայնայնութիւնները կամ նրբութիւններն անպայման կը կրեն զուտ ազգային ինքնատիպ կնիք, ազգային առանձնայատուկ բնութագրեր:

Եւ սպանիչ կերպով ձանձրալի կը լինէր, եթէ որ մարդկութեան մէջ գոյութիւն ունեցող բոլոր ազգերի գրականութիւնները լինէին միօրինակ, լոկ բուրժուական ու պրոլետարական ստորաբաժանումներով... Որքան էլ հարուստ ու բազմազան է օրինակ, գերմանական գրականութիւնը, այնուամենայնիւ նա չատ ոգորմելի

ու միօրինակ է, համեմատելով համաշխարհային
գրականութեան հետ: Այստեղ բացի անհատա-
կան տարբերութիւնները, կան եւ զուտ ազգային
տարբերութիւններ, որոնք իրենց կարգին՝ կազ-
մում են մի-մի քննականութիւններ միեւնոյն
ազգին պատկանող անհատ-հեղինակների նմանո-
ղութեան որակների:

Ամէնքին յայտնի է, որ կուլտուրական սան-
դուխի ստորին աստիճաններում ժողովրդները
չունեն գրականութիւն՝ այդ բառի խիստական մըտ-
քով. կայ լոկ բանաւոր կոչուած գրականութիւ-
նը որ սերնդից-սերունդ է հաղորդում բերանից-
բերան, մինչեւ որ այդ ժողովրդի կուլտուրան
բարձրանում է եւ հնարաւոր է դառնում սերնդ-
ների ստեղծագործական այդ ժառանգութեան
չմոռցուած մասերը գրի առնել: Որքան մի ժո-
ղովուրդ կուլտուրապէս բարձրանում է, այնքան
աւելի զարգանում է նրա սեփական գրականու-
թիւնը եւ այնքան աւելի այդ գրականութիւնը
դառնում է ազգութեան բոլոր անդամներին իրար
կապող, իրար հետ շղթայող մի տարր: Աւելի
գիւրդին է կլանել մի ժողովուրդ, որ գրականու-
թիւն համարեա չունի, քան մի ազգ, որ տէր է
բաւական զարգացած գրականութեան, որովհե-
տեւ սեփական գրականութիւնը կապում է ազ-
գութեան բոլոր անդամներին, նրանց դարձնում
է մի տեսակ ազգային օրդանական ամբողջու-
թիւն, զարթեցնում է այդ ազգութեանը պատ-

կանելու գիտակցութիւնն ազգին պատկանող ան-
գամների աւելի եւ աւելի շատ թուի մէջ:

Ազգին պատկանող բոլոր հակազիր շահերի
տէր դասակարգերի անհատները, եթէ գիտակից
են, սիրում են իրենց գրականութիւնը: Այդ
սէրն, ինչ կասկած, հաւասար չէ բոլոր դասա-
կարգերին պատկանող անհատների սրտում եւ
զէպի բոլոր գրութեանները: Ինչ ասել կ'ուզէ, որ
գիտակից բանուորի համար մի սոցիալիստ գրո-
ղի երկն աւելի սիրելի է, քան իր ազգի անդամ
բուրժուայի մի երկը: Դա դասակարգային շահե-
րի եւ դասակարգային ենթաօրդանական ամբող-
ջութեան արդիւնքն է: Սակայն մի բանուորի հա-
մար աւելի հաճելի է իր ազգին պատկանող բուր-
ժուայի գրութիւնը, քան մի օտար ազգութեան
բուրժուայի երկը, որովհետեւ առաջինի լեզուն,
ոճերը, պատկերներն ու կրքերն իրեն աւելի ըն-
տանի են, քան երկրորդինը, իսկ տեմպիցները
կամ նպատակները երկուսի մէջ էլ բանուորի
համար խոտելի են, որովհետեւ բուրժուական են,
հակաբանուորական, հակաաշխատանքական:

Այս վերջին դատողութիւններից էլ, ինչպէս
լեզուի վերաբերմամբ, բխում է մի գործնական
հետեւանք: Ազգի իւրաքանչիւր անդամը, ինչ
դասակարգի էլ նա պատկանելիս լինի, պարտա-
ւոր է աշխատել իր մայրենի գրականութեան,
նրա բարդաւաճման համար, պարտաւոր է կռուել
այն բոլոր խոչընդոտների ու արգելքների դէմ,

որ կը հանուեն այդ գրականութեան առջեւ : Ինչ կասկած , որ այս կամ այն դասակարգի պատկանող անհատը կ'աշխատի զարգացնել իր ազգային գրականութեան յատկապէս այն մասը , որն իր սրտին , իր իդէալներին , ու շահերին աւելի մօտ է : Իսկ այդ պաշտպանութիւնն ամէն մարդ պարտաւոր է անել , որովհետեւ մայրենի գրականութիւնն են այն միջոցները , որոնցով կարելի է աւելանդ գործ դնելով , դասակարգային գիտակցութիւն զարգացնել աշխատաւոր դասակարգերի մէջ եւ նպաստել նրանց դասակարգային կազմակերպութեան , ուրեմն եւ ընդհանուր կուլտուրական զարգացման գործին , որն , իր կարգին , հանդիսանում է իրր համամարդկային շահի տեսակէտ :

Թէ այս թէ նախընթաց գործնական եղբակացութիւնը բղիւում է համամարդկային , կամ աւելի ստոյգ է ասել՝ տիեզերական այն օրէնքից , որը կոչւում է ուժերի տնտեսութեան օրէնք : Որքան կարելի է քիչ եռանդ գործ դնել եւ որքան կարելի է շատ արդիւնք ձեռք բերել , — ահա այդ օրէնքի էութիւնը : Դրա հիման վրայ է , որ ամէն մի ոյժ գիմում է զէպի ամենաթոյլ գիմադրութեան կողմը : Ազգային լեզուն եւ գրականութիւնն են այն միջոցները , որոնցով կարելի է ամենամեծ հետեւանքների հասնել կուլտուրական ասպարէզում , մանաւանդ դասակարգային կազմակերպութեան խնդիրներում , նուազագոյն ե-

ռանդ՝ դործ՝ դնելով: Նոյն հետեւանքներին կա-
րելի է հասնել նաեւ որ եւ է օտար լեզուով, բայց
դա կը պահանջէ շատ աւելի ջանք, ոյժ, եռանդ:
Իսկ ամէն մի հասարակական կամ ընկերաբանա-
կան խնդիր լուծելիս, երբեք չպէտք է մոռանալ
ուժերի խնայողութեան տիեզերական եւ հրամա-
յական օրէնքը: Այդ օրէնքի հիման վրայ է, որ
ընկերավարականները եւ արմատականները պա-
հանջում են կրթութիւնը տալ մանուկներին մայ-
րենի լեզուով: Օտար լեզուով տրուող կրթութիւ-
նը շատ աւելի զոհեր է պահանջում:

Ազգութեան արտաքին նշաններից մէկն էլ
յաճախ համարւում է այդ ազգութեան ամենա-
մեծ թիւ անհատների ընդհանուր հայրենիքը:
Այո՛, ճշմարիտ է, — աշխարհում գոյութիւն ու-
նեցող ազգերի ահագին մեծամասնութիւնը հայ-
րենիք ունեն, որի վրայ ապրել են այդ ազգի նա-
խնթաց սերունդների շարքերը դարեր շարու-
նակ: Երբ Հոնները խուժեցին Եւրոպա, հասան
Օստգոթերի երկիրը, մինչեւ իսկ արեւմտեան Եւ-
րոպա եւ այնտեղ հաստատուեցին, հիմնելով ի-
րենց բարբարոս տիրապետութիւնը, դա սկըզ-
բում դեռ նրանց իրաւունք չէր տալիս ասելու,
որ այդ երկիրներն իրենց հայրենիքներն են: Դը-
րանք լուր սրով տիրուած երկիրներ էին նրանց
համար: Թաթարները, Սելջուկները, Օսմանեան
թուրքերը, երբ Ժ.-ԺԴ. դարերում Թուրանից
խուժեցին Պարսկաստան, Հայաստան, Անատոլի-

լիա եւ Բաղկան, սկզբի սերունդների օրով չէին
կարող ամենեւին կոչել այդ երկիրներն իրենց
Հայրենիքը: Բայց երբ մի քանի սերունդներ այդ
բարբարոս հորդաներն ապրեցին այդ երկրնե-
րում, կալան այդ հողին, նստեցին, դարձան հողի
հետ մտերմօրէն կապուած, երկրագործ. երբ
նրանք այդ երկրի բնական սլաքմաններին բաւա-
կան զգալի չափով ենթարկուեցին եւ իրենց Փի-
ղիքական ու ոգեկան կազմը, համաձայն յարմա-
րեցման անխախտ օրէնքի, որոշ փոփոխութիւն-
ների ենթարկուեցին, — այն ժամանակ միայն
նրանք, բնականօրէն իրաւունք եւ նոյն խկ պար-
տականութիւն ստացան կոչելու այդ երկրներն
իրենց Հայրենիքը:

Երկար դարերի, տասնեակ, հարիւրաւոր ու
հազարաւոր սերնդների անցկացրած կեանքը մի
երկրում ծնեցնում է այդ ժողովուրդի մէջ սէր
դէպի այն երկիրը, ուր ապրում են. սէր դէպի
ծննդավայրը, դէպի «Վաթանը», դէպի Հայրե-
նիքը: Չկայ մի ժողովուրդ, մի ազգ, որ չսիրէ
իր ծննդավայրը, իրեն ապրուստ մատակարա-
րող, իրեն կեանք պարգեւող երկիրը, այն հողն
ու ջուրը, ուր ապրել են իր նախնիքների մի ա-
հազին շարք:

«Բանուորները Հայրենիք չունեն», ասում են
Մարքսը եւ Էնգէլսը «Կոմմունիստական կուսակ-
ցութեան Մանիֆէստ»ի մէջ: Նրանք Հայրենիք
չունեն, որովհետեւ այդ Հայրենիքի մէջ սեփա-

կանուրթին չունեն։ Հողը եւ միւս արտադրական
բոլոր միջոցները սեփականութիւն են տիրող
գասակարգերի — բուրժուազիայի եւ ազնուա-
կանութեան։ Բանուորը սեփականութիւն չունի
իր հայրենիքում, ուրեմն եւ հայրենիք չունի,
ահա այն տրամաբանօրէն իրար չբռնող մտքերը
որոնք հիմք են ծառայում Մարքսին եւ Էնգէլսին։

Սէրը դէպի հայրենիքը, դէպի ծննդավայրը
կապ չունի սեփականութեան գաղափարի հետ։
Ապրելով մի բնակարանի մէջ մի-երկու տարի,
դուք որոշ չափով կապուած էք այդ բնակարանի
հետ եւ ստիպուած լինելով թողնել այն, բաւա-
կան ցաւ էք զգում։ Ո՞րքան ուրեմն մեծ կը լինի
այդ կապակցութեան զգացմունքը նոյն իսկ սե-
փականացուրկ գասակարգի մէջ, որի նախնիք-
ները թերեւս սեփականատէր, դարեր շարունակ
ապրել եւ միացել են այդ երկրի հետ, ոռոգել են
նրան իրենց արին քրտինքով, սիրել են նրան,
կապուել նրա հետ իրենց սրտի անքակտելի թե-
լերով։ Եւ այդ հազարամեայ զգացումները ժա-
ռանդարար կուտակուել, միս ու արիւն են դառել
այդ ազգի բոլոր անդամների համար, սեփակա-
նատէր թէ սեփականացուրկ։ Եւ բանուորը, չու-
նենալով ոչ մի սեփականութիւն իր հայրենիքում,
ունի իր սրտում սէր դէպի այդ երկիրը։ Նա այն-
տեղից հեռանում է լոկ ծայրայեղ ստիպողակա-
նութեան, մնալու անհնարինութեան դէպքում։
Եւ հեռանալիս էլ նրա սիրտը լիքն է լինում գառ-

նութեամբ... Վկայ այն արցունքները եւ ախ ու վախերը, որոնցով դաղթում է հայը թիւրքահայաստանից, Իտալացին — Ամերիկա գնալիս, Իրլանտացին՝ իր մռայլ կղզուց...

Ներկայումս հարստութիւնների ստեղծադործող մայրն աշխատանքն է, արտադրութեան ամենահզօր մարդկային աղբակը, որը դառնում է նաեւ արտադրութեան դորժիքներ, որոշ ձեւով քարանալու ընական բարիքների մէջ: Այդ աշխատանքն է որ կենդանացնում է հայրենիքը, մարդկային ապրուստի համար արժէքներ է ըստեղծում այնտեղ: Եթէ այդ ստեղծադործող աշխատանքի հեղինակը, նրա տէրը — բանուորն այսօր իրաւագուրկ է, սեփականութիւն չունի, դա դեռ չէ նշանակում, որ այդ հայրենիքն իրենը չէ: Նրանից բռնի խել էն այդ հայրենիքը, բայց նա կուում է յետ խլելու համար իսկապէս միայն իրեն պատկանող այդ երկիրը: Նա սեփականութիւն չունի իր սիրած հայրենիքում, բայց կուում է ձեռք բերելու համար այդ սեփականութիւնը, միայն ոչ իբր անհատական տիրապետութեան առարկայ, այլ իբր համայնական սեփականութիւն:

Ոչ, հայրենիքը պատկանում է բանուորին կամ աշխատաւորին, որովհետեւ նա է նրան կենդանացնում իր աշխատանքով. նա սիրում է իր հայրենիքը, նա կապում է նրա հետ աւելի քնքշօրէն, քան սեփականատէր բուրժուան:

Սակայն հայրենիք ունենալն անսպասելի անհրաժեշտութիւն չէ մի ազգի դոյութեան համար։ Առաջուց կարելի է, այո՛, ասել, որ մի ազգ, որը հայրենիք չունի, դատապարտուած է վերջ ի վերջոյ լուծուելու շրջապատ ժողովրդների մէջ, բայց մինչեւ լուծուելը, դեռ երկա՛ր ժամանակ նա կարող է ունենալ իր ազգային օրգանական ամբողջութիւնը, պահել իր ազգային բնոյթը, չունենալով հայրենիք։ Այդպէս են հրէաները, ասորիները եւ այլ ժողովրդներ։

Կ. Կառլսկիրն չորս հիմնական նշաններ է դր՝ նում ազգութեան համար, որոնցից մէկն «ընդհանուր հայրենիքն է» (*): Եւ որովհետեւ հրէաների վերաբերմամբ իր այդ բնորոշումը պիտանի չէ հանդիսանում, այդ պատճառով նա հրէաներին համարում է «մի կրօնական համայնք» եւ ոչ ազգութիւն։ Երեւի նա նոյն բառերը կը գործածէր նաեւ ասորիների վերաբերմամբ։ Այն ինչ այդ երկու ժողովրդներն էլ ունեն ազգութիւն կոչուելու հական եւ խոշոր իրաւունքներ. ամէն տեղ նրանք իրենց զգում են մի ազգ, մի օրգանական ամբողջութիւն, իրենց ստեղծագործական յատուկ ձեւերով, իրենց առանձնատուկ կուլտուրայով եւ ազգային ոգով։

(*) Տե՛ս «Աստրիայի ճգնաժամը — Լեզու եւ Ազգ», (ռուսերէն)։

Ազգութեան ցայտուն նշաններէց են նաեւ
ընդհանուր սովորութիւնները, ընդհանուր աւան-
դութիւնները, կեանքն ըմբռնելու ինքնատիպ ե-
ղանակը, մասամբ նման յոյսերն ու յոյզերը եւ
այլն: Ինչ կասկած, որ այդ բոլոր հարցերում էլ
ազգութեան ներսում զոյութիւն ունեցող ամէն մի
դասակարգ ունի իրեն յատուկ ներքին բովանդա-
կութիւնը, իր դասակարգին միայն սաղական,
օրինակ, սովորութիւնները, աւանդութիւնները,
կեանքն ըմբռնելու ինքնատիպ եղանակը, յոյսերն
ու յոյզերը: Բայց կասկածից դուրս է նաեւ այն,
որ արեւած ազգի բոլոր դասակարգերն ունեն ա-
ւելի նման յոյսեր ու յոյզեր, սովորութիւններ եւ
աւանդութիւններ, քան երկու տարբեր ազգու-
թիւնների համապատասխան դասակարգերը: Օ-
րինակ՝ Փրանսիացի ու անգլիացի բանուորների
իդէալն, անկասկած, նոյնն է. սոցիալիզմը, սոց-
իալիստական կարգերը: Դա մի միջազգային աշ-
խատաւորական իդէալ է: Սակայն դրա ըմբռնու-
մը կամ կոնցէպցիան Փրանսիական դոյն ունի մի
տեղում, անգլիական— միւսում, կամ նա՝ այդ
ըմբռնումը զուտ ազգային բնոյթով է: Իսկ այդ
բնոյթը, լինելով ազգային, յատուկ է եւ ազգի
միւս բոլոր դասակարգերին: Օրինակ՝ Փրանսիա-
կան բուրժուան էլ իր պահպանողական իդէալ-
ները, պնդականն էլ իր յետադիմական իդէալ-
ները նոյն ազգային ձեւով է պատկերացնում, ա-
սենք՝ Փրանսիական փութկոտութեամբ, գործ-

նական ու կրակոտ տոնով եւ այլն: Դեռ այդ եղանակի ընդհանրութիւնն է: Հապա ո՛րքան շատ են երկրորդական, այսպէս ասենք, միջդասակարգային ընդհանուր ձգտումները, որոնք յատուկ են ազգի բոլոր անդամներին: Այդպէս են, օրինակ՝ անհատական երջանկութեան ըմբռնման բազմաթիւ հարցերը, սիրային, զուարճական, քնքշութեան եւ այլ էմոցիոնական (յոյզ) խնդիրները: Դրանք բոլորն էլ ազգային բնոյթ են կրում եւ յատուկ են ազգի բոլոր դասակարգերին այս կամ այն չափով, այս կամ այն գուտ ազգաաւստրիական յայտնի սոցիալիստ գրող Օտտօյին ձեւով:

Բոլորովին նոյն տրամաբանութիւնով եւ նոյն մտածելակերպով պիտի մօտենալ նաեւ ազգային քնաւորութեան եւ բարոյական ընդհանուր անհատականութեան խնդիրներին:

Ազգային ընդհանուր բնոյթ (բարակտեր) ընդունում է շատ դրոշներէ կողմից մի այնպիսի խոշոր նշան ազգութեան վերաբերմամբ, որ Բաուէրը համարում է զա ազգութիւնը բնորոշող ամենաէական ու հիմնական գիծը, ինչպէս Կ. Կառլսկին՝ լեզուն:

«Արդեօք ազգը մի եւ նոյն արմատից սերուած մարդկանց ընդհանրութիւնն է» հարցնում է Օտտօ Բաուէրը եւ պատասխանում. «Սակայն իտալացիները սերուած են էտրուսկներից, հռոմայեցիներից — գերմաններից, կէլտներից, յայնե-

րից եւ սարակինոսներից. այսօրուայ փրանսիացիները սերուած են գալլերից, հռոմայեցիներից, բրիտներից եւ գերմաններից. այսօրուայ գերմանացիները — գերմաններից, կէլտերից եւ սլաւոններից: Արդեօք լեզուի ընդհանրութիւնն է, որ մարդկանց միացնում, մի ազգ է դարձնում: Սակայն Անգլիացիները եւ Իրլանդացիները, Դանիացիները եւ Նորվեգիացիները, Սերբերն ու Խորուատները խօսում են միեւնոյն լեզուները, բայց այդ պատճառով միեւնոյն ազգերը չեն կոչւում: Հրէաները չունեն ոչ մի ընդհանուր լեզու, բայց եւ այնպէս մի ազգ են: Արդեօք մի ընդհանրութիւն կազմելու գիտակցութիւնն է, որ ազգին միաւորում է: Ուրեմն այդպիսի դէպքում, Տիրուի գիւղացին չպէտք է ամենեւին գերմանացի կոչուի, որովհետեւ նա երբեք չէ գիտակցում իր պատկանելը մի ընդհանուր միութեան Արեւմտեան Պրուսիայի եւ Պոմէրանիայի, Թիւրինգիայի եւ Էլզասի հետ միասին: Եւ յետոյ՝ ի՞նչ է այն բանը, որը գերմանացին գիտակցում է, երբ նա իր գերմանականութիւնն է յիշում: Ի՞նչն է նրան պատկանել տալիս գերմանական ազգին, միացնում նրան միւս գերմանացիներին: Նախ եւ առաջ պէտք է մի ամբողջութեան պատկանելու որ եւ է արտաքին (*օբէկտիւ*) նշան լինի, որ այդ մի ամբողջութեան պատկանելու գիտակցութիւնն առաջանալ կարողանայ»:

«Ազգութեան հարցը կարող է պարզուել մի-

այն ազգային բնաւորութեան գաղափարով» (*) :

Ի հարկէ այդ ազգային բնաւորութիւնը մե-
տափիզիքօրէն տրուած մի անփոփոխ եւ յաւի-
տենական մեծութիւն չէ՝ անսկիզբն ու անվախ-
ճան . նա էլ ծնունդ է տրուած ազգի, երկրի, կլի-
մայի, բոյսերի ու կենդանիների, գետերի ու լը-
ճերի, արեւի ջերմութեան ու թխուկերի, — մի
խօսքով՝ — բնական միջավայրի մի կողմից, իսկ
միւս կողմից՝ պատմականօրէն առաջացած հա-
սարակական միջավայրի : Օտտօ Բաուէրը 6-7
երեսի վրայ մանրամասն կանգ է առնում եւ բա-
ցատրում ազգային բնաւորութեան առաջացման
պարագաները :

Մեր վերլուծութեան ենթարկած բոլոր յատ-
կանիչները միախառնուելով, արտադրում են այն
բարոյական ու ֆիզիքական էութիւնը, որ ան-
հրաժեշտ է մի որ եւ է ազգի անդամ լինելու հա-
մար : Որոշ ժամանակաշրջանում տրուած ազգի
անդամների ահազին մեծամասնութիւնը պիտի
ունենայ յիշուած արտաքին նշանների խոշոր մա-
սը :

Որքան մի ժողովուրդ արժանի է «ազային
մի ամբողջութիւն» կոչուելու, այնքան աւելի
ցայտուն կերպով երեւում են այդ բոլոր արտա-
քին նշանները նրա անդամների ամենաշատ թուի

(*) Otto Bauer — «Die Nationalitätenfrage
und die Sozial demokratie», s. 1 - 2, Wien, 1908 p.

մէջ: Որքան մի ժողովուրդ կուլտուրապէս ստոր է, այնքան աւելի նուազում են այդ ընդհանուր ազգային արտայայտութիւնները. կը նշանակէ՝ այնքան նուազ նա արժանի է կազմելու մի ազգային «օրգանական ամբողջութիւն», ինչպէս ասում է Բեբելը. այնքան աւելի դիւրութեամբ կարող է կլանուել այդ աղիւր: Այդ մտքի հակառակն էլ անպայման ստոյգ է. որքան մի ազգ աւելի ցայտուն կերպով արտայայտում է այդ արտաքին նշանները, կամ որքան նա աւելի ազգային բնաւորութիւն ունի իբր մի օրգանական ամբողջութիւն, այնքան աւելի դժուար է նրան քայքայել, տարրալուծել եւ կլանել կամ ձուլել մի այլ ազգութեան մէջ: Որքան «ազգային ոգին» գիտակից եւ ամուր է, այնքան զօրեղ է ազգութիւնը, այնքան աւելի դիմացկուն է ազգը:

*
**

Այսպէս ուրեմն՝ վերլուծելով «ազգ» հասկացողութիւնը, մենք եկանք այն եզրակացութեան, որ ազգ կոչւում է մարդկանց այն մեծ խումբը, որը սերնդից-սերունդ՝ դարեր շարունակ ապրելով միեւնոյն բնական ու պատմական միջավայրում, իր կուլտուրային վերաբերող բոլոր հարցերը լուծել է իր համար, ինքնուրոյնաբար: Դրանով, ժամանակի ընթացքում, երկար միասնականացութեան շնորհով, ստեղծուել է ազգային մի

ընդհանուր ոգի կամ ներքին, սուրբկտիվ աշխարհ: ազգային ստեղծագործութեան ինքնուրոյն ձեւեր, ազգային յատուկ բնաւորութիւն եւ նոյն իսկ ազգային առանձնայատուկ ֆիզիքական եւ հոգեբանական տիպ:

Այդ որոշումից պարզ է, որ ազգը մի բիօպսիխոլոգիական կամ բնա-սրատմական երեւոյթ է, որի զոյութիւնն ուրանալ անկարելի է: Նա կայ, նա զոյութիւն ունի: Ամէն մի անհատ, ամէն մի մարդկային խմբակ, որի անդամները նման մտածելակերպ եւ նման աշխարհահայեացք ունեն եւ կազմում են մի կուսակցութիւն, պարտաւոր են որոշ դիրք բռնել դէպի այդ զոյութիւն ունեցող բնկերաբանական ու հոգեբանական երեւոյթը: Նրանք պարտաւոր են որոշել իրենց վերաբերմունքը դէպի այդ խոշոր խնդիրը, պարտաւոր են իրենց զործնական ու տնտեսական քաղաքականութեան մէջ պարզ ու յստակ բանաձեւերով ու զործնական որոշումներով լուծել այդ հարցը:

Մենք տեսանք, որ մարդկութեան բարբարոսութեան ու վայրենութեան շրջաններում ազգութիւն զոյութիւն ունենալ չէր կարող. այնտեղ կային լոկ տոհմեր ու ցեղեր, իրար արինակից անհատներից բաղկացած մանրիկ խմբակցութիւններ՝ — համայնական սեփականութիւնով, հաւասարասէր իրաւունքով. չկար պետութիւն հասկացողութիւնը, որովհետեւ դեռ եւս դասա-

կարգեր չկային, որոնցից որ եւ է մէկը տիրապե-
տութիւնն է եղել պետութիւնն իր գոյութեան
3-4000 տարիներ ընթացքում: Բնական եւ պատ-
մական նման միջավայրում ապրող մարդկային
արիւնակից խմբակները միանում, միաձուլւում,
կազմում են մարդկային աւելի ու աւելի խոշոր
զանգուածներ: Առաջ է դալիս նիւթական անհա-
ւասարութիւն, ծնւում են զասակարգեր, պետու-
թիւն եւ ազգ:

Ազգութիւնը կար հին Արեւելքում, Եգիպ-
տոսում, Յունաստանում ու Հռոմում: Նա միջին
դարերի սկզբներում ծածկուեց գերման ցեղի
տոհմական կազմի սաւանով, բայց վերածնուեց
ԺԳ.-ԺԴ. դարերում, առաջ բերելով ազգային
պետութիւններ: Այդ ժամանակներից սկսած
զարգանում է ազգութեան գաղափարը եւ տա-
րածւում վերին կոչուած հասարակական խաւե-
րից դէպի ներքեւ, գէպի ժողովրդական զան-
գուածները, գէմոկրատիական խաւերը:

Այսօր հասարակական բոլոր երեւոյթներն
անպայման կատարւում են ազգի զբոլում, նրա
ներսում, «ազգային միջավայրում»:

Էմմանուէլ Կանտը, քննելով մարդկային ըմ-
բռնումներն ու պատկերացումները, դալիս է այն
գերազանցօրէն մետաֆիզիկական եզրակացու-
թեան, որ ժամանակն ու տարածութիւնը փորձ-
նականօրէն յղացած կատեգորիաներ կամ ըմբռ-
նումներ չեն. որ նրանք «ի ծնէ» են տրուած, բը-

նական ու անսկիզբն են, որովհետեւ բոլոր ներքին ու արտաքին երեւոյթները տեղի ունեն ժամանակի ու տարածութեան մէջ. չկայ ոչ մի հրնար երեւակայելու որ եւ է երեւոյթ այդ երկու կատեգորիայից դուրս. դրանք *apriori* (նախադրական) են:

Հրէայ սիոնիստ տաղանդաւոր դրող Պասմանիկը համեմատում է ազգութիւնը ժամանակի եւ տարածութեան կատեգորիաների հետ: Ինչպէս որ փիլիսոփայական ոչ մի երեւոյթ չէ կարող կատարուել ժամանակից եւ տարածութիւնից դուրս, ճիշտ այդպէս էլ ոչ մի հասարակական երեւոյթ չէ կարող տեղի ունենալ այլ տեղ, քան ազգութեան դրկում: Հասարակական բոլոր երեւոյթների համար ազգութիւնը նոյն նախապայմանն է, ինչ որ փիլիսոփայական երեւոյթների համար ժամանակը եւ տարածութիւնը:

Այդ մտքի հետ մենք լիապէս համաձայն ենք, ի հարկէ մի առարկութիւնով. թէ ժամանակն ու տարածութիւնը եւ թէ ազգութիւնը միանգամ ընդմիշտ տրուած քանակութիւններ չեն, անըսկիզբն ու անվախճան, այլ փորձնական ճանապարհով ձեռք բերուած, հազարաւոր սերունդների կողմից ժառանգարար իրար հաղորդուած՝ իբր կանխատրամադրութիւններ ու նեարգային եւ ուղեղային համակարգութեան որոշ դրութիւններ են:

Այո՛, այդ մտքով վերցրած՝ ազգութիւնը մի

անհրաժեշտ նախադրումն է բոլոր հասարակա-
կան երեւոյթներին. նրանք բոլորն էլ, առանց
բացառութեան, պիտի տեղի ունենան որ եւէ ազ-
դի գրկում, բացի վայրենական ու բարբարոսա-
կան շրջաններէց, ուր ազգեր չկան, այլ գոյու-
թիւն ունեն լսիլ ցեղեր :

Առ այժմ մենք մի կողմ ենք թողնում ազգա-
յին կռիւները, ազգային հալածանքները, իսկա-
կան ազգայնութեան և շօվինիզմի կամ ազգայնա-
կանութեան (ազգայնամոլութեան) և իմբերիա-
լիզմի (կայսերականութեան) խնդիրները. այդ
մասին մենք կը խօսենք, երբ կը պարզենք դասա-
կարգերի եւ դասակարգային կռուի էութիւնը :
Իսկ հիմա գիմենք կուսակցութիւնների բռնած
գիրքերին եւ նրանց գլխաւոր մտածողների կար-
ծիքներին :

Գ Լ ՈՒՒ Գ.

Ազգամուլներ: Լիբերալ Բուրժուազիան:
Ընկերվարականները — Մարքս եւ Էնգելս:
Մարքսի կարծիքները յատկապէս:
Քննադատութիւն:

«Թողէ՛ք մեռելներին թաղելու իրենց մեռել-
ները»:

Ազգութեան եւ դասակարգերի մասին խօսե-
լիս, մենք միշտ աշխատել եւ աշխատում ենք
հաւատարիմ մնալ այդ ասացուածքին: Մեզ հա-
մար վազո՞ւց արդէն դադարել է նշանակութիւն
ունենալ յետադիմական կամ ադնուական, պահ-
պանողական, կղերական եւ այլ մեռած կամ շատ
չուտով մեռնելու դատապարտուած կուսակցու-
թիւնների հայեցակէտերը մեզ զբաղեցնող խըն-
դիրների առիթով: Այժմ մի տարրական ճշմար-
տութիւն է, որ «Նուօէ Վրեմիա» թերթը եւ իր
խմբագիր Սուլժոբինը եւ կամ Պուրիշկեվիչները,
«Իսկական Ռուս Մարդիկ» ու այլ այդպիսի ան-
հատներ եւ կուսակցութիւններ ազգամուլներ, օ-
տարակներ են, որ նրանց քաղաքականութիւ-
նը տանում է Ռուսաստանը Յուսիմա, դէպի
Պորտ-Արտուր, դէպի տիղմ ու կործանում: Այ-

սօր ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ նրանց ուղղութիւնը դարձնում է ոստիկանատներում:

Ամենին յայտնի է նոյնպէս, որ «Աղամի եւ Եհովայի հայերէն խօսիլը» կամ «Վիկտորիա Թագուհուն Արշակունեաց զարմէն սերուած ըլլալը», որ ծնունդ է մեր հին վարդապետների ազգային զերազանց եռանդի, եւ կամ Աշըղ-Ջիւանու հռչակաւոր «բանաստեղծութիւնը» — «Փարիզու զարդարուած քառանկիւնուցը իմ հայ պապի փլած խրճիթը լաւ է, ո՛հ լաւ է»... ասում ենք, ամէնքին յայտնի է, որ այդ ամէնը այրած սրտի մխիթարանքներ, ազգամոլութեան, անմիտ չօվինիզմի պտուղներ են:

Թողնենք մեռելներին թաղելու իրենց մեռելները. չգրադուենք այդ ամէնով, որովհետեւ ամէնքին յայտնի են դրանց մտքերի անմտութիւնը: Մենք կանգ կառնենք, այսպէս կոչուած՝ ճախակողմեան մտածողների տեսակէտների վրայ:

Դեռ սրանից մօտ մի զար առաջ, զերմանական երիտասարդ լիբերալիզմի տաղանդաւոր ներկայացուցիչներից մէկը, Հայնրիխ Հայնէն, գրում էր.

«Այն գլխաւոր լծակը, որ մինչեւ այժմ փառաւէր եւ շահամոլ վեհապետներն այնքան արդիւնաւոր կերպով կարողանում էին շարժման մէջ դնել իրենց անձնական նպատակների համար, յատկապէս ազգութիւնն իր սնապարծութիւնով եւ իր ատելութիւնով դէպի ուրիշները, այժմ մաշ-

ուել եւ փտել է: Օր օրի վրայ չճանում են մէկը միւսից աւելի յիմարագոյն ազգային նախապաշարումները. բոլոր խիստ տարբերութիւնները ոչնչանում, կորչում են Եւրոպական քաղաքակրթութեան ընդհանրութեան մէջ: *Եւրոպայում այլեւս գոյութիւն չունեն ազգեր, այլ կան միայն կուսակցութիւններ...*: Այժմ կազմում են երկու խոշոր գանգուածներ, որոնք քշնամութիւն են անում իրար եւ նակատամարտում են իրար հետ մտերմով եւ հայեցակէտերով»: (Italien, 1828 թիւ, գլ. XXV. «Միւնխէնից մինչեւ Ջէնովա»):

Եւ ի՞նչ կասկած՝ — այդ կուսակցութիւնները քաղաքական մեծ միութիւնների կամ խոշոր պետութիւնների մէջ էին, որոնց սահմանները վրայից նրանք իրար ձեռք էին մեկնում, ժրխտելով ազգութիւնները եւ ձգտելով կոսմոպոլիտիզմի, համամարդկային մի եւ միակ ամբողջութեան երեւակայական սկզբունքին: Մի այլ տեղ (նոյն-դէպ—XXX) Հայնէն ազգային զգացմունքն անուանում է կոսպաշտական զգացմունք: Պահենք մտքերս Հայնէի այդ կտորները. նրանք չափազանց նման են Լիբկնէխտի արտայայտութեանը, որ մի քիչ յետոյ պիտի առաջ բերենք:

Դա բուրժուական կոսմոպոլիտիզմն էր: Նա ժխտում էր ազգութիւնը, նա քարոզում էր լոկ մարդկութիւն: «Բայց ո՞րն է մեր ժամանակի մեծագոյն խնդիրը: Դա ազատագրումն է (Էման-

սիպասիմը) : Ազատագրումը ոչ միայն իրլանդացիների, յոյների, ֆրանկֆուրտի հրէաների, արեւմտեան Հնդկաստանի նեգրների եւ ուրիշ ննշուած ժողովրդների, այլ ազատագրումն ամբողջ մարդկութեան : (Հայնէ — նոյն շարագրութիւնից) :

Վերցնելով ազգութեան բոլոր արտաքին արտայայտութիւնները, լիբերալ կոսմոպոլիտները քննութեան էին ենթարկում դրանց եւ ապացուցանում, որ դրանք բոլորն էլ կայուն, մշտական յատկանիշներ չեն, այլ յարաշարժ եւ մշտափոփոխ, յեղեղով եւ անկայուն : Եւ դրանից նրանք եզրակացնում էին, որ ազգութիւնն ուրեմն գոյութիւն չունի : Նրանց այդ կծու քննադատութիւնն ուղղուած էր ազգամոլներին, շովինիստներին դէմ, որոնք, կպչելով ազգութեան այս կամ այն արտաքին նշանից, այդ նշանը հրատարակում էին ընդածին կամ ընածին, անսկիզբն ու անվախճան, մի տեսակ քարացած ու անփոփոխ երեւոյթ, որ մի ազգին տարբերում էր միւսից : Դրանով նրանք դառնում էին մետաֆիզիքներ ազգային խնդրում : Նրանց կարծիքով ազգերը մարդկութեան կայուն, անփոփոխ եւ մշտատեւ ձեւերն են, որոնք իրար խառնուել չեն կարող, նրանց կարելի է կոտորել, սովամահ անել, սերհատել եւ արմատախիլ անել իրենց երկրներէ, բայց ձուլել նրանց, կլանել — անկարելի է դրականապէս : Նրանց համար ձեւն առանձին

զոյութիւնն ունեցող երեւոյթ էր, ինչպէս է. Կտնտի համար: Նրանց մտածելակերպը նման էր հոշակաւոր բնագէտ Կիւլիէի մտածելակերպին, որն ընդունում էր կենդանական տեսակների ուրոյն եւ անվերլուծելի զոյութիւնը. նրանց ինքնուրոյն ստեղծագործութիւնն, ինչպէս ուրուստիւսը է Ս. Գրքում:

Նախընթաց դիւում մեր տուած վերլուծութիւնից եւ բացատրութիւններից պարզ երեւում է, որ մենք այդ երկու ուղղութիւններն էլ համարում ենք սխալ: Մեր կարծիքով, ազդութիւնները մարդկային ցեղի արտայայտութեան ձեւերն են, որոնք որոշ ժամանակաշրջանում ըսկիզբն են առել եւ զարգացել են շնորհիւ աշխարհադրական, երկրաբանական եւ այլ բնական պայմանների եւ պատմական միջավայրի եւ որոնք լինելով յարաբերութիւն, կարող են, որոշ պայմանների կուտակման շնորհով, կորչել, կըլանուիլ, խառնուիլ դրացի ազգերի հետ կամ տարրալուծուիլ, քայքայուիլ կամ կորցնել ուրոյն զոյութեան գիտակցութիւնը: Մի խօսքով մեր տեսակէտը էւոլիւցիոնական կամ բնաշրջական տեսակէտ է եւ ոչ մետաֆիզիքական:

Բուրժուական այլ կուսակցութիւնների ծրարագրերում մենք կը գտնենք իմպերիալիզմը, տիրապետելու, գրաւելու անյադ ցանկութիւնը: Դրանք իրենց այդ ցանկութիւնն արգարացնում են նրանով, որ իրենց հայրենիքն ու իրենց ազ-

դը համարում են լաւագոյնը, մի տեսակ «ըն-
 տրեալն յ'Աստուծոյ»: «Deutschland uber alles»
 (Գերմանիան ամենից բարձր), ասում են գերմա-
 նական բոլոր բուրժուաները: Եւ նրանք, Բիս-
 մարկների, Նոհհիլոէների ու Բիւլովների բե-
 րանով պահանջում են գրաւել նորանոր երկիր-
 ներ, քաղաքակրթել նրանց, գերմանական բարձ-
 րագոյն կռլտութեան ներմուծել ամեն տեղ...
 Չէ որ դեռ եւս հռչակաւոր փրկիտփայ Հեզելը,
 Մարքսի ու Էնգելսի ուսուցիչը պնդում էր, որ
 քաղաքակրթութիւնն սկիզբն է առել արեւելքում.
 սկսուելով Չինաստանից, նա անցել է Հնդկաս-
 տան, յետոյ Պարսկաստան, ապա Փոքր Ասիա,
 Ասսիրո-Բաբելոն, Փրոնիկէ, Յունաստան, Հռոմ
 եւ վերջապէս Գերմանիա, որտեղից դէպի արեւ-
 մուտք յառաջանալու այլ եւս տեղ չը կայ. կա-
 սլուտակ ովկիանոսը կտրում է քաղաքակրթու-
 թեան արեւելքից արեւմուտք չուելու այդ ըն-
 թացքի առջեւը: Հեզելն է, մեծն Հեզելը, որ
 պնդել է այդ երեւոյթի վրայ, ոտի տակ տալով
 պատմական փաստերը, նրանց բռնազբօսիկ բա-
 ցատրութիւններ տալով, յետ ու առաջ դասաւո-
 բելով: Նրան հարկաւոր էր Գերմանական քաղա-
 քակրթութիւնը հրատարակել մարդկային ամե-
 նաբարձր քաղաքակրթութիւնը, գիտութեան եւ
 կռլտութեան վերջին խօսքը, Ինչպէս իր փրկի-
 տփայական սխառեմը փրկիտփայութեան դա-
 վաթնակէտը: Յարաճուն, մշտագարգաց հրատա-

րակեց Հեղեղը թէ քաղաքակրթութիւնը եւ թէ փիլիսոփայութիւնն ու փիլիսոփայական սխառէմները, բայց անձնական եւ ազգային եսամոլութիւնը թոյլ չը տուին նրան շարունակելու երեւոյթներէ տրամախօսական զարգացումը, նրանց Էվոլիւսիանը: Դա Գերմանական շովինիզմի ամենացայտուն արտայայտութիւնն է:

Գրաւել Շլէզլիդ-Հոլշտայնը, իսկ Աւրտրիայ մի քանի զաւառներ, նուաճել Էլզասն ու Լոտարինդիան, Յուկէս միլիոն Լեհերին գերմանացնել. Ասիայում, Աֆրիկայում, Ամերիկայում եւ Աւստրալիայում զաղութներ հիմնել, «Weltpolitik» — համաշխարհային քաղաքականութիւն բանեցնել. մեծ ռազմական բանակներ ու նաւատորմեր ունենալ... եւ այդ ամենը յանուն Գերմանիայի փառքի, նրա քաղաքակրթութեան տարածման: Պատրուակ, գիմակ, արտաքին քող են այդ ամենը. դա խոշոր բուրժուազիայի ձգտումն է շուկայ ձեռք բերելու, իր ապրանքները վիժելու համաշխարհային շուկան, ունենալով որքան կարելի է շատ վայրերում նւազագոյն թւով մրցակիցներ, մանաւանդ օտարազգի առեւտրականներէ: Իսկ մայր երկրում թող աշխատաւոր զանգեւածները հեծեն ու տրնքան հարկերի ճզմող բեռի տակ:

Թէ բուրժուական կոսմոպոլիտիզմը (համաշխարհաքաղաքացիութիւն) եւ թէ շովինիզմը ու նրա անմիջական զաւակ իմպերիալիզմը, հան-

բաժանօթ երեւոյթներ են, որոնց մասին շատ է խօսուած ու խօսուած է կեանքի եւ թէ դրական-նութեան մէջ. մենք այլեւս երկար չենք զբաղուի նրանցով. վերելում բերուած մի քանի տողն էլ բաւական է:

Անցնիք այժմ սոցիալիստ մտածողներին: Նրանց տեսակէտներն են մեզ հետաքրքիր, որովհետեւ աշխատաւոր մարդկութեան զեկաւարները նրանք են, որովհետեւ նրանց է պատկանում ապագան թէ գիտութեան, թէ գեղարուեստի եւ թէ ընկերական կեանքի մէջ:

Այս ասպարէզում մենք գտնում ենք, մանաւանդ սկզբնական շրջանում, բուրժուական լիբերալիզմից փոխ առնուած մի կոսմոպոլիտիզմ: Չկան ազգեր, այլ կան լոկ դասակարգեր, հակամարտ շահերով, կեղեքող-բուրժուազիա եւ կեղեքուող-պրոլետարիատ: Եւ հնչում է տաղանդաւոր տնտեսագէտների հրաւիրակոչը. «Պրոլետարներ բոլոր երկրների, միացէք»: Եւ այդ կոչըն ըմբռնում է բառացի, բոլոր պրոլետարները մի ազգ են կազմում, իսկ բուրժուաները մի ազգ: Մարդկութեան եւ նրա ներսում երկու հակայական բաժանում — պրոլետարիատ եւ բուրժուազիա: Դեռ եւս չկայ Փրանսիական, անգլիական, գերմանական պրոլետարիատ, — դրանք յետոյ են քաղաքացիութեան իրաւունք ստացել. սկզբներում կայ միայն պրոլետարիատ:

Հանգուցեալ Լիբկնէխտը, Մարքսի ու էն-

գելալի անձնական ընկերն ու աշակերտը, 1892 թուին գնացել էր Մարտէյլ, ուր մի շա'տ նշանաւոր ճառ արտասանեց, որի վերջին կտորը խիստ բնորոշ է :

«Մեզ, սոցիալիստներին համար, չը կայ ազգութեան հարց, մենք նանաչում ենք միայն երկու ազգ. մի կողմից կապիտալիստների, բուրժուազիայի, տիրող դասակարգի ազգը, իսկ միւս կողմից պրոլետարների, գրկուածների, աշխատաւոր դասակարգի ազգը: Այս երկրորդ ազգին ենք պատկանում մենք բոլորս, Ֆրանսիայի եւ Գերմանիայի կոլլէկտիւիստներս: Մենք մի ազգ ենք կազմում, — բոլոր երկրների բանուորները մի ազգ են կազմում, հակադիր միւս ազգին, որը նոյնպէս մի է բոլոր երկրներում»:

Ակներեւ է. ազգերը ժխտուած են, նրանք դոյութիւն չունեն «սոցիալիստների համար»: Իսկ ազգերի փոխարէն ծերունի Լիբկնէխտը դրել է դասակարգերը, ինչպէս Հոյնէն կուսակցութիւնները: Համայն աշխարհի բանուորները մի ազգ են, իսկ բուրժուաները մի ազգ: Դա նոյն կռաւնայլիտիզմն է, անմարմին, անձեւ, առանց ազդութիւնների եւ միջազդայնութեան. մարդկութիւն եւ նրա մէջ երկու բանակ: Լիբկնէխտը նոյն իսկ չէ ցանկացել մտածել, որ բուրժուազիան միեւնոյն ազգի, միեւնոյն հայրենիքի մէջ անգամ չէ կարողանում միանալ, մի բանակ կազմել, ինչպէս պրոլետարիատը, որովհետեւ կայ ար-

տաղերութեան եւ առեւտրի մէջ մրցում: Այո՛, բուրժուազիան կարող է մի րոպէ մոռանալ իր ներքին, անհատական մրցակցութեան շահերը, երբ բանուոր կամ աշխատաւոր դասակարգերն սպառնական դիրք ընդունեն, ուղեհան որ եւ է խիստ ու հատու հարուած հասցնել: Դա կոչւում է միատեղման կամ միահաւաքման քաղաքականութիւն, ինչպէս արին նրանք Գերմանիայում, Րախտտագի վերջին ընտրութիւններէ ժամանակ: Բոլոր բուրժուական կուսակցութիւնները, նոյն իսկ բոլոր անհատները (կղեր, հոգատէր, աղնուական, բիւրդեր, պաշտօնեայ) միացան եւ տապալեցին սոցիալ-դեմոկրատ կուսակցութիւնը: Նրա պատգամաւորներէ թիւը կիսով չափ պակասեց Րախտտագում: Բայց դրանից աւելի եւ յարատեւ միութիւն չա՛տ աւելի դժուար է կազմել բուրժուազիայից, քան պրոլետարիայից: Տրեստներ, կապիտալիստական սինդիկատներ, այո՛, կազմւում են, բայց նախ չափազանց մեծ դժուարութիւնով, երկրորդ՝ միեւնոյն երկրի կապիտալիստներէ միջեւ, այն էլ միմիայն նման առեւտուր ունեցողներէ, իսկ, օրինակ, ագրարներէ եւ գործարանատէրերէ մի սինդիկատ, զինեղործներէ եւ շաքարագործներէ մի միութիւն համարեա՛ւ անհնար է կազմել: Սակայն երեւակայեւ, որ զանազան երկրներէ բուրժուազիան դո՛նէ բարոյական կապերով կը կապուի ու կը կազմէ մի միջազգային միութիւն, դա անհը-

նար է, որովհետեւ մրցակցութիւնը նրան բաժանում է:

Այն ինչ այդպէս չէ պրոլետարիատը. մրցակցութեան ոչինչ չունի. միութիւնը նրան ոյժ է տալիս եւ անպայման տնտեսական ու բարոյական օգուտներ: Այդ այդպէս լինելով էլ՝ պրոլետարիատը երբեք չէ կարող ունենալ համամարդկային մի ամբողջացած կազմակերպութիւն, առանց ազգային կազմակերպութիւնների:

Բայց այդ մասին դեռ յետոյ, երբ կը խօսենք կոսմոպոլիտիզմի եւ ինտերնացիոնալիզմի մասին: Այժմ դեռ քննենք, թէ ո՞ւր է այդ կոսմոպոլիտիզմի, այդ «երկու ազգի» արմատը:

Որոնումները մեզ անպայման ստիպում են «գիտական» կոչուած սոցիալիզմի հիմնադիրներին դիմել, որոնք նրանց աշխատութիւններում ազգային հարցին վերաբերեալ կարծիքներ եւ քննել, թէ նրանց միաձոյլ ու ամբողջացած սոցիալական սխտեմի մէջ ի՞նչ տեղ է բռնում այդ հարցը:

Հնադոյն եւ քիչ ու չատ ամբողջութիւն կազմող, աշխարհայեացք արտայայտող կտոր հանդիսանում է Մարքս-էնգելսի հրատարակած (1848 թւին) «Կոմմունիստական կուսակցութեան Մանիֆեստ»ի հետեւեալ կտորը.

«Կոմմունիստներին մեղադրում են, որ նրանք ուզում են ոչնչացնել հայրենիքը, ազգութիւնը: Բանւորները հայրենիք չու-

նեն: Նրանցից չէ կարելի խել այն, ինչ որ
չունեն: Պրոլետարիատը, որ նախ եւ առաջ
պիտի տիրանայ փաղափական իշխանու-
թեան, բարձրանայ *ազգային* դասակարգի
բարձրութեան, ինքն իրեն կազմակերպէ
իբր ազգ, նա (*պրոլետարիատը*) *զեռւս*
ազգային է, թէեւ ամենեւին ոչ *բուրժուա-*
կան մտքով:

Արդէն *բուրժուազիայի* զարգացումով,
առեստրի ազատութեան, համաշխարհային
շուկայի արդիւնաբերող արտադրութեան
ձեւերի միանմանութեան եւ նրանց համա-
պատասխանող գոյութեան պայմանների
հետ միասին աւելի ու աւելի կորչում են ազ-
գային առանձնացած վիճակը եւ ժողովրդ-
ների մէջ եղած *անտազոնիզմը* (հակառա-
կութիւնները):

Պրոլետարիատի տիրապետութիւնն ա-
ւելի եւս կը նպաստէ նրանց չփանալուն»:

Հետեւողաբար *վերլուծենք* առաջ բերած ցի-
տատը (*քաղուածքը*):

Ամենից առաջ մտածողի ուշադրութիւնը դը-
րաւում է Հայրենիք եւ Ազգութիւն բառերի իրար
կողքի դրուելը. իսկոյն հրեւում է, որ հեղինակ-
ները նրանց համարում են հոմանիշ: Այն ինչ
տարբերութիւնը մեծ է, ու անանցանելի: Սկսած
բարձրագոյն կենդանիներէից, մարդկային վայրե-

նի հորդաններից, բարբարոս տոհմական համայնք-
 ներից մինչև մեր օրւայ ամենաքաղաքակիրթ
 ժողովուրդներն ու ազգերը հայրենիք ունեցել են
 եւ ունեն: Այսօր թաթար ազգի հայրենիքը կա-
 րող է լինել Մուղանի դաշտավայրը, Կուրի եւ Ե-
 րասխի հովիտների ներքին մասերը, իսկ երէկ
 նրա, ինչպէս եւ Օսմանեան թիւրքերի հայրենի-
 քը Միջին Ասիան էր, Թուրանը, մասամբ Արաւ-
 եան լճի ափերը: Վայրենի հորդան կարող է ապ-
 րել այսօր այս որսատեղում, մի քանի ամիս յե-
 տոյ մի այլ որսատեղում: Արեւակից տոհմերն
 ու ցեղերը կարող են, այս կամ այն ճնշման տակ,
 թողնել իրենց ծննդավայրն ու ապրուստ ճարե-
 լու որսատեղը — իրենց հայրենիքը, ինչպէս Հոն-
 ները, եւ Արեւմտեան Ասիայից խուժել մինչև
 Եւրոպայի սիրտը, հիմնուել այնտեղ, նոր հայրե-
 նիք ձեռք բերել: Հայրենիքն անսլոյման այն եր-
 կիրն է, ուր ծնունդ է առել մի ժողովուրդ, այլ
 երկար դարերի ընթացքում, սերնդից սերունդ
 ապրած ու նրանց քրտինքով մշակուած վայրն է
 նա: Իսկ ազգը միանդամայն տարբեր բան է, որի
 բանաձեւը արդէն մենք տեսել ենք եւ աւելորդ ենք
 համարում կրկնել:

Ինչպէս արդէն մի անգամ տեսել ենք, այդ շը-
 փոթութիւնը դոյութիւն ունի եւրոպական գի-
 տութեան ու գրականութեան մէջ: Դա միայն
 Մարքսին ու Էնգելսին է յատուկ: Միայն ԺԹ.
 դարավերջին Եւրոպական միտքն սկսեց արմա-

տապէս իրարից բաժանել այդ երկու գաղափարները :

Դրանից յետոյ գալիս է հետեւեալ միտքը՝
— արեւի լոյսի պէս պարզ ու ըմբռնելի, բայց ոչ
ընդունելի :

«Բանւորները հայրենիք չունեն : Նրանցից չէ
կարելի խլել այն՝ ինչ որ չունեն» :

Սակայն նորութիւն չէ այդ միտքը : Դրան
չառ նման մի կարծիքի մենք հանդիպում ենք
Հոռմի փառապանծ պատմութեան էջերում : Գը-
րակքեան եղբայրներից մէկը, Տիբերիոսը հարա-
ւային Իտալիայում ճամբորդելուց յետոյ, Հոռմ
վերադառնալով, Ծերակոյտին մօտաւորապէս
հետեւեալ բառերն ասաց. «Երկնքի թռչունները
բուն ունեն, երկրի գաղանները — որջ, իսկ Հը-
ռոմի գիւղացին, որ աշխարհի տէրն է համար-
ւում ոչ մի անկիւն չունի, նոյն իսկ մի քար չու-
նի, որ զլխատակը դնէ . . . Ի հարկէ այդպիսին չի
պաշտպանի իր հայրենիքը» :

Եւ կարծես արտաքուստ բաւականին ստույգ
է երեւում այդ Փրազը : «Բանւորը հայրենիք չու-
նի» . այսինքն այդ հայրենիքի մէջ նա սեփակա-
նութիւն չունի, ուրեմն եւ չէ սիրում նա այդ
հայրենիքը : Ահա Մարքսի եւ Էնգելսի հանած
տրամաբանական եզրակացութիւնը : Նրանք տըն-
տեսական կամ դիալեկտիկական մատերիալիստ-
ներ են . նոյն իսկ սէրը դէպի ծննդավայրը, դէ-
պի հարիւրաւոր ու հազարաւոր սերունդներով

Ժառանգաբար հաղորդուած կապակցութեան զգացումը մի երկրի հետ նրանք ուզում են բացատրել ոչ թէ մատերիալիստական փիլիսոփայութեան գիտական ճանապարհով, այլ լոկ շահի տեսակէտով:

Բանւորները սեփականութիւն չունեն իրենց հայրենիքում, ուրեմն շահ չունեն այնտեղ, ուրեմն եւ չեն սիրում: Այդ բոլոր եզրակացութիւնների անմտութիւնը պարզուած է այն ժամանակ, երբ մտածում ենք, որ տասնեակ ու հարիւրաւոր սերունդները ներկայ պրոլետարների եղել են այդ հայրենիքում սեփականատէրեր, ծծել են այդ հայրենի երկրից իրենց սնունդն՝ ինչպէս մանուկը ծծում է կաթն իր մօրից: Այդ հարիւրաւոր սերունդները ձեռք են բերել մի զգացում, — սէր դէպի այդ հայրենիքը, որ բարոյական հաստ ու կուռ շղթայով կապել է նրանց այդ հողի հետ, իրենց ճակատի քրտինով ոռոգւած, իրենց գիւղներով պարարտացած մայր երկրի հետ: Նրանք այդ դարաւոր ժառանգութիւնը հաղորդել են իրենց անմիջական սերունդին, ներկայ պրոլետարիատին, որի մէջ սէրը դէպի իր ծննդավայրը դառել է արդէն մի տեսակ բնազդ, իր ջգերից, իր էութիւնից անբաժան բնական մի երեւոյթ, իդէալիստական մի տարր, որը սակայն, ծնունդ է առել մատերիալիստութեան, գանգաղ բարեշրջման գիտականօրէն բացատրելի ուղիով:

Այդ դեռ քիչ է: Ժառանգաբար ստացած այդ

զգացումը ներկայումս չէ սառչում, չէ նուազում: Բանուրը միշտ աշխատում, քրտինք է թափում իր հայրենի երկրում: Ճշմարիտ է, նա «դուր զատում եւ զատարկ է նստում»․ նրա աշխատանքի առատ պտուղները հնձում են հողատէրերն ու զրամատէրերը, իշխաններն ու նախարարները, բարձր հոգեւորականութիւնը եւ բոլոր տեսակի տղրուկները... Բայց դա չէ խանդարում գիտակից պրոլետարին խորապէս զգալու, որ իրենն է այդ երկիրը, իրենն է այդ հայրենիքը, որովհետեւ ստեղծագործող, կենսաբար աշխատանքն իրենն է: Եւ այդ ճշմարտութեան խորը գիտակցութիւնն է, որ դրդում է գիտակից բանւորութեանը պահանջ դնել ունենալ սեփականութիւն իր հայրենիքում, միայն համայնավարական սեփականութիւն. բոլոր հողը եւ արտադրութեան բոլոր միջոցները պատկանեն բոլորին. բոլորն էլ աշխատեն, արտադրեն համայնօրէն եւ արդիւնքը բաշխեն իրենց մէջ, համաձայն թափած աշխատութեան քանակի եւ որակի:

Այո՛, բանուորները սեփականութիւն չունեն իրենց հայրենիքում, բայց ուզում են ունենալ․ նրանք դրել են այդ պահանջը եւ եռանդով ձրգտում են իրականացնել այն: Սէրը դէպի հայրենիքը գրանով ոչ թէ նուազում, այլ զարգանում է: Միայն սէրը դէպի հայրենիքը եւ ոչ անյադ պահանջը դրաւելու ուրիշների հայրենիքները, լայնացնելու, մեծացնելու իր հայրենիքը․ դա

բութութեան ճգնումն է, դա իմպերիալիզմն է, որ չուկայ է որոնում իր ապրանքների համար:

Այսպէս ուրեմն՝ առաջ բերած ցիտատի առաջին կտորի միտքը պարզ է, ըմբռնելի, բայց ոչ ճշմարիտ: Բանուորները հայրենիք ունեն: Եւ նրանց հայրենասիրութիւնը չատ աւելի անկեղծ, անկաշառ է, քան բութութայինը, որովհետեւ իդէալիստական է, առանց սեփական անմիջական շահի:

Վերջապէս բանուորինն է ու գիւղացունը հայրենիքը, որովհետեւ նրանք չեն կարող, բութութայի եւ ինտելիգէնտի նման, ապրել ամէն տեղ, ամէն տեսակ պարագաներում. անկարողութիւնը նրանց աւելի պինդ շղթաներով է կապում իրենց երկրի հետ: Աշխատաւորը լեզուներ չը գիտէ, միջոցներ չունի հեռանալու իր ծննդավայրից:

Զուլումների սեւ օրերին՝ միջոց ունեցողները, հարուստները փախչում, այլ՝ աւելի հանգիստ վայրեր են որոնում, իսկ աշխատաւորը, տեղից չարժուելու անկարող, իր կուրծքով է դիմադրում ամէն տեսակ փորձանքների: Ո՛չ, ո՛չ, նրանն է հայրենիքը, ամենից աւելի պինդ շղթաներով նա կապուած է այդ երկրի հետ:

Եւ երբ կեանքի դաժան պարագաները բռնադատում են նրան բաժնուէլ այդ կենսատու երկրից, դաղթել այլ վայրեր ապրուստ ճարելու, նայեցէք նրա դէմքին. վիշտը ծովացած է, ու-

կեանի պէս փոթորկոտ, ալեկոծ է նրա սիրտը. նա անիծում է այն դաժան բաղդը, որն ստիպում է թողնել նրան իր սիրած հայրենիքը, իր սովորած բոլոր շրջապատը: Նա ուրախ չէ որ մեկնում է, բայց նա բռնադատուած է մեկնել:

«Պրոլետարները հայրենիք չունեն»։ Ֆրանսացի յայտնի ընկերվարական հոեոոր եւ փիլիսոփայ Ժօրէսը առաջ բերելով այդ ֆրագն ասում է. «բայց քաղաքացիներ, դա միայն յոռետես մի սլացք, մի կծու արտայայտութիւն է (boutade), որ մասամբ բացատրւում է Մարքսի եւ Էնգելսի այդ բանը գրելու ժամանակաշրջանով, երբ *պրոլետարիայի* ոյժը դեռ իր գարգացման ամենաստոր վիճակի մէջ էր. ամբողջ Եւրոպայում բանուոր դասակարգը գրկուած էր ամենատարրական իրաւունքներից – չունէր իրաւունք բանուորական սինտիկատներ կազմակերպելու գործունէութիւններ կամ միութիւններ ունենալու, գուրկ էր քուէարկութեան ընդհանուր իրաւունքից. կարծես թէ *պրոլետարիատը* դուրս էր վանուած հասարակական կազմից, մարդկութեան ընդհանուր իրաւունքներից» (*): Եւ այնուհետեւ, Ժօրէսն էլ իբր Եւրոպացի, ընդունուած ձեւով շփոթելով կամ նոյնացնելով ազգն ու հայրենիքը, ցոյց է տալիս, թէ ինչպէս նոյն իսկ այդ շրջանում, 1847–48 թը–

(*) Համեմատիր — Ժ. Ժօրէս «Սոցիալիզմ եւ հայրենիք» հայերէն անոոնի քարգմանութիւնը:

ւերում, բանուոր դասակարգը Եւրոպայի բոլոր երկիրներում գործում էր իր ազդութեան գրկում, յարմարուելով եւ պատմական միջավայրին, իր ազդութեան ներքին, ինքնատիպ պարագաներին:

Ռուսական Մարքսիզմի լեդերներին մէկը – Գէորգի Պլեխանովը, նոյն փրագր առաջ բերելով, պնդում, հաստատում է նրա միտքը եւ վիճաբանութեան մտնելով Ժ. Ժորէսի հետ, ասում է. «Եթէ որ «Մանիֆեստի» հեղինակներն ասէին, թէ բանուորներն ազգութիւն չունեն կամ չեն պատկանում ոչ մի ազգութեան, այն ժամանակ դա կը լինէր ոչ թէ յոռետեսական մի սլացք, մի կծու արտայայտութիւն, այլ մի ծիծաղելի անմտութիւն (Non sens ridicule)(*):

Անցնենք այժմ Մարքս–էնգելսի կարծիքի երկրորդ մասին, որ վերաբերում է ազդութեան խնդրին:

«Պրոլետարիատը, որ նախ եւ առաջ պիտի տիրէ ֆալաֆական իշխանութեանը, բարձրանայ ազգային դասակարգի բարձրութեանը, ինքն իրեն

(*) Ֆրանսիական «La Vie Socialiste» ամսագիրը, Ժորէսի եւ Հերվէյի վեցի առիթով, դիմել էր բոլոր աչքի ընկնող սոցիալիստ գրողներին եւ գործիչներին, որ նրանք յայտնեն իրենց կարծիքը հայրենիքի, ազգութեան եւ հակամիլիտարիզմի մասին: Պլեխանովն էլ տուել էր իր կարծիքը, որ քարգմանուած է ռուսերէն. «Հայրենասիրութիւն եւ սոցիալիզմ» (երես 5):

կազմակերպել իբր ազգ, նա դեռ եւս ազգային է, քէեւ ամենեւին ոչ բուրժուական մտքով»:

Կազմակերպուած պրոլետարիատը ձգտում է տիրանալու քաղաքական իշխանութեան, երկրի ղեկավարութեան ղեկն իր ձեռքն առնելու եւ գործնական ու օրէնսդրական ճանապարհով իրականացնելու սոցիալիստական կազմակերպութիւնը: Երբ սոցիալիզմը իրականացաւ, բոլոր ազգը կը դառնայ մի դասակարգ — բոլորն էլ կը լինեն բանուորներ, աշխատողներ: Ուրեմն՝ ձգտելով իրականացնել սոցիալիզմը, բանուոր դասակարգը ձգտում է ինքը դառնալ ամբողջ ազգը: Իսկ մինչեւ որ նա տէր կը դառնայ երկրի իշխանութեան, նա դեռ եւս ազգային է, թէ ոչ բուրժուական մշտքով, այսինքն՝ ոչ շովինիստ, օտարակեր, կլանելու, գրաւելու տենչով բռնուած:

«Պրոլետարիատը դեռ եւս ազգային է»: Մինչեւ ե՞րբ: Ի հարկէ մինչեւ որ ձեռք ձգէ քաղաքական ղեկը, իրականացնէ սոցիալիզմը: Իսկ այնուհետեւ ի՞նչ. կը դադարի՞ արդեօք նա ազգային լինելուց, կը կորցնէ՞ իր ազգութիւնը, կը դառնա՞յ Weltburger կամ համաշխարհաքաղաքացի. ամենայն ինչ, որ ազգային է օտա՞ր կը լինի այնուհետեւ նրա համար: Կարճ՝ կը դառնա՞յ արդեօք մարդկութիւնը մի ազգ մի հօտ եւ մի հովիւ. արդեօք պէտք է ազգութիւնը վերանա՞յ իբր մի անպէտք, վնասակար բան, թէ պէտք է պահել նրան իբր «ein ideales Gut», իբր մի

«իդէալական բարիք», ինչպէս ասում է Պէրնէր-ստօրֆերը: Եթէ պիտի ազդութիւնը վերանայ, էլ ինչո՞ւ պրոլետարիատն ինքն իրեն կազմակերպում է իբր ազգ, իսկ եթէ չպէտք է վերանայ, էլ ինչո՞ւ Մարքսն ու Էնգելսն ասում են, որ պրոլետարիատը դեռ եւս ազգային է: Այստեղ արդէն մտքերի չփոթութիւն, դո՞նէ կնճռոտութիւն կայ. կարելի է բացատրել եւ այսպէս, եւ այնպէս. եւ յօդուտ ազդութեան պահպանման եւ ընդհակառակը:

Այնուհետեւ սկսում է ցիտատի վերջին կըտորը, որ ցոյց է տալիս հեղինակների մտածելակերպը, բայց որը կանգ է առնում կէս ճանապարհին, չէ գնում մինչեւ մտքի տրամաբանական վախճանը:

«Արդէն Բուրժուազիայի զարգացումով, առետրի ազատութեան, համաշխարհային շուկայի արդիւնաբերող արտադրութեան ձեւերի միամեմուքեան եւ նրանց համապատասխանող գոյութեան պայմանների հետ միասին՝ աւելի եւ աւելի կորչում են ազգային առանձնացած վիճակն ու ժողովրդների մէջ եղած անտադոնիդը (ներհակութիւնները): Պրոլետարիատի տիրապետութիւնն աւելի եւս կը նպաստէ նրանց չփանալուն»:

Պարզենք այդ կտորը:

Այստեղ եւս երեւում է Մարքսի վարդապետութեան ծայրագոյն միակողմանիութիւնը: Բոլոր երեւոյթները, հասարակական բոլոր խնդիր-

ները մի միակ արմատ ունեն. արտադրութեան միջոցները. սրանք հասարակական բոլոր երկ-
ւոյթների հիմքն են, իսկ միւս բոլորը՝ իրաւունք,
քաղաքականութիւն, կրօն, բարոյականութիւն,
գրականութիւն եւ այլն, մի խօսքով՝ բոլոր իդէ-
ոլոգիական տարրերը կազմում են վերնաշէնքը,
չափուած ու ձեւուած տնտեսական հիմքերի
վրայ:

Բուրժուազիան զարգանում է արար-աշխար-
հում, առեւտուրի ազատութիւնը նոյնպէս: Ստեղ-
ծւում է օր աւուր ընդլայնուող համաշխարհային
շուկայ: Երկրապնդի բոլոր ծայրերի տնտեսական
կեանքն սկսւում է կազմել մի շաղկապուած հըս-
կայական ամբողջութիւն:

Միացեալ Նահանգների բամպակի բերքի պա-
կասութիւնը, Նիւ-Եորքի մի խոշոր գրամատան
սնանկութիւնը ցնցումներ են առաջ բերում ա-
րար-աշխարհում: Այդ կապակցութիւնը քանի
գնում աճում, սերտանում է: Բացի այդ՝ արդիւ-
նագործող արտադրութիւններ կամ ճարտարա-
ուեստը թափանցում է բոլոր երկրները եւ ար-
տադրութեան ձեւերն սկսում են իրար աւելի եւ
աւելի նմանիլ. միօրինակութիւնը թաղաւորել է
սկսում արտադրական ձեւերի մէջ: Դրա հետ մի-
ասին, անհրաժեշտօրէն հասարակութեան ներ-
սում գասակարգերը դառնում են իրար նման,
այսինքն՝ ամենուրեք առաջ են գալիս բուրժուա-
ներ եւ բանուորներ, որոնց գոյութեան պայման-
ներն էլ, կարծես, միակերպւում են:

Ուրեմն՝ կեանքի տնտեսակազմը կամ, ինչպէս ընդունուած է ասել, Էկոնոմիական ստրուկտուրան գնում է դէպի կենտրոնացում եւ միանմանութիւն:

Այդպէս է քարոզում Մարքսիզմը: Ճշմարիտ է թէ ոչ, դա այլ խնդիր է: Մենք միայն պարզաբանում ենք:

Տնտեսական այդ հիմքերի բաւական արագ ենթադրուած կենտրոնացումը եւ միօրինակութիւնը պարտաւորաբար եւ անհրաժեշտօրէն առաջ են բերում ազդութիւնների առանձնացած վիճակի քայքայում. քանզում են այն չինական պատերը, որ գոյութիւն ունէին ազգերի միջեւ: Այդ ազգերը, բռնադատուած տնտեսական աճող յարաբերութիւններից, սկսում են իրար խառնուել: Տնտեսական ձեւերի նմանութիւնը ծնեցնում է ազգերի նմանութիւն. վերացնում է նրանց մէջ եղած հակառակութիւններն ու ներհակութիւնները: Առեւտրական յարաբերութիւնները միախառնում են ժողովրդներին:

Այդ երեւոյթը, միակերպութեան ու կենտրոնացման այդ ձգտումը նկատուում է այսօր: Իսկ երբ պրոլետարիատն իր ձեռքը կ'առնէ երկրների քաղաքական ու տնտեսական ղեկը, ազգերի առանձնացած վիճակն ու նրանցում թաղաւորող անտագոնիզմը աւելի եւս արագ ընթացքով կը չքանան, կը վերանան աշխարհից:

Այդ է բերուած ցիտատի վերջին կտորի ման-

բամասն բացատրութիւնը :

Ինչպէս արդէն ասացինք, այդ կտորի մէջ եւ առհասարակ այդ ամբողջ ցիտատում մի չվերջաւորուած միտք կայ : Ենթադրենք, որ որոշ չափով համաձայնուեցինք, որ տնտեսական կեանքը կենտրոնանում է, տնտեսական ձեւերը վեր են ածւում միօրինակութեան եւ դրանց ազդեցութեան տակ, ասենք թէ, վերանում են ազդութիւնների փակ վիճակներն ու անտագոնիզմները : Ասենք թէ այդ բոլորն էլ ճշմարտութիւններ են : Վերանում են ազդերի առանձնացած վիճակներն ու անտագոնիզմը . չա՛տ բարի : Իսկ ազգութիւնն ինքը վերանում է արդեօք մի ժամանակ, երբ մարդկային բոլոր մանր ու խոշոր ազդերը միաձուլուեն եւ դառնան մի աղբ, մի հօտ եւ մի հովիւ : Ահա այդ մասին լռում են «Մանիֆեստի» հեղինակները :

Ներկայումս բոլոր ընկերավարական դիտնականներն ընդունում են, որ ազգութիւնների եսական, շովինիստական ձգտումները քանի զնում, հարթւում, վերանում են . որ ժողովուրդները, քանի զնում, աւելի եւ աւելի համերաշխ, եղբայրական կենակցութեան են ձգտում : Բայց այդ բոլորը դեռ չէ նշանակում ազդերի վերացում, նրանց միաձուլում :

Ահա այդ առիթով է, որ ծագում է մտքերի չփոթութիւն : Սոցիալիստներից մի քանիսը, ինչպէս Պլեխանովը, պնդում են որ ազգութիւնը կը

մնայ, կը չքանան փակ վիճակն ու անտագոնիզմը, կը վերանայ Հայրենիքն իր սահմաններով... Յրանաացի անիշխանական Հերվէն, ընդհակառակը, պնդում է որ ազգն էլ, հայրենիքն էլ պիտի վերանան, պիտի չքանան: Իր «Antipatriotisme» բրոշիւրի յառաջաբանում նա հետեւեալն է գրում. «Հայրենասէր միջազգայնականներն ասում են, որ հայրենիքներն այնպէս՝ ինչպէս որ պատմութիւնն է ստեղծել, կազմում են մի-մի բարոյական անձնաւորութիւններ, որոնց գոյութիւնն օգտակար է մարդկութեան համար»:

Այդ կտորից պարզ է, որ «Հայրենիք» եւ «սոց» նոյնացրած է: Ազգն է մի «բարոյական անձնաւորութիւն», կամ, աւելի ճիշդ է ասել՝ — մի օրդանական միութիւն, իսկ հայրենիքը, եթէ նրան վերջնէնք եւրոպական մտքով՝ իբր պետութիւն, կարող է ամենեւին չը լինել մի «բարոյական անձնաւորութիւն»:

Իրար խնոնելով ազգն ու պետութիւնը, նա առաջարկում է իր բանաձեւը. «Ներկայ հայրենիքները խորք-մայրեր են պրոլետարների համար: Բոլոր հայրենիքները գրեթէ իրար արժեն. մանաւանդ այժմ, երբ կապիտալիստական բեժիմը բոլոր երկրներում հետզհետէ միօրինակութեան է վերածում աշխատանքի դասակարգերի տնտեսական, մտանքի եւ քաղաքական կեանքի պայմանները»: (*)

(*) «L'Antipatriotisme» յառաջաբան:

Ընդհանառակը, Ժօրէսը, դէմ գնալով Մարքս-էնգելսի մտքերին, պնդում է որ սոցիալիզմի հաստատուելով երբեք չեն վերանայ ազգն ու հայրենիքը. կը վերանան ներկայ քաղաքական անմիտ սահմանները, երկիրը կը լինի մարդկութեան հայրենիքը, իսկ մարդկութիւնը, բաժնուած լինելով ազգային միութիւնների, ամէն մի միութիւն կ'ունենայ իր բնական հայրենիքը, իր ապրելու վայրը: «Հայրենիքի ներկայ սահմանները, ասում է Ժ. Ժօրէսը, որ փոխադարձ բռնադատման, տարամերժութեան եւ անվստահութեան ոյժի արտայայտութիւններ են, կը վերանան», ինչպէս եւ յարձակողական, կլանող նացիոնալիզմը, օտարակերութիւնը, բայց չի վերանայ ազդութիւնը դրա հետ միասին եւ ազգի բնական իսկական վայրը, նրա բնակատեղ-հայրենիքը: Պատմական ու շովինիստական հայրենիքը չը պիտի խառնել ժողովրդի բնական բնակավայրի կամ իրական հայրենիքի հետ. դրանք շատ յաճախ իրար ամենեւին չեն համապատասխանում:

Առ այժմ մի կողմ թողնենք միւս սոցիալիստ գրողների ու գործիչների տեսակէտները եւ Զանանք պարզել Մարքսի տեսակէտը, յենուելով նրա միւս գրութիւնների վրայ:

Ոչ մի տեղ «ազգ» եւ «հայրենիք» գաղափարները հիմնական եւ լուրջ քննութեան չեն ենթարկուած Մարքսի շարադրութիւններում. ոչ մի տեղ չը կայ մեր վերեւում ակնարկուած մտքի

տրամաբանական վերջաւորութիւնը. չէ պարզը-
ւած, թէ արդեօք Մարքսի կարծիքով պիտի վե-
րանա՞յ ազդութիւնն իրր զարգացման, իրր սոց-
իալիզմի իրականանալուն արգելառիթ մի վնա-
սակար երեւոյթ, թէ պիտի մնայ իրր «ein ide-
ales Gut», իրր իդէալական բարիք: Սակայն այդ
հարցին մենք կարող ենք դտնել մի կողմնակի
պատասխան, երբ քննենք Մարքսի կարծիքը մանր
ազդութիւնների եւ նրանց ապագայի վերաբեր-
մամբ:

Այդ առիթով մենք կարող ենք դտնել բաւա-
կան նիւթ Մարքսի եւ Էնգելսի գործերի հաւա-
քածուի մէջ, որ հրատարակուած է Շտուտգար-
տում 1902 թւին, «Gessammelte Schriften von K.
Marx und Fr. Engels» խորագրով: Բացի այդ մեզ
հետաքրքրող հարցի մասին մենք ունենք նաեւ
Մարքսի հնագոյն յօդուածներից մէկը. «Հրեա-
ների մասին». տպագրուած 1844 թւին, Պարի-
զում, «Deutsche-Franzosischen Jahabuchern»
պարբերական հրատարակութեան մէջ: Նոյն հար-
ցի մասին կան որոշ ակնարկներ նաեւ «Դասա-
կարգային կռիւը Ֆրանսիայում 1848-50 թւերին»,
«Յեղափոխութիւն եւ հակայեղափոխութիւն» եւ
ուրիշ գրքոյկներում: Մի քանի տող էլ, վերջա-
պէս, մենք գնում ենք Մարքսի հնագոյն գործերից
մէկում – «Die heilige Familie» «Սրբազան ըն-
տանիք» կամ «քննական քննադատութեան քննու-

թիւնը» զրքում, որ ուղղուած է «Բրունո-Բաուէ-
րի եւ ընկերների դէմ»: (*)

1847 թւի վերջերում Երեւան եկաւ «Մանի-
ֆէստը», իսկ Ղրանից քիչ յետոյ, 1849 թւին
Մարքսը զրեց իր հապէս նշանաւոր յօդուածը
սլաւոնական մանր ազգերի մասին - «Der demok-
ratische Panslavismus» - «Դեմոկրատիական հա-
մասլաւոնութիւն» վերնադրով: (**)

Յայտնի ռուս փախստական եւ անիշխանական
վարդապետութեան սիւներից մէկը կազմող յե-
ղափոխական Միխայիլ Բակունինը 1848 թւին հը-
րատարակել էր մի կոչ, ուղղուած աւստրիական
սլաւոնական մանր ազգութիւններին, որոնք կոր-
ցըրել էին իրենց ազգային անկախութիւնը: Չե-
խերը, Պալացկու առաջնորդութեամբ, հրաւիրել
էին սլաւոնական համագումար Պրագայում, որին
ներկայ էր Բակունինը: Ի զուր նա այդ կոնգրէսում
անիշխանական կծու ճառեր էր արտասանում եւ
բոլոր ժողովականներն ի զուր էին ընդունում
նրա ամէն մի առաջարկը որոտադին ծափահարու-
թիւններով: Վենգրիան ապստամբուած էր, Վի-

(*) Չունեմալով մեր ճեռքի տակ Մարքսի եւ Էնգելսի
երկերի մեծ մասը, մեզ պակասած կտորները մենք քաղում
ենք Մասարիկի, Պասմանիկի, Պոսսի գրքերից եւ այլ աչ-
քիրներէ:

(**) Gesammelte Schriften von K. Marx und
Fr. Engels, III Band.

էննայի դեմոկրատիան գլուխ էր բարձրացրել, իսկ սլաւոն (խարվատ) Պան Ելաչիչն օգնում էր Վիէննայի կամարիլլային, ընդդէմ Կօշուտ Լայոսի, ընդդէմ դերման դեմոկրատիայի, որովհետեւ այդ շարժումն սպառնում էր ոչնչացնել խարւատներին ինքնավար իշխանութիւնը:

Շահերի ու գաղափարների այդ գերազոյն հակասութիւնների խառնուածքում, դերման ազատականներն ու արմատականները երբեք չէին կարող հաշտուել սլաւոն ազգերի ու գործիչների հետ, եթէ նոյն իսկ նրանք լինէին ազատական, արմատական ընկերակրական եւ անիշխանական. ամենայն ինչ որ սլաւոնական էր, ատելի էր դերման ազատամիտ գործիչներին:

Այդ պարագաներում լոյս է տեսնում Բակուշինի կոչը, որի մէջ նա սլաւոնական միութիւնն ու դաշնակցութիւնը հիմնադրելու համար բերում է բազմաթիւ պատճառներ և ապա աւելացնում, որ, «արդարութիւնը, մարդասիրութիւնը, ազատութիւնը եւ այլն նոյնպէս պահանջում են այդ միութիւնը կամ փեղերացիան»: Մարքսն անմիջապէս բռնում է այդ «իդէօլօգիական» կամ գաղափարախօսական բառերից:

«Արդարութիւնը», «Մարդասիրութիւնը», «Ազատութիւնը» եւ այլն, կարող են հազար անգամ պահանջել այս կամ այն բանը. եթէ դա անհրնար է, չի իրականանայ եւ չնայելով այդ ամէնին, կը մնայ «դատարկ ֆրագ»: Արդեօք Բակու-

նինը յանցա՞նք է համարում Ամերիկայի Միացեալ Նահանգների մղած այդ նուանդական պատերազմը, որը քէեւ խիստ հարուած կը հասցնէր «արտադրութեան» ու «մարդասիրութեան» վրայ հաստատուած նրա *թէորիային*, բայց որը մղուեց բացառապէս յօգուտ ֆաղափակրթութեան: Մի՞թէ դժբախտութիւն է, որ խըլեցին Մեքսիկացիներին հրաշալի Կալիֆորնիան, որի հետ նրանք չգիտէին քէ ինչ անէին: (*)

Սքանչելի տրամաբանութիւն մի սոցիալիստի կողմից. որովհետեւ մի արդար, մարդասէր, լաւ բան դժուար է իրականացնել, ուրեմն պիտի լըռել... Այդ մեքոտը խիստ ձեռնտու կը լինէր Պլեվէնների եւ Համիտների համար: Իսկ յետոյ... Միացեալ Նահանգները յարձակուել եւ նուաճել են Մեքսիկայի հանրապետութիւնից Կալիֆորնիան. եւ Մարքսն արդարացնում է այդ յարձակողական պատերազմը, որովհետեւ նա մղուած է յանուն ֆաղափակրթութեան. կարծես աշխարհում որեւէ բանակալ մղում է որեւէ պատերազմ, առանց այդպիսի որեւէ բարձր սկզբունքով դիմադատելու: Նապոլէոնը զնում էր տիրելու Բէրլինն ու Վիէննան յանուն քաղաքակրթութեան. Յոն Բիւլովնը Աֆրիքայի Հերերոներին մորթուել ու լլկել էր տալիս նոյնպէս յանուն քաղաքակրթութեան: Մի՞թէ «Նոյօէ Վրեման նոյն

(*) Gesammelte Schriften... III Band S. 249.

քաղաքակրթութեան տեսակէտից չէ պահանջում
կոտորել հայերին, հրեաներին, ուսանողներին :

Տրամաբանական այդ «զեղեցիկ» օրինակից
մի երկու երես յետոյ՝ նա գրում է .

«Մենք կրկնում ենք, — քացի լեհերից, ռուս-
ներից եւ, ծայրայեղ դէպքում, Թուրքիայի սլա-
ւոններից՝ ոչ մի սլաւոն ժողովուրդ ապագայ չու-
նի լուկայն հիման վրայ, ու բոլոր մնացած սլա-
ւոնները չունեն պատմական, աշխարհագրական,
քաղաքական եւ *ինդուստրիական* (նարտարա-
ռեստ) պայմաններ անկախութեան եւ կենսունա-
կութեան համար . (երես 251)

*Կրկին երկու երես յետոյ չարունակում է
Մարքսը .*

«Դեռ դրանից աւելին . եթէ որ աստրիական
սլաւոնները կազմէին մի միաձուլ կամ *կոմպակտ*
գանգուած, ինչպէս լեհերը, Մաջարները, Իտա-
լացիները . եթէ որ նրանք միասին կազմել կա-
րողանային 12-20 միլիոն բնակիչ ունեցող մի պե-
տութիւն, այն ժամանակ նրանց յաւակնութիւն-
ները, ինչ էլ որ լինի, կ'ունենային գոնէ լուրջ
նշանակութիւն... Իսկապէս չափազանց հաճելի
կը լինէր Գերմանացիների եւ Մաջարների դրու-
թիւնը, եթէ որ աստրիական սլաւոնները ձեռք
քերէին՝ *այսպէս կոչուած*, իրենց «իրաւունքը» :

Սիլեզիայի եւ Աւստրիայի միջեւ չեխո-մո-
րավեան անկախ պետութիւնը սեպի ձեւով ներս
կը մխուէր, իսկ Աւստրիան եւ Շտիրան, «հարա-

ւայիւն Սլաւոնական Հանրապետութեան» շնորհով,
կը կտրուէին իրենց բնական ելփից, այսինքն Ադ-
րիական եւ Միջերկրական ծովերից, իսկ Արեւել-
եան Գերմանիան նման կը լինէր հացի, կրծոտ-
ուած հացի (երեւի մկան կրծոտած հացի – ո՛վ
սարսափ, ինչ դժբախտութիւն... ԳԽ): Եւ այդ
ամէնը իբր վարձատրութիւն այն բանի, որ գեր-
մանները ջանք գործ դրին ֆաղափակըքելու յա-
մառ չեխերին եւ սլովէններին եւ ներմուծեցին
նրանց երկրին առեւտուր, ֆարտաբարուեստ, ար-
դիւնատու երկրագործութիւն եւ ուսում» (Եր. 253
–54) :

*Գերմանները մի խօսքով քաղաքակրթեցին
չեխերին...: Ի հարկէ չէ կարելի երեւակայել ան-
գամ, որ Մարքսը չգիտէր Բոհէմիայի պատմու-
թիւնը, չը գիտէր Յոհան Հուսի փառաւոր կեան-
քըն ու գործունէութիւնը այն ժամանակաշրջա-
նում, երբ գերմանացիները դեռ հլու հնազանդ-
էին կաթոլիկ եկեղեցուն, նրա այլանդակ ու ան-
բարոյականացուցիչ ազդեցութեանը: Պրագայի
հին համալսարանը, Թարգրիաների շարժումները,
այն եռուն–դեռուն կեանքն ու յուզումները, որ
կազմում են Բոհէմիայի փառապանծ անցեալը —
ի՞նչպէս մոռանալ, ինչպէս ուրանալ եւ ենթադ-
րել, որ այդ ազգն այլեւս անընդունակ է ինքնու-
րոյն զարգացման. որովհետեւ 12–20 միլիօն թիւ
չունի: Ո՛չ, Մարքսն այդ ամէնը լաւ գիտէր, բայց
կանխակալ կարծիքը սեփական կառուցուածքը,*

տնտեսական մատերիալիզմը պահանջել էր այդպէս ասել, եթէ ոչ տնտեսական հիմունքի եւ Խտէդոզիական վերնաշէնքի միաձուլ, պարզ եւ արտաքուստ խիստ տրամաբանական տեսութիւնը կը խախտուէր :

Մանր ազդութիւնների դէմ ուղղուած կծու արտայայտութիւնների գլուխ գործոցը կազմում են հետեւեալ բառերը, որոնք աւելի վայել են մի Բիսմարքի, մի Բիւլովի, քան «Գիտական» սոցիալիզմի հիմնադրին :

«Վերջապէս՝ որտեղ է «յանցանքը», որտեղ է անէծքի արժանի քաղաքականութիւնը» այն բանում որ Գերմանները եւ Մաքարները, երբ Եւրոպայում խոշոր միապետութիւնները պատմական անհրաժեշտութիւններ» էին, միատեղ դարբնեցին այդ բոլոր մանրիկ, խեղճուկ, անօգնական ազգակներին (Nationchen) մի մեծ պետութեան մէջ եւ այդպիսով նրանց ընդունակ դարձրին մասնակցելու պատմական զարգացման, որից նրանք բոլորովին անմաս կը մնային, եթէ որ բողոքած լինէին իրենց գլխի : Ի հարկէ այդպիսի բաները չեն կատարում առանց բռնի կերպով ոտի տակ տալու մի քանի ազգային քննաշ ծաղիկներ» :

Այդ թունալի արհամարհանքը դէպի մանր ազգերը, այդ «խղճուկ», «անօգնական» ածականները Nationchen արհամարհական դոյականի մօտ... Մանր ազգեր... 1-12 միլիոն թւով, բոլորը խղճուկ, բոլորը կլանուելու, ձուլուելու

դատաւարտուած: — Վա՛յ, ուրեմն՝ վրացիներին, հայերին, թաթարներին...: Մանր ազգերը, ասում է Մարքսը, առանց Աւստրիայի եւ Հունգարիայի բռնի գրաւման եւ մի խոշոր քաղաքաքական միութիւն կազմելուն, երբեք չէին կարող մասնակից լինել պատմական զարգացման: Այստեղ էլ իր տեսութիւնն, ինչ զնով կ'ուզէ լինի, ապացուցելու կերքը մոլորեցրել է Մարքսին, նրան ստիպել է մոռանալ պատմութիւնը:

Կարծես 1300ական թուերից ինքնուրոյն ու ազատ, սակայն այսօր կռլտուրապէս խիստ բարձրը կանգնած Զւիցերիան չա՛տ խոշոր պետութիւն է. կարծես նա այսօր, դեռ Մարքսի գրելու ժամանակից 60 տարի անցած՝ 3 միլիոն ազգաբնակչութիւն չունի: Իսկ ինչ ասել Հոլլանդիայի ազգային սքանչելի եւ հերոսութիւններով լի պատմութեան մասին. մի՞թէ Հոլլանդիան 12 միլիոն կամ աւելի բնակիչ ունի: Իսկ հարուստ Բելժիան, Դանիան, Շվեդեան, Նորվեգիան... Սըրանք բոլորն էլ մանր ազգութիւններ են, որոնք, հակառակ Մարքսի մարգարէութեան, ինքնուրոյն կեանք ունեն եւ մասնակից եղան պատմական զարգացման, հասան ամենաբարձր կռլտուրայի, չը նայելով որ Գերմանները կամ Մաջարները միատեղ չզարբնեցին այդ փոքրիկ ազգութիւններին: Ընդհակառակը, Իսպանիան եւ Աւստրիան որքան ուղեցին ձուլել, կլանել Բելճիքային եւ Հոլանդային, չկարողացան, որովհետեւ վերջին-

ներն ապստամբութեան ազգային դրօշը պարզեցին :

Իսկ նրա անպատկառ հեղինակներն «ազգային քնքոյշ ծաղիկներն» վերաբերմամբ... դա միանգամայն անվայել է Մարքսի նման մի հանճարեղ գիտնականի :

Այդ մասին նա ամիջապէս կցում է հետեւեալը .

«Իսկ այժմ քաղաքական կենտրոնացումն աւելի անհրաժեշտ է դառել՝ ֆարտաբարութեան, առեւտրի հաղորդակցութեան ուղիների հսկայական պրոցեսի շնորհով» :

Այս տողերն արդէն պարզում են ամբողջ գաղտնիքը : Քաղաքական կենտրոնացումն անհրաժեշտ է ճակատագրօրէն , որովհետեւ տնտեսական կեանքը կենտրոնանում է : Այստեղ արդէն ակներեւ է այն խոչոր թիւրիմացութիւնը , որի մէջ պտոյտ է դալիս Մարքսը , առանց ըմբռնելու ազգութիւնների հարցը : Նա միանգամայն իրար է խառնում ազգ եւ պետութիւն գաղափարները : Նա չէ ըմբռնում , որ պետութիւնը կարող է մեծանալ , կազմել մի հսկայական ֆեդերատիվ քաղաքական միութիւն , պահպանելով ազգերի միանգամայն ինքնուրոյն զարգացումը , նրանց պետական կիսազերիչխան կեանքը : (*) Այս բոլո-

(*) Այդ մասին մենք խօսել ենք մեր «Դէպի Ֆեդերացիա» գրքում :

ըը ցոյց են տալիս Մարքսի կոսմոպոլիտիզմը․
զրանք ցոյց են տալիս, որ Մարքսը չէր ըմբռնում
մարդկային ցեղի ճակատագրօրէն ազգային ձե-
ւերով դարգացումը․ որ մարդկութիւնն, իբր մի
միաձոյլ ամբողջութիւն, չէ կարող գոյութիւն ու-
նենալ: «Մարդկութիւն» — դա մի վերացական
ըմբռնում է, իսկ ընդլ կամ իրականն աղբն է,
իւր ներքին շերտաւորումներով կամ դասակարգե-
րով եւ այդ դասակարգերը կազմող անհատներով:

Մանր ազգերը պիտի ձուլուեն մեծերի մէջ․
մեծերն էլ պիտի իրար կլանեն: Կենտրոնանում է
տնտեսութիւնը, ուրեմն՝ թո՛ղ կենտրոնանան,
միաձուլուեն մանր ազգութիւնները, հրամայում
է Մարքսը: Իրականութեան մէջ այդպէս կատար-
ւել է թէ ոչ, այդ ոչինչ: Մարքսի համար անհը-
րաժեշտ է կենտրոնացումը եւ նա այդ ակնոց-
ներով է նայում ամէն ինչի վրայ:

Ինչպէս ասացինք, չեխերը 1848ին յարեցին
յեղափոխութեան Պալացիու ղեկավարութեամբ․
բայց Վինդիշգրեցն իր բանակով Պրագայում լի-
նելով, յաղթեց ժողովրդական ալիքներին եւ ըն-
ախիռնը հաստատեց չեխերի երկրում: Մարքսն,
իբր բողոքող, յեղափոխական տարր, անշուշտ
պիտի համակրէր այդ կտրիճ, բայց փոքր աղբին:
Սակայն այդպէս չէ: Մարքսը հանդիսանում է
իբր գերմանացի լիբերալ, որ Պան Ելաչիչի, այդ
սլաւոն ընախիռնների յանցանքը փաթաթում է բո-
ւորի վզին: Նրա սեփական տեսութիւնը, նրա

կուռքը կազմող ցեմտրալիզմն (կենտրոնացումը) այնքան ուժեղ է եւ հրամայական իր մէջ, որ ըստիպում է նրան նոյն իսկ գիտնականին միանգամայն անվայել մարդարէութիւն անել:

«Բայց ամենից աւելի արգահատանքի արժանի եմ քաջ չեխերը: Կը յաղթեն նրանք, քէ կը յաղթուեն, միեւնոյնն է. նրանք պիտի ոչնչանան: (*)

Չարագուշակ մարդարէութիւնն նախ չեխերի համար, որովհետեւ կարող էին սկզբներում վախենալ, կասկածելով, որ Մարքսի նման մի գիտնականի զուշութիւնը կարող է իրականանալ: Եւ ասպա աւելի եւս չարագուշակ մարդարէութիւնն Մարքսի համար, նրա սեփական քէռքիայի (տեսութեան) համար, որովհետեւ ահա արդէն գլորւել, անցել են երկա՛ր ու ձիգ 60 տարիներ եւ այդ չարագուշակ, սեւ մարդարէութիւնը տապալուել, ջարդ ու փշուր է եղել. չեխերը ոչ միայն չեն ունենացել, չեն կորել իբր արդ, այլ բոլորովին հակառակ երեւոյթ է տեղի ունեցել. նրանք ձեռք են բերել իրենց համար որոշ ազդային եւ կուլտուրական ինքնուրոյն գոյութեան իրաւունքներ Սկստրիայի պետական կազմում, նրանք ստեղծել են ինքնատիպ չեխական կուլտուրա, սեփական բարձր գրականութիւն եւ գեղարուեստ: Մի խօս-

(*) Gesammelte Schriften — III. հատ. Nationale Revolutionen, երես 109.

քով՝ նրանք չեն ոչնչանում, այլ ծաղկում, փլթ-
թում են իբր աղբ, թէեւ 12 միլիոն թիւ չունեն:

«Յեղափոխութիւնը եւ հակաշեղափոխու-
թիւնը Գերմանիայում» յօդուածի մէջ, Մարքսը
հետեւեալ գատաւճիւրն է արձակում չեխերի մա-
սին.

«Ձեխ ազգութեան համար մարտնչող պրոֆե-
սոր Պալացկին ինքը միայն ծպտուած գերմանա-
ցի է, որը մինչեւ այժմ էլ չէ կարող կանոնաւո-
րապէս եւ առանց օտար արտասանութեան՝ խօ-
սել չեխերէն: Բայց, ինչպէս յաճախ լինում է,
չեխական մեռնող ազգութիւնը — մեռնող, այո՛,
ինչպէս ցոյց են տալիս վերջին 4 դարերի բոլոր
յայտնի փաստերը, — 1848 թւին արեց վերջին
նիգը, որի անյաջողութիւնը պիտի ապացուցանէ,
որ բռնեմեան կարող է գոյութիւն ունենալ միմի-
այն իբր բաղադրիչ մաս Գերմանիայի, թէ եւ
նոյն իսկ նրա բնակիչները շարունակէին էլի մի
քանի դար խօսել ոչ գերմաներէն, այլ չեխերէն»:

Կրկնում ենք. չէ կարելի ենթադրել, ու
Մարքսն ա՛յլքան թոյլ լինէր ընդհանուր պատ-
մութեան մէջ. դա իր դաւանանքն է, որ կուրա-
ցրել է նրան:

Կ. Կաուցկին, այդ եւ միւս յօդուածներէ տը-
պագրութեան յառաջարկում յատկապէս խօսում
է չեխերի առթիւ եւ խոստովանում է Մարքսի ա-
րած սխալը. նա ընդունում է, որ չեխերն ունեն
կուլտուրական ազգի բոլոր յատկութիւնները: Եւ

ինչպէս չխոստովանէր, երբ կեանքի դասը տուել էր արեւի լոյսի նման պարզ ու փայլուն փաստեր:

Առաջ բերած կտորի մէջ ամենից հետաքրքրական մասը կազմում են հետեւեալ բառերը. «Թէ եւ նոյն իսկ նրա բնակիչները շարունակէին էլի մի քանի դար խօսել ոչ գերմաներէն, այլ չեխերէն»... Պէ՞տք է արդեօք բացատրել այդ պարզ ու մեկնելու անկարօտ խօսքերը. պէ՞տք է ասել, որ դրանք Մարքսի «խորհուրդ խորինն» են, նրա համոզումը, որ չեխերը պիտի վերջի վերջոյ գերմաներէն խօսեն, որ բոլոր մանր աղղերը պիտի կլանուեն, ձուլուեն խոշոր աղղերի մէջ, պիտի կենտրոնանան: Չարդարացա՛ւ այդ գուշակութիւնը չեխերի վերաբերմամբ:

Դաժան է իրականութիւնը. նա յաճախ է փշրել եւ դեռ փշրում է սխալ տեսութիւններն ու հաւատալիքների (դոգմ) սիրուն, արտաքուստ միաձոյլ կոռուցումները:

Նոյն դրքի մի այլ յօդուածում, «Ungarn-վէնգրիա» վերնագրով, Մարքսը հետեւեալն է գրում:

«Ֆրանսական պրոլետարիատի առաջին ապստամբութեան հետ միասին աւստրիական գերմանները եւ մաջարներն ազատ կը լինեն եւ արիւնալի վրէժ կը լուծեն սլաւոն բարբարոսներից: Ընդհանուր պատերազմը, որ այն ժամանակ տեղի կ'ունենայ, տաշեղի նման ջարդ ու փշուր կ'անէ այդ սլաւոնական միութիւնը եւ կ'ոչնչացնէ այդ

բոլոր մանրիկ, եգագլուխ (stierkopfigen) ազգերը, մինչեւ իսկ նրանց անունները: Մօտակայ համաշխարհային պատերազմը կը ստիպէ ոչնչանալ ոչ միայն *բէակցիոն* դասակարգերն ու *բինաստի-*ները (քագաւորող տուն), այլեւ նա կ'աւել երկրի երեսից ամբողջ *բէակցիոն* ազգերը»:(*)

«Նզազլուխ ազգեր» — ահա մի նոր հայհոյանք, ուղղուած մանր ազգութիւնների հասցէին: Այդ հայհոյանքը դալիս է ցոյց տալու, թէ որպիսի թոյն կար Մարքսի սրտում կուտակուած՝ ընդդէմ մանր ազգերի. նա ուղում էր, հոգւով սրտով տենչում, որ այդ բոլոր մանր ազգերը ձուլուեն, կլանուեն, որպէսզի իր քեռին (տեսութիւն) արդարանայ եւ ինքը դռնէ. «Պրոլետարներ բոլոր երկրների միացէք»: Այդ Փրազում էլ աչքի է զարնում մի բան. ինչպէս Մարքսը չէր ըմբռնել ազգ եւ ազգային ու միջազգային շարժումները: Նա կոչ է անում պրոլետարներին aller Lander (բոլոր երկրների) եւ ոչ բոլոր ազգերի: Նա խօսում էր մանր ազգութիւնների մասին, արհամարհում, ծաղրում, նրանց ոչնչացումը գուշակում, առանց նոյն իսկ հեռաւոր կերպով ըմբռնելու այդ հըսկայական պրոքլեմը, ազգային ահաւոր խնդիրը:

Այդ բոլորն առաջ բերելով, Դ. Պասմանիկը, հրեայ սիոնիստ, բայց շնորհալի դրող, նկատում է. «Զեմֆ խօսում այն մասին, որ այդ բոլոր մար-

(*) Նոյն, երես 245 — Ungarn.

գարէութիւնները չիրականացան, բայց մենք կ'ուզենք մատնացոյց լինել Մարքսի իսկապէս հանաքեղ գիւտի վրայ — *րէակցիոն ժողովրդներ*: Իսկ այսօր դուրս է գալիս, որ այդ *րէակցիոն ժողովուրդներն* ունեն մարքսիստ պրովետարիատ»: (*)

Եւ իսկապէս, ի՞նչ է նշանակում րէակցիոն ժողովուրդ, րէակցիոն ազգ: Եթէ մի ժողովուրդ յետամնաց է, դա դեռ չէ նշանակում, որ նա րէակցիոն է, յետադիմական. նա յետամնաց է, բայց, նրա մէջ անշուշտ կը լինեն որոշ դասակարգեր ու որոշ կուսակցութիւններ, որոնք ձգտելիս կը լինեն առաջդիմութեան: Ճշմարիտ է, օրինակ, Թիւրքիայում մի յառաջդիմական կուսակցութիւն կարող է դնել այնպիսի պահանջներ, որոնք Անդլիայում նշան են պահպանողականների, կամ նոյն իսկ յետադէմների: Սակայն դա չէ խանդարում այդ կուսակցութիւնն անուանել յառաջդիմական՝ ի հարկէ Թիւրքիայի համար: Յառաջդիմական բառերը պարունակում են իրենց մէջ յարեբրական իմաստ — համաձայն տեղի ու ժամանակի:

Եթէ որեւէ սլաւոնական մանր ազգութիւն չէ մասնակցել 1848-ի յեղափոխութեանն Աւստրիայում, դա երբեք չէ կարող հիմք ծառայել մի գիտ-

(*) Տես. «Ազգային հարցը սոցիալիստ-դեմոկրատների դատաստանի առջեւ» գրքոյկը, Երես 9.

նականի՝ անուանելու այդ ժողովուրդը Բէակցիոն ,
 յետագէմ : Ի՞նչ կը հրամայէիք սլովակներին ,
 օրինակ , ոտով-գլխով կը անուէին այդ յեղափո-
 խութիւնով եւ իրենց ազգութեան անդամների
 3/4 մասը զնդակի բաժին անել տային , կոտորել
 տային , չքանային աշխարհի երեսից իբր ազգ ,
 որպէսզի Մարքսը բարեհաճէր կոչել նրանց յա-
 ոաջագէմ ժողովուրդ եւ ոչ Բէակցիոն : Կ'ուզէի՞ք ,
 որ 1905-6 թւերին Մոսկուայում եւ Կովկասում
 հրատարակուած սոց . դեմոկրատական անգլի
 «գիւնուած ապստամբութեան» ժամանակ հայերը
 յիմարանային եւ ոտով գլխով խրուէին այդ ա-
 պստամբութեան մէջ , մատնելով ջարդի երկիւղին
 հայերի առնուազը կէսը . . . Ո՛չ , ես ցանկանում եմ
 ազատ Ռուսաստան , ազատ ու երջանիկ Թիւրքիա ,
 միայն մի պայմանով , որ ես էլ , իբր հայ ազգ ,
 պաշտպանեմ իմ օրդանական ազգային ամբողջու-
 թիւնը եւ օգտուեմ այն բոլոր բարիքներից , որ
 տալիս է ապակենտրոն իրաւական պետութիւնը .
 որ այնուհետեւ ես էլ իմ ազգի ներսում , խաղաղ
 ու հանգիստ , կազմակերպեմ դատաւարագային կը-
 ուիւր յանուն ապագայ հաւասարասէր կարգերի :
 Մի անհատ իրաւունք ունի եւ նոյն իսկ պարտա-
 ւոր է զոհ բերել իր եսն ամբողջութեան բարօրու-
 թեան համար , իսկ մի հաւաքական ամբողջու-
 թիւն , մի առողջ ազգութիւն ողջակիզել , որպէս-
 զի միւս ազգութիւնները լիւս ապրեն , — դա ոճիր
 է մարդկութեան դէմ :

Չկան ընկերներ և զգուշացումներ, այլ կան միայն ընկերներ անհատներ ու դասակարգեր:

Վերելում բերում է բոլոր փաստերը ցոյց են տալիս, թէ որպիսի թունաւոր ատելութիւն է տածում Կ. Մարքսը դէպի սլաւոնական մանր ազգերը: Թերեւս զանազան մարդիկ, որոնք կարծեն թէ Մարքսը դէմ է ոչ բոլոր մանր ազգերին, այլ սլաւոնական մանր ժողովուրդներին, համարելով դրանց ընկերներ, յետադիմական եւայլն: Բերենք այժմ մի երկու օրինակ էլ այն ատելութեան, որ նա ցոյց է տալիս, օրինակ, դէպի Դանիացիներն ու Սկանդինավիայի բնակիչները:

Մերինգը բերում է Մարքսի հետեւեալ խօսքերը, որոնք վերաբերում են 1860-ական թւերին, երբ Բիսմարքը վերակազմելով երիտասարդ Պրուսիայի բանակները, պատրուակներ էր որոնում Դանիայի ձեռքից խլելու Շլեսվիգ եւ Հոլշտայն նահանգները, եւ երբ ծնունդով Դանիացի Մուտկէն իր առաջին զինուորական քաջադործութիւնը բանեցնում էր իր սեփական հայրենիքի դէմ, լինելով պրուսական բանակում իբր հրամանատար:

«Սկանդինավիայի կայանում է նրանում, որ այդ երկրի ժողովուրդը ոգեւորում է դաժան, ծովահինական կեղտոտ, հին-հիւսիսային նացիոնալիզմով, այն խոր ծածկամտութեամբ, որն իր վարմունքով, այսինքն՝ կոպտութիւն անելով դէպի կանայք, լինելով մշտապէս հարբած վիճա-

կում եւ ցոյց տալով արինարբու կատաղութիւն,
որին յաճախ փոխարինում է լալկան սանտիմեն-
տալիզմը... Պատերազմը Դանիայի դէմ՝ իսկա-
պէս յեղափոխական պատերազմ է» : (*)

Գերմանիան լաւ է անում, որ ճշդում է Դան-
իային : Դանիացիներն ու Սկանդինաւցիներն առ
հասարակ թթու նացիոնալիստներ են : Գերման-
իան պարտաւոր է կշանել նրանց, եւ լաւ է անում,
որ նուաճողական պատերազմ է յայտարարել...
Այդ ամբողջ քաղուածքն այնպիսի փառահեղ մշտ-
քեր է պարունակում իր մէջ, որ ամէն մի գեր-
մանացի շովինիստ ուրախութեամբ կը ստորագրէ
նրանց տակը :

Քննենք այժմ Մարքսի վերաբերմունքը դէպի
իր սեփական ազդութիւնը, դէպի Հրէաները, թէ-
եւ ըստ պրոֆ. Մասարիկի վկայութեան, Մարքսը
մկրտուած Հրէայի սերունդ է : (**)

Հրէական հարցի մասին Մարքսը գրել է
երեք անգամ. առաջինը 1844-ին «Հրէական
հարցի սոբիթով» յօդուածում, — «Deutsche-
Franz. Jahrbucher» թերթում, Էրկրորդը, «Սըր-
բազան ընտանիք» գրքում (1845-ին) ուղղուած Հե-
գելի մի ուրիշ աշակերտի — Բրունո-Բաուէրի

(*) «Geschichte der deut. Sozialdemokratie» I
B. S 374 I Aufg.

(**) Տես «Մարքսիզմի փիլիսոփայական եւ ընկերաքա-
նական հիմքերը» գիրքը, Երես, 406.

դէմ, իսկ երրորդը «Նոր-Հռենոսեան թերթում» 1848-49 թուերին:

«Հրէական հարցի առիթով» յօդուածը Մարքսի հնադոյն աշխատութիւններից մէկն է, որի մէջ փայլում է նրա գրելու կտրուկ, յանդուգն եւ ինքնատիպ ձեւը: Դրանից զատ՝ նրանում փայլում է Հեգելի աշակերտն իր «Հակադրութիւնների» պսակունն բայց կեղծ տրամաբանութիւնով:

Բրունո-Բաուէրը հրէական հարցը համարում էր ամբողջապէս աստուածաբանական հարց: Նա պնդում էր, որ պետութիւնը կրօն չը պիտի ունենայ. նա պիտի լինի բացարձակ անկրօն. այն ժամանակ նրա հպատակների քրիստոնեայ կամ մովսիսական լինելը նրա համար կը լինի բացարձակ անտարբեր եւ հրէան ու քրիստոնեան կը հաւասարուեն օրէնքի առջեւ:

Մարքսը, քննադատելով Բաուէրին, ասում է, որ Բաուէրը կռւում է քրիստոնեայ պետութեան, այսինքն՝ առհասարակ, կրօն ունեցող պետութեան դէմ, այն ինչ պէտք է կռուել առհասարակ պետութեան դէմ, որովհետեւ ներկայ պետութիւնը դասակարգային տիրապետութեան եւ կեղեքման դործիք է: Ճիշդ այսպէս էլ, կռուելով կրօնի ազատութեան համար, դուք չէք վերացնի հրէայի եւ քրիստոնեայի կրօնների տարբերութիւնը. պէտք է կռուել իր, այսինքն կրօնի դէմ, իրը այդպիսին, որպէս զի նա խանդարիչ տարր չհանդիսանայ հասարակութեան համար:

Մարքսը բոլորովին համակարծիք չէ Բ. Բա-
ուէրի հետ, որ հրէական հարցը կրօնական հարց
է։ Այստեղ էլ, իբր միակողմանի տնտեսական մա-
տերիալիստ, Մարքսն առաջ է մղում իր սիրասուն
զաւակը, իր քէռիին։ Նա հրէական հարցն ըմ-
բռնում է համարեա՛ թէ անտիսեմիտների, հրէ-
ակերների նման։ Հրէական հարցը կարծես նրա
համար էլ, ինչպէս երբեմն զոքսոր Լիւրդէրի հա-
մար Վիէննայում, կապիտալիզմի կամ աւելի
չուտ վախճառունների հարց է։

«Ինչն է հրէութեան աշխարհական հիմունքը,
հարցնում է նա։ Գործնական կարիքը-էդօրդմը»։
«Ո՞րն է հրէայի աշխարհական պաշտամունքը։
Սպեկուլացիան (կեղեքումը)։ Ո՞րն է նրա աշ-
խարհային աստուածը։-Փողը»։

«Ուրեմն, եզրակացնում է նա, ազատուել
սպեկուլացիայից եւ փողից, այսինքն գործնա-
կան, իրական հրէութիւնից՝ կը լինէր ինքնազա-
տագրում մեր ժամանակի համար»։

Դրա համար ի՞նչ պիտի անել։ Պէտք է ստեղ-
ծել այնպիսի հասարակական կազմ, ասում է
Մարքսը, որի մէջ հնարաւոր չը լինի ոչ կեղե-
քում, ոչ էլ դրամ (ուրեմն՝ սոցիալիստական
կազմ), եւ այն ժամանակ հրէայի զոյութիւնն ան-
հրնար կը լինի, որովհետեւ այդպիսի կազմում
հրէայի կրօնական գիտակցութիւնն ու համոզում-
ներն օղը կը ցնդին։

Թէ Հրէան, թէ քրիստոնեան, ասում է Մարք-

սը, պատմականօրէն սերուած էակներ են: Սա-
կայն «Հրէաներն ազատագրում են այն չափով,
ինչ չափով որ քրիստոնեաները Հրէանում են»,
այսինքն դառնում են նրանց նման սպեկուլեանտ
(չահագործող) դրամապաշտ եւ էգօիստ: «Բուր-
ժուական հասարակութիւնն իր խօսքերից մշտա-
պէս արտադրում է հրէաներ», այսինքն կեղեքիչ-
ներ, սպեկուլեանտներ ու դրամապաշտներ:

«Ո՞րն է ինքնըստինքեան հրէական կրօնի
հիմքը: Գործնական կարիքը-էգօիզմը»:

«Այդ պատճառով հրէաների միաստուածու-
թիւնը էապէս բազմաթիւ կարիքների բազմաստ-
ուածութիւնն է, որը նոյն իսկ ուրացութիւնը
դարձնում է աստուածային օրէնքի առարկայ:
Բայց գործնական կարիքը, էգօիզմը բուրժուական
հասարակութեան սկզբունքն երեւան է գալիս իր
մաքուր ձեւով՝ իբր սկզբունք, երբ բուրժուական
հասարակութիւնը լիապէս զարգացնում է իր մի-
ջից փաղափական պետութիւն: Իսկ գործնական
պահանջի եւ էգօիզմի աստուածը դրամն է:

«Դրամն իսրայէլի խանդոտ աստուածն է, որի
առջեւ չի դիմանայ ոչ մի այլ աստուածութիւն:
Դրամն ստորնացնում է մարդու բոլոր աստուած-
ների, դարձնելով նրանց ապրանք»:

Մարքսի կարծիքով՝ հրէան ազգութիւնն չու-
նի: Նրա ազգութիւնը վաճառականի, բնդհանրա-
պէս դրամ ունեցող մարդու ազգութիւնն է: Հրէ-
աների օրէնքը, որ ոտի տակ հող չունի, եւ մա-

նաւանդ թաւմուտը, ոչ այլ ինչ է, եթէ ոչ կրօնական ծաղրանկար ոտի տակ հող չունեցող բարոյականութեան եւ իրաւունքի, զուտ ձեւական ծիսականութիւն որով զրհստաւորում է իրեն Էգօիզմի աշխարհը: Հրէական թաւմուտականութիւնն ընդհանուր Էգօիզմի ճիգուիտականութիւնն է: Ճարպիկօրէն զանց առնել օրէնքը՝ ահա այդ աշխարհի կարեւորագոյն վարդապետութիւնը: Հրէութիւնն, իբր կրօն, այլեւս չէ կարող զարդանալ, որովհետեւ գործնական պահանջի աշխարհայեացքի կատարելութիւնը տնտեսականումը չէ, այլ գործնականում. նրա իմաստութիւնն իսկ գործնական է: Հրէութիւնը չէ կարող ստեղծել նոր աշխարհ, որովհետեւ Էգօիզմի գիտակցութիւնը կրաւորական է ինքնըստինքեան, նա ընդլայնւում է միայն սոցիալիստական յարաբերութիւնների դարդացման հետ միատեղ:

Հրէութիւնն իր դարդացման դադաթնակէտին հասել է բուրժուական հասարակութեան կատարելագործութեան ժամանակ եւ այն էլ միմիայն քրիստոնէական աշխարհում: Քրիստոնէութիւնը մարդու բոլոր ազգային, բնական բարոյական եւ քեորիական յարաբերութիւնները դարձնում է արտաքին: Միայն քրիստոնէութեան ժամանակ բուրժուական հասարակութիւնը կարող է լիապէս բաժնուել պետական կեանքից, ազատուել մարդկային բոլոր կապերից եւ նրանց տեղ դնել Էգօիստական պահանջներ, մարդկային աշխարհը բա-

Ժանեւ ատումներէ, իրար թշնամօրէն հակադիր անհատներէ :

Քրիստոնէութիւնն առաջացել է մովսիսական նութիւնից եւ նորից այժմ ձուլուել է նրա հետ : Սկզբից ի վեր՝ քրիստոնեան քերթետիք հրէա էր . այդ պատճառով էլ հրէան զործնական քրիստոնեայ է . «Եւ գործնական քրիստոնեան նորից դարձաւ հրէա»- ի հարկէ կապիտալիստական սոցիալական կարգերի շնորհով :

«Քրիստոնէութիւնը հրէութեան բարձրագոյն միտքն է, իսկ հրէութիւնը քրիստոնէութեան ստոր ուտիլիտար(օգտասէր) գործադրութիւնն է» :

Քրիստոնէութեան առաքինութեան էգօիզմը, որ ծարաւի է յաւիտենական ողորմութեանը, իր զործնական վերջաւորում ձեւով դառնում է հրէական Ֆրիդլբական էգօիզմ . երկնային կարիքը դառնում է երկրային, սուրբկտիվիզմը (ներաշխարհ) դառնում էգօիզմ (եսասիրութիւն) : Հրէայի յամառութիւնը եւ ղիմացկունութիւնը բացատրւում է ոչ թէ կրօնով, այլ նրա կրօնի մարդկային հիմքով :

Հրէայի կրօնը զործնական կարիքի իդէալական արտացոլացումն է : Եւ որովհետեւ հրէայի իսկական էութիւնը իրականացել է բուրժուական հասարակութեան մէջ, այդ պատճառով էլ այդ հասարակութիւնը չէ կարող համոզել հրէային, որ նա էպէս կրօնական էակ չէ :

«Երբ հասարակութեանը կը յաջողուի ոչընչացնել հրէայի գործնական էութիւնը, շահագործութիւնը եւ նրա նախադրեալները, — այն ժամանակ հրէան այլեւս անհնար կը լինի, որովհետեւ հրէութեան *սուրեկտիվ* հիմքը — գործնական պահանջը, կը մարդկայնացայ, որովհետեւ կը վերանայ բնդհարումը մարդու անհատական — զգայական գոյութեան եւ նրա *տեսակի* կամ *սեռի* գոյութեան միջեւ»:

«Հրէայի հասարակական ազատագրումը միաժամանակ եւ հասարակութեան ազատագրումն է Հրէութիւնից:»(*)

Մարքսն այնպէս է ներկայացնում Հրէութիւնն, ինչպէս Վիէննայի դոքտոր Լիւրդերը կամ ինչպէս Կրուչեւսկանն ու Պուրիշկենսկիչը Ռուսաստանում. իբր թէ Հրէութեանը յատուկ է կեղեքումն ու շահագործումը այն աստիճանի, որ նրա կրօնի էութիւնն անգամ դործնական էգօիզմ է: Մի՞թէ նոյն դործնական էգօիզմը չէ նաեւ Մահմետի կրօնի, քրիստոնէութեան, բուդդայականութեան եւ, կարելի է վստահօրէն պնդել, բոլոր կրօնների հիմքերը: Կրօնը վերուստ արուած չէ, այլ ծնունդ կեանքի պահանջների, մի տեսակ միջոց դործնականում կեանքի կռիւր մղելու գերբը-

(*) Հրէական հարցին վերաբերեալ վերլուծումը մեմֆառաջ եմֆ բերել ըստ պրօֆ. Մասարիկի, տեղ տեղ ուղղակի քարգմանաբար: Տես նրա յիշուած գիրքը, երես 409-415.

նական զօրութիւններէ օժանդակութեամբ: Հրէ-
ութիւնը, այն էլ Հրէութեան մի չնչին մասը, կա-
պիտալի ներկայացուցիչները իրենց բնաւորու-
թեան այդ վատ դժերն ստացել են՝ շնորհիւ իրենց
կրած երկհաղարամեայ դեգերումների, տառա-
պանքների, լլկանքների ու հալածանքների:

Վերջապէս զուտ անտիսեմիտական է Մարք-
սի այն դիրքը որ բռնել է նա դէպի հրէաները,
որովհետեւ ամէն տեղ հրէայ ասելով, նա բմբռո-
նում է լոկ շահագործութիւնով պարապող. նրա
համար կարծես զոյութիւն չունի հրէայ բանուոր,
հրէայ արհեստաւոր, որոնք այսօր համաշխար-
հային պլուտոքրիատի շարքերում հսկայական
դեր են կատարում եւ համարեա՛ւ ամէն տեղ առա-
ջին դիրքերում են կանգնած:

Ի հարկէ՝ մենք չենք կասկածում, որ Մարք-
սըն իր համոզումներով անտիսեմիտ էր. նա, իբր
սոցիալիստ, չէր կարող անտիսեմիտ լինել: Սա-
կայն նրա քէռքին — տնտեսական մատերիալիզմը
եւ նրա ցեմտրալիզմն ստիպել են նրան ընկնել նոյն
սխալ, նոյն կեղծ տեսակէտի վրայ, որի վրայ
կանգնած են անտիսեմիտները, ի հարկէ՝ բոլո-
րովին այլ դրդապատճառներից ստիպուած:

Բացի այդ Հեգելեան դպրոցի ամենափայլուն
ներկայացուցիչներից մէկը — Լուդվիգ Ֆոյերբախը,
որի ազդեցութիւնը չափազանց զօրեղ էր Մարքսի
եւ Էնգելսի սկզբնական դործունէութեան, կամ
աւելի ստոյգ է ասել, նրանց զարգացման ու ընդյ-

թագծերի կազմակերպութեան վրայ, — Ֆոյեր-
բախն էլ զրազուել է հրէական հարցով եւ տուել
է հրէաների նոյնատեսակ նկարագիր, միայն աստ-
ուածաբանական բացատրութիւններով: Մարքսն
իր ուսուցիչի նկարագրական եւ դործնական մա-
սերը վերցրել եւ ապա Հեգելի փայլուն, բայց
տրամաբանօրէն կասկածելի հակադրութիւններով
համեմել ու կազմել է իր յօդուածը «Հրէաների
մասին»:

«Մարքսի բացատրութիւնները փայլուն են,
բայց համոզեցուցիչ չեն, — իրաւացի կերպով
նկատում է պրօֆ. Մասարիկը: Իսկապէս ասած,
նրանք շատ աւելի ճարպիկ են, քան այդ վայել
էր մի այդպիսի կարեւոր հարցի հապէս լուրջ քնն-
նութեամբ»: (*)

Հրէութեան մէջ Մարքսը տեսնում է միմի-
այն կապիտալիզմի, շահագործման խնդիր: Հրէ-
ութեանը կապող միակ տարրը կրօնն է, նրա է-
գոիստ կրօնն իբր «ազնւոյն սկանով»: Նա բացար-
ձակ մերժում է հրէութեան մէջ ազգային ուր եւ է
կապ: Ճշմարիտ է, հրէութիւնը կորցրել է իր
մայրենի լեզուն, բայց ինչպէս արդէն ապացու-
ցել ենք, միւսի լեզուով չէ սահմանափակում
ազգութիւնը. կան եւ այլ որոշիչ պարագաներ,
որոնց մէջ «ազգային ոգին» առաջնակարգ տեղ

(*) Նոյն գուշը — Երես 413:

է բռնում. իսկ այդ միատեսակ ազգային ուղին հարստօրէն կայ, զոյութիւն ունի հրէութեան մէջ. բոլոր հրէաները գիտակցում են, որ իրենք մի ազգ են, թէ եւ ցրուած ու յարահալած: Հրէութիւնն ամէն տեղ ունի մի այնպիսի ցայտուն ազգային բնոյթ, որը չնկատել՝ դիտող մարդու համար անհնար է: Իսկ նրանց զրեթէ եռհազարամեայ տառապանքներով հիւսուած անցեալը... Իսկ ներկայ տառապանքների ու արցունքի ծովը, որի մէջ միւս բոլոր ազգութիւնները թերեւս վաղուց խեղդուած կը լինէին...:

Մարքսը յատկապէս դէմ չէ հրէութեան, այլ, դէմ լինելով առհասարակ բոլոր մանր ազգութիւններին, նա կողմնակից է հանդիսանում նաեւ հրէաների ձուլման: Եւ այդ իր կանխակալ տեսական համոզումը նա համեմտւմ է այնպիսի սրամիտ մտքերով, ինչպէս այն՝ որ քրիստոնէութիւնն արտադրում է իր սեփական հրէաները, այսինքն իր շահագործիչները:

Մինչեւ օրս էլ Կ. Կառլսկիրն, Մարքսի այդ տաղանդաւոր աշակերտը, հրէութիւնը համարում է ոչ թէ ազգային մի միութիւն, այլ լոկ կրօնական համայնք, որի միակ կապը կրօնն է — յուդաիզմը. կամ մովսիսականութիւնը: Այն ինչ մը կրտուած կամ քրիստոնէութիւնը ընդունած հրէան բացարձակ ոչնչով չէ տարբերւում մովսիսական հրէայից ազգային բնոյթի տեսակէտից: Այդ համոզումը Հեգելական դպրոցի՝ Ֆոյերբախի,

Բրունո-Բաուէրի եւ Մարքսի թողած պատմական
ժառանգութիւններէն մէկն է, աւելի շուտ մի նա-
խապաշարում, քան մի համոզում:

*
**

Սլաւոնական, սկանդինաւեան եւ հրէական
ազգութիւններէ մասին Մարքսի զրութիւններէն
բերած կտորները լիապէս բաւական են ցոյց տա-
լու Մարքսի թշնամական տրամադրութիւնը դէպի
մանր ազգերը: Այդ կտորներէն պարզ երեւում է
նրա կարծիքը, նրա երկրպագութեան առարկան
— Կենտրոնացումը: Մանր ազգութիւնները դա-
տապարտուած են մեռնելու. նրանք պիտի ձուլ-
ւեն խոշոր ազգութիւններէ մէջ. մարդկութիւնը,
տնտեսական պայմաններէ կենտրոնացման հետ
միասին պիտի կենտրոնանայ աստիճանաբար.
մանր ազգերը, ձուլուելով, պիտի կազմեն աւելի
եւ աւելի խոշոր ազգեր եւ, երեւի, այդ պրոցեսի
տրամաբանական ելքը լինելու է ամբողջ մարդ-
կութեան մի հօտ եւ մի հովիւ դառնալը:

Այսպէս ուրեմն՝ «Մանիֆէստից» մեր բերած
յայտնի կտորի բոլոր մթութիւնները պարզուեցին:
Մարքսը դէմ է հայրենիքի գաղափարին. մանրիկ,
ջուկ-ջուկ հայրենիքներ չը պիտի դոյութիւն ունե-
նան, որովհետեւ նրանք վնասակար են իբր ներ-
կայ բուրժուական պետական միութիւններ. որ-
քան նրանք արագ չքանան, այնքան աւելի կ'արա-

դանայ մասնաւոր սեփականութեան վերացումը, որովհետեւ ներկայի պետութիւնները մասնաւոր սեփականութեան ժանդարմներն են: Այստեղ էլ աշկարայ է Մարքսի սխալը. նրա համար պետութիւնը, պետական տերիտորիան իր սահմաններով, իր սահմանային բերդերով, իր զօրքերով, իր մաքսատներով և ամբողջ վոհմակ պաշտօնեաներով՝ նոյնն է ինչ որ հայրենիքը, ազդ կոչուած մի մեծ մարդկային համախմբման բնակավայրը: Եւ նա դէմ է այդ հայրենիքին, որովհետեւ բանուորն այնտեղ սեփականութիւն չունի: Հայրենիքները (ի հարկէ Մարքսի հասկացած հայրենիքները) հանդիսանում են խոշոր խոչընդոտներ սոցիալիզմի իրականացման: Ուրեմն՝ պիտի տապալին այդ հայրենիքները:

Նա դէմ է եւ ազդութեան դադարիարին: Ազդութիւնը եւս դէմ է տնտեսական կեանքի կենտրոնացմանը: Նա, առհասարակ, ասպակենտրոնացընում է մարդկութիւնը եւ ոչ նպաստում նրա ամբողջութեանը: Ինչ էլ որ լինի, օր աւուր կենդրոնացող տնտեսական յարաբերութիւնները հըրամայօրէն կենտրոնացնում են ազդերին, նրանց միաձուլում, մի ամբողջութիւն կազմում. ստիպում նրանց իրար խառնելու, մի հօտ եւ մի հօվիւ կազմելու: Սոցիալիզմի արագ իրականացման տեսակէտից, ուրեմն, անհրաժեշտ է մանր ազդութիւնների ձուլումը կամ, ինչպէս ասում են, ասսիմիլաիոնը: Բանուորութիւնը, ինչ վերաբե-

րում է մանր ազդութիւններին, պիտի, տրամաբանօրէն, լինի ապագային, եթէ ոչ նա չէ կարող ընդունել ուսուցչի տածած քէնն ու արհամարհանքը դէպի մանր ազդերին: Տրամաբանօրէն մըտածելով, պիտի ասենք, որ վերջ ի վերջոյ, խոչոր ազդերի պրոլետարներն էլ պիտի դառնան ապագային, բոլորը պիտի կլանուեն մարդկային մարդջութեան մէջ:

Այստեղ էլ աշկարայ է Մարքսի սխալը: Նա չէ ըմբռնել ազդային կոչուած խնդիրը: Ազդը եւս նա՝ չփոթել է պետութեան դադափարի հետ: Պետութիւններն, այո՛, կենտրոնանում են եւ, թե՛ րեւս, եթէ մարդկային կեանքի զարգացումն այսպէս ընթանայ, շարունակուեն կրկին կենտրոնանալ: Բայց ինչպէս մի այլ տեղ մենք ապացուցել ենք, (*) կենտրոնացման հետ միատեղ, պատմութեան ամբողջ ընթացքում, ընթանում է եւ ապակենտրոնացումը: Այդ կրկնակի շարժումը—կենտրոնացում եւ ապակենտրոնացում, ծառայում է հիմք եւ զրդապատճառ Ֆէդէրացիայի սկզբունքը դաւաճանողներին: Պետութիւնները կարող են կենտրոնանալ, հսկայական չափերի հասնել, համապատասխանելով տնտեսական կեանքի փոխանակութեան կամ շրջանառութեան համաշխարհային բնոյթին. իսկ այդ հսկայական ամբողջութիւն-

(*) Տես «Դէպի Ֆէդէրացիա» գրքի «կենտրոնացում եւ ապակենտրոնացում» գլուխը:

ների ներսում գաւառներն ու նահանգները, համայնքներն ու շրջանները, իբր աղագային ու երկրային միութիւններ, կ'ապակենտրոնանան, կը լինեն ինքնավար, կը լինեն կիսազերիշխան, իբր գաղնակից մասեր եւ դա խիստ համապատասխան կը լինի տնտեսական մի այլ շարք երեւոյթներէ բնոյթին — արտադրութեան ապակենտրոնական կամ տեղական բնոյթին :

Աղգերը չեն, որ ենթակայ են կենտրոնացման, այլ պետութիւնները, որոնց ներսում աղգերին սպասում է եղբայրական Փէդէրացիան կամ անհատական — արտահոգային (էքստէրիտօրիալ) սկզբունքով եւ կամ աղղ — երկրային խառն կազմով :

Իսկ մեծամեծ պետութիւններին ճակատագրօրէն սպասում է կամ ջարդ ու փշուր լինելմանը՝ անալ եւ կամ պահել իրենց արտաքին ամբողջութիւնը, ներսում բնդունելով ապակենտրոնական Փէդէրատիվ կամ գաղնակցական կազմ :

Գ Լ ՈՒՒ Ռ.

Աշակերտների կարծիքները:
Աստիճանական ժխտում ուսուցիչների տեսակետի:
Կուսակցութիւնների տեսակէտները:
— Ինտերնացիոնալը, Ռուսական կուսակցութիւն-
ները: Աւստրիականը եւ Բրուննի վճիռները:

Այդ է ուսուցիչների կարծիքը:

Անցնենք այժմ աշակերտների եւ միւս «ծայ-
րայեղ» մտածողների կարծիքներին: Նախ սկսենք
աշակերտներէն:

Այդտեղ մենք կը տեսնենք երկու որոշ հո-
սանք: Սկզբնական հոսանքն անկեղծօրէն հետեւող
է ուսուցիչների թողած տեսակէտների. նա ապագ-
դային է: Այդ հոսանքի ամենափայլուն եւ հետե-
ւողական ներկայացուցիչը հների մէջ հանդուց-
եալ Լիբկնեխտն էր, որ խրոխտաբար հնչեցնում
էր իր ձայնը Մարտէյում 1892 թուին. «Մեզ սոց-
իալիստներն իսկապէս համար գոյութիւն ունի երկու ազգ՝
— բանուորների ազգը եւ բուրժուաների ազգը»:
Սա միանգամայն մտքերի շփոթումն է. իրար են
խառնուած երկու միանգամայն տարբեր երեւոյթ-
ներ — ազգը եւ զասակարգը: Ազգը մի հոգեկեն-
սական կամ բնա-սկզբնական երեւոյթ է, իսկ դա-

ռակարգն այդ բնա-պատմական ամբողջութեան ներսում մի տնտեսական ստորաբաժանում է :

Լիբրենետի նման էին մտածում սկզբներում բոլոր սոցիալ դեմոկրատները, նոյն իսկ Կաուուցկին : Սա իր «Ժամանակակից Ազգութիւնը» հնազոյն յօդուածում (ազգութեան հարցի առթիւ հնազոյն) գրեթէ նոյն տեսակէտի վրայ է կանգնած, ինչ որ Լիբրենետը : Ի հարկէ Կաուուցկին, իբր գլխունական, չէր կարող, նոյն իսկ իր այդ հնազոյն երկում, իրար խռնել ազգն ու դասակարգը, ինչպէս Լիբրենետը, բայց նրանց վերաբերմունքը դէպի ազգութիւնը նոյնն էր գրեթէ . այսինքն՝ այն, ինչ որ Մարքսն ու Էնգելսն էին մշակել :

Այդ հնազոյն դործում Կաուուցկին հանդիսանում է իբր հաւատարիմ աշակերտ Մարքսի եւ Էնգելսի : Ազգութիւնը նրա համար, ի հարկէ այդ շրջանում, հանդիսանում է իբր մի արհեստական կազմութիւն, որ փոխարինել է հին տոհմական կազմին : Նա ծնունդ է առել կապիտալիզմի հետ միասին 14-16դ դարերում : Նա իր էութիւնով բուրժուական հասկացողութիւն է : Քանի դեռ բուրժուազիան չէր դարձել քաղաքական դրութեան տէրը, նա հանդիսանում էր իբր բողոքող տարր, իբր յեղափոխական դասակարգ ընդդէմ ազնուականութեան եւ հոգեւորականութեան . ճիշդ այդ պատճառով էլ նրա զուակը, նրա ծնած «Ազգային դադափարը», այսինքն «ազգի միու-

թեան դադարեալ» հանդիսանում էր յառաջ մը-
ղող, պրոգրէսիվ, նոյն իսկ յեղափոխական մի-
տարր: Բայց երբ բուրժուազիան իր ձեռքն առաւ
քաղաքական ղեկը, յաղթահարեց ազնուականու-
թեան ու հոգեւորականութեանը, սկսեց կամաց-
կամաց կորցնել իր յեղափոխական բնոյթը եւ
դառնալ նախ պահպանողական՝ — ձգտելով պա-
հել իր ձեռքում գրաւած դիրքերը, իսկ յետոյ,
երբ չորրորդ դասակարգն — աշխատաւորութիւնն
սկսեց կազմակերպուել եւ, պետութեան դիմնի-
քատացման հետ միասին, ազդեցութիւն ձեռք բե-
րել թէ քաղաքական եւ թէ տնտեսական ասպա-
րէզներում, բուրժուազին այդ ժամանակ սկսեց
դիմել դէպի բէակսիոն, դէպի յետադիմութիւն:
Եւ դրա հետ միասին, ասում է Կաուցկին, երբ
բուրժուազին քանի դնում աւելի եւ աւելի բէա-
սիոնէր է դառնում, «ազգային գաղափարը դառել
է մի ծիրանի, որով զարդարուած են ամէն տեսակ
շահագործողներ, կարիերիստներ (դիրք որոնող-
ներ)»: Իբրեւ եզրակացութիւն իր այդ ուսումնա-
սիրութեան, Կ. Կաուցկին դալիս է այն եզրակա-
ցութեան, որ մանր ազդեցութիւնները պիտի ձուլ-
ուեն խոշոր ազդերի մէջ եւ ազդային լեզուները
պիտի փոխարինուեն մի ընդհանուր միջազգային
լեզուով:

Ու այդ բոլորը հանդիսանալու են իբրեւ հետե-
ւանք տնտեսական կեանքի համաշխարհային կեդ-
րոնացման եւ ազդային սահմանափակումների

չքայման։ Այս գուտարին մարֆսիստական տեսակէտից մօտենալով չեխերի չարժմանը, Կառուցկին զատապարտում է նրանց ազգային ինքնուրոյնութիւն ձեռք բերելու ձգտումը, որովհետեւ այդ ձգտումը հակասում է տնտեսական զարգացման ընթացքին։ (*)

Լիրկնէիտի եւ Կառուցկու նման էին մտածում եւ միւս սոցիալ-դէմոկրատները համարեա՛ր ըստը երկրներում։ Այդ տեսակէտը մարֆսիստական «հաւատալիք»ի անբաժան մասն էր կազմում։ Ռուսական սոցիալ-դէմոկրատիան ոչնչով յետ չէր մնում իր եւրոպական ուսուցիչներից․ ընդհակառակը իբր նորադարձ մարդիկ, նրա լիդերները շատ աւելի անհամբերատար ու հալածող էին, քան Եւրոպական աւելի զարգացած գործիչները։ Նրանց հանած սոսկալի հալածանքը բունդի, լատիշական, լեհական սոցիալիստ կուսակցութիւնների, Դաշնակցութեան եւ ուրիշ «ազգային սոցիալիստական» կուսակցութիւնների դէմ հասնում էին կատարեալ կրօնական հալածանքների աստիճանին։ Ով դաւանում էր ազգային սկզբունք կամ կազմակերպութեան կամ որեւէ այլ տեսակէտից, հրատարակում էր մանր բուրժուա, բէալսիմնէր եւ ենթարկւում կատարեալ աստրակիզմի (նշաւակութեան)։

Անողորմ իրականութիւնն իր դառն դասերով

(*) «Մեր ժամանակի ազգութիւնը» (ռուսերէն) Երես 39-47.

եկաւ ստիպելու Կ. Կառուցկուն թողնելու ուսուցիչների Դռգմայի (հաւատալիքի) միակողմանի ակնոցները :

Եւ խկապէս, քննեցէք Գերմանիայի քաղաքացու տեսակէտից ազգային հարցը : Ի՞նչ նշանակութիւն ունի նրա համար մի այնպիսի խնդիր, որ իր երկրում համարեա՛վ գոյութիւն չունի : Դեռ 40-ական թուականներին, քանի որ գոյութիւն ունէ՛ր լոկ Հիւսիսային Գերմանական Միութիւնը, այնտեղ ազգաբնակչութիւնը համարեա ամբողջապէս բաղկացած էր պրուսիացիներից ու ազգակից Գերմաններից. միայն մի չնչին թիւ լեհեր կային, այն էլ դեռ իբր հպատակներ եւ ոչ իբր քաղաքացիներ : Երբ 1871ին, ստորացած ու մասամբ աւերուած Ֆրանսիայի զիմաց բարձրացաւ Բիսմարկեան Գերմանական Դաշնակցութիւնը, այն ժամանակ էլ օտար ազգութիւնների թիւը մնաց չափազանց աննշան : Այսօր հազիւ երեք միլիոնաչափ լեհեր, 1 ուկէս 2 միլիոնաչափ Ֆրանսիացիներ, հազիւ 400 000 դանիացիներ, մի քիչ սլաւոններ ու հրէաներ կան ամբողջ պետութեան մէջ, այն ինչ այդ 5 միլիոն օտարների զիմաց կանգնած է մօտ 60 միլիոն բուն Գերման ազգութիւնը : Բընական է, որ այդպիսի պայմաններում «ազգային խնդիրը» չէր կարող դրուել այնպիսի ձեւով, ինչպէս նա դրուած է Աւստրիայում, Վէնդրիայում, Ռուսաստանում, Բելգիայում, Թիւրքիայում եւ այլն, ուր տիրողները եւ տիրուածների թուական

յարարերութիւնը այնքան էլ ի վնաս տիրութեաների չէ :

Գերմանիայում թուական այդ տարօրինակ յարարերութիւնը ծնունդ է տալիս այնպիսի շօվիմիստական մտքերի, որոնք ամենեւին չեն սաղում մի սոցիալիստի : Այսպէս օրինակ, լեհական բանուորական կուսակցութիւնը Պրուսիայում իր ծրագրում դրել է նաեւ «ազատել Պրուսիայի լծի տակ ապրող լեհ ժողովուրդը տնտեսական եւ քաղաքական լծից» : Սակայն այդ նոյն կուսակցութեան մէջ կան եւ անհատներ, որոնք բողոքում են իրենց կուսակցութեան ծրագրի այդ ազգային ոգու դէմ եւ ցանկանում են վերածել չին ձեւի մարքսիստական ոգու : «Սաքսոնական բանուորական լրագիր»ը Սաքսոնիայի մարքսիստների պաշտօնական օրգանը, 1897-ին լեհ բանուորական կուսակցութեան համագումարի հաշիւները տպելով ակներեւօրէն բռնել էր վերջինների կողմը եւ խիստ կծու ակնարկներ էր անում «նացիոնալիստների» հասցէին, չգիտեմ ինչու ամէն մի «նացիոնալ» կուսակցութիւն կնքելով «նացիոնալիստական» հայհոյական տիտղոսով, ինչպէս այսօր անում են ռուսական եւ մանաւանդ, Կովկասեան տնասուն ս. դեմոկրատները : Այս դեռ բաւական չէ . Ֆրանկֆուրտի (Օդերի վրայ) ս. դեմոկրատները, Բրանդենբուրգի դաւառական ժողովում բողոքեցին լեհական պրոպանգանդի դէմ իրենց շրջանում, տեսնելով դրանում գերմանական ս. դեմոկրատ կուսակցութեան համար մի զգալի վնաս :

Այդ առիթից օգտուելով «Սաքսոնական բան-
ւորական լրագիր»ը բաց արեց իր բերանը՝

«Կը նշանակէ բանն այնքան հեռու է գնացել,
որ այդ լեհական սոցիալիստների ազգային պրո-
պագանդն սկսում է խանգարել կուսակցութեան
գերմանացի անդամներին մղելու սոցիալ-դեմոկ-
րատական փարոքութիւն: Մի՞թէ նրանք պիտի
հանդուրժեն այդ բանին գերմանական պետու-
թեան ներսում՝ յանուն միջազգային համերաշ-
խութեան»:

Ահա գերմանական սոց. դեմոկրատ լրագրի
ինտերնացիոնալիզմը, նրա միջազգայնութիւնը:
Դա միանդամայն նման է Սարգսի ազգատեաց ու-
ղուն, ի հարկէ երբ հարցը վերաբերում էր մանր
ազգութիւններին: Սակայն յիշուած ուղղափառ
մարքսիստ թերթը գրանով չը բաւականացաւ, նա
մինչեւ իսկ մերժեց լեհերին դիջանիլ սեփական
մամուլ ունենալու տարրական իրաւունքը, որ
նոյն իսկ համիտական պետութիւնը թոյլատրում
էր հայերին եւ այլ ազգերին:

«Բերլինում, ասում է այդ քերթը, չկայ ոչ
մի լեհ բանուոր, որ չհասկանայ գերմաներէն:
Ել ինչի է պէտք լեհական մի քերթ, որը յամե-
նայն դէպս, ոչ մի բանով չէ կարող հաւասարուել
գերմանական կուսակցութեան խոշոր քերթե-
րին»:(*)

(*) Թէ այդ եւ քէ նախընթաց փառաւոր վերցրել
եմ ժխտովսկու «սոցիալիզմը եւ ազգային հարցը» ռուսե-
րէն գրից, երես 19-20.

Եթէ մի քիչ ուշադրութեամբ նայենք մեր շուրջը, նման երեւոյթներ չատ կը տեսնենք Ռուսաստանում եւ մանաւանդ Կովկասում :

Յաւալին այն է, որ այդ ոգին սկզբունքից լոկ մի պատահական խոտորում չէ, որ դործ է դրել «Սաքսոնական բանուորական թերթ»ը, այլ դա կրկնում է յաճախ, նոյն խել ւ. դեմոկրատական աստղերի բերանով: Այսպէս, օրինակ, Ժիալովսկին առաջ է բերում 1897 թուի ապր. 10-ին «Vorwärts» կեդրոնական օրգանում ծերունի Լիբկնեխտի խմբագրութեամբ լոյս տեսած հետեւեալ յօդուածը:

«Գերմանացի միշտ եղել է կոսմոպոլիտ, եւ չինական-ազգային առանձնացման գեղջկական տափակ միտքը կարող է ծնունդ առնել միայն օստ-էլքիական կիսով չափ սլաւոնա-կոզակային, իւնկերական գանգերում: Եւ, ոչմարիտ, գերման ժողովուրդը կարող է պարծենալ իր գաղթականական եւ գաղութային քաղաքականութիւնով... Միայն Աւստրիան, որ իլուել է սլաւոնական եւ ուրիշ կիսավայրենիներից եւ հաղորդակից է արւած գերմանական կուլտուրային, ոչնչով յետ չէ մնում, կամ յետ չէր մնայ, եթէ որ գերման ժողովուրդն իր սեփական երկրում չկորցնէր իր տիրապետութիւնը եւ, շնորհիւ դժբախտ հանգամանքների մի ամբողջ շղթայի, չընկնէր իշխանների տիրապետութեան տակ, որոնք իրենց ուշադրութիւնը դարձրին լոկ շահամոլական, նեղ

—*դինաստիական* (քաղաւորող տան) նպատակների վրայ. այդ իշխաններից ոչ մէկն ընդունակ չէր ըմբռնելու գերման ժողովրդի ազգային եւ միա-
ժամանակ միջազգային արշաւանքը (Zug), իր ազ-
գային գաղութային քաղաքականութիւնով գեր-
ման ժողովուրդն Աւստրիայում ստեղծեց մի ոյժ,
որը եթէ մայր-երկրից կամ *մետրոպոլից* նախ-
ծրբագրուած ու խելացի օժանդակութիւն ստա-
նար, արդէն տիրած կը լինէր ամբողջ Բալկան-
եան քերակղզուն եւ Կ. Պոլսին, տիեզերական տի-
րապետութեան այդ բանալիին: Բայց գերմանա-
կան քաղաւորներից, այսպէս կոչուած, պետա-
կան անձերից եւ ոչ մէկը գաղափար չունէր այդ
ազգային-միջազգային քաղաքականութեան մա-
սին»:

*Մարքսի ոգին է հնչում այդ տողերում: «Սը-
լաւոնական-կողակային կիսավայրենի դանդեր».*
դնալ տիրել մինչեւ Բալկանները, նոյն իսկ Կ. Պո-
լսը. համաշխարհային տիրապետութեան այդ
բանալին առնել ձեռքը, ձուլել, կլանել, կենդրո-
ւորացնել... Պատառելու, կլանելու ախորժակ,
մի հրէջաւոր ձգտում մեծանալու, կենդրոնանա-
լու — յանուն սրբազնասուրբ դոգմայի (հաւա-
տալիք), տնտեսական կամ դիպլեկտիֆական մա-
տերիալիզմի:

Սալայն վերադառնանք կեանքի տուած դա-
սերին Կ. Կառլսկուն, կամ սլատուածքներին, որ
բացուեցին ուղղափառ մարքսիզմի մէջ՝ այդ
խնդրում:

Կ. Կառլցկին, իբր հրապարակագիր-մտածող, ստիպուած եղաւ մտնել աւստրիական եւ վէնգերիական ներքին քաղաքականութեան հարցերի քննութեան մէջ: Իսկ ազգային հարցերն այնպիսի միաձուլ ազգային պետութիւններում, ինչպիսին Ֆրանսիան, Գերմանիան կամ Իտալիան են, չեն կարող դառնալ լուրջ եւ բազմակողմանի ուսումնասիրութեան եւ փորձի առարկայ: Հասարակական հարցերն ուսումնասիրութեան են դըր-ւում, երբ նրանք սուր պահանջ են դառնում ամբողջ կեանքի համար, դոնէ նրա զգալի մի մասի, մի աչքի ընկնող փոքրամասնութեան համար: Այդ հարցերն ուսումնասիրուելու են իրենց միջալայ-րում, այնտեղ, ուր նրանք ծնուել ու զարգանա-լու զգալի հող են գտել: Ազգային հարցի համար էլ աշխարհի հայրենիքներն են Անգլիան (Իրլան-դիան), Բելգիան (բելժ եւ վալլոն ժողովրդներ) մանաւանդ Աւստրիան, Ռուսիան եւ Թիւրքիան իրենց բազմեանդ ազգութիւններով: Վերջին ե-րեքից միայն Աւստրիայումն են ազգային հար-ցերն ու յարաբերութիւնները հասունացել — չը-նորհիւ պարլամենտական կամ ներկայացուցչա-կան իրաւապետական կարգերի ազատութեան, իսկ միւսներում զեռ մինչեւ վերջին տարիները, — ամէն ինչ գետնի տակն էր:

Ուսումնասիրելով Աւստրիայի ազգերի յարա-բերութիւնները, Կ. Կառլցկին դրեց իր երկու նը-շանաւոր յօդուածները — «Աւստրիայի ճգնաժա-

մը» վերնագրով — մէկը «Աւստրիայի ճգնաժամը եւ Պետական իրաւունքը», միւսը «Աւստրիայի ճգնաժամը—Լեզու եւ Ազգ»։ Այդ յօդուածներում Կառլցկին այլ եւս չէ հանդիսանում իբր մոլեռանդ մարդարէ, որ գուշակում է մանր ազգութիւնների ասսիմիլասիոնը կամ խառնումը, ձուլումը խոչոր ազգութիւնների մէջ։ Ընդհակառակը, նա ցոյց է տալիս, որ կեանքի մէջ կան այլ, հակադիր միտումներ։

«Աւստրիայի եւ Թիրքիայի տնտեսական զարգացումն, ասում է նա, — չէ նպաստում այն բանին, որ ազգութիւնները համախմբուեն եւ ներանց մէջ հալուեն միւս մանր ազգերը եւ, այդպիսով, ստեղծուի մի ազգ՝ որոշապէս գծուած նահանգով. քնդհակառակը՝ նա (այդ տնտեսական զարգացումը) աւելի եւս նպաստում է ազգերի աւելի եւ աւելի իրար խառնուելուն եւ այդպիսով նոր մանրիկ ազգեր ստեղծելու (ստորագծումը մերն է — Խ.) :

Այդ խոստովանութիւնը դեռ քիչ է. դա ցոյց է տալիս, որ Կառլցկին գիտեւոր անպայման շընորհք ունի, որ նրա ուղեղն այնքան էլ չէ զըտնրում մարքսիզմի հաստատելիքի (դոգմ) շղթաների ծանրութեան տակ։ Կառլցկին, իբր անկեղծ գիտնական, որ ճշմարտութիւն է որոնում, հետեւեալ տողերն է գրում նոյն յօդուածում։

«Առաջ ես սպասում էի, որ դասակարգային կռուի զօրանալը իրար կը մօտեցնէ զանազան ազ-

գերի բուրժուազիաների, բայց մինչեւ այժմ բոլորովին հակառակը տեղի ունեցաւ (ստորագծումը մերն է: — Խ.), քնդհանուր առմամբ մենք ասեմք, որ բուրժուական աշխարհն աւելի բաժանւում է»:

Թէ այդ յօդուածում Կ. Կաուցկին ինչպիսի երևույթ է համարում ազդութիւնը եւ ինչպիսի արտաքին նշաններ դնում նրա համար, — մենք արդէն տեսել ենք այս աշխատութեան նախընթաց գլուխներէն մէկում:

Այդ նոյն յօդուածներում նա միանգամայն համամտութիւն է ցոյց տալիս Աւստրիայի Սոց. Դեմոկրատիայի 1897 թուին Բրուքսնի համաժողովում ընդունուած ազդերի ֆեդերացիայի ծրագրին եւ, ինչպէս մենք մի այլ տեղ (*) ցոյց ենք տուել, նա ազգային սկզբունքն ու տերրիտորիական կամ երկրային սկզբունքն իրար հետ փորձում է հաշտեցնել, ոչնչացնելով «պատմական հայրենիքի» սնամէջ, յաճախ շուրիւստական ու վրնասակար ըմբռնումը եւ նրա տեղ դնելով ազգի (մանաւանդ լեզուի) իրական, ներկայ տարածման սահմաններն իրր ազգային-կուլտուրական ինքնավարութեան եւ ֆեդերացիայի հիմք:

Այդ յօդուածներում է որ նա, միանգամայն ժխտելով իր նախկին տեսակէտները, ազգային

(*) «Դեպի Ֆեդերացիա» — մայիլ «Ֆեդերացիա» գլուխը:

յառաջդիմութիւնը, ազգերի իրաւահաւասարութիւնը համարում է Conditio sine qua non— պայման՝ առանց որի ոչինչ էլ կարելի անել առողջ՝ դասակարգային ու սոցիալիստական ահաւոր մարտադաշտում :

«Ազգի ընդունորոյնութիւնը (անկախութիւնը) հանդիսանում է իբր բնական անհրաժեշտ նախապայման ամէն տեսակ ժամանակակից դասակարգային կռուի : Ժողովուրդը պիտի ազատ լինի ամէն կողմից, եւ միայն այդ ժամանակ պրոլետարիատը հնար կ'ունենայ դուրս գալու իր ընկերական հակառակորդի գէմ լիապէս ղինուած : Պրոլետարիատն իր բնական եւ ամենակողմանի զարգացման համար նոյնքան կարիք ունի իր ազգի անկախութեան, որքան եւ ընդհանուր ընտրողական իրաւունքի, ժողովների եւ մամուլի ազատութեան : Պրոլետարական միջազգայնութիւնն նշանակում է ոչ թէ ազգութեան ուրացում այլ ազգերի ազատութիւն եւ իրաւահաւասարութիւն» : (*)

Այսքան պարզ եւ ակներեւ արտայայտութիւնը դեռ բաւական չհամարելով, Կառուցկին 1905 թուին հրատարակեց իր յօդուածը «Ազգութիւնների հարցը Ռուսաստանում» վերնագրով : Այդ տեղ նա պնդում է նախնական մարքսիզմի համար

(*) Կ. Կառուցկի — «Ազգութիւնների կռիւը եւ պետական իրաւունքն Աւստրիայում» (ռուսերէն) — Երես 26

կատարեալ հերետիկոսական մի միտք. որքան մի հասարակութիւն դեմոկրատիանում է, այնքան նա աւելի ազգային է դառնում, որովհետեւ որքան աւելի թուով անհատներ ինքնագիտակցութեան են դալիս, այնքան աւելի նրանք ըմբռնում են իրենց ազգութիւնը: Թէ դեմոկրատիզմը (ռամկավարութիւնը) եւ թէ ազգային ոգու տարրացումը կապուած են կապիտալիզմի (գրամատիւրութեան) զարգացման հետ: Նա պնդում է, որ «ազգութեան բոլոր մասերի սերտ միացումը յառաջդիմում է, իբր լուսագոյն միջոց ազգային բոլոր ուժերն ամբողջապէս զարգացնելու համար»:

Ազգային ձգտումները համարելով արտաքին, առարկայական անհրաժեշտութիւն եւ յառաջդիմական երեւոյթ՝ Կաուցկին պնդում է որ ս. դեմոկրատիան «պարտաւոր է պաշտպանել այն ազգութիւնների պետական միացման եւ անկախութեան ձգտումը, որոնց մէջ նա ապրում եւ գործում է: Այդ մտքով նա (ս. դեմոկրատիան) պիտի լինի, հետեւաբար, նոյնչափ ազգային, որչափ եւ դեմոկրատիական»: (*)

Այդ յօդուածում էլ Կաուցկին ձգտում է միաւորել երկրային ինքնավարութիւնն ազգային ինքնավարութիւնների հետ եւ այդպիսի ազգ-երկրային ինքնավարութեանը հակադրել զուտ երկրա-

(*) «Ազգութիւնների հարցը Ռուսաստանում», հրատարակութիւն «Յառաջ»ի:

յին կամ չըջանական ինքնավարութիւնը, որը հանդիսանում է բուրժուազիի պահանջ մանր ազգութիւնների դրկում, որովհետեւ երկրային կամ չըջանային ինքնավարութիւնը տալիս է մի չարք առաւելութիւններ տիրող ազգութեան բուրժուազիին:

Վերջապէս չեմ կարող այստեղ առաջ չը բերել Կաուցկու նամակն, ուղղուած Եւրոպայի հայ ուսանողական միութեան, որն ուղում էր Թիւրքահայ դատի մասին մի ժողովածու հրատարակել սուլթան Համիտի օրով:

«Ես բոլոր հոգով համակրում եմ հայկական գործին, ասել էր յարգելի Ղիտնականը. եւ հայկական գործ կամ դատ ասելով՝ ես ըմբռնում եմ ոչ միայն հայերին պաշտպանելը քիւրճական եւ քրտական գազանութիւններից, այլ եւ նրանց ազգային անկախութեան վերականգնումը»:

Կաուցկու հայեցակէտն ազգութեան խնդրի մասին, սկսելով զուտ մարքսիստականից, հասաւ մինչեւ մանր ազգութիւնների անկախութեան, ներանց ինքնուրոյն եւ ինքնիշխան զարգացման եւ փեղերատիվ սկզբունքներով իրար միանալու, մի պետական խոշոր ամբողջութիւն կազմելու տեսակէտին:

Վերջապէս 1908 թուին Կաուցկին գրեց մի ընդարձակ յօդուած Neue Zeit շաբաթաթերթում, որով նա պարզարանում է իր վերջնական տեսակէտը եւ քննադատութեան ենթարկում Օտտո Բա-

ուէրի մեր յիշատակած նոյն թուին լոյս տեսած
զերքը, որ կազմում է մի խոշոր զիտական ար-
ժանիքով զործ, համարեա միակը համաշխար-
հային սոցիալիստական գրականութեան մէջ։
Այդտեղ նա աւելի եւս ամրապնդում է իր վերջին
տեսակէտներն ազգային հարցին մասին։

Կաուցկու մէջ կատարուած բարեշրջումին
այդ խնդրի առիթով անմասը չմնաց Լիբկնեխտը,
որի կարծիքը, արտայայտուած Մարտէյլում 1892
թուին, մենք արդէն առաջ բերինք նախընթաց
գլխում։ Նա ճանաչում էր լոկ երկու ազգ՝ պրո-
լետարներ եւ բուրժուաներ։ Իսկ 7 տարի անցած,
Համբուրկի համաժողովում, ուր հաւաքուել էին
գերմանական ու դեմոկրատիայի բոլոր մտաւոր
տարրերը, այդ բոլորի որոտագին ծափահարու-
թիւնների ու բրաւօների տակ, նա հանդիսաւոր
կերպով հետեւեալ միտքն արտայայտեց․

«Լեհերի անկախութիւնն ձեռք բերելու ճիշդ-
տումը մենք համարում ենք նոյնքան արդարացի,
որքան եւ ուրիշ որեւէ ազգի նոյնանման ձգտու-
մը»։

Ուրեմն՝ երկու ազգ չկայ աշխարհում, այլ
բազմաթիւ ազգեր, որոնցից շատերն անկախ են,
շատերն էլ տիրուած, ճնշուած։ Վերջիններից որն
էլ որ ձգտի անկախութեան, սոց. դեմոկրատիան
պիտի համարէ դա մի արդարացի ձգտում եւ, հե-
տեւաբար, իր համակրանքը պիտի լինի նրա կող-
մը։

Թէ ինչո՞ւ Լիբերալները եւ նրա խմբադրած Vorwärts-ը դէմ էին Բանկ-Օտտոմանի դէպքերին եւ առհասարակ թշնամական տրամադրութիւն էին ցոյց տալիս դէպի թիւրքահայ շարժումը, դրա արմատը որոնելու է այլ տեղ: Լիբերալներն իբրեւ Մարքսի մտերիմը եւ նրա ժամանակակիցը, տեսել է Ռուսիայի դերը 1848-ին Կօչուտի ապստամբութեան պահուն, տեսել է նրա Էմսըիզները Բոլզարական գործերում. զգացել էր կողակային միահեծանութեան ժանդարմական դերը Գերմանիայի եւ, առհասարակ, ամբողջ Եւրոպայի վերաբերմամբ: Այդ պատճառով էլ Լիբերալները թիւրքիայում, հայերի կողմից արած ամէն մի բողոք համարում էր «Ռուսական բուրլին չրջանառութեան մէջ», ինչպէս նա գրել էր 1896 թուին Բանկ-Օտտոմանի դէպքի առիթով:

Սակայն Vorwärts-ի գիմաց կանգնած էր Neue Zeit-ը որ միշտ հանդիսանում էր պաշտպան թիւրքական լծի տակ հեծող բոլոր մանր ազգութիւնների, մանաւանդ հայերի: Նա տպում էր թէ հայ գրողների յօդուածները թիւրքահայ դատի մասին եւ թէ իր գլխաւոր սիւնը կազմող (ի հարկէ այն ժամանակը) Էդուարդ Բերնշտայնի յօդուածները, որոնք մերկացնում էին թիւրք կառավարութեան այլանդակութիւնները:

Լիբերալտից յետոյ, բնականաբար մեզ պիտի հետաքրքրէր Բերեւի կարծիքը: Այստեղ մենք աւելի քիչ կանգ կ'առնենք: Հայրենիքի պաշտպա-

նութեան խնդրի առիթով նրան նոյն իսկ շովինիզմի մէջ մեղադրեցին, որովհետեւ նա էլ, Ժօրէսի նման, դէմ լինելով ամէն տեսակ իմպերիալիստական (տիրապետող) քաղաքականութեան, յայտարարեց գերմանական Բայխստագում, որ եթէ թշնամին յարձակուի Գերմանիայի վրայ, սօց. դեմոկրատներն, իբր հաւատարիմ զաւակներ հայրենիքի, զէնքը ձեռքերնին դուրս կը դան թըշնամիների դէմ եւ ցոյց կը տան, թէ ով է աւելի մոլեռանդ պաշտպան հայրենիքի: «Ապրել եւ քողնել ուրիշներին էլ ապրելու», ահա մեծ ըսկզբունքը: Չգրաւել ոչ ոքի երկիրը, չբռնադատել ոչ ոքի ազգութիւնը, բայց խրոխտաբար չթոյլատրել նաեւ ոչ ոքի իր ազգութիւնը ոտնահարելու, իր երկրին տիրանալու. կռուել հալածուող ազգի եւ հայրենիքի համար:

«Ամէն մի ազգ, ասաց Բեքելը 1905 թուին, որ ունի իր սեփական լեզուն, իր սեփական քարքը, իր սեփական քաղաքականութիւնը եւ իր պատմութիւնը, իրաւունք ունի ինքնուրոյնաբար զարգանալու՝ իբր մի օրգանական ամբողջութիւն»:

Իսկ մենք արդէն դիտենք, որ ազգ կոչուում է մարդկանց այն մեծ խմբակցութիւնը, որ ունի Բեքելի յիշած այդ բոլոր պարագաները-ե՛ւ սեփական լեզու, ե՛ւ սեփական բարքեր ու ազգային բնաւորութիւն:

Դեռ 1897-ին, Vorwärts-ի N 54-ի մէջ մարտի 5-ին նոյն Բեքելը գրում էր.

«Եթէ մենք տեսնում ենք, որ ժողովրդները կառավարում են հակառակ իրենց կամքի, մեր պարտքն է կանգնել նրանց կողմը, որոնք ցանկութիւն են արտայայտում ազատուելու օտար լրծից»:

Այո՛, մի անգամ արդէն մի ազգ, մի ժողովուրդ գիտակցում է իր լծի ծանրութիւնը եւ ցանկանում է ազգային ազատագրութիւն, — ամէն մի անկեղծ գործչի, ամէն մի սոցիալիստի տարրական պարտքն է կանգնել մարտնչողին պաշտպան, օգնել նրան ազատագրելու:

Մի ուրիշ անգամ Բեռլինը յայտնել է հետեւեալ կաթճիքը, որ համարեա՛ Քառացի նմանութիւն է բերում Կառլսկրու վերջին շրջանի կարծիքին.

«Քանի որ ազգը ճնշուած է, դասակարգային հակասութիւնները եւ դասակարգային կռիւր չեն կարող լիապէս պարզ արտայայտութիւն ստանալ»:

Վերջապէս 1907 թուի Շտուտգարտի միջազգային սոցիալիստական կոնգրէսում «ազգային»ի եւ «միջազգային»ի իրար հետ ունեցած յարաբերութիւնը պարզելու պարապմունքները զեռ չըսկսած, Բեռլինը մի յօդուած գրեց «Schwabische Tagwacht» թերթի 1907 թ, օգոստոսի 17-ի համարում, որը Ն. Հայդարովի վկայութեամբ, ծառայեց իրր ձայնաչափ (կամբրսոն) կոնգրէի ամբողջ զրադմունքներին՝ այդ հարցի վերաբեր-

մամբ: Յօդուածի վերնագիրն է «Sind national und international gegensätze»? («Հակադիր են արդեօք ազգայինն ու միջազգայինը»)

«Բոլոր կուլտուրական երկրների քանութիւնը անսակարգի խնդիրը միաժամանակ ազգային եւ միջազգային է, — ասում է Բերելն այդ յօդուածում: Սեփական ազգի, մայրենի երկրի աւելինեղ սահմաններում մարտնչելով կեանքի մէջ իրագործելու համար այն միջոցները եւ հիմնարկութիւնները, որոնք քանութիւններին հնարաւորութիւն են տալիս բարելաւելու իրենց կենսական վիճակը, բաւարարելու իրենց աւելի բարձր կուլտուրական կարիքները եւ, վերջապէս, ձեռք բերելու բոլորի համար իրաւական եւ սոցիալական հաւասարութիւն, — նրանք պարտական են աշխատել եւ իրականացնել նաեւ միջազգային ասպարէզում նոյն ձգտումները, որովհետեւ միայն այդ ուղիով կարելի է ապահովել բարելաւումների հաստատումն իր սեփական հայրենիքում: Այսպիսով ազգայինը եւ միջազգայինն ամենեւին իրար ջնջող հասկացողութիւններ եւ ձգտումներ չեն. ընդհակառակը, — նրանք իրար լրացնում են: Ինչպէս որ իր սեփական ժողովրդի սահմաններում բոլոր ցեղակիցների իսկական բարեկեցութիւնը կախուած է նրանից, թէ արդեօք ամէն մի անհատ լաւ է ապրում, այնպէս էլ ազգերի մեծ ընտանիքում մի ժողովրդի բարիքը կախուած է միւս բոլորի բարիքից»: (*)

(*) Տես «Սերպ»ի երկրորդ ժողովածուն — էրես 242-43

Երկու բացատրութիւն տալ այդ բառերին անկարելի է : Սա առողջ ազգայնութիւնն ու միջազգայնութիւնն է : Չկայ նրանում ոչ լիբերալիզմի , ոչ էլ Մարքսի անմարմին աշխարհաքաղաքացիութիւնը :

1905 թուին Լիւտիւն քաղաքում տեղի ունեցաւ հանքային բանուորների միջազգային կոնգրէ , որի նիստերից մէկում Գերմանական բաշխատաղի անդամ սոց . դեմոկրատ Հիւէն ի միջի այլոց հետեւեալն ասաց .

«Մեզանից ամէն մէկը պարծենում է իր հայրենիքով , մեզանից ոչ ոք չէ հրաժարում իր հայրենիքից , միայն մենք չենք ուզում գոռոզաբար նսնել մեր գէնքերը , այլ ձգտում ենք ազգերի բազմազան հնչիւններից ստեղծել մի ներդաշնակ միջազգային համերաշխ եղանակ» :

Հողային հարցի վերաբերմամբ իր խոր ուսումնասիրութիւններով ամէնքին յայտնի երիտասարդ սոցիալիստ գիտնական Էդուարդ Դաւիդը , մեզ հետաքրքրող հարցի մասին հետեւեալ միանգամայն թարմ տեսակէտն է յայտնում «Neue Gesellschaft» ամսագրի 1903 կամ 1904 թրւի համարներից մէկում :

«Միայն նա , ով այն կարծիքի է , որ ազգային կազմակերպութիւնները ոչ այլ ինչ են եթէ ոչ հնացած հիմնարկութիւններ , որոնց նոյն իսկ գոյութիւնը ոչնչով չէ արդարանում ,— միայն այդպիսի մարդը կարող է անտարբեր կերպով վերա-

բերուիլ զէպի ազգային զգացմունքի անկումը : Այո՛, նա կ'ողջունէ այդ անկումը, իբր կրկին մի այլ մօտեցում զէպի իր *խղճալը*, զէպի մարդկութեան միազան ու միապաղաղ զանգուածը : Ինչ վերաբերում է *սոց. դեմոկրատիային*՝ չը նայելով նրա խաղաղ փաղափացիութեան *խղճալներ*ի ամբողջ լայնարձակութեանը, չէ կանգնած այդ տեսակէտի վրայ . դրան իբր ապացոյց ծառայում են նրա եռանդուն բողոքներն ընդդէմ խռոք ժողովրդների ամէն մի ճնշումի մանր ազգերի վերաբերմամբ :

ձնշուած ազգերն, ուր էլ որ մարտնչեն իրենց փաղափական ինքնուրոյնութիւնը ձեռք բերելու համար,— լինի Լեհաստանում, Ֆինլանդիայում, Հայաստանում, Հարաւային Աֆրիկայում կամ Ֆիլիպեան կղզիներում, *սոց. դեմոկրատիայի* համակրութիւնը միշտ եղել է եւ կը մնայ մարտնչողների կողմը :

«Առանձին ազգութիւնների անհատական ինքնատիպ կեանքը մեզ հանդիսանում է նոյնքան ոչաննշան որքան մենք չէինք ցանկանայ տեսնել ջնջուած անհատականութիւնը եւ *սուրբկտիւ* (ներաշխարհային) առանձնայատկութիւններն ամէն մի առանձին մարդու : Այո՛, մենք այն կարծիքի ենք, որ ինչպէս *սոցիալիզմի* նպատակը հանդիսանում է ամէն մի առանձին մարդու անհատական կեանքի ազատումը *կապիտալիստական* կազմի անբարոյականցնող ազդեցութիւնից ու ճնշումից,

այնպէս էլ նա (սոցիալիզմը) կոչուած է ցոյց տալու ազգութիւններին իսկական ազատութեան եւ մեծութեան ուղին» :

Անկեղծ ու մաքուր է հնչում երիտասարդ գիտնական սոցիալիստի ձայնը : Նա բանուորական կամ աւելի շուտ, աշխատաւորական ազգայնութեան եւ միջազգայնութեան քաղցր մեղեդին է : Այլեւս չկայ Մարքսի թոյնը դէպի մանր ազդերը, նրա քէնը դէպի 12 միլիոնից պակաս ժողովրդները : Չկայ նոյնպէս Կառուկու ցանկութիւնը — ինչ կ'ուզէ լինի, փրկել ուսուցիչներէ վարդապետութեան դէթ արտաքին կեղեւը, ամէն կերպ ջանք դործ դնել, մի կերպ, բռնազբօսիկ բացաւրութիւններով, նոր համոզումները սաղացնել հին, մեռնելու դատապարտուած միակողմանի տեսութեանը : Սոցիալիստի համակրութիւնը ճշնշուած ազգերի կողմն է : Ազգութիւնների եսը, նրանց ինքնատիպութիւնը սոցիալիստի համար նոյնքան թանկ է, որքան եւ անհատների ինքնուրոյնութիւնն ու ինքնատիպ զարգացումը : Ամէն մի ազգ, — լինի նա 400 միլիոն, թէ կէս միլիոն, — պիտի ունենայ իր ուրոյն զարգացումը, որպէսզի համամարդկային քաղաքակրթութիւնը բազկացած լինի բազմազան տարրերից : Եթէ բոլոր ազգութիւնները ձուլուէին մի ազգութեան մէջ, բոլորը դառնային մի հօտ եւ մի հովիւ, ունենային մի լեզու, մի գրականութիւն, մի միապաշաղ կուլտուրա, — զգուշի կը լինէր աշխար-

հը. ձանձրոյթից կը մեռնէին մարդիկ այդ միօ-
րինակ սպանիչ միջավայրում :

Վաղո՛ւց արուած համեմատութիւն է, որ
մարդկութիւնը մի հսկայական փունջի է նման,
որը եթէ բազկացած լինէր նման գոյն ու հոտ ու-
նեցող ծաղիկներէց, թէեւ բոլորն էլ հրաշալի տե-
սակից, — ձանձրալի կը լինէր : Իսկ եթէ այդ հըս-
կայական փնջի ամէն մի ծաղիկն ունենար իր սե-
փական ինքնատիպ գոյնն ու հոտը, փունջը կը
լինէր էապէս զմայլելի, հարուստ ու դրաւիչ :
Ձանձրութիւնը հեռու կը լինէր նրանից հոտ քա-
շողից :

Դեռ մի կողմ թողնենք ձանձրոյթը. այդ միօ-
րինակութիւնը բոլորովին կ'ըսպանէր առաջ դը-
նալու, չարժուելու ճգտումը : Դրան յար եւ նման
է իմացականութեան փրլիսոփայական խնդիրը,
որի առիթով Գիւլյօն ասում է. «Դիւէք լիակատար
միութիւն կամ իրար լիապէս նման դարձե՛ք ի-
մացականութիւնները, եւ դրանով դուք կ'ո-
չընչացնէ՛ք հենց իմացականութիւնը : Ձեւեցէ՛ք
բոլոր մտքերը միեւնոյն ձեւով, տուէ՛ք բոլոր
մարդկանց միեւնոյն հաւատալիքները, միեւնոյն
կրօնը, միեւնոյն մեծաֆիղիքը (քնազանցու-
թիւն), մի քելի վրայ շարեցէ՛ք մարդկային մտա-
ծութիւնները, եւ այն ժամանակ դուք քայլած կը
լինէ՛ք ուղղակի յառաջդիմութեան էական ձգտման
դէմ», այսինքն պիտի սպանէ՛ք առաջդիմութիւնն
իսկ...

Անհրաժեշտ եւ բարերար է բազմազգութիւնը մարդկութեան մէջ. բազմազանութիւն անհատից անհատ, ազգից ազգ, մայր ցամաքից մայր ցամաք: Դա կը լինի մարդկութեան, այդ վերացական ամբողջութեան հսկայական հարստութեան աղբիւրը:

Ուշադրաւ երեւոյթ է, որ էդ. Դաւիդն իր համակրելի կարծիքներն ասում է, առանց հոգ տանելու հաւատալիքի հիմքի՝ տնտեսական կեանքի կենտրոնացման մասին: Նրա կարծիքով այդ կենտրոնացումը ոչ միայն դեռ չէ կատարուել հողային հարցում, այլ եւ այնտեղ նա միանգամայն անհնար է: Վերջապէս՝ ճշմարտութիւն որոնողի համար ոչ մի նշանակութիւն չունի, թէ ինչ է ասում հաւատալիքը, ասենք նոյն իսկ Քէօքիմ. նա հետեւում է կեանքի ու փորձի տուած ճշմարտութիւններին:

Այդպիսի քաղուածներով մենք կարող էինք զարդարել հարիւրաւոր երեսներ եւս, բայց առաջ բերածն էլ բաւական է ցոյց տալու համար, որ հին հաւատալիքը խախտուել, փլել է, այլեւս չկայ Եւրոպական սոցիալիստների եւ նոյն իսկ ս. դեմոկրատների համար:

Սակայն մինչեւ այժմ մեր առաջ բերած կարծիքները ցոյց էին տալիս, որ աշակերտները համաձայն չեն ուսուցիչների տրամադրութիւնների, կարծիքների ու վերաբերմունքի հետ դէպի մանր ազգերը ու առհասարակ դէպի ազգային խնդիրը:

Բայց թէ ազգութեան տնտեսական ծագումը, օրինակ, Կառուցկին մասամբ աշխատել է ընդունում է: Մեր կարծիքով՝ այդ ծագումը Բէալիստական է, բացատրելի ու ըմբռնելի գրական գիտութեան տեսակէտից, բայց ամէնեւին ոչ տնտեսական ազգակից միայն սերուած: Բէալիստական է ոչ այն տեսակէտով, որ նա արգիւնքն է լոկ տնտեսական ազգակներէ, ամենեւին, այլ այն տեսակէտով, որ ազգութեան ծագման մէջ չկայ ոչինչ անբացատրելի, «ի սկզբանէ անտի», գերբնական ու անվախճան: Ազգութիւնը մարդկային ցեղի գոյութեան ձեւն է, որ յարաւորութիւն ու յարաշարժ է:

Մարքսիստներից նոյնիսկ նրանք, որոնք այնպէս խելացիօրէն են ըմբռնում պրոլետարական նացիոնալիզմը, յաճախ ազգութեան ծագումը եւ ազգային շարժումները բացատրում են տնտեսական գրգռապատճառներով կամ Մարքսիստական քէոքիայով: Սակայն աստիճանաբար սկսում են ձեռնամուխ լինել եւ այդ «արմատներին», ցնցել ուսուցիչի կառուցած միաձոյլ շէնքը. փորձել նրա տեսական արժէքը: Այսպիսի փորձ անողներից մէկն է աւստրիական ս. դեմոկրատ եւ հրապարակախօս մտածող Էնգէլերի դէրներստեօրֆէրը: «Socialistische Monathsefte» ամսագրում գետեղած իր մի լուրջ ուսումնասիրութեան մէջ, նա հետեւեալ բացատրութիւնն է տալիս.

«Ազգութիւնն իր զարգացման բարձրագոյն օճով մի իտէալական բարիք է: Ազգութիւնն իր զարգացման բարձրագոյն շրջանում, նշանակում

է մարդկային *կուլտուրա*ն իր ինքնատիպ, չափագանց ինքնուրոյն եւ միայն մի անգամ հանդիպող անհատական արտայայտութիւնով: Նա նշանակում է մարդկութեան հարստացում նրա *կուլտուրա*կան զարգացման արտայայտութեան մի առանձնայատուկ ձեւով:

*Սոցիալիստներ*ի նպատակն է՝ տալ *սլոուէ-տարիատի*ն հնարաւորութիւն օգտուելու այդ *կուլտուրայի* բարիքներից: Մենք ոգեւորուած ենք ցանկութիւնով աշխատելու ոչ միայն նրա համար որ մարդիկ մարդավարի ապրեն, սնունդ առնեն, հագնուեն, եւ այլն, այլ այն նպատակով, որ բանուորներն օգտուեն հազարաւոր տարիներով կուտակուած *կուլտուրայով*, ու նրանք դառնան մարդ այդ բառի լուսագոյն մտքով, որ նրանք իրենք ընդունակ լինեն շարժել եւ ստեղծել *կուլտուրա*: Սակայն ամէն մի *կուլտուրա* ազգային սեփականութիւն է: Նա իր բովանդակութիւնը ձեռք է բերում ժողովրդի առանձնայատկութիւններից եւ իր զարգացման բարձրագոյն ձեւերում եւ պէտք է ասել՝ նա մանաւանդ դրանցում, — կրում է անպայման ազգային բնոյթ... Այսպիսով *սոցիալիզմ*ն ու ազգային գաղափարն ամենեւին հակադիր չեն, այլ ընդհակառակը՝ իրար փոխադարձաբար լրացնում են: Ազգային գաղափարը խեղդելու ամէն մի փորձ, յաջողելու դէպքում, կը բերէ իր ետեւից մարդկային ցեղին ոգեկան հարստութեան նուազում... *Սոցիալիզմ*ը ձգտում

է կազմակերպել մարդկութիւնը եւ ոչ նրան բա-
ժանել *աստիճաններ* :

Ամբողջ մարդկութեան *օրդանիզմ*ի մէջ բջիջ-
ների դերը կատարում են ոչ թէ անհատներն այլ
ագգերը : Որպէսզի *օրդանիզմ*ն առողջ լինի , պէտք
է առողջ լինեն վանդակիկները կամ բջիջները» :

Ուսուցիչի մատերիալիզմը *միանգամայն մի*
կողմ թողնելով , *նա հետեւեալ բացատրութիւնն*
է տալիս .

«Ագգութիւնները չեն կարող բացատրուել
այնպէս , ինչպէս , օրինակ , մեր կեանքի *սոցիա-*
լիստական կազմը — տնտեսական պատճառներով .
նրանք մարդկութեան արտայայտութեան ձեւերն
են , որոնց հիմքերը մենք պիտի որոնենք որոշ
ցեղական խառնուրդներում . աշխարհագրական եւ
կլիմայական պայմաններում եւ համապատմական
հանգամանքներում» :

Այս բացատրութիւնը տնտեսական մատերիա-
լիզմի տուած պարզամիտ բացատրութիւնը չէ :
Նա ի նկատի է ունեցել ցեղերի խառնուածքները ,
կամ կուտակուած ժառանգական յատկութիւննե-
րը , որ կազմում են ազդութեան զարգացման ներ-
աշխարհային (սուքեկտիվ) տարրը . ե՛ւ կլիման
ե՛ւ աշխարհազրութիւնը , ե՛ւ պատմական բազմա-
զան ու բազմապիսի հանգամանքները :

Բերուած վկայութիւններն արդէն բաւական
են ապացուցանելու , որ «աշակերտները» դուրս
են եկել ուսուցիչների զծած միակողմանի թէո-

րիայից եւ ընկել են ճշմարիտ զիտական ուղին : Այլեւս աւելորդ է առաջ բերել Վանդէրվէլզի , Օտտօ Բաուէրի , Դաշինկսկու , Ազլէրի , Իտալական սոցիալիստներին , Ժօրէսի եւ ուրիշներու կարծիքները , որոնք կամ մօտենում են Կառուցկու կամ Պերներստեօրֆերի տեսակէտին :

Անցնենք այժմ կուսակցութիւնների եւ կազմակերպութիւնների տեսակէտներին :

Կուսակցութիւնների եւ կազմակերպութիւնների մէջ ամենից առաջ մեր աչքին պիտի ընկնէր այն հակասութիւնը , որ գոյութիւն ունէր Կ. Մարքսի եւ ինտերնացիոնալի տեսակէտների միջեւ : Դեռ եւս 1868 թուին կուսակցութեան կենտրոնական օրդան Vorbote ամսագիրը գրում էր .

«Միջազգային բանուորական շարժումն ամէն տեղ ունի իբր իր նախապայման՝ ազգային ազատ եւ ամբողջական զարգացումը» : — «Մինչեւ անգամ ամենամանրիկ ազգութեան համար պէտք է ապահովել ընդ միշտ նրա ազատ եւ ինքնուրոյն գոյութիւնը» :

Մարքսի եւ այս տեսակէտների մէջ հակադրութիւնն ակնհերեւ է : Մարքսը համարում է մանր ազդութիւնները մեռնելու դատապարտուած երեւոյթներ , իսկ նոր ինտերնացիոնալը պարտականութիւն է դնում նոյն իսկ ամենամանր ազգերի համար ընդ միշտ ապահովել ազատ եւ ինքնուրոյն զարգացում : Ինչո՞ւ : Որովհետեւ ինտերնացիոնալը համոզուած է , որ ոչ մի բանուորական կամ

դասակարգային շարժում չէ կարող տեղի ունենալ առողջ կերպով, առանց ազգի ազատ եւ ամբողջական զարգացման: Ինտերնացիոնալը, ինչպէս եւ յետոյ Կաուցկին, ազգի բազմակողմանի զարգացումն ու ինքնուրոյնութիւնը դնում են իրր նախապայման առողջ ու խկական դասակարգային կռուի:

Եւ ինչպէս, ի՞նչ դասակարգային կռիւ կարող է տեղի ունենալ այնտեղ, ուր, օրինակ, բռնակալութիւնը հալածում է մի տիրուած ազգի լեզուն, դպրոցը, թատրոնը, մամուլը եւ գրականութիւնը... Այդ բոլոր հիմնարկութիւնները յատուկ չեն այս կամ այն դասակարգին. նրանք սեփական են բոլոր դասակարգերին այս կամ այն չափով: Ազգի գրկում գոյութիւն ունեցող բոլոր դասակարգերն էլ շահագրգռուած են նրանց պաշտպանութեան խնդրով: Բայց բռնութիւնը կայ եւ բոլոր դասակարգերն էլ, ունենալով հանդերձ տնտեսական հակադիր շահեր, բռնութեան գոյութեան ամբողջ ընթացքում բողոքում, ապստամբում եւ արին են թափում իրենց բռնարարուած ազգային իրաւունքների պաշտպանութեան համար: Օ՛ր, ոչ մի աւագան մարդկանց այնպէս չէ միաւորում, այնպէս չէ մտերմացնում իրար հետ, որքան տանջանքի ու արեան աւազանը: Հարցրէ՛ք միասին բանտերում տառապողներին. հարցրէ՛ք կռուի դաշտում կողք կողքի կռուած ընկերներին, եւ նրանք ձեզ

կ'ասեն, որ նոյն իսկ երկու իրար բոլորովին հակառակ տիպարներ հոգեկից եղբայր են դառնում միատեղ քաչաժ տառապանքների, տանջանքակցութեան պատճառով:

Աղգութեան բոլոր դասակարգերը, յաճախ բոլոր խելահաս ու գէնքի ընդունակ անհատները միանում, ընդհանուր թշնամուն գիմադրում են մէկ, երկու տարի, թերեւ տասնեակ տարիներ: Ու այնուհետեւ եկ ու այդ աղջի բանուորութիւնից պահանջիր, որ զգայ իր դասակարգային ուրոյն գոյութիւնը, զգայ, ու իր եւ իր հետ երէկ միասին արիւն թափող, գոնէ միատեղ կռուող ու բողոքող բուրժուայի շահերն զէմ են, իրար հակադիր: Նա այդ երբեք չէ կարող զիտակցել, մինչեւ որ չվերջանայ բոլոր դասակարգերի միահամուռ կռիւն ընդդէմ օտար լծի, այսինքն՝ մինչեւ որ նախապայմանը չիրականանայ, — ազգային հարցը վերջնականապէս չլուծուի, ազգը չստանայ ինքնուրոյն զարգացման ազատ իրաւունք:

Դրանով պիտի բացատրել լեհական պրոլետարիատի կազմակերպութեան համեմատական թուլութիւնը եւ նրա անդամների ոչ միայն խիստ ազգային, այլեւ թթու շովինիստական ոգի ունենալը: Դրանով պիտի բացատրել, որ Կովկասում, մանաւանդ հայերի մէջ, երկա՛ր ժամանակ դասակարգային, զուտ սոցիալիստական կռիւը դանդաղում է, թէեւ ի հարկէ կայ նաեւ իսկական

պրալետարիատի, գործարանական բանուորութեան չափազանց աննշան ու թոյլ գոյութիւնը: Վերջապէս գրանով պէտք է բացատրել, որ թիւրքիայում, զոնէ իրապէս գոյութիւն ունեցած արհեստավորական ու վիւղացիական բանուորութեան չափով, գոյութիւն չունեցաւ մինչեւ օրս բանուորական կազմակերպութիւն կամ որեւէ դասակարգային գործունէութիւն: Նախ պէտք է հաստատել իրաւապետութիւն, վերացնել ազգային հալածանքը տիրողներէ կողմից ուղղուած դէպի տիրութեանը, վերացնել ջարդերի հաւանականութիւնը և այնուհետեւ միայն որեւէ հնար ունենալ կազմակերպուելու իբր գուտ դասակարգային կռիւ, համաձայն երկրում գոյութիւն ունեցող տնտեսական ու դասակարգային զարգացման աստիճանի:

«Բանուորական հարցը, հենց այն պատճառով, որ գտնուում է ամբողջ աշխարհի տնտեսական յարաբերութիւնների հետ սերտ կապակցութեան մէջ, չէ կարող լինել տեղական կամ ազգային հարց, այլ պիտի լինի միջազգային»: — «Որովհետեւ նոյնիսկ ամենահզօր մի պետութիւն չէ կարող իր սեփական միջոցներով վերաստեղծել *սոցիալական* յարաբերութիւնները, դնել նրանց իբր հիմք բանուորական ոյժը, փոխանակ դրամի իշխանութեան. այդ պատճառով էլ չէ կարող լինել ազգային *սոցիալիզմ*, այլ կայ միայն միջազգային *սոցիալիզմ*, որի հիմնական սկզբունքն, ի

հարկէ, պարունակում է իր մէջ ազգերի եղբայրութիւն եւ խաղաղութիւն» : (*)

Ինտերնացիոնալի զերմանական լեզուով խօսող ժողովրդներէ կենտրոնական այդ օրդանն իր երկրորդ համարում հետեւեալն է աւելացնում այդ «ազգերի եղբայրութեան ու խաղաղութեան» վրայ .

«Ամէն մի ազգ պէտք է իր տանը մաքրէ իր օջախը, այսինքն ամէնից առաջ վնաս իր ազգային խնդիրը, որը կայանում է ներսում քաղաքական ազատութիւնից եւ ազգային ինքնուրոյնութիւնից դրսում» : (**)

Բայց ինչո՞վ ապահովել ազգերի համերաշխ եղբայրութիւնը : Միայն ու միայն վերջնականապէս լուծելով ազգային խնդիրը հետեւեալ ոգով .

«Որպէսզի ամբողջութեան (մարդկութեան) շարժումը չդանդաղի եւ կանգ չառնէ, այլ ընդհակառակը գտնուի գրգռիչ եւ ուժեղացնող մըրցակցութեան ազդեցութեան տակ, անհրաժեշտ է որ այդ ամբողջութեան ամէն մի անդամը (առանձին ժողովուրդը) լի լինի եռանդով և առողջութիւնով : Եւ որովհետեւ այդ անդամը լուրջ մարմնաւոր էակ չէ, այլ եւ ոգեկան-բարոյական այդ պատմառով նա հնար պիտի ունենայ պաշտպանելու իր պատիւը եւ արժանապատուութիւնը, իր

(*) Der Vorbote, 1866/7. N 1, Genf.

(**) Նոյն — 1866 թ. N2, էրես 170.

նշանակութիւնն ու ազդեցութիւնը»(N2) : «Ժողովրդների դաշնակցութիւնն է հաւասար իրաւատէր անդամների միութիւնը, մի *Փեղերացի* հաւասարապէս ազատ խմբակցութիւնների : Ոչ մի ազգ չպիտի ունենայ ուրիշ ոչ մի առանձնաշնորհ, բացի նրանից, որ նա ձեռք բերած կը լինի իր գիտութեան եւ գործունէութեան, իր մտաւոր եւ նիւթական աշխատանքի շնորհով համաշխարհային *կուլտուրայի* ստեղծագործութեան ասպարէզում» : (*)

Նոյն յօդուածի շարունակութեան մէջ ասուած է. «Աւէն մի ազգութիւն, ինչպէս օրգանական բաղադրիչ մաս մարդկութեան մեծ ընտանիքի, իր բնաւորութեան, իր բնութանակութիւնների եւ իր երկրի բնական արտադրութիւնների համեմատ, պարտաւոր է իր համապատասխան բաժինը ներմուծել ընդհանուր *կուլտուրայի* մէջ» : Եւ «Բանուորների Միջազգային Միութեան» նպատակն էլ հենց նրանումն է կայանում, որ «*լինի միջնորդ* ժողովրդների ոգեկան, բարոյական եւ մարմնաւոր կարիքների եւ նրանց ներդաշնակութեան մէջ դնէ» : (**)

(*) Նոյն տեղ 1688 «Zur Erklärung unserer Aufgabe» *յօդուածում*.

(**) Թէ այս եւ քէ միւս բոլոր *ցիտառները* Vorboteից առաջ եւ բերել Զումբարտը, Ժիտովսկին, Պասմանիկը, Պոսսէն եւ ուրիշները :

Հետաքրքրական է, որ Ինտերնացիոնալի ղեկավարները լիապէս ըմբռնում էին, որ կոսմոպոլիտիզմն արդիւնք է լիբերալ – բուրժուազիայի, որն «իր կոսմոպոլիտական դիպլոմը ձեռք է բերում համաշխարհային շուկայում» (1866թ–N2), իսկ շովինիստական նացիոնալիզմը նրանք համարում էին մեռնող դասակարգերի — հոգեւորականութեան և ազնուական ընկերութեան ծնունդ:

1871 թուին նոյն Vorbote գրում էր. «Մենք կ'օգնենք միմիայն այն ազգային ձգտումներին, որոնց նպատակն է բոլորի լիակատար ազատութիւնը, ինֆնուրոյնութիւնը և իրաւահաւասարութիւնը, որպէսզի հնարաւոր լինի ամէն մի ժողովրդի մտցնել, իբր մարդկութեան իրաւահաւասար օրգանական անդամ, ընդհանուր ազատ ֆեդերացիայի մէջ»:

Մեզ, յատկապէս հայերիս համար մի շատ հերթական ու կարեւոր հարցի է պատասխանում ինտերնացիոնալի գերմաներէն խօսող ժողովրդների կենտրոնական կոմիտէն իր մի ղեկուցադրում որ ներկայացրել էր 1869 թուին Այդենախում կայացած ս. դեմոկրատիական համագումարին և ուրը տպուած է Vorbote-ի նոյն թուի N.7-ում: Այդ ղեկուցադրում կենտրոնական կոմիտէն չօչափում է այն հարցը, թէ արդեօք իր իրաւասութիւնները սահմանափակուած են մի պետութեան սահմաններով, թէ ոչ. և վճռում է. «Որեւէ ազգութեան կենտրոնական վարչութեան

գործունեութեան շրջանը չէ սահմանափակում որեւէ պետութեան շրջանով, այլ եւ տարածում է միւս պետութիւնների վրայ, համաձայն տըրւած լեզուի գործածութեան» : Բանուորական գերմանական ընդհանուր միութիւնը Նիւ-Եորկում եւ Սան-Քրանցիսկոյի բաժանմունքն, ասում է Ժիտլօյսկին, ենթարկում էին Ժընեւի կենտրոնական կոմիտէին :

Այդ հարցը մեզ, հայերիս համար յատկապէս կարեւոր է, որովհետեւ կարծես ընկնում են, պատմութեան բաժին դառնում ասիական բռնապետութիւնները թէ Պարսկաստանում եւ թէ Թիւրքիայում : Սկսուած սահմանադրական շարժումները, որքան էլ րէակսիոնը գլուխ բարձրացրնէ, չեն կարող այլեւս խեղդուել : Նրանք, զանազան ելեւէջներով, առաջ կը գնան եւ մօտ ապագայում իրաւակարգն այնքան կը հաստատուի այդ երկրներում, որ մամուլի եւ ժողովների գէթ մասնակի, որոշ չափի ազատութիւն գոյութիւն կ'ունենայ : Իհարկէ մենք ամենեւին այն լրագրական կարծիքին չենք, որ Թիւրքիան համիդական րեժիմից իսկոյն կ'անցնի կանոնաւոր պարլամենտարիզմի ու իրաւապետութեան : Երբեք : Հասարակական հարցերն այդպէս միակողմանիօրէն չեն զարգանում : Նրանց զարգացման մէջ անպայման գոյութիւն ունի խիստ ու համաչափ ներդաշնակութիւն : Անհնար է ենթադրել Թիւրքիայում կանոնաւոր իրաւապետութիւն տնտեսական, կուլ-

տութեան աղբիւրն ստոր վիճակում: Անհնար է
երեւակայել զուտ Եւրոպական վարչութիւն՝ առանց
երկաթուղիների ցանցի, առանց տնտեսական
որոշ բարդաւածման, առանց քիւրտերի, չերքեզների
եւ այլ վաչկատուն ցեղերի նստակեցութեան
եւն եւն: Երբ այժմ կարգում եմ կովկասեան
ու պոլսական թերթերի սրտարուխ ճըլ-
ւըլոցներն ու լաւատեսական զառանցանքները,
թուում է թէ դրանք ցնորքներ են, վայրկեանական
բռնն ոգեւորութեան արդիւնք: (գրուած է 1908
թուի աշնանը): Սակայն կրկնում ենք. ինչ որ էլ
լինի, այլեւս Համիտական կարմիր օրերն անհր-
նարին են. որոշ նուազագոյն չափի իրաւունքներ
կը մնան, եւ մեզ, Կովկասահայերիս համար, իբր
աւելի շատ պատրաստի մտաւոր տարրեր ունեցող
հայ-ազգային հատուածի համար, բացւում է բա-
ւական ազատ հնարաւորութիւն սկսելու հապէս
նոր տեսակի դասակարգային զործունէութիւն
թիւրքահայաստանում, մինչեւ այժմ եղածը, չը-
նայելով ամէն տեսակ քաջքոլք բացատրութիւն-
ներին, համարելով զուտ ազատագրական նախ-
նական աշխատանք: Պետութիւններն սահմանները
չպէտք է արգիլեն միեւնոյն ազգութեան զանա-
զան բաժիններին ունենալու միանման ազգային
եւ դասակարգային աշխատանքներ եւ զործելու
միահամուռ ուժով, ինչպէս զրեւ է Ինտերնացիո-
նալը դեռ վաթսունական թուերին:

Վերագառնանք մեր խնդրին:

Ինտերնացիոնալի այդ առողջ ազդայնութեան և միջազգայնութեան ոգին անցաւ ժամանակակից շատ գործողների ու գրողների : Հերցէն , Լաւրով , Միխայելովսկի ուսական գործիչները բոլորն էլ , դեռ չհաշուելով Բակունինն ու Կրապոտկինը տողորուած էին այդ համոզումներով : Եւ Ռուսական ազատամարտի այդ ռազմիրաներն իրենց տեսակէտները ներշնչեցին ուսական սկզբնական կազմակերպութիւններին — «Չէորնիյ պերեկել» , «Բանուորների հիւսիսային միութիւն» , «Ժողովըրդական կամք» եւայլն : Այդ գեղեցիկ աւանդութիւնների եւ փիլիսոփայական խոր մարդապետութեան անմիջական ժառանգը հանդիսացաւ ներկայումս Ռուսիայում գործող «Սոց . Յեղափոխական» կուսակցութիւնը , որի ծրագրում գտնում ենք հետեւեալ պահանջը .

Հնար եղածին չափ շատ գործադրութիւն ֆեզերատիւ յարաբերութիւնների առանձին ազգութիւնների միջեւ . նանաչել նրանց անպայման իրաւունքն ինքնորոշման :

Իհարկէ այդ «հնար եղածի չափ շատ»ը մի քիչ կասկածելի արտայայտութիւն է : Ո՞վ է որոշելու այդ «հնարաւորութեան չափը» կամ «հնարաւորութիւնը» : Կուսակցութեան ղեկավարները , տիրող ազդութեան անդամները , թէ բոլոր ազգերի ներկայացուցիչները հաւասար ճայնի իրաւունքով , իրր ազգային միութիւններ , բոլորն էլ ի-

բար հաւատար, չնայելով թուի եւ իրաւունքների
իրական չափին:

Այնպիսի բարդ եւ հետեւանքներով բազմա-
զան խնդիրներ, ինչպէս ազդային հարցն է կամ
ազդութիւնների փոխադարձ յարաբերութիւնների
փափուկ խնդիրն է, չպէտք է ծրագրում խառնուի
«հնար եղածին չափ», «որքան կարելի է շատ»
«եթէ հնարաւոր է» եւ այլ այսպիսի անորոշ ու
կասկածելի բառերով ու ոճերով: Ռուսական
«Մեծ եւ միակ սոցիալիստական սոց. դեմոկրա-
տական բանուորական կուսակցութիւն»ն էլ, իր
քէոքսիֆների բերանով յաճախ ասել է, որ «եթէ
գիտակից քանուարութիւնը կ'ուզէ ինքնավարու-
թիւն, կը տրուի ինքնավարութիւն, եթէ նա կ'ու-
զէ նոյն իսկ բաժանուել Ռուսիայից, կարող է բա-
ժանուել», միայն թէ դա լինի պահանջը գիտակից
բանուորութեան»: Իսկ թէ ո՞վ է տալու բանուոր-
ներին այդ «գիտակցութեան» վկայականը...
Ի՞նչ կասկած, որ նոյն կուսակցութեան շեփերը-
Պլեխանովները, Լենինները եւ ուրիշները, որոնք
մանր ազդութիւնների պրոլետարիատին երբեք
չեն տալ այդպիսի «հասունութեան վկայական»,
որովհետեւ «պրոլետարիատի մարտնչող բանակի
ուժը կը ջլատուի» . եթէ «ինքնավարութեան ու
ֆեդերացիայի ու այլ այդպիսի բուրժուական ըմ-
բռնումների» խնդիրներ մէջ բերուին: Զէ՞ որ
մեծ ուսուցիչը (Մարքսը) դուշակել է մանր ազ-
դերի չքայումը, նրանց ձուլումը մեծերի մէջ.

նրա մանրիկ աշակերտներն այժմ եւեթ դործադրել են ջանում այդ սկզբունքը կեանքի մէջ, նոյն խակ իրենց կազմակերպութեան գրկում :

Իրենց այդ ծրագրի ազգային — միջազգային առողջ պահանջը սոցիալիստ — յեղափոխականներն արդարացնում կամ հիմնաւորում են այսպէս .

«Մարդուն մեմֆ ջանում ենք ազատել պատմականօրէն դասաւորուած բոլոր նեղ սահմանափակումներից : Մենք ձգտում ենք ամէն մարդավայել բան դարձնել մատչելի բոլոր մարդկանց, ոչնչացնել բոլոր միջնորմները... Բայց կոյր չենք : Մենք գիտենք, որ դէպի այդ *Խղճալը* լոկ մի նանապարհ կայ . աշխատել պատմականօրէն տրուած ազգային օրգանիզմների շրջանում, օգտուելով *կուլտուրական* զարգացման հզօր գէնֆովը — մայրենի լեզուով, յարմարուելով տրուած դրութեանը, ազգութեան զարգացման մակերէրեւոյթին, յենուելով նրա լաւագոյն կողմերի եւ գծերի վրայ, կենտրոնացնելով իր մարտը վատ կողմերի եւ գծերի դէմ : Այդ պատճառով ազգային վերածնութիւնը, ազգային ոգու բարձրացումն բոլորովին թշնամական երեւոյթ չէ մեզ (*սոց.յեղ.*) համար, այլ ընդհակառակը, չափազանց նպաստաւոր հանգամանք է» : (*)

Ազգային խնդրի այդ բարեյաջող լուծումը եւ սոցիալիզմի ու ինտերնացիոնալիզմի իրար լրա-

(*) H. B. N 10 :

ցընող երեւոյթներ լինելը գրդել են Ռուսիայում
գործող մի շարք կուսակցութիւնների ընդունել
նոյնատեսակ ծրագրային սահանջ: Այդպիսի կու-
սակցութիւններից են Լեհական Սոցիալիստական
կուսակցութիւնը (P. P. S.) Լատիշական սոցիա-
լիստների, Ուկրայինցիների, Հայերի եւ վրացի-
ների մէջ գործող սոցիալիստական կուսակցու-
թիւնները: (*)

Այդ բոլոր կուսակցութիւնների համար ազ-
գային կուլտուրան ծառայում է իբր լաւագոյն
գործիք սոցիալիզմին արագ հասնելու, իսկ ազ-
գութիւնների փոխադարձ յարաբերութիւնների
հարցի լուծումը ծառայում է լոկ միջոց՝ արա-
դացնելու եւ դտելու զսասկարգային մարտը:

Ազգային հարցի վերաբերմամբ որոշ միջակ
դիրք է բռնում Ռուսաստանում գործող մի այլ
կուսակցութիւն, հրէական «Բունդ»ը, ուղղափառ
մաքախիստական այդ կազմակերպութիւնը, որ
յանդգնել է ազգային խնդրում չեղուել ուսուցչի
տեսակէտից: Բունդի քէռքէտիֆներից մէկը —
Մէդէմ, հրատարակել է մի բրոշիւր, որը ծառա-
յում է հիմնաւորելու Բունդի ծրագրի մի կէտը —
ազգային խնդիրը, որով միայն եւեթ Բունդը ջոկ-
ւում է ուսական ս. դեմոկրատիայից:

(*) Ով հետաքրքրում է այդ խնդրով, քող դիմէ մեր
«Գէպի ֆեդ.» գրքի «Աստոնովիա եւ ֆեդերացիա» գլուխ-
նիքին:

Պ. Մէդէմը որոշում է ազգն այսպէս. «ընդհանուր գումարն այն անհատների, որոնք պատկանում են տրուած պատմա—կուլտուրական խմբին»: Իսկ ազգային խնդիրն, ասում է հեղինակը, կարելի կը լինէր լիապէս լուծել տերրիտորիալ կամ շրջանային ինքնավարութիւններով, եթէ որ ամէն մի վայր կամ տերրիտորիա լիապէս համապատասխանէր ազգի տարածման շրջանին: Բայց որովհետեւ այդ համապատասխանութիւնը չկայ, այդ պատճառով էլ «Բունդ»ն ընդունել է ազգա—կուլտուրական ինքնավարութեան սկզբունքը: Իսկ ի՞նչ է դա:

«Ազգակուլտուրական ինքնավարութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ազգային ինքնավարութիւն (Ստորագծումները հեղինակինն են:): Այդ դէպքում ազգն ինքնավար է միայն այն հարցերում, որոնց մէջ երեւան է զայլիս ազգային կեանքն, ինչպէս այդպիսին, այսինքն՝ կուլտուրական հարցերում: Դրանով է սահմանափակուում նրա իրաւասութիւնը: Միւս բոլոր գործերի եւ ֆունկցիաների համար «ազգային միութիւնը», կարծես բոլորովին գոյութիւնից դադարում է»: (*)

Իսկ ի՞նչ է կուլտուրա: Մի՞թէ միայն զըպրոցը, եկեղեցին, թատրոնն ու թանգարանը: Ո՛չ, կուլտուրայի անբաժան մասն է եւ օրէնսդրութիւնը:

(*) Մէդէմ — «Ազգային հարցը եւ սոց. դեմոկրատիա», Երես 54

նը, ե՛ւ դատարանը, ե՛ւ ոստիկանութիւնը, ե՛ւ տուրքերը, եւայլն եւայլն: Բունդի պահանջը լոկ մտաւոր զարգացման վերաբերող հարցերն է շո՜ւշափում, իսկ իրաւական, զինուորական եւ այլ բազմաթիւ հարցեր մնում են բաց. այն ինչ դրանք պակաս կռլտուրական խնդիրներ չեն: Եթէ այդ դպրոցական եւ այլ մտաւոր զարգացման հարցերը լուծուին, դեռ եւս դասակարգային կռուի ուղին բացարձակ հարթուած չի լինի, քանի դեռ կը մնան միւս կռլտուրական-օրէնսդրական, դատական, ինքնավարական եւ այլ խնդիրները բռլրժուական նացիոնալիզմի կամ իմպերիալիզմի ճանկերում: Դասակարգային կռուի միանգամայն առաջ զարգացման համար անհրաժեշտ է թողնել այդ բոլոր խնդիրներն ազդեքկրային ինքնավար միութիւնների լիակատար լուծմանը, այդ ինքնավար միութիւններին կապել իրար դաշնակցային կապերով, որ այլեւս ոչ մի ազգային խնդիր չծաղի, եւ ազդութեան բոլոր քնական առաւելութիւնները դործադրել յօդուտ դասակարգային կռուի, յօդուտ սոցիալիստական կարգերի արագ իրականացման, յօդուտ մարդկութեան բարօրութեան:

Ազգային հարցի այդպիսի լուծում պահանջող եւ Ռուսաստանում դործող բոլոր սոցիալիստական կռսակցութիւնների գլմաց կանգնած է Ռ. Ս. Դ. Բ. կռսակցութիւնը, որը երբե՛ք չի ուզում իր ծրագրի «ազգերի ինքնորոշում» ոչինչ չարտա-

յայտող կէտը մշակել եւ տեղը որեւէ խելքը դըլ-
խին, ըմբռնելի ու սլարդ պահանջ դնել: Կարծես
նա վախենում է ուսուցչի թողած ժառանգութիւ-
նից մի մազաչափ հեռանալ: Նրա ծրագիրը մնա-
ցել է գերմանական ս. դեմոկրատիայի հնաւանդ
ծրագիրը: Սակայն ինչ որ սաղում է Գերման-
իային, չէ սաղում Ռուսիային: Այնտեղ գերմա-
նական միապագաղ ազդաբնակութիւնը եւ այ-
լազդները միանգամայն չնչին թիւն ամենեւին չեն
ստիպել տեղական գործիչներին մշակելու իրենց
ծրագրում ազդային հարցը: Իսկ Ռուսիայում Վե-
լիկորոս ժողովրդի գլխաց կանգնած են Բէլօրոս-
ները, Մալօրոսները, Լեհները, Փինները, Լատիշ-
ները, Հրէաները, Հայերը, Վրացիները, Թա-
թարները, Թիւրքերը, — մի խօսքով՝ — 112 ազ-
գութիւններ, որոնց թիւը բուն ուս ժողովրդից,
նոյն իսկ միատեղ հաշուած Վելիկորոսն ու Բէլօ-
րոսը, — համարեա՛ ոչնչով յետ չի մնում: Այս-
տեղ անպայման անհրաժեշտ էր ուսուցիչների կը-
տակած հնաւանդ ծրագիրը ենթարկել հիմնական
վերամշակման բոլոր կէտերում, նամանաւանդ
ազդային դժուարին խնդրին վերաբերող կէտերը:
Վաղուց դա պէտք է հրամայական պահանջ եղած
եւ բաւարարուած լինէր, մանաւանդ որ ինքնա-
կալական բեփմը յաճախ ազգերի այդ բազմազա-
նութիւնից օղտուել եւ իրար դէմ հանել նրանց,
որպէսզի իր տիրապետութիւնն անխախտ մնայ:
Եւ դեռ այսօր նոյն այդ «բաժանիր որ տիրես»-ի

Հռոմէական սկզբունքը զանազան մութ ուժեր մեծ
յաջողութիւնով դործ են դնում ռուսական հսկա-
յական պետութեան մէջ: Իսկ Ռուսաստանի Սոց-
դեմոկրատիան, գլուխը քարշ, առանց այդ ամէնը
նկատելու, ինքնաբաւական սրտով, առաջ է քշում
իր հնացած տակտիքն ու ծրագիրը:

Այն ինչ աշխարհն առաջ է դնում, եւ այն էլ
հսկայական քայլերով: Բացի այն, որ վերեւում
մեր առաջ բերած բազմաթիւ սոցիալիստ ու
մարքսիստ գիտնականներն իրենց տեսակէտները
վերամշակեցին ազգային խնդրի վերաբերմամբ,—
բացի այդ՝ ասում ենք, աստրիական սոցիալ-
դեմոկրատիան, իբր մի մեծ ու բազմաթողովուրդ
երկրում դործող մարքսիստական կուսակցութիւն,
ստիպուած եղաւ վերամշակել իր ծրագրի ազգա-
յին մասը եւ ընդունել 1897 թուին Բրուքլինի հա-
մագումարում մշակուած ծրագիրը:

Որովհետեւ այդ ընդունուած վճիռը չատ մեծ
նշանակութիւն ունի, իբր մարքսիստական հին
ծրագիրներից բեկման, զատման կէտ, այդ պատ-
ճառով մենք լիապէս առաջ ենք բերում, չնայե-
լով նրա երկարութեանը: (*)

«Աչքի առաջ ունենալով, որ ազգային կոի-

(*) Բրուքլինի համագումարի ազգային խնդրին վերա-
բերեալ բոլոր վիճաբանութիւններն ու այս վիճակները հայե-
րէն տպագրուած են: (Տես «Յառաջի» գրադարանը):

ներ Աւստրիայում խանգարում են քաղաքական յառաջդիմութեանը եւ գոսացնում ժողովրդների *կուլտուրական* զարգացումը, որ այդ կոիւները, նախ եւ առաջ ծնունդ են մեր հասարակական կազմի անկատարութեան, վերջապէս մանաւանդ, աչքի առաջ ունենալով, որ ազգային կռուի շարունակելը հանդիսանում է իբր՝ լուսագոյն միջոց, որի օգնութեամբ հրամայող դասակարգերն ապահովում են իրենց տիրապետութիւնը եւ խանգարում են իսկական ժողովրդական շահերի արտայայտման,

Համագումարը յայտարարում է.

որ ազգային հարցի եւ լեզուների հարցի վերջնական լուծումն Աւստրիայում, իրաւահաւասարութեան եւ բարեմտութեան ոգով, նախ եւ առաջ *կուլտուրական* մի անհրաժեշտութիւն է, այդ պատճառով էլ նա հանդիսանում է *պրոլետարիատի* ամենաանհրաժեշտ կարիքներից մէկը:

Այդպիսի լուծումը հնարաւոր է միայն իսկական *դեմոկրատիական* հասարակութեան մէջ, որը կառուցուած կը լինի ընդհանուր, ուղղակի եւ հաւասար ընտրական սկզբունքի վրայ, մի հասարակութեան, որի մէջ ոչնչացած կը լինեն բոլոր *ֆեոդալական* արտօնութիւնները կամ *պրիւիւիւզիական* բէ համակայսերական եւ թէ առանձին երկիրների, որովհետեւ միայն այդպիսի հասարակարգերում բանուոր դասակարգը, որ հանդիսանում է հասարակութեան եւ պետութեան իսկական

յենարանը, կարող կը լինի արտայայտել եւ իրագործել իր պահանջները :

Աւստրիայի ժողովրդների ազգային առանձնայատկութիւնների պահպանումը եւ զարգացումը հնարաւոր է միայն լիակատար իրաւահաստատութեան եւ հալածանքի լիակատար բացակայութեան դէպքում : Այդ պատճառով՝ ամէնից առաջ պէտք է վերացուի պետական *բիւրօկրատիա* կան կենտրոնացման *սխաւմը*, ինչպէս առանձին երկրների աւատատիրական արտօնութիւնները :

Այդ եւ միմիայն այդ պայմաններով Աւստրիայում կարող կը լինի հաստատուիլ ազգային կարգ ու կանոն, ազգային կոիւնքի փոխարէն, յատկապէս հետեւեալ հիմքերի վրայ :

1) Աւստրիան պէտք է վերափոխուի եւ դարձնուի ազգութիւնների *զեմոկրատիա* կան միութիւն կամ դաշնակցութիւն ներկայացնող մի պետութիւն :

2) Փոխանակ քաղի պատմական երկրների, պէտք է կազմուեն ազգօրէն սահմանաւորուած ինքնավար վարչական միութիւններ, որոնցից ամէն մէկում օրէնսդրութիւնը եւ վարչութիւնը գտնուեն ազգային *պարլամենտի* ձեռքում, որն ընտրուած լինի ընդհանուր, ուղղակի եւ հաւասար ժողովով :

3) Միեւնոյն ազգութեան ինքնավար շրջանները կազմում են միասին մի ազգային դաշնակցութիւն, որն իր ազգային գործերը վնասում է լիապէս ինքնավար կերպով :

4) Ազգային փոքրամասնութիւնների իրաւունքներն ապահովում են համապետական *սլար-լամենտի* հրատարակած յատուկ օրէնքով :

5) Մենք ամենեւին չենք ընդունում ազգային արտօնութիւններ, այդ պատճառով մերժում ենք պետական լեզուի պահանջը. որքան որ անհրաժեշտ է յարաբերութիւնների համար մի ընդհանուր լեզու, այդ կ'որոշէ համապետական *սլար-լամենտը* :

Համագումարն իբր միջազգային *սոցիալ-դեմոկրատիայի օրգան* Աւստրիայում, համոզուած է, որ այդ սկզբունքների հիման վրայ հնարաւոր կը լինի ազգերի համաձայնութիւնը :

Համագումարը հանդիսաւորապէս յայտնում է.

Ժողովրդները կարող են հասնել իրենց *կուլտուրայի* յառաջդիմութեանը միայն միահամուռ եւ սերտ համերաշխութեան շնորհով, ոչ թէ իրար հետ մանր մունր կռիւներ մղելով :

որ մանաւանդ բոլոր ազգութիւնների բանուորները պէտք է թէ առանձին ազգերի եւ թէ ամբողջ պետութեան շահերի տեսակէտից, պինդ պահպանեն միջազգային ռազմական միութիւնը եւ միահամուռ ջանքերով մղեն իրենց քաղաքական եւ արհեստակցական կռիւը» :

*Բրուննի Համագումարի այս որոշումը կա-
յացաւ Միացեալ Գործադիր Կոմիտէի ներկայա-
ցրած մի նախագծի հիման վրայ : Կոմիտէի կող-*

մից իրը ղեկուցանող հանդիսացաւ Զեւրիները: Նա իր ներկայացրած նախագիծը հիմնաւորեց մի երկար ճառով, որի մէջ, ի միջի այլոց, ուրուագրեծեց, թէ ինչպէս 1848 թուերին մշակուեց սոց. դեմոկրատիայի եթէ ոչ ապագային, զոնէ խիստ անտարբեր տեսակէտը զէսլի ազգային խնդիրները. թէ ինչպէս շատ սոց. դեմոկրատներ զէմ էին ազգային հարցին, համարելով դա բուրժուազիայի ծնունդ եւ թէ ինչպէս, նոյն իսկ ամէնից աւելի լաւ տրամադրուածները կողմնակից էին թողնելու ազգային խնդիրը իրերի բնական ընթացքին:

«Սակայն մենք գիտենք, ասում է Զեւրիները, որ հակառակ բոլոր ուտոպիաների, մեզ վիճակւած է միասին ապրել Աւստրիայում եւ ամենեւին աւելորդ չէ մեզ համար մի ելք գտնել ներկայ վիճակից նրա համար, որ մի կողմից հեռացնենք Աւստրիայի տնտեսական լիակատար անկումը եւ հնարաւոր դարձնենք ժողովրդների խաղաղ կենակցութիւնը, որն անհրաժեշտ է բարձրացնելու համար բանուոր դասակարգի տնտեսական եւ քաղաքական դրութիւնը: Յատկապէս պրոլետարիատի շահերն են կողմում այն զրդապատճառը, որն ստիպում է մեզ ձեռնարկել ազգային խնդրի լուծմանը, եւ Աւստրիական ս. դեմոկրատիայի կողմից յանցանք կը լինէր, եթէ նա չգրադուէր այդ հարցով այն րոպէում, երբ նա արդէն լիապէս հասունացել է»:

Եւ այնուհետեւ Ձեռիդերն սկսում է բացատրել իրենց առաջարկած նախագիծը, ցոյց տալ, որ ազգային հարցը լուծել կարելի է լոկ իսկական դեմոկրատիական ճանապարհով. տալով ամէն ազդի ինքնուրոյն զարգացման իրաւունք:

«Ազգային հարցը պէտք է դիտուի ոչ իբր իշխանութեան հարց, այլ իբր *կուլտուրայի* խնդիր»:

«Միացեալ մասնաժողովի բանաձեւը պահանջում է խնամք տանել ազգային առանձնայատկութիւնների զարգացման վրայ ամէն ազգի համար: Այդ բաներով մենք հասկանում ենք ամէն մի ազգի *կուլտուրական* առանձնայատկութիւնների զարգացումը: Բայց ազգային *կուլտուրական* զարգացման մէջ մենք շահագրգռուած ենք գոնէ ոչ պակաս, քան *բուրժուազիան*. մենք շահագրգռուած ենք գրականութիւնը, գեղարուեստը, դպրոցները, բանաստեղծութիւնը եւ գիտութիւնը խրախուսելու մէջ:

Գերմանական բանուորը շահագրգռուած է գլխաւորապէս գերմանական գրականութիւնով, որի ստեղծագործութիւնները նա աւելի լաւ է հասկանում եւ աւելի սերտօրէն է զգում, քան միւս ժողովրդների գրական արտադրութիւնները: Եթէ ամէն մի ազգ առանձնապէս կ'ունենայ ապահով իրաւունք զարգացնելու իր ազգային առանձնայատկութիւնները, դրանից կ'օգտուեն բոլոր ազգերը միասին: Այդ պահանջը մեր շահն է,

ինչպէս եւ գուտ նիւթական պահանջները: Լիա-
կատար *դեմոկրատիացում* մենք ըմբռնում ենք ոչ
այն մտքով, որ ամէն մի ազգային ինքնավար
շրջան կ'ունենայ իր սեփական օրէնսդրական օր-
գանք մանրիկ ձեւով, այլ միայն այն մտքով, որ
Ազգն իրաւունք կը ստանայ ընտրելու իր պաշ-
տօնեաներին ու դատաւորներին»:

Այս ընդհանուր ոգով *Ջելիգերը* ցոյց է տա-
լիս *Փայլուն պաշտպանութիւն* իր ներկայացրած
նախագծի: Նրանից յետոյ խօսում են *Նեմեցը*
(չեխ), *Պրեհուդերը* (գերմ.), *Դոքտոր Ադլերը*,
Վիեննայի պատգամաւոր եւ «*Arbeiter Zeitung*»-ի
խմբագիրը, որ բոլորի ծափահարութիւններ
տակ, իր ճառում հետեւեալ բառերն է ասում.

«Մենք ցանկանում ենք մի կոյտ դարձած գը-
րաւուած գաւառները դարձնել ինքնուրոյն օրգա-
նիզմներ»:

Այնուհետեւ խօսում են *Դաշինսկին*, *Գանկե-
վիչը*, *Կրեչտանը*, *Գերինինը*, *Պերներստեորֆերը*,
Կրէյչին, *Դոքտոր Էլլենբոդենը*, *Կելլերը*, *Վի-
նեարսկին* եւ ուրիշները, բոլորն էլ աւատրիական
միջազգային սոցիալ դեմոկրատիայի մէջ յայտնի
ուժեր, մասամբ տեսական, մասամբ գործնական
կողմից:

Աւատրիական սոցիալ դեմոկրատիայի այդ
վճիռը ծառայեց իբր օրինակ համաշխարհային
սոցիալ դեմոկրատիայի համար, եւ, ինչպէս ար-
դէն ասացինք, Շտուտգարտի համագումարում

բոլոր աղբայրին խնդրի շուրջը պատող հարցերին ընդհանուր ուղղութիւն տուողը եղաւ Բեքելը, որի կարծիքը միանգամայն համապատասխանում է Բրուննի համազումարի մշակած ծրագրին :

Սրանից 4-5 տարի առաջ Խոտլական սոցիալիստներն էլ միաձայն որոշեցին, որ իրենք աղբայրին խնդրի վերաբերմամբ նոյն տեսակէտն ունեն, ինչ որ Աւստրիական ս. դեմոկրատիան : Ֆրանսիական սոցիալիստներն այդ հարցի վերաբերմամբ ունեցել են շատ կծու եւ թունաւոր վիճաբանութիւններ : Հերվէն միանգամայն ժխտում էր աղբի եւ հայրենիքի նշանակութիւնը սոցիալիստի համար, իսկ Ժօրէսն, իրեն յատուկ պերճախօսութիւնով, ջախջախեց նրան եւ ապացուցեց, որ բանուորի շահի տեսակէտից իսկ անհրաժեշտ են Աղբն ու հայրենիքը : Նրա տեսակէտը մեզ ծանօթ է, մենք կանգ չենք առնի այլեւրս :

Սակայն պէտք է ասել, որ Խոտլական, Գերմանական, Ֆրանսիական ու, մասամբ, Անգլիական սոցիալիստները համար աղբայրին հարցը լոկ տեսական նշանակութիւն ունի, այն էլ միայն պարզելու համար միլիտարիզմի եւ հակամիլիտարիզմի խնդիրը, պատերազմի դէպքում զինուորների բռնելիք զիրքի հարցը, եթէ ոչ գործնականապէս այդ խնդիրը նրանց երկրներում դրուած է, այդ պատճառով էլ նրանք նրանով զբաղուելու շատ էլ կարիք չունեն :

Գ Լ ՈՒ Ն Ե.

Ապգն իբր մարդկության արտայայտության
ձևերից մեկը:

Արտայայտության միւս ձևերը:

Անգիտակից եւ գիտակից խմբակցութիւններ:

Կառուցկու նորագոյն արտայայտութիւնները:

Ապգութեան սկզբունքի ոյժը:

Կեդեքման դասակարգային ձեւը:

Ապգովին կեդեքուիլը: Օրինակներ:

Նախընթաց գլուխներում մեր կատարած ուսումնասիրութիւնը մեզ հասցրեց այն եզրակացութեան, որ «մարդկութիւնը» մի վերացական հասկացողութիւն է, չկայ «մարդկութիւն» կոչւած մի օրգանական ամբողջութիւն, այլ կան մարդ-անհատներ: Սակայն երկրադնդի վրայ մարդ-արարածի ծնունդ առնելուց ի վեր մարդկանց ամբողջութիւնը կամ մարդկութիւնն ապրել ու արտայայտուել է զանազան ձևերով:

Իր ծննդեան սկզբնական շրջանում եւեթ, մարդ կոչուած գաղանը, միւս բազմաթիւ գաղաների ուժեղ շարքերում՝ պիտի ներկայանար մի թոյլ եւ հալածուած էակ, որի համար անհնար էր լինելու ապրել անհատաբար, առանձնակի. նա

ստիպուած էր ապրել մանրիկ խմբերով, որովհետեւ, 1) նա թոյլ էր, պէտք ունէր պաշտպանուելու միւս, աւելի ուժեղ գազաններից. իսկ դա անհատաբար անհնար էր, 2) նա ստիպուած էր խմբակներով ապրել, որպէսզի ապրուստ ճարելը հնարաւոր լինէր. յատկապէս նրանց խմբակները պիտի մանր լինէին, որովհետեւ այն վայրեր (որսատեղերը), ուր նրանք պիտի ապրուստ ճարէին, չէին կարող սնունդ մատակարարել աւելի մեծ խմբերի. 3) վերջապէս նրանք պիտի մանրիկ խմբակներով ապրէին, որովհետեւ ընտանեկան կամ սեռական կապակցութիւնը նրանց միատեղում, արենակիցների մի փոքրիկ խումբ էր կազմում:

Այսպիսով մարդ արարածն իջել է դոյուլթանն ասպարէզ խմբական կամ հասարակական կեանքով եւ ոչ անհատաբար: Այդ է, որ Արիստոտէլին եւ ուրիշներին դրդել է ասելու, թէ «մարդը հասարակական կենդանի է»:

Ուրեմն՝ մարդկութեան արտայայտութեան առաջին ձեւը եղել է խմբակը, կամ ինչպէս Քլարանսիացի սոցիոլոգ Շարլ Լետուրնօն նրանց կոչում է, անիշխանական հոբդան:

Սակայն այսպիսի մանրիկ, անիշխանական, թափառական խմբակներով չէ վերջանում սկզբնական մարդկութեան արտայայտութիւնը: Նրա դոյութեան կռիւն ստիպում է նման տարրերին համախմբուել, կենակցել, իրարից մօտ ապրել:

Երկարամեայ , նոյնիսկ տասնեակ ու հազարաւոր
զարերի կենակցութիւնը ծնեցնում է որոշ ժա-
ռանգական յատկութիւններ , որոնք զառնում են
ընազդներ : Առաջ է գալիս քիչ ու շատ մեծ խմ-
բակների Փիղիքական ու ողեկան աշխարհների
նմանութիւն , սակայն առանց այդ նմանութեան
պարզ ու որոշ գիտակցութեան : Ծնունդ են առ-
նում արեւակից տոհմեր , տոհմերից առաջանում
են ցեղեր ու ցեղերի գիտակից դաշնակցութիւն-
ներ ,— բարբարոս մարդկութեան քաղաքական
զարգացման ամենարարձր ձեւը , ինչպէս պնդում
է ամերիկացի գիտնական Լ . Մորզանը :

Ահում ու տարածւում է մարդ-արարածը
երկրի վրայ : Միեւնոյն արմատներից , միեւ-
նոյն մանրիկ խմբակներից սերուածները , որոնք
նոյն ծաղումն ունեն , կամ երկար դարերի ըն-
թացքում ապրել են միեւնոյն բնական ու հասա-
րակական միջավայրում եւ ստացել են միատե-
սակ մարմնակազմ . միատեսակ արիւն , ինչպէս ա-
սում է Գոբլինօն , ստեղծում են միատեսակ րասա
(ցեղ) :

Այսպիսով հորդան , տոհմը , ցեղը , րասան
հանդիսանում են մարդկութեան արտայայտու-
թեան ձեւերը : Նրանց բոլորի անդամներին իրար
կապողը բնագոյն է , անձնապաշտպանութեան ինս-
տիւնկտը մի կողմից եւ կուտակուած ժառանգակա-
նութեան կամ Փիղիքական ու բարոյական նմա-
նութեան տարրը միւս կողմից :

«Փամանակակից գիտութեան մէջ — ասում է Գ. Պլեխանովը, չկայ բառա եւ ազգ իմաստների նիշդ որոշում: Միապէս կարելի է ասել եւ լիտովցիների բառա, ե՛ւ լիտովցիների ազգ»:

Բայց բասայի (ցեղ) ոգեկան, մտաւոր եւ բարոյական նմանութիւններից անհրաժեշտօրէն բխում են յաճախ միատեսակ ու միանման միջոցներ գոյութեան կռուի ասպարէզում: Բասայի ներսում մենք յաճախ, շատ յաճախ նկատում ենք տնտեսական եւ հասարակական երեւոյթների անպայման նմանութիւն: Եւ ասա այդ է, որ բատիպել է Ֆր. Էնգելսին ասելու. «Բասան ինքն էլ տնտեսական ազգակ է»:

Մարդկային կեանքին, սակայն երբեք չէ վիճակուած քարացած մի գրութիւն: Այդ կեանքը շարժուն է, ակեւոծ, փոթորկոտ: Գոյութեան կրօնը ստիպել է մարդկային ցեղի բոլոր այդ արտայայտութեան ձեւերին իրար խառնուել, կազմել նոր խմբակցութիւններ, նոր տարրեր, նորա-նոր ձեւեր:

Սկզբնական արտայայտութեան ձեւերը — հորդա, տոհմ, ցեղ, բասա — բոլորն էլ, ասացինք, գոյութեան կռուի հրամայական պահանջից կազմուած երեւոյթներ են, որոնց յարատեւումը դարերի ընթացքում նրանց վեր է ածում կենսաբանական երեւոյթների: Այդ բոլորի մէջ աւելի շուտ բնագոյն է դեր խաղում եւ ոչ սեփական գոյութեան գիտակցութիւնը:

Միեւնոյն րաւայի, կամ մի քանի րաւաների (ցեղ) մասնակի կամ ամբողջական կտորների խառնուրդներից առաջ են դալիս ազգերը, կրկին չնորհիւ պատմական երկարդարեայ միասնակեցութեան:

Ազգերի ծագման համար բացարձակ միեւնոյն է, թէ արդեօք մարդկութիւնը ծնունդ է առել երկրադնդի վրայ մի տեղ, մի արմատից (մոնոգենիստ) թէ մի քանի տեղ, մի քանի արմատից (պոլիգենիստ): Եթէ ընդունենք պոլիգենիզմի ենթադրութիւնը, ազգերի ու ցեղերի ծագման բացատրութիւնը աւելի դիւրանում է: Կան բազմատեսակ, տարբեր նախնիքներից սերւած ցեղեր, որոնցից կազմուել են տարբեր ազգեր: Այդ ազգերը կարող են իրար խառնուել ծայրայեղ դժուարութիւնով, թերեւս նրանց իրար խառնուելն անհնար լինի, որովհետեւ նրանցում կայ կենսաբանական մի տարր. մի սկզբնական էլէմենտ, որն ի ծնէ է, անվերլուծելի: Բայց դուցէ եւ դա վերլուծելի է հանդամանքների դարեւոր կրծող ազդեցութեան տակ... Ինչ էլ որ լինի, պոլիգենիստական ծագում ընդունելով մարդու համար, մենք խիստ դիւրացրած կը լինենք ազգերի ծագումը, բայց չա՛տ աւելի դժուարացրած նրանց պատմական յարաչարժ, դիմաւիճական բնոյթի բացատրութիւնը:

Սակայն որքան էլ պոլիգենիստ լինենք, մեզ կրկին կը մնայ միեւնոյն րաւայի, գլխաւորապէս

Հնդեւրոպական ցեղի ներսում առաջացած ազգերի բազմազանութիւնը բացատրելու դժուարութիւնը: Կը նշանակէ ազգութեան բացատրութեան վերաբերմամբ մարդկութեան մի արմատ եւ բազմարմատ ծագման հարցը համարեա՛ն անտարբեր է:

Ենթադրենք, որ ամբողջ մարդկութիւնը սերւել է մի գոյւղից, մի Ադամ-Եւայից: Աճել, բազմացել եւ լցրել է երկիրը, «որպէս աւազ առ ափն ծովու»: Այսպէս ենթադրելով անգամ, մենք չենք կարող ամենեւին երազել, որ այդ մարդկութիւնը կը մնայ միապաղաղ, միատեսակ մի զանգուած: Ինչպէս արդէն երկրորդ գլխում բացատրեցինք, աշխարհագրական, երկրաբանական ու կլիմայական պայմաններն անշուշտ կը մտցնեն զանազանակերպութիւն այդ միապաղաղ կամ հոմոթէմ զանգուածի մէջ. անշուշտ կ'առաջանան նոյն մարդկութեան մէջ զանազան խմբեր, տարբեր մարմնակազմով եւ տարբեր բնաւորութիւնով: Սկզբնական վայրենի ու բարբարոս մարդկութիւնը, զուրկ կռիւտութեան միջոցներից, զուրկ բնութեանը տիրելու բոլոր հնարներից, որոնց գումարը կոչւում է գիտութիւն, — աւելի արագ եւ անմիջական ազդեցութեան տակ էր տարերային բնական ուժերի. նա աւելի արագ եւ աւելի դիւրութիւնով էր փոփոխւում, նոր բարդութիւններ եւ նոր, միւսներից, հսկերից ու դրացիներից տարբեր խմբակցութիւններ էր առաջ բերում:

Միակ ղեկավարը տարբեր նախնիքներից ստացած ժառանգութիւնն էր, որը չէր ղեկմանում բնութեան կրճող ազդեցութեանը եւ մաշուելով, ստեղծում էր մարդկանց արդէն իսկ մի տարրեր խումբ: Այժմ էլ ժառանգական տարրը կայ, բայց նրա հետ միատեղ կայ նաեւ կուլտուրան, կայ գիտութիւնը, որը մարդուն հանել է բնութեան տարերային ուժի անմիջական ազդեցութիւնից եւ դրել է որոշ կախման մէջ մարդու սեփական կամքից, միայն ոչ բոլորովին: Այդ է պատճառը, որ ներկայումս անգլիացին դեռ 4-5 սերունդ, աշխարհի երեսին որտեղ էլ որ ապրում է, մնում է անգլիացի, այն ինչ բարբարոս ու վայրենի ցեղերի անդամները մի քանի տարում մոռանում են իրենց անցեալը, սովորութիւնները եւ շատ գիւրդութիւնով ձուլւում միւս գրացի տոհմերի ու ցեղերի մէջ:

Օտտո-Բաուէրն իր գրքի երրորդ գլուխը նուիրել է այդ խնդրին եւ վերնադրել «Naturgemeinschaft und Kulturgemeinschaft»-«բնական հասարակութիւն եւ կուլտուրական հասարակութիւն (եր. 19-23):

Երբ մենք աչքի առաջ ենք ունենում երկրագործի վրայ տիրող բնական բաղմաղանութիւնը եւ մտածում այդ բնութեան ամենազօր ազդեցութեան մասին իր գրկում ապրող բոլոր գործարանաւոր էակների վրայ, այն ժամանակ մեզ համար ծիծաղելի է դառնում ուղղափառ մարքսիզմի

նախկին ենթադրութիւնը, թէ ազգերը, տնտեսա-
 կան, գործօնի ազդեցութեան տակ հալւում են ի-
 րար մէջ, միաձուլւում եւ աստիճանաբար աւելի
 կեդրոնանալով, կազմում են մեծ ու մեծ ազգեր.
 Թէ այդ շարժումը գնում է դէպի ընդհանուր
 կենդրոնացում, դէպի ազգերի միաձուլում — մի
 ամբողջ մարդկութեան ստեղծում՝ իբր մի ազգ,
 «մի հօտ եւ մի հովիւ»։ Սրեկեք երկրազնդի ե-
 րեսից բազմազանութիւնը, եթէ կարող էք, ո-
 չընչացրէք ժամանակն ու տարածութիւնը, եւ այն
 ժամանակ ամբողջ մարդկութիւնը կը դառնայ մի
 ճանճրալի, մի տաղտկալի հոմոժէն կամ միապա-
 դադ ամբողջութիւն, աղքատ իր նոյնիսկ հան-
 ճարեղ զարգացման մէջ։ Այո՛, մարդկային աճող
 կուլտուրան, գիտութիւնը, արագացող ու կատա-
 րելագործուող հազորգակցական միջոցները որոշ
 չափով մարդուն ազատում են բնութեան բռնու-
 թիւնից եւ դնում կախման մէջ մարդուց, բայց
 այդ ազատութիւնը երբեք չէ կարող լինել բա-
 ցարձակ, — նա լուկ մասնակի է, յարաբերական։

Բարեբախտաբար ամենաուղղափառ մարք-
 սիստը, գերմանական մարքսիզմի ներկայ քուրմը,
 Կ. Կառլցկին թողնում է ուսուցիչների դոգմը եւ,
 կամացուկ, անզգալիօրէն, ոչ Բերնշտայնի նման
 սաղերին գրգռող անդիպումատ եղանակով, ներ-
 մուծում է խոշոր, չա՛տ խոշոր սրբագրութիւն
 Մարքս-էնգելսի տնտեսական, կամ, ասենք Պլե-
 խանովի սիրած բառը, — դիալեկտիկական մա-

տերիալիզմի մէջ: Մարքսը եւ Էնգելսն ընդունում էին ներգործական տարրը միայն տնտեսական — արտադրական միջոցները, «վերջին հաշւում տեխնիկան» եւ բնութիւնը, իսկ Կառլ Կլին, իր վերջին աշխատութիւններէց մէկում գրում է.

«Նայելով երկրի բնութեանը, նայելով նրա դրացիների հութեանը, գիւղացիական տնտեսութիւնը, միեւնոյն տեխնիկայով, կարող է դառնալ հիմք շատ տարբեր հասարակական ձեւերի: Հասարակական այդ տարբեր ձեւերը կազմում են այնուհետեւ, բնականների հետ միասին, յետագայ հիմքերը որոնք իրենց վրայ բուսած յետագայ զարգացմանը տալիս են ինքնատիպ ձեւ» (*):

Այսպէս ուրեմն՝ գիւղացիական տնտեսութիւնը, միեւնոյն արտադրական միջոցներով, կարող է ծառայել իրր հիմք զանազան տեսակ հասարակական ձեւերի, նայելով թէ ինչ բնական պայմաններում է գործում, եւ նայելով թէ ինչպիսի դրացիներով է շրջապատուած: Ուրեմն՝ բացի տեխնիկայից ու բնական միջավայրից, հասարակական զարգացման վրայ ազդում են դրացիները — դրացի ցեղերը, դրացի ժողովուրդները, ազգերն ու պետութիւնները: Ուրեմն՝ ցեղերի կամ ազգերի փոխադարձ ազդեցութիւնը եւս ծառայում է իրր մարդկային հասարակութիւն-

(*) «Բարոյագիտութիւնը եւ պատմութեան մատերիալիստական ըմբռնումը» գերմ. բնագիր. եր. 115:

Ներքին զարգացման վրայ ազդող մի գործոն, ինչպէս տեխնիկան, ինչպէս բնական միջավայրը: Իսկ ի՞նչ են այդ «Nachbarn»-ը այդ դրացիները, եթէ ոչ մարդկային ցեղեր ու ազգեր:

Եթէ դեռ այդտեղ ազգային տարրի ազդեցութիւնը պարզ չէ, ահա ձեզ նոյն աշխատութիւնից մի այլ, աւելի պարզ կտոր:

«Հասարակական նոր դրութիւնը կախուած չէ բարոյական իդէալի որպիսութիւնից, այլ տրուած նիւթական պայմաններից, տեխնիկայից, բնական միջավայրից, տրուած հասարակութեան կամ գոյութիւն ունեցող հասարակութեան դրացիների յատկութիւնից»:(*)

Ուրեմն՝ բացի դրացիներէ ազդեցութիւնից, բաց-աշխարհայ կայ նաեւ նոյն «Հասարակութեան տեխնիկայի յատկութիւնը», այսինքն նոյն Հասարակութեան ստացած ժառանգական որակը — ազգութիւնը, որովհետեւ ազգութիւնը, ինչպէս մենք արդէն տեսել ենք, կուտակուած ժառանգութիւնն է մարդկային որոշ խմբի մէջ, պատմա-կենսաբանական դանդուածի էութիւնը:

Պատմութեան մատերիալիստական հասկացողութեան մէջ մտած այդ պատուածքն է, հիմնական այդ ուղղումն է, որ ազգային խնդրի վրայ խիստ ուղղաւիառ ակնոցներով քսան տարի

(*) Նոյն, եր. 139.— «Գրացիների որպիսութիւնից եւ տրուած հասարակութեան նախնիների յատկութիւնից»:

առաջ նայող Կ. Կառուցկուն ստիպեց հիմնականապէս փոխել իր տեսակէտները եւ ընդունել ազդութիւնն իբր ոչ բուրժուական, այլ կենսաբանական եւ պատմական մի երեւոյթ, նոյնիսկ նախապայման, անհրաժեշտ պայման առողջ դասակարգային զարգացման ու դասակարգային կռուի:

Վերեւում ասացինք, որ պատմութիւնը զուտ մատերիալիստօրէն ըմբռնող մարքսիստների համար ազդութիւնը ծնունդ է ԺԴ-ԺՁ դարերի կամ բուրժուազիայի: Այդ տեսակէտը յարատեւում է այժմ էլ, միայն թէ ազդ բառի վրայ կայցնում են «ժամանակակից» ածականը: Դա միայն մի ձեւական հասկացողութիւն է, որի մէջ էական մի թիւրիմացութիւն է թաղնուած: Ազդութիւնը առաջ է եկել մարդկային քաղաքականութեան ըսկզբնական աստիճաններում, երբ կազմակերպւել են քիչ ու շատ յարատեւ պետութիւններ, որոնք խիստ նպաստել են մանր-մունր տոհմերին ու ցեղերին միաձուլուելու, միախառնուելու եւ կազմելու սկզբնական ազդային միութիւններ:

«...Պետական իշխանութեան բնդհանրութիւնն,— ասում է Ելլինեկը, ամենահօր կերպով օգնել է ազգերի կազմութեանը» (*):

Ու այդ ազգերի կազմութիւնը միայն այն ժամանակ արժանի է «ազգ» անուն, երբ, բացի արտաքին, օրէկտիվ պայմանից, կրում է իր մէջ

(*) «Փամանակակից պետութեան իրաւունքը» — եր. 74

նաեւ ներքին կամ սուրեկտիվ տարր—մի օբյեկտի
 նախնի ամբողջութիւն, մի կենսարանական ու
 պատմական հանրութիւն կազմելու գիտակցու-
 թիւնը: Իսկ լոկ արտաքին, կամ օբեկտիվ միու-
 թիւններ, չափ վաղուց, նոյն իսկ վայրենի ու
 բարբարոս մարդկութեան մէջ եղել են: Գիտակ-
 ցութիւնը, այո՛, եկել է ուշ, աւելի բարձր կուլ-
 տուրայի հետ միասին, ոչ կապիտալիզմի շրջա-
 նում, ինչպէս պնդում են մարքսիստները, այլ
 քաղաքականութեան սանդուխքի սկզբնական աս-
 տիճաններում:

«Օբեկտիվ, ծագման ընդհանրութեան վրայ
 հիմնուած մարդկային զանազան խմբերի միու-
 թիւններ, բասային կամ ցեղային միութիւններ,
 արդէն երեւան են գալիս պատմութեան արշա-
 լոյսին, եւ նոյնիսկ չա՛տ աւելի վաղ: Աղգութեան
 սուրեկտիվ (ներքին) միութիւն, ընդհակառակը,
 իր ընդթիւլ արդիւնք է աւելի բարձր կուլտուրա-
 յի եւ թէեւ սաղմային դրութեան մէջ չա՛տ հնուց
 ի վեր եղել է, բայց իր ամբողջ ուժով երեւան
 է եկել նորագոյն ժամանակներում»: (*)

Գիտնականի այս թափանցող եւ բաղմակող-
 մանի ու անկաշառ վերաբերումը պակասում է
 առհասարակ դոգմատիքներին բոլոր հարցերում,
 մասնաւորապէս ազգային խնդրում:

(*) -Նլխնեկ,— Նոյն-եր. 75

Ազգութիւնն, այո՛, սաղմային վիճակում
կար հին Արեւելքում. «Ազգ հայոց», «Ազգ պար-
սից, Պարթեւաց» եւայլն, կային, բայց, ինչ ա-
սել կ'ուզէ որ այդ ազգութեան զիտակցութիւնը
տարրացած, տարածուած չէր ժողովրդական լայն
խաւերում: Ստրկատիրական հասարակակազմի
մէջ միայն տիրողները, վարիչները, ստրկատէ-
րերն ունէին իրենց սեփական ազգութեան զի-
տակցութիւնը, իսկ ստրուկների հսկայական հո-
տը, իսկ պլեբէյական թշուառ զանդուածները չէ-
ին կարող ունենալ այդ զիտակցութիւնը. նրանք
հօտեր էին, որոնց անդիտակից ամբողջութիւնը
ենթակայ էր հովիւների զիտակից վարչութեա-
նը:

Միջին դարերում ճորտութիւնը նոյն անդի-
տակից վիճակումն էր ազգութեան վերաբերմամբ
եւ լոկ հոգեւորականութիւնն ու ազնուականու-
թիւնն էր, որ պիտի ունենար այդ զիտակցու-
թիւնը, սակայն նրանք էլ, իրենց դասակարգային
ու դասային չահերից դրդուած, թաղաւորող տը-
ների բաժանումներն աւելի սրտերին մօտ էին ըն-
դունում, քան ազգայինը, որի գոյութիւնը թողել
էին իրերի բնական ընթացքին:

ԺԱ եւ ԺԲ դարերից ծնունդ է առել մի դա-
սակարգ՝ բուրգերում, միջնադարեան այդ պա-
րբայապատ մեծ գիւղերում, որ յետոյ դառնում
են քաղաքներ, — դրանցում ապրող բնակիչները,
որ ապագայում կոչուելու են բիւրգէրներ կամ

բուրժուաներ, — ահա դրանք, դանդաղօրէն, աստիճանաբար, սկսում են զիտակցութեան դալ հոգեւորականութեան եւ ազնուականութեան մի մասի հետ միասին: Այդ երրորդ դասակարգի զարգացման հետ միասին առաջանում են «ազգային պետութիւններ», «ազգային ազնուականութիւն եւ բիւրօկրատիա», իսկ Լիւթերի սկսած բէֆորմացիան ծնունդ է տալիս արեւմտեան հոգեւորականութեան ու եկեղեցու ազգայնացման:

Ահա այդ երեւոյթների շնորհով՝ ազգութիւնը, որ առաջ լուր տիրող դասակարգերի սեփականութիւնն էր, աստիճանաբար սկսում է աւելի եւ աւելի լայն հասարակական խաւերի բաժին դառնալ: Ուրիշ խօսքով՝ որքան հասարակութիւնը դիմոկրատիանում էր, այնքան ազգութիւնը զարթնում, աւելի մեծ թիւով անհատների բաժին էր դառնում:

Գալիս է Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը: Բուրժուազիին հրատարակում է իր սկզբունքները. «Ազատութիւն, Եղբայրութիւն եւ Հաւասարութիւն»: Դիմոկրատիզմը լայն չափերով ըսկսում է գործադրուել: Մարդիկ իրար հաւասար են յայտարարում թէ օրէնքի առջեւ, թէ ըստ ծագման: Հնադարեան ստրկութեան եւ միջնադարեան ճորտութեան տիրապետական դռեհիկ ձեւերը պաշտօնապէս ջնջւում են եւ սկսւում է շահագործման ամենանուրբ ձեւը, վարձու աշխատանքը, որը կարող էր միայն «իրաւապէս հա-

ւասար» անհատները մէջ տեղը ունենալ: ԺԹ դա-
րի կէսերին վրայ են հասնում հանրաքուէն,
պարտադիր ուսումը, երկաթուղիներն ու շոգե-
նաւներն իրենց հսկայական արագ հաղորդակ-
ցութիւնով: Հասարակութեան բոլոր խաւերն ըս-
կսում են մասնակցել պետական ու հասարակա-
կան բոլոր երեւոյթներին: Ժողովրդական զան-
գուածները գիտակցութեան են գալիս: Ու այդ
գիտակցութիւնը վերարտադրում է բոլոր ազգու-
թիւններին, առանց բացառութեան: Նա թարմա-
ցընում, իսկական ազգային պետութիւն է դար-
ձընում խոշոր ազգերի գոյութիւն ունեցող պե-
տութիւնները, ինքնագիտակցութիւն դարթնեցնե-
լով տիրող ազգի մէջ:

Նա վերարտադրում է բաժան բաժան, լծի
տակ հեծող խոշոր ազգերին, նրանց պետութեան
վերածում: Նա զարթեցնում է բոլոր մանրիկ ժո-
ղովրդներին, որոնք խարխափում էին անգիտա-
կից գոյութեան խորշերում եւ որոնք, հաւանո-
րէն, դատապարտուած էին կլանուելու:

ԺԹ դարը մանր ու խոշոր ազգութիւնների
վերածնութեան դարն է, որովհետեւ այդ դարում
դեմոկրատիզմն իրականացաւ, զանգուածները
ժողովրդական լայն խաւերն առաջին անգամ ե-
կան սեփական գոյութեան եւ իրաւունքների գի-
տակցութեան:

«Ազգային ինքնագիտակցութիւնն անխզելի-
որէն միաձուլուած է աշխատաւոր զանգուածները

դասակարգային դիտակցութեան հետ», ասում է աւստրիացի սոցիոլոգ Գուստավ Կլոպֆիշը: (*)

Նապոլէոնի ժամանակ Ֆրանզիայի ազնուականութիւնը բոլորովին ֆրանսիացել էր, այն ինչ գիւղացիութիւնն ու բանուորութիւնը մնացել էին գերմանական ոգով ու խօսում էին նրանց մի գաւառարարաբանով: Պրուսական լեհաստանում ազնականութիւնն ու հոգեւորականութիւնը պրուսացել, բիսմարկեան կրծող ընթիւնից այլասերուել, անբարոյականացել էր. նոյնիսկ նրա արմատական ազնուականներն, ինչպէս Պոսադովսկիները ու Պոտրեւկինները, ջանք էին գործ դնում երեւալու զտարիւն պրուսացիներ. նրանք հասան նոյնիսկ պրուսական նախարարի ատիճանին, նախարարական աթոռի տիրացան: Բայց հաղորդակցութեան արագութիւնը, զարոյցները, գրականութիւնը, աշխատաւորական կազմակերպութիւնները կամաց-կամաց ժիժ դարի կէսերում բաց արին աշխատաւորութեան աչքը. մի կողմից նրան տուին դասակարգային ինքնագիտակցութիւն, իսկ միւս կողմից՝ վերարտադրեցին նրանց մէջ քնած ազգային զգացումը:

«Երբ Բիսմարկն ինքն իրեն խաբում էր, ասում է մի լեհական բանուորական լրագիր, որ ինքը ճգմել էր լեհական կուլտուրան. երբ նա ա-

(*) Գուստավ Կլոպֆիշ — «Ազգայնութիւնը եւ միջազգայնութիւնը ժիժ դարում» — Երես 39

սում էր, որ «լեհ ժողովուրդը գոհ է պրոսական կառավարութիւնից», — նա աչքաքող էր անում *աշխատաւոր դասակարգերը*: Բիսմարքի եւ իր նմանների համար ամբողջ Լեհաստանը մարմնացած էր ազնուականութեան մէջ: Եւ երբ պրոսական *սխտեմ*ին յաջողութեց անբարոյականացնել եւ քուլացնել ազնուականութիւնն ու հոգեւորականութիւնը՝ պաշտօններ ու տիտղոսներ բաժանելու նախապահով, բոլոր համագերմանական հայրենասէրներն ասում էին, որ «Պրուսիան գերմանացիներ է լեհերին»: Սակայն մինչ այդ, նոր ոյժը կարողացաւ անել. ոտի կանգնեց Լեհաստանի աշխատաւոր զանգուածը, որ երկար դարեր ստրկութեան մէջ էր դեգերում: Նրա համար ազգային քիւնն ամէն տեսակ ազգային ստրկացման՝ չէ կարլի կոտրել ոսկու կոյտերով: Այդ պատճառով բանուոր ժողովուրդը գերմանացիներու ձգտումը զգացմունքը դատարկ *Ֆրազ* չէ, նրա դիմադրութիւնի ծնեցնէ երկարատեւ եւ ծանր կռիւ»: (*)

Նոյն երեւոյթը նկատուում է բուսիներէ մէջ, որոնց աղնուականութիւնը ԺԶ, ԺԷ եւ ԺԸ դարերում մասամբ անցել էր լեհերի, մասամբ ուսաների կողմը, իսկ ժողովուրդը, — զիւղացին ու բանուորութիւնը մնացել էին բուսին: Նոյնը նկատուում է եւ սլովէներէ մէջ, որոնց զիւղացիները մշտական ապստամբութեան մէջ են եղել իրենց

(*) Գումպլովիչ — Ընդմ, երես 40

զերմանացած ազնուականների դէմ Ը դարից ըսկսած մինչեւ ԺԹ դարը։ Աւելորդ է ասել, որ Իրլանդիայում էլ կրկնուել է նոյն պատմութիւնը։ Եւ մի՞թէ մասամբ նոյնը չէր մեղանում ու վրացիների մէջ։ Նրանց ազնուականութիւնը եւ մեր խոշոր բուրժուազին չէի՞ն, որ ամենից առաջ սկսեցին «մայրենի դռնիկ լեզուն» թողնել, ռուսերէն խօսել, ռուսական «bon ton» ընդունել, նոյնիսկ ազգանուններն ու անունները ռուսացնել, եւ աշխատաւոր զանդուածն ու նրա իդէոլոգները չէի՞ն, որ եկան այդ թեթեամբիտ հոսանքի առաջն առնելու...

Այո՛, ԺԹ դարի կէսերում ազգային դեմոկրատիական շարժումը, որ անհրաժեշտ նախապայման է ամէն տեսակ դասակարգային-սոցիալիստական շարժման, — աստիճանաբար զօրացաւ ու հասաւ գործնական իրականացման դեռ այն ժամանակ, երբ զիտնականները չէին կարողացել մինչեւ իսկ, ինչպէս հարկն է, բնորոշել նրան։

«Նախ քան նրան որոշելը, — գրում էր հրահալուոր հերոս Կոչուտ Լայոսի որդին — Անդրէ Կօչուտը, — նոր սկզբունքը (ագգային), դեռ երէկ միայն ծնուած, արդէն ցնցում է արար-աշխարհը։ Նոր դոգման այնպէս պինդ տիրել է գիտակցութիւնները, որ անպայման անհրաժեշտ է հաշուի առնել նրան։ Նա շարժում է քաղաւորներին եւ ժողովրդներին, եւ հաւանօրէն՝ նրանցից

շատերը, որ վանում են նրան, նախագգում են, որ աշխարհը նրան է պատկանում»։ (*)

Եւ այսպէս՝ — դեմոկրատիզմի ու դասակարգային գիտակցութեան հետ միասին զարթնում ու վերստեղծում է ազգային գիտակցութիւնը։ Դեռ այդ քիչ է. մենք կ'ստենք, որ ամէն մի դասակարգային շարժում ազգային է։ Պրոլետարիատը հանրապէս՝ գոյութիւն չունի. նա մի սոցիալոգիական վերացական գաղափար է, մի արքատրագսիոն։ Իրապէս, կեանքի մէջ գոյութիւն ունի Ֆրանսիական պրոլետարիատ, գերմանական, ռուսական, հայկական եւ այլն։ Եւ ամէն ազգութեան պրոլետարիատ իւրատեսակ է բմբռնում իր դասակարգային շարժումը, իր շահերը, իր ձեռնարկները, նոյն իսկ իր սոցիալիզմը։ Ուրիշ կերպ լինել էլ չէր կարող. այդ ազգութիւնների թէ ներքին եւ թէ արտաքին պայմանները (օրեկտիվ եւ սուբեկտիվ) իրարից զգալիօրէն տարբեր են, ուրեմն եւ նրանցում թաւալուող դասակարգային բոլոր շարժումները պիտի լինեն տարբեր իրարից այն չափով, ինչ չափով որ պայմանների ընդհանուր գումարն է տարբեր։ Նոյն իսկ սոցիալիզմի վարդապետութիւնը զանազան ազգութիւնների գրկում ենթարկւում է տարբեր բացատրութիւնների եւ տարբեր մեկնաբանութիւններ

(*) André Cochute. - «Des Nationalités», - «Revue Des Deux Mondes», 1866 ք, էր. 690

րի: Թէ սոցիալիստական շարժման արագութիւնը (տեմպը) եւ թէ տափտիփական տարրերութիւններ զանազան ազգութիւնների պրոլետարիական կազմակերպութիւններում աչքի են ընկնում արեւել լոյսի նման:

Պրոֆեսոր Զոմբարտը (*) շատ յաջող նըկատում է, որ սոցիալիզմի բնոյթը տարրեր է զանազան ազգերի մէջ: Մինչեւ անգամ դասակարգային եւ տնտեսական ամենաակներեւ ու սլարդ շահեր չեն կարողանում ոչնչացնել իրենց ազգային բնոյթը. նրանք, լինելով զուտ դասակարգային ու տնտեսական շահեր, ամէն մի ազգի զրկում արտայայտում են յատուկ ազգային ձեւով:

Նոյն խոստովանութիւնը մենք գտնում ենք նաեւ չեխ պրոֆեսոր Մատարիկի մօտ: (**) Ռուս անարշիստները—Բախունին, Կրոպոտկին եւայլն, յաճախ բաժանում են սոցիալիստական շարժումը երկու տեսակի — բոմանական եւ գերմանական. մէկը կատաղի յեղափոխական բնոյթով ու արագութիւնով, իսկ միւսն աւելի սառը եւ էւօլիւսիոնիստական (բարեշրջական) գոյնով: Կրոպոտկինի կարծիքով, սլաւոնական ազգերի պրոլետար-

(*) «Հասարակական շարժումը ԺԹ դարում» գրքի «Ազգային առանձնատկութիւններ» գլուխը:

(**) Տես Մասարիկի «Մարքսիզմի փիլիսոփայական եւ ընկերավարական հիմնումը» գրքի երես 395-396.

իստի համակրութիւնն աւելի ֆրանսիական ազգային սոցիալիզմի կողմն է, որովհետեւ նա աւելի յեղափոխական է :

Եթէ ուշադրութեամբ քննենք զանազան ազգութիւնների սոցիալիստական շարժումները, մեր աչքին կ'ընկնի հետեւեալ երեւոյթը. որքան մի ազգի մէջ պրոլետարիատն ու նրա ղեկավարներն անզարգացած են, որքան սոցիալիստական շարժումը նոր է, այնքան աւելի ստրկօրէն են փոխառնուած կուսակցութիւնների ծրագիրները, նոյնքան աւելի կապկօրէն են ընդօրինակուած դասակարգային կռուի նշանաբանները, մեթոդները, տափտիքը եւայլն : Իսկ որքան պրոլետարիատն ու նրա իդէոլոգներն աւելի զարգացած, աւելի փորձուած ու ինքնուրոյն են, այնքան աւելի դասակարգային շարժումը դառնում է ինքնատիպ, ընդունում տեղական կամ ազգային բնոյթ եւ դասակարգային կուսակցութիւնը վեր է ածւում ազգային դասակարգային կուսակցութեան :

— Ուրեմն՝ որքան որ գիտակցութիւնը, կրթութիւնը, գիտութիւնն աճում ու տարածւում են ժողովրդի աւելի եւ աւելի լայն խաւերի մէջ, այնքան աւելի բողբոջում, փթթում է ազգութիւնը, այնքան աւելի նա նոր ոյժ է ստանում :

«Այն չափով, ինչ չափով որ կը վերանայ մարդու կեդեփումը մի ուրիշ մարդու ձեռքով, — ասուած է Մանիֆէստում, — կը վերանայ եւ մի ազգի կեդեփումը միւս ազգին : Երբ կ'ոչնչանայ

ազգի ներսում դասակարգերի հակասութիւնը, այն ժամանակ կ'ոչնչանայ եւ ազգերի միջեւ եղած քշնամութիւնը» :

Ինչ կտակած, որ «ազգերի միջեւ եղած քշնամութիւնը» «կը վերանայ, երբ կը վերանայ դասակարգի հակասութիւնն ազգի ներսում», այսինքն՝ երբ կը վերանան դասակարգերը, երբ կը կազմակերպուի մի ազադատակարգային հասարակութիւն, երբ կ'իրականանայ սոցիալիզմը — բոլոր մարդիկ կ'աշխատեն եւ բոլորն էլ կը վայելեն իրենց աշխատանքի պտուղը: Այո՛, այդ ժամանակ կը վերանան դասակարգերը եւ ազգերի միջեւ եղած թշնամութիւնը, բայց չեն վերանայ ազգերը: Նրանք կը լինեն, միայն թէ նրանց միջեւ թշնամութիւն ու ներհակութիւն այլեւս գոյութիւն չի ունենայ:

Աւելորդ չենք համարում այստեղ առաջ բերել Ժ. Ժօրէսի զեղեցիկ մտքերն այդ առիթով, արտասանուած Հերլէի ազադգային զաղափարների դէմ — մի մեծ միտինգում: Հռետորը նախ ենթացում է, որ կոմունիզմն իրականացել է, տարածուել ամբողջ մարդկութեան վրայ եւ ամէն տեղ սրբել, ոչնչացրել է ցեղերի ու դասակարգերի հակամարտութիւնները, «վերջապէս, ենթադրում է հռետորը, — երկրագնդի օրերի պայծառութեան եւ գիշերների մթնութեան մէջ շուտ գալուց ի վեր առաջին անգամ լինելով՝ գոյութիւն ունեն ոչ եւս իրար ջախջախող մարդկութեան բե-

կորներ, այլ միայն մի մարդկութիւն՝ գիտակից, կազմակերպուած, եղբայրական, ինքն իր տէրը եւ բնութեան տէրը դառնալ ձգտող»։ *Ու հարց է տալիս ժօրէսը*։

«Մարդկային այս իրականացած իդէալի մէջ, այս հաստատուած ու կազմակերպուած մարդկային ամբողջութեան մէջ մի՞թէ հայրենիքները պիտի անհետանան։ Օ՛, այո՛, հայրենիքները անհետանում են իբր անվստահութեան, տարամերժութեան, փոխադարձ ճնշման ոյժ, բայց յարատեւում են երկու կերպ. նախ՝ ինչպէս ինքնատիպ հաննաքների կուտակում. — վաղուան *կոմունիստ* մարդկութիւնը զարմանալի աղփատ կը լինէր, եթէ նա լինէր միօրինակ։ Բայց նա այդպէս չի լինի. նա կը ժառանգէ ազգային հաննաքների բազմազանութիւնը, ի հարկէ, ներդաշնակելով նրանց։ Ինչպէս որ անհատներն իրենց ինքնատիպ յատկութիւններով եւ իրենց այլազանութիւնով չը պիտի լուծուեն *սոցիալիստական* հասարակարգում, այլ ընդհակառակը, այն ժամանակ էլ պիտի ձգտեն ամրապնդելու իրենց բնաւորութիւնների ինքնատիպութիւնը — միայն իրար հետ աւելի ներդաշնակելով, նոյնպէս եւ այն պատմական անհատականութիւնները, որոնք կոչւում են հայրենիք. Անգլիական հայրենիք, Գերմանական, Ֆրանսիական, Իտալական, Ռուսական հայրենիքներ, վաղն էլ Չինական հայրենիք, երբ դեղին մարդկութիւնն ազատուի սպի-

տակների բռնակալ խնամակալութիւնից... (բու-
ռըն ծափահարութիւններ) . բոլոր այս հայրենի-
ները, պատմութեան կերտած իրենց բարոյական
անհատականութիւններով, իրենց լեզուով, գրա-
կանութիւնով, կեանքն ըմբռնելու իրենց յա-
տուկ եղանակով, իրենց աւանդութիւններով,
յոյսերի յատուկ ձեւով, իրենց կրքերի, ոգու,
հաննարի առանձնայատուկ դարձուածներով, —
բոլոր այս անհատականութիւնները պիտի կազմեն
հոմունիտական մեծ մարդկութիւնը, որը չպէտք
է լինի միօրինակ, մի անապատ, որի մէջ մարդ-
կային միլիոնաւոր հիւլէները, չորացած, անբեր-
րի, բախտի բերմունքով տարութերուէին հող-
մերի ուղղութեան համեմատ . բնդհակառակը՝ —
նա պիտի լինի մի մեծ միութիւն, *երկրագնդի նը-
ման խորտուբորտ*, բայց նրա նման լուսաւոր տա-
րածութիւնով շրջապատուած, ուր պիտի նառա-
գայրէ եղբայրական մարդկութեան մի եւ ան-
բաժան գաղափարը» :

*Այո՛, չեն լինի հայրենիքներն իբր պետու-
թիւններ — իրենց սահմաններով, բերդերով,
սահմանապահ զնդերով ու թնդանօթներով, բայց
կը լինեն ազգերն իրենց բնակութեան իսկական
վայրերով, որոնք միակ գիտականօրէն ճանաչ-
ւելու հայրենիքներն են, — ազգերը, որոնք ճա-
կատադրական անհրաժեշտ հետեւանքներն են
երկրի վրայ տիրող սլայմանների բնական բազ-
մազանութեան :*

Այն մտածողները, որոնք մարդկային պատմութիւնը համարում են միայն ու միայն դասակարգերի հակամարտութիւնից հիւսուած մի երեւոյթ, որոնք չեն նշմարում ազգերի հակամարտութեան ոչ նուազ ազդեցիկ առանցքը նոյն պատմութեան մէջ, — այդ մարդիկ կարծում են, թէ մարդկութիւնը բաղկացած է լոկ դասակարգերից եւ այդ դասակարգերի ու մի քանի թագաւորողների շահերի պաշտպանութեան համար ստեղծուած պետութիւններից:

Նրանց կարծիքով՝ մարդկութիւնը, բացի այդ երկու բաղադրիչ տարրերից, այլ եւ ոչ մի տարր չունի, չունի ոչ մի ուրիշ արտայայտութեան ձև: Իսկ այդ երկուսն էլ անպայման պիտի չքանան, երբ միանգամ կը վերանայ մարդը մարդուն կեղեքելու սկզբունքը: Իրականացաւ սոցիալիզմը, չկայ այլեւս կեղեքման ըմբռնումը, չկան դասակարգեր, ուրեմն, կը մնայ մի եւ միակ մարդկութիւն, կադմուած միապաղաղ աշխատող անհատները: Դա բնական հետեւանք է տնտեսական մատերիալիզմի նեղ միակողմանիութեան:

Սակայն մենք գիտենք, որ մարդկութիւնն ունի տնտեսական եւ քաղաքական շերտաւորումներ. կան պետութիւններ ու դասակարգեր. Բայց կան եւ ազգեր, որոնք արտայայտիչ չեն տնտեսական միտումների, որոնք ամփոփում են մի խումբ մարդկանց զարեւոյթ կուտակուած ֆիզիքական, մարմնակազմական եւ զաղափարային

Ժառանգականութեան արդիւնքները, մարդկանց
 բոլոր անհատների, դասերի ու դասակարգերի
 նմանաբանական տարրերը: Երբ վերանում է կե-
 դեքումը մի դասակարգի ձեռքով կատարուող,
 բնականօրէն կը վերանան նաեւ այդ երկու կեդե-
 քող եւ կեդեքուող խմբերի տարբերութիւնները
 նիւթական բոլոր հարցերում. կեդեքում է մի ան-
 հատ միւսին, մի դասակարգ միւսին, թէ մի ազգ
 միւսին, այդ միեւնոյնն է: Բայց խմբակցութիւն-
 ների գոյութեան իրաւունքը լոկ նիւթական չա-
 հերի մակարդակը չէ, այլ կան եւ այլ տեսակի
 — բարոյական ու մտաւոր կամ իդէոլոգիական
 շահեր, այն ժամանակ կեդեքման սկզբունքի վե-
 րացուելը երբեք չէ կարող առաջ բերել այդ վեր-
 ջին տեսակի հիմքերի վրայ ամրացած մարդկային
 բաժանումների ոչնչացում:

Վերջապէս ո՞վ է ասում, որ կեդեքումն աչ-
 խարհիս վրայ կատարւում է միայն մի ձեւով —
 դասակարգային արտայայտութիւնով: Ամենեւին
 ոչ. միայն մի դասակարգ չէ, որ կեդեքում է մի
 այլ դասակարգի: Բացի դրանից կայ եւ մի այլ
 տեսակի, կարելի է ասել՝ աւելի վատթար կեդե-
 քում, քան մի դասակարգի կեդեքելը միւսին: Կայ
 ազգային կեդեքում, — երբ մի ազգ՝ — տիրողը
 — կեդեքում է մի ուրիշ ազգի, — տիրուածին:
 Որքան դարեր զերմաններն Աւստրիայում կեդե-
 քել են չեխներին եւ ուրիշ սլաւոնական ցեղերին.
 մաջարները կեդեքել են սերբերին, խարւատնե-

րին ու միւս մանր սլաւոնական եւ այլ ցեղերին․
 իսկ զերման ու մաջար միասին ինչպիսի անսիրտ
 կեղեքման են ենթարկել հրէաներին, — մարդ-
 կութեան այդ պարիաներին: Իսպանիայում դա-
 րեր շարունակ նախ մաւրները կեղեքում էին իս-
 պանական ժողովուրդներին ու հրէաներին, իսկ
 յետոյ արդէն իսպանացիներն սկսեցին կեղեքել
 թէ մաւրներին եւ թէ նոյն հրէաներին: Եւ պիտի
 նկատել, որ վերջիններիս կեղեքումը ու հալա-
 ծանքը շատ աւելի խիստ ու բարբարոս էր, քան
 արաբներինը. ո՞ւմ ծանօթ չեն ինկվիզացիան (հա-
 ւատաքննութիւնը) ու ճիզուխտները, մարդկային
 հրէշաւոր տանջանքի այդ սոսկալի արտայայտու-
 թիւները: Մինչեւ օրս մենք տեսնում ենք թէ
 Ռուսիայում եւ թէ Աւստրիայում լեհերին կեղեք-
 ւած իբր ազգային ամբողջութիւն ունեների եւ
 զերմանների ձեռքով. այն ինչ միաժամանակ
 մենք նկատում ենք, որ լեհերն էլ, իրենց կարգին
 կեղեքում են իրենց երկրում բնակութիւն հաստա-
 տած բազմաթիւ հրէաներին: Այդպիսի օրինակ-
 ներ բազմաթիւ են եղել թէ պատմութեան ընթաց-
 քում եւ թէ այսօր, մեր աչքի առջեւ:

Սակայն ո՞վ է այդտեղ կեղեքողը. մի ազգի
 ամբողջութիւնն է կեղեքում միւս ազգի ամբող-
 ջութեանը: Երբեք: Տիրողը, կեղեքիչը հանդի-
 սանում է միշտ տիրող ազգի, ուժեղ ժողովրդի
 մէջ մի շերտ — բուրժուազիան, ազնուականու-
 թիւնն ու քիւրոկրատիան: Այդ հասարակական

խաւերը, կեղեքելով, ըստ ընդունուած կարգերի, իրենց ազգի ներսում գտնուող բանուոր, զիւզացի եւ այլ աշխատաւոր տարրերին, միաժամանակ կեղեքում են նաեւ հպատակ, տիրուած ազգերի ամբողջութիւնը, — թէ բուրժուազիային, թէ հողատէրերին եւ թէ, մանաւանդ, աշխատաւորութեանը: Այդ կեղեքումը կատարւում է այս կամ այն արտօնեալ վիճակով, այս կամ այն առաւելեալ գլուխութիւնով կամ պրիվելեգիայով:

Վերցնենք մի քանի օրինակներ:

Երկա՛ր տարիներ է Աւստրիայում Գերմաններին եւ չեխերին մէջ ազգային կատաղի կռիւ է: Երկու կողմից էլ զարմանքի արժանի եռանդով մարզիկ կուում են, օրինակ, այն բանի համար, թէ մի սափրիչի խանութի ցուցանակը պիտի դրուի չեխերէ՞ն թէ գերմաներէն. կամ բանակում զինուորաց անունը կարգալիս, չեխ զինուորը պիտի «hier» («այստեղ» գերմաներէն) պատասխանէ, թէ՞ պիտի «zdé» ասէ («այստեղ» չեխերէն): Թւում է, թէ այնպիսի անմեղ բաներ են այս բոլորը, որ ջանալ նրանց տալ տնտեսական բացատրութիւն — անկարելի է: Բայց ոչ. Մարքսիստներն այս ազգային շահերի ընդհարման մէջ էլ տեսնում են Մարքսի ասած «Das in's ideelle eingesetzte Materielle» — «իդէականի մէջ նստած նիւթականը»: Նրանք ազգային եւ կուլտուրական այդ կռիւը բացատրում են գերմանական եւ չեխական երկու բուրժուական բանակաների շահերի

մրցումով: Ուրքան շատ չեխերէն խօսող լինի, ա-
սում են նրանք, այնքան աւելի մեծ կը լինի չեխ
քուրժուագիւոյ յաճախողներէ թիւը եւ ընդհա-
կառակը: Ազգութիւններէ կռիւը գերմաններէ ու
չեխերէ միջեւ ոչ այլ ինչ է, եթէ ոչ շուկան ընդ-
լայնելու կռիւ երկու կողմից էլ: Այսպիսով, հա-
մաձայն հին մարքսիստական տեսակէտի, ազգա-
յին տարրն ամէն տեղ եւ ամէն ժամանակ հաւելում
է մատերիալիստական կամ տնտեսական տարրի
մէջ, չտալով ոչ մի անվերելօժելի, ոչ մի անմար-
սելի բան:

Այդպէ՞ս է արդեօք իրականութեան մէջ: Ոչ,
պատասխանում է ժիտլովսկին: (*)

Մի ընդէն եթադրենք, որ երկու ազգութիւն-
ներ չկան. չեն կուտում գերման եւ չեխ ազգերը,
այլ դրանք մի ազգ են եւ նրանց ներսում մրցում
են իրար հետ երկու խումբ քուրժուաներ: Դա,
անշուշտ, կը լինէր դասակարգային կռիւ քուր-
ժուագիւոյ ներսում: Սակայն քաղաքատնտեսու-
թեան մէջ բացարձակ ճշմարտութիւն է, որ ներ-
դասակարգային կռիւն ընդունում է հասարակ
մրցման բնոյթ, անհատական արտայայտութիւն:
Ամէն մի արտադրող, իր տանը նստած, մտածում
է միայն մի բան. ինչպէ՞ս լայնացնէ եւ աւելի շա-
հաւէտ դարձնէ իր սեփական գործը: Տնտեսական

(*) «Սերպի» երկրորդ ժողովածուն — «տնտեսական
մասերիալիզմը եւ ազգային հարցը» — յօդ. եր. 65.

Կեանքի մէջ ամենեւին զոյութիւն չունի «կանգ-
 նած վիճակ»։ Կապիտալը կամ աճում, զարգա-
 նում է, կամ նուազում, քայքայւում։ Եթէ նրա
 բացարձակ չափը տասնեակ տարիներ նոյնն է
 մնում, դա նշանակում է, որ նա յետադիմում է,
 որովհետեւ չորս կողմում միւսներն աճում են ու
 ընդարձակում իրենց գործերը։ Իսկ աւելի խոշոր
 ձեռնարկութիւնն անպայման աւելի արդիւնք է
 տալիս եւ կարող է մանրին այսօր կամ վաղը կը-
 լանել, յաղթահարել մրցման մէջ։ Ուրեմն՝ նոյն
 դրամադրուիսը համեմատաբար մանրանալով, ա-
 ւելի երկիւղի մէջ է, կլանուելու, չքանալու, կո-
 տըր ընկնելու երկիւղի մէջ։ Այդ երկիւղը հրա-
 մայօրէն ստիպում է բոլոր կապիտալիստներին
 մտածել մեծացնելու մասին իրենց կապիտալնե-
 րը, իրենց ձեռնարկութիւնները։ Եւ որովհետեւ
 ներկայ կապիտալիստական կարգերում ոչ ոք չէ
 կարող որոշել շուկայի պահանջին չափն, այդ
 պատճառով ամէն մի արտադրող աշխատում է
 արտադրել որքան կարելի է չատ, լարել իր ուժե-
 րը՝ ստեղծելու համար բարիքներ ու արժէքներ
 հասարակութեան համար, — ապրանք, ծախելու
 նպատակով։ Ամէն մի արտադրող, չը գիտենալով
 ոչ համաշխարհային շուկայի պահանջը, ոչ էլ
 այն՝ թէ որքան են արտադրում ուրիշները, ջանք
 է գործ դնում մեծացնելու իր արտադրութիւնը։
 Սա է որ կոչւում է արտադրական անիշխանու-
 թիւն, որը ծնունդ է տալիս գերարտադրութեան

(surproduction) եւ կրիզիսները կամ ճգնաժամները:

Տնտեսական կեանքի կապիտալիստական կազմի այս անխուսափելի դիժը դարձնում է բուրժուա դասակարգի ամէն մի անգամին մահացու հակառակորդ միւս բոլորին՝ ի հարկէ լոկ արտադրութեան, վաճառման, զուտ արդիւնք ստանալու գործում: Իսկ երբ հարցը վերաբերում է քաղաքական ու հասարակական պահանջներին, անպայման նրանք միասին են շարժւում, միասին են գործում ամէն տեղ, իբր միատեսակ շահերի տէր անհատների հաւաքածու կամ իբր մի դասակարգ, ընդդէմ միւս բոլոր հակադիր շահերունցող դասակարգերի, դասերի, խմբակցութիւնների եւ անհատների:

Բուրժուազիայի դասակարգային այդ բնույթը պարզելուց յետոյ, անցնենք մեր ենթադրութեանը: Ասենք թէ չե՛լա եւ գերման չկայ, եւ մըրցում են միեւնոյն ազգի բուրժուաները: Ի հարկէ կայ ներկայում կատաղի մըրցում կապիտալիստական զանազան խմբակցութիւնների միջեւ՝ — նոյն դասակարգի ներսում խոշոր կապիտալիստները մըրցում են միջակների ու մանրերի դէմ, միջակները խոշորների ու մանրերի, իսկ վերջիններքս էլ միջակների ու խոշորների դէմ: Սակայն ենթադրենք, որ բոլորն էլ խոշոր կապիտալիստներ են եւ մըրցում են իրար դէմ: Այստեղ արդէն դառնում է զուտ ներդասակարգային մըրցում, որ

անպայման ստանում է զուտ անհատական բնույթ : Այդ մրցումը երբեք, ոչ մի դէպքում չէ կարող լերածուհի զասակարգային նոյն խիզախին մրցման . նա չէ կարող խոշոր բուրժուազիային , օրինակ՝ խոշոր ֆաբրիկաներին , բաժնեկերկու դասի կամ ստեղծել նրանցում երկու ազգային խմբեր : Դասակարգի ներսում , ասում է Ժիտլովսկին , նրանք կարող են կատաղօրէն իրար օձիքից կպչել եւ իրար բերնից պատառը խլել , բայց այդպիսի կռիւն երբեք չէ կարող դուրս գալ տրանսպարան ձեւերից եւ զուտ անտեսական միջոցներից : Այդ մրցող բուրժուաներից ոչ մէկը երազել անգամ չէ կարող , որ ինքը մի կերպ իրաւական առաւելութիւն ձեռք բերէ միւսներից կամ իրենց մի մասը կազմակերպուին եւ ձեռք բերեն որոշ իրաւունքներ , որոնցից միւսները զուրկ լինեն , կարող չլինեն նոյնը ձեռք բերելու : Ինչ կասկած , որ այդ խոշոր գործարանատէրերի մի մասը կարող է տրէստ կազմել , զանազան խորամանկութիւններ անել . դաւեր ու ակամներ նիւթել հակառակորդների դէմ , սակայն երբեք որեւէ իրաւական առաւելութիւն չէ կարող լինել այս ու այն անհատի կամ խմբակցութեան համար . նրանք բոլորն էլ հաւասար են օրէնքի առջեւ :

Բայց այժմ ենթադրենք , թէ մեր վերացրած ազգային տարրը նորից ներս է մտնում : Ի՞նչ կը լինի այն ժամանակ : Չեիս խոշոր բուրժուազիան կը կազմակերպուի առանձնապէս , գերմանական

էլ իր համար, եւ այդ երկու ազգային խմբակ-
 ցութիւնները կը ջանան անսպասման իրենց կողմը
 զրաւել իրենց ազդութեան բոլոր անհատներին,
 ձեռք բերել այս կամ այն բացառիկ, արտօնեալ
 դրութիւնն իրենց ազգի համար եւայլն: Օրինակ՝
 մի Տիմոշկին Պետական Դումայում կ'առաջարկէ
 սահմանափակել Կովկասեան ասեղի ազգերի իրա-
 ւունքը հողեր զնելու, զօրծարաններ բանալու,
 նաւթահողերը պետութիւնից կապալուով վերցնե-
 լու... Եւ այդ բոլորը տալ «խսկական ռուսներին»,
 որովհետեւ նրանք են իրենց արիւնով ներկել
 Կովկասի լեռներն ու դաշտերը, որովհետեւ նը-
 րանք են միակ իսկական հայրենասէրները, հայ-
 րենիքի համար զոհուողները: — Ակներեւ է որ
 այստեղ, տնտեսական խնդիրները վրայ աւելցաւ
 մի նոր տարր, — ազգայինը, որը զալիս է խըս-
 տացնելու եւ մի քիչ տարրեր դոյն տալու տեղի
 ունեցող տնտեսական կռուին: Ի հարկէ կարելի
 է պնդել, որ այստեղ ազգայինը լոկ դիմակ է,
 քողարկելու համար զուտ տնտեսականը կամ դա-
 սակարկայինը: Ինչ կասկած, որ այս կամ այն
 անհատների կողմից կարող է նա ծառայել իբր
 բացարձակ դիմակ, իսկ ուրիշների կողմից նա
 դիմակ չէ, այլ ամենամանկեղծ ու մաքուր համո-
 զում, — ազգային զգացմունքի արտայայտու-
 թիւն, որը այս գէպքում խիստ համապատաս-
 խան է մրցողների զուտ տնտեսական շահերի:

Այժմ վերցնենք մի այլ գէպք, երբ տնտեսա-

կան չահերն ու ազգայինը, նախընթացի նման, չեն համապատասխանում, այլ կամ հակասում են կամ, լուազոյն դէպքում, անտարբեր են մրցողներին համար:

Ասենք թէ մի ազգութեան մանր բուրժուազիան մրցում է միւս ազգութեան խոշոր բուրժուազիայի դէմ, կամ մի ազգի գիւղացիութիւնը մրցում է միւս ազգի «շլեխտայի», բարոնների, աղնուականութեան կամ խոշոր կալուածատէրերի դէմ: Մրցող մանր բուրժուազիան կամ գիւղացիութիւնը խառնում են իրար տնտեսական եւ ազգային չահերը. նրանք պահանջում են, օրինակ՝ զերման բարոնութեան վերացում, լեհական շլեխտայի ոչնչացում եւայլն: Նրանց պահանջներին մէջ չեղտում է ազգային տարրը, բայց ամէն մի մարքսիստ ձեռք կ'սսէ որ այդ ազգային տարրը դիմակ է, ծածկելու համար մանր բուրժուազիայի դասակարգային չահերը. ի՞նչ չեիս, ի՞նչ լեհ, կամ զերման. այստեղ մրցում են լոկ մանր ու խոշոր բուրժուաներ, — զուտ դասակարգային մի երեւոյթ, որը նետել է իր ուսերին ազգային իդէալական թիկնոցը. — «Das in's ideelle eingestetzte Materielle», կրկին Մարքսի խօսքերը — ի՞նչականի մէջ նստած նիւթականն է դա:

Այժմ աւելի խորը թափանցենք այդ շարժման մէջ, չմնանք մակերեւոյթի վրայ, ինչպէս մարքսիստներն են անում, ի հարկէ իրենց դաւանած վարդապետութեան միակողմանի եւ հեշտ բնոյթի համեմատ:

Ի՞նչ է ուղում ճնշուած ազգերի մանր բուր-
 ժուագիւան կամ ասենք, զիւղացիութիւնը: Մի՞թէ
 նա պահանջում է այնպիսի օրէնքներ, որոնք այ-
 լեւս բացարձակ անհնար դարձնէին խոշոր բուր-
 ժուագիւայի կամ հողատիրութեան երեւան դալը:
 Ո՛չ: Եթէ այդպէս լինէր, դա կը լինէր զուտ դա-
 սակարդային տնտեսական պահանջ, թէ եւ բա-
 ցարձակ անմիտ, որովհետեւ քանի կայ կապիտա-
 լիստական կամ ներկայի մասնաւոր սեփականա-
 տիրական հասարակակազմը, այդպիսի պահանջ-
 ները կը մնան միշտ անիրագործելի, մեռած տառ,
 — մեռած ու մեռնելու դատապարտուած դասա-
 կարգերի անմիտ ու անիրականանալի պահանջ-
 ներ: Բայց այդ չէ ասում կեղեքուած հասարա-
 կութեան, լծի տակ եղող ազգի մանր բուրժուագ-
 իւան ու զիւղացիութիւնը: Նրանք չեն պահանջ-
 ում առհասարակ հողատիրութեան ու խոշոր կա-
 պիտալիզմի վերացում, այլ միայն վերացում,
 օրինակ, դերման խոշոր կապիտալիստների ու
 բարոնների, եւ նրանց փոխարինումն, օրինակ՝
 չեիւ խոշոր կապիտալիստներով ու հողատէրերով:
 Աշկարայ է, որ այստեղ ազգային տարր կայ. մի
 ազգային միութիւն ձգտում է իր կողմը դրա-
 ւել այս կամ այն տնտեսական շահերը: Ազգային
 սկզբունքն է, որ մրցման է դուրս եկել տնտեսա-
 կան հողի վրայ: Այդ կռուի միջից հանեցէք բոլոր
 տնտեսական շահերը, անպայման տակին կը մնայ
 մի անվերլուծելի տարր մարքսիստների համար
 — ազգային տարրը:

Բերենք մի երրորդ օրինակ: Մարտէշլում իտալացի բանուորները մրցում են տեղական զբաղմունքի Ֆրանսիացի բանուորների դէմ. կամ Ժընևում նոյն իտալացի բանուորութիւնը մրցում է զուիցերացի բանուորների դէմ. իսկ Միացեալ-Նահանգներում հայ բանուորները մրցում են տեղացի բանուորների դէմ: Մենք չենք առաջ բերում չինացիների մրցումը եանկիների դէմ, կամ Փելլաիների մրցումն իտալացիների եւ յոյներին դէմ, որովհետեւ այստեղ օրավարձի չափերի տարբերութիւնը, կուլտուրական խոշոր տարբերութիւնից առաջացած, կարող են չփոթել տրնտեսական պատմաշխարհայեաց ունեցողներին: Մենք վերցնում ենք իրար քիչ ու չատ հաւասար կուլտուրայի զաւակների, ինչպէս իտալացի եւ Ֆրանսիացի բանուորների: Յաճախ, չատ յաճախ Ֆրանսիացի եւ զուիցերացի բանուորութիւնը բողոքում է եկւոր իտալական բանուորութեան դէմ, որ իրենց ձեռից խլում է զործը, ուրեմն մի կտոր հացը: Վերլուծենք այդ երեւոյթը: — Թէ Ֆրանսիայում եւ թէ Զուիցերիայում կայ բանուորների մի ահագին պահեստի բանակ. անգործ, գործազուրկ բանուորներ: Ոչ մի Ֆրանսիացի բանուորի մտքովն անդամ չէ անցնում դնալ բողոքել, թէ ինչո՞ւ այդ բանուորական պահեստի բանակի անդամները խլում են իրենց, գործի կանգնած բանուորների աշխատանքները: Դա մի բնական երեւոյթ է, որ տեղի ունի բոլոր ազգութիւնների

ներսում, բոլոր երկրները պրոլետարների մէջ։ Ազգային մի մակարդակի վրայ կանգնած ազգային միութիւններն իրար դէմ մրցում են, բայց այդ մրցման մէջ միայն մի տարր գոյութիւն ունի, — գուտ տնտեսական տարրը։

Իսկ երբ Ֆրանսիացի կամ գուեցերացի բանւորութիւնն ըմբոստանում է ընդդէմ իտալացի բանւորների, այստեղ արդէն բացի գուտ տնտեսականը, ներս է սողոսկում եւ ազգային տարրը։

Ոչ, տնտեսական ազդակի մէջ երբեք չէ հաւում ազգային տարրը. նա անվերլուծելի է, որովհետեւ արտայայտութիւն է մարդկային գոյութեան տարրեր ձեւերի։ Մարդկութիւնը բաղկացած է երկու կարգ վանդակներից — ըստ երկարութեան, որ կազմում ազգերը, եւ ըստ լայնութեան, որ կազմում են դասակարգերը։ Տնտեսական շահերն արտայայտութիւն են ըստ լայնութեան ընկած վանդակների կամ դասակարգերի, իսկ ազգային շահերն արդիւնք են ըստ երկարութեան տարածուող վանդակների։

Տիրող ազգութիւնները կեղեքող դասակարգերը շահագործում են եւ իրենց ազդի աշխատաւորութիւնը, եւ հպատակ ազգերն ամբողջապէս։ Ի հարկէ հպատակ ազգերից այս մէկը կարող է աւելի ենթակայ լինել կեղեքման, քան այն միւսը կամ միեւնոյն ազգի ներսում այս ինչ դասակարգը կարող է չատ աւելի կեղեքուած լինել, քան այն ինչ դասակարգը։

Ինքնակալական ու բռնապետական քեթիմների օրով տիրող ազգի կեղեքումն առնում է աւելի բարբարոս եւ շատ աւելի լկտի կերպարանք տիրուած ազգերի վերաբերմամբ, քան, օրինակ, սահմանադրական երկրներում: Այս վերջիններում էլ այդ շահագործութիւնը յաճախ կախուած է լինում այն բանից, թէ ինչ ոգով են կազմուած պետական հիմնական օրէնքները կամ ինչ աստիճանի կուլտուրական բարձրութիւն ունեն երկրի բոլոր ժողովրդները եւայլն:

Այժմ մեզ մնում է քննել մի հարց եւս: Ի՞նչ դիրք պիտի բռնէ աշխատաւորութիւնն այս տնտեսական ու ազգային շահերի ալեկոծ ծովում, կամ ի՞նչ են բուրժուական եւ աշխատաւորական նացիոնալիզմն (ազգայնութիւնը) ու ինտերնացիոնալիզմը (միջազգայնութիւնը): Թողնելով աշխատաւորութեան տնտեսական շահերի խնդիրը մի այլ աշխատութեան մէջ վերլուծելու, մենք կը քննենք աշխատաւորութեան յարաբերութիւնը դէպի ազգային հարցը: Նախընթաց երեսներում յաճախ մենք յայտնել ենք մեր տեսակէտն այդ առիթով, բայց դա եղել է կցկտուր, չամբողջացած ձեւով:

Գ Լ ՈՒՒ Զ.

Աշխատանքական եւ բուրժուական տեսակետները
միջազգայնութեան եւ ազգայնութեանց վրայ:

Երբ մենք քննում ենք երկու կամ աւելի ազգերի յարաբերութիւնները, այնպիսի ազգերի, որոնց մէջ կան տիրուող եւ տիրող ազգեր, — մի խումբ մարդկանց՝ ենթակայ մի այլ խմբի, չը պէտք է մոռանանք, որ բացի այդ ազգային դանադանաւորումը, այդ ժողովրդների ներսում իսկ գոյութիւն ունի մի այլ շերտաւորում եւս, — դասակարգերը: Տիրող, կեղեքող ազգի մէջ եւս ինչպէս եւ կեղեքուողների կամ ենթակայ ազգերի մէջ, գոյութիւն ունեն դասակարգեր — կեղեքողներ եւ կեղեքուողներ: Ազգութիւնների հաւաքման գործում այդ դասակարգերից ո՞րն է, որ օգտւում է ամենից աւելի եւ ո՞րն է, որ վնասո՞ւմ է ամենից առաւել: Պատւում են բուրժուազիւն, հողատէրերը, հոգեւորականները եւ պաշտօնէութիւնն իրենց հետ ունենալով մտաւորականութեան սողուն մասը կամ, ինչպէս պրոֆեսոր Զոմբարտն է նրանց անուանում, — բուրժուազանմանները (բուրժուազօրիւղները):

Տուժում են ամենից առաւել պրոլետարիատն ու աշխատաւոր զիւղացիութիւնը թէ տիրող եւ թէ տիրուած, հալածուած ազգերի մէջ:

Տիրող, կեղեքող ազգի բուրժուազիան — մանաւանդ խոշոր կապիտալիստներն, անսպաժան օգուտ ունեն ազգային առաւելեալ դրութիւնը, ազգային քէնն ու հալածանքը պահպանելուց: Դրանով բուրժուազիան ձեռք է բերում որոշ արտօնութիւններ թէ գործարաններ բանալու, թէ մենաշնորհներ ու առաւելեալ այլ տեսակի պայմաններ իր համար ստեղծելու տեսակէտից: Վերջապէս՝ իր սեփական ազգի պետական իշխանութեան տակ որքան աւելի երկրներ ու ազգեր զընդունեն, այնքան աւելի նրա շուկան լայն կը լինի: Նա պիտի պահանջէ, որ բոլոր հպատակ ազգերը խօսեն տիրող ազգի, իր սեփական ազգի լեզուով. նա պէտք է կողմնակից լինի դպրոցներէ ու դըրականութեան հալածման փոքր, հպատակ ազգերի վերարեւմամբ. կարձ՝ նա պիտի լինի կողմնակից կլանելու, ասսիմիլիցիայի, կ'ուզէ կուտարական ճանապարհով, կ'ուզէ դա լինի «հրով ու սրով»: Նրա կապիտալիստական շահն այդ է պահանջում:

Աղնուականութիւնը, պաշտօնէութեան եւ մտաւորականութեան մի մասը նոյնպէս ձգտում են իրենց ազգի պետութեան կենտրոնացած ամբողջութիւնը պահպանելու, թոյլ չտալու ոչ մի օրէնսդրական եւ նոյնիսկ վարչական լայն ապա-

կենտրոնացում: Նրանք էլ կլանման, ազդային
 հարածանքի, մի հօտ եւ մի հովիւ դարձնելու ե-
 ոանդուն կողմնակիցներ են, որովհետեւ նրանց
 շահն այդ է պահանջում: Նրանք ստանում են
 չաղ-չաղ պաշտօններ, նրանք տեղաւորում են ի-
 րենց մօտաւոր ու հեռաւոր ազդակներին ու
 բարեկամներին: Նրանց մէջ յաճախ, չա՛տ յաճախ
 լինում են ախպրութիւններ, որոնք իրենց մայրենի
 նահանգներում անկարող լինելով մրցման դիմա-
 նալ իբր անընդունակ, բթամիտ, գուցէ եւ իբր
 անբարոյական անհատներ, գալիս են տիրուած
 նահանգների, տիրուած հպատակ ազգերի մէջ
 բախտ որոնելու: Եւ դոնում են այդ բախտը. դա
 շովինիզմն է, բուրժուական ու քիւրօկրատիական
 նացիոնալիզմը: Նրանցից բարձրները հանդիսա-
 նում են որոշ օտարակեր քաղաքականութեան մը-
 դիչ ու ղեկավար, իսկ հսկայական մեծամասնու-
 թիւներ — լոկ զործիքներ, բարձրերի ցանկութիւ-
 նը լաւ ըմբռնած հաւատարիմ ծառաներ, որոնք
 ուզում են՝ բարձրերի կամքը կատարել, որ առաջ
 դնան պաշտօնի մէջ, նիւթապէս բարդաւաճին:
 Մի պրիստաւ կամ նախի՛ միւտիւրի, մի ողորմե-
 լի անընդունակ մարդ, յանկարծ տեսնում ես, ա-
 ռաջ դնաց. եղաւ գաւառապետ, միւքասերիֆ,
 նահանգապետ, վալի... ինչո՞ւ. որովհետեւ հը-
 պատակ ազգերի «ազդային յեղափոխական» շար-
 ժումները լաւ է զսպել, նոյնիսկ յաճախ չեղած
 տեղից ստեղծել է հրէական, լեհական, հայկա-

կան, բոլորական, ալբանական կամ վրացական
«ապստամբութիւն», գաղտնի ժողով, կոմիտէ,
որպէսզի հաճելի երեւայ վերեւում նստածներին,
որպէսզի առաջ գնայ իր պաշտօնում: Նա գլխի
որ աղնիւ ճանապարհով չէ կարողանալու բարձ-
րանալ, որովհետեւ անընդունակ է. եթէ ընդու-
նակ լինէր, մայրենի նահանգներէջ չէր դուրս
դայ գործ որոնելու ծայրագուտներում: Մնում
է նրա համար մի կարճ ուղի. ստել, զրպարտել,
հալածել, ձգտիլ կեանքի մէջ, նոյնիսկ չեղած
տեղում, գտնել այն, ինչ որ հաճելի է վերիննե-
րին: Այդպիսի պաշտօնէութեան ամբողջ լեզուն-
ներ կային Գոլիցինեան րէժիմի օրով կողկասում
եւ առհասարակ Ռուսիայում Պլեմէյեան րէժիմի
ժամանակ, իսկ Թիւրքիայում Համիտի օրով ու
այսօր էլ... Նրանց թիւն այսօր էլ նուազ չէ
Ռուսիայի եւ գեռ Թիւրքիայի բոլոր անկիւննե-
րում:

Ապակենտրոնացումը, տիրուած ազգերի ինք-
նավար վարչական սիստեմը նրանց համար ձե-
ռնտու չէ, որովհետեւ ոստիկանութիւն, դատա-
րան, պաշտօնէութեան խոշոր մեծամասնութիւ-
նը — բացի մի քանի կարեւոր եւ համապետական
նշանակութիւն ունեցող պաշտօններէջ, — կախ-
ւած կը լինի տեղական ժողովրդներէ ընտրութիւ-
նէջ՝ թէ տեղական լայն ինքնավարութեան եւ թէ
մանաւանդ, աւտոնոմիայի ու ֆեդերացիայի ժա-
մանակ: Տեղական ինքնավարութեան մէջ անգամ

պաշտօնէութեան որոշ մասն ընտրովի է եւ ոչ նը-
շանակովի: Եւ որքան լայն ու արմատական լինի
տեղական ինքնավարութիւնը, որքան նա մօտե-
նայ անդլիական self - government-ին, այնքան
աւելի պաշտօնէութիւնն ընտրովի կը լինի: Իսկ
ուր կայ ընտրական սկզբունք, այնտեղ բնակա-
նօրէն, ընտրում են, փոքրից սկսած մինչեւ ամե-
նաբարձր պաշտօնների համար, տեղացիներ —
այնպիսի մարդիկ, որոնք ամենից աւելի լաւ գի-
տեն, ծանօթ են տեղական բոլոր գործերին ու
գործիչներին: Վարչական այդ ապակենտրոնա-
կան լայն սիստեմը յնաա է պաշտօնէութեանը
(բիւրոկրատ) ու ազնուականութեանը, եւ նրանք
դէմ են թէ այդ սիստեմին եւ թէ ամենից աւելի
եռանդով այդ սիստեմը պահանջող տիրուած ազ-
գութիւններին: Չէ՞ որ վարչական եւ օրէնսդրա-
կան ապակենտրոնացում պահանջողները գլխաւոր
հիմքերից մէկն էլ ազգերի բազմազանութիւնն
է: (*)

(*) Եթէ մենք ասում ենք, որ վարչական եւ օրէնսդր-
ական ապակենտրոնացման գլխաւոր հիմքերից մէկն էլ ազ-
գերի բազմազանութիւնն է, ի հարկէ դա չէ նշանակում, որ
ուրիշ հիմքեր չկան. մանաւանդ դա չէ նշանակում, որ եթէ
մի ընդարձակ պետութեան մէջ ապրի լոկ մի ազգ, այդ
պետութեան վարչութեան եւ օրէնսդրութեան մէջ քաղա-
ւորելու է անշուշտ *ցենսորայիզմ*: Միեւնոյն ազգի այս ու
այն գաւառում ու նահանգում ապրող մասերի շահերը — քէ
նիւթական, քէ մտաւոր, քարոյական ու գեղասիրական, —
պահանջում են կրկին ապակենտրոնացում:

Բուրժուազիայի, ազնուականութեան, պաշտօնէութեան եւ մտաւորականութեան շահերի պահանջած այդ ազգային հալածանքի արդիւնքները լինում են հալածուողների մէջ դիմադրութիւն, զաղտնի կազմակերպութիւններ յեղափոխական, երբեմն նոյնիսկ սեպարատիստական (անջատական) ձգտումներով: Սկսում է հալածանք վերելից, դիմադրութիւն ներքեւից: Տիրւած ազգերի աշխատաւորութիւնը որ ամէնից աւելի զաւանթն է զգում տիրողների մըտրակի հարուածները, յաճախ ստիպուած է լինում միանալու իր սոցիալական հակառակորդների — իր ազգի բուրժուազիայի հետ, մի բոլի մոռանալով իր դասակարգային աշխատաւորական ձգտումները, որպէսզի կռիւ մղէ տիրողների շնչիւնիստական, կլանող, հալածող քաղաքականութեան դէմ: Տուժում է հալածուող ազգի աշխատաւորութիւնը. նա տուժում է կրկնակի, — թէ իբր կեղեքուող — զուտ աշխատաւորութիւն եւ թէ իբր հալածուող ազգի անդամ:

Եւ այս վերջին կեղեքումն ու հալածանքը նա երբեմն աւելի ցաւազարօրէն է զգում, քան ամբողջ քաղաքակիրթ աշխարհում այսօր բնդհանուր դարձած բուրժուական կեղեքումը: Նա իրան զգում է կրկնակի բեռի տակ եւ աւելի է ատում այն բեռը, որ իր նման միւս աշխատաւորները հունեն, այլ ունի ինքը եւ իր նման մի քանի ուրիշ զժրախտ ազգերի աշխատաւորներ:

Տիրող ազգն սկսում է հալածանքը, տիրուածները զիմազրում են: Լինում են զոհեր. բանտերը լցւում են, աքսորավայրերը հեծում այդ «այլազգիները» ոտերի տակ. կախաղանները ցցւում են, զնգակահարումները յաճախանում... Երկու կողմից տրուող զոհերն աւելի եւս կատաղցրնում են կռուող կողմերին: Ներս է մտնում տրուած զոհերի վրէժը լուծելու կատաղի ծարաւը: Երկու կողմերի մէջ անդունդն օր օրի վրայ աւելի եւ աւելի լայնանում է:

Իսկ ո՞վ է կռիւ մղում հալածուող ազգերի դէմ: Մենք տեսանք, որ հալածուողների կողմից կուռւմ են համարեա՛ր բոլոր դատակարգերը, ամբողջ ազգը, թէեւ կռուի բոլոր Ֆիզիքական ծանրութիւնը համարեա՛ր ամբողջապէս բնկնում է կրկին տիրուած ազգի աշխատաւոր մեծամասնութեան վրայ, թէ՛ իրը իր կաշու վրայ աղլային հալածանքի մտրակն աւելի ցաւալիօրէն զգացողի և թէ՛ իրը աւելի կռուող, Ֆիզիքական ոյժի, գուցէ նաեւ իրը շատ աւելի կանոնաւոր սեփական կազմակերպութիւն ունեցողի: Խոշոր բուրժուազիան կամ ամենեւին չէ խառնւում կամ նպաստում է այդ կռուին զրամով և երբեմն էլ բարոյական խրախուսանքով: Քիչ է պատահում, որ նա հանդիսանայ իբր Ֆիզիքական-մարտական ոյժ: Իսկ մանր բուրժուազիան, որ զգում է աղլային հալածանքի եւ նիւթական, ե՛ւ բարոյական դառնութիւնը, հանդիսանում է անպայման, իբր սրբ-

տանց մասնակից ու ներշնչող այդ կռուի :

Տիրող ազգերի կողմից ներշնչողներ հանդիսանում են վերելում յիշուած կեղեքող խաւերը — բուրժուազիան, ազնուականութիւնը, պաշտօնէութեան եւ մտաւորականութեան մի մասը : Իսկ ո՞վ է տանում իր ուսերի վրայ կռուի հսկայական բեռը, մանաւանդ երբ յարաբերութիւնները սրւում, յաճախ բացարձակ ապստամբութեան ձեւեր են առնում : Ի՞նչ կասկած, որ այդ տնաւեր ներքին կռուի ամբողջ զառնութիւնն ընկնում է տիրող ազգի աշխատաւորութեան վրայ : Նա է որ լցնում է հպատակ ազգերի ապստամբութիւնները զսպող բանակների շարքերը . նա է, որ տալիս է հպատակ ազգի հողին հանող ոստիկանութեան հասարակ անդամներին ահաբեկիչների, դաշոյնի ու զնդակի համար նիւթ ծառայող թշուառ ստորին պաշտօնեաներին, որոնք ամենեւին չըմբռնելով կատարուող գէպերի ներքին իմաստն, ըստիպուած են գնալ առաջ, զնդակի ու դաշոյնի, ռումբի ու սրի բերան, որովհետեւ զինուոր են, ոստիկանական ստորին ծառայող, սրարտաւոր են հնազանդուել . . .

Այսպիսով՝ տիրող ազգի աշխատաւորութիւնն էլ կեղեքման կրկնակի բեռի է ենթակայ . նա կեղեքւում է նախ իրր աշխատաւոր՝ իր սեփական ազգային բուրժուազիայից, եւ երկրորդ՝ իբր ճնշման գործիք նոյն բուրժուազիայի շահերը պաշտպանող պետութեան ձեռքում :

Դրութիւնը կատարեալ ողբերգական է, մանաւանդ եթէ աշխատաւորը գիտակից է, ընդունակ է ըմբռնելու կենսական երեւոյթներն աստաները: Նրան կեղեքում են դործարաններում, նոսնկեղեքում եմ մայր երկիրը մշակելիս, իսկ միեւնոյն ժամանակ նրան քաշում են պատերազմի արտաքին թշնամու դէմ — որվհետեւ տիրոջ, իրեն կեղեքող դասակարգերի շահն այդ է պահանջում: Վերջապէս նրան քշում են «ներքին թշնամիներ» դէմ — ճնշուած ազգերի պրովետարիատի դէմ, յաճախ, այո՛, իր սեփական ազգի աշխատաւորութեան ըմբոստացած մասի, իր հետ միասին երէկ դործարանում հաւասարապէս քրտինք թափող ընկերոջ դէմ: Ու նա ստիպուած է գնալ, դնդակահարել, սպանել իր նման աշխատաւորին, իր նման կեղեքուողին, իր հօրը, իր եղբօրը, գսպել այն շարժումը, որն անպայման իր սեփական օգուտն էլ է պաշտպանում: Ահա ողբերգութիւնը:

Ակներեւ է այդ բոլորից, որ տիրող, կեղեքող դասակարգերի հայրենասիրութիւնը, նրանց նացիոնալիզմը տիրապետող, ճնշող, հալածող է այլազգներին, հպատակներին: Բուրժուական նացիոնալիզմը յարձակողական կամ ակրեսիւ է: Նա չէ ճանաչում ուրիշ աւելի բարձր, կամ դոնէ իտէն հաւասար մի որեւէ այլ ազգութիւն: «Deutschland uber alles» — «Գերմանիան ամէնից բարձր» ասում է գերման բուրժուան: Այդ նոյնն են ասում ու մտածում բոլոր տիրող ազգերի բուր-

ծուաները. թերեւս նոյնն են մտածում իրենց սրտի խորքում նաեւ տիրուած, հալածուած ազգերի բուրժուաներն էլ, բայց չեն համարձակում արտայայտել...

Բուրժուազիան տիրող ազգի զրկում ե'ւ կեղեքում է իր ազգի աշխատաւորութեանը, ե'ւ յանուն հայրենիքի ու ազգի, քշում է այդ աշխատաւորութեանը դէպի ներքին ու արտաքին կռիւ, դէպի սպանդանոց, ի հարկէ, կրկին իր (բուրժուայի) սեփական շահերը պաշտպանելու համար:

Ուրեմն՝ տիրող ազգի աշխատաւորութեան անմիջական պարտականութիւնն է իր բոլոր ուժով դիմադրել այդ ազգային հալածանքներին, բուրժուազիայի դիմաւորութեամբ ձգտումներին թէ ներքին եւ թէ արտաքին թշնամիների վերաբերմամբ: Նրա անմիջական պարտականութիւնն է ուժեղ կազմակերպութիւն ստեղծել եւ ամէն անգամ կատաղի հարուած տալ բուրժուազիայի թէ դասակարգային եւ թէ ազգային կեղեքման կրկնակի սկզբունքներին: Դրանով նա փրկած կը լինի իրեն, այսինքն տիրող ազգի աշխատաւորութեանը եւ թէ տիրուած ժողովրդների աշխատաւորութեանը, որովհետեւ վերջ կը դնէ ազգային հալածանքին եւ այդպիսով կ'ազատէ հալածուած ազգի աշխատաւորութեանը սեփական ազգային բուրժուազիայի հետ միասին գործելուց, միասին — իրր մի ազգային օրգանական ամբողջութիւն՝

կազմակերպուելուց : Հալածուած ազգի աշխատաւորութիւնը, ազատուելով ազգային հալածանքի ու ազգային ինքնապաշտպանութեան մղձաւանջից, կազմակերպուած է զուտ դասակարգային կռուի համար, ուժեղացնում է ամբողջ երկրի աշխատաւորական սոցիալիստական շարժումը, դիւրացնելով տիրող ազգի աշխատաւորութեան — միջազգային աշխատաւորութեան ազատագրման գործը :

Այո՛, աշխատաւորութեան շահը հրամայօրէն պահանջում է ոչնչացնել ազգային հալածանքը, ազգային կռիւներն ու ներհակութիւնները : Միայն վերացնել ոչ թէ ջնջելով հակառակորդի ազդութիւնը, ինչպէս այդ պահանջում է բուրժուազիան կամ բուրժուական մացիոնալիզմը, այլ ոչոնչացնել հալածանքը, վերացնելով հալածանքն իսկ, ջնջելով ազգային կռիւը եւ տեղը դնելով ազգերի համերաշխութիւն եւ ինքնապարտութիւն :

Այսպիսով՝ բուրժուական մացիոնալիզմին դէմ է դուրս գալիս աշխատաւորական մացիոնալիզմը, որի սկզբունքն է ազգերի համերաշխութիւն, ազգերի եղբայրական կենակցութիւն, ինքնապարտութիւն եւ դաշնակցութիւն : Նա պահանջում է վերացնել ազգային հարցը, տալով ամէն մի ազգի լայն ազգային ազատ իրաւունքներ . չը ջանալ կլանել նոյն իսկ ամենաչնչին ազգային միութիւններն, այլ թողնել նրանց ինքնուրոյնարար զարգանալու, աշխատելով բոլոր ազգե-

րի ներսում կազմակերպել աշխատանքներին
ընդդէմ կեղեքումի եւ կռուի մղել յանուն անցի-
ւիզի:

Աշխատանքական ազգայնութեան եւ միջազ-
գայնութեան հիմնական սկզբունքն է «leben und
beben lassen» — «ապրել եւ թողնել ապրելու»
բոլոր ազգերին իբր ազգ, մտածելով լոկ դասա-
կարգային կռուի մասին:

— Վ Ե Ր Զ —

Գ Ի Ն՝ 5 Լ. Ոսկի

Կեդրոնատեղի

HAMASKAÏNE BOOKSHOP
10, Hussein Beyhoum street
Beirut -- Lebanon

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ

ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ

Տպագրման	2000
Պատուէր	416
Պրակ	17.5
Աւարտում	6-2-1974



ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ

Printed in Lebanon

by Hamaskaïne W. Sethian Press

(...) Վերլուծելով «ազգ» հասկացողութիւնը, մենք եկանք այն եզրակացութեան, որ ազգ կոչւում է մարդկանց այն մեծ խումբը, որ սերնդից-սերունդ՝ դարեր շարունակ ապրելով միեւնոյն բնական եւ պատմական միջավայրում, իր կուլտուրային վերաբերող բոլոր հարցերը լուծել է իր համար ինքնուրոյնաբար: Դրանով ժամանակի ընթացքում, երկար միասնակեցութեան շնորհով, ստեղծուել է ազգային մէկ ընդհանուր ոգի կամ ներքին, սուբեկտիվ աշխարհ, ազգային ստեղծագործութեան ինքնուրոյն ձեւեր, ազգային յատուկ բնատրութիւն եւ նոյնիսկ ազգային առանձնայատուկ փիլիքական եւ հոգեբանական տիպ:

